Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման** (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh** (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

**Մեր տվյալները – Наши контакты - Our contacts**


Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՖՐԱՆՍՈՒԱԶ ՍԱԳԱՆ

# ՄԻ ԲԻԶ ԱՐԵՎ ՊԱՆՋՈՒ ՄԵՋ

# Մի քիչ արեվ պաղ ջրի մեջ

Անծանոթ կին, կերպարանքովն իմ նախկինում
Որ ապատում էր ինձ մարդ լինելու հոգ։
Ես տեսնում եմ նրան և կորցնում եմ նրան.
Թախիծը իմ, ինչպես մի քիչ արև՝ սրտում։

# ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

## ՓԱՐԻԶ

### 1

Հիմա արդեն այդ բանը նրա հետ կատարվում էր գրեթե ամեն առավոտ։ Հատկապես, եթե նախորդ օրը թունդ հարբած էր եղել և վեր կենալու, ցնցուղ ընդունելու, հագնվելու համար այնքան թույլ, այնքան անուժ էր զգացել իրեն, որ այդ ամենը կատարել էր համարյա անգիտակցաբար, մի տեսակ խարխափելով, հոգնությունից ինքն իրեն չտիրապետելով։ Չնայած դրան, շատ էր պատահում, որ չէր խմում, բայց այդ օրերն ավելի ծանր էին։ Արթնանում էր լուսադեմին, սիրտը տրոփում էր վախից. նա այդ երևույթին այժմ այլ անուն չէր կարող տալ քան՝ վախ կյանքի հանդեպ, և սպասում էր, թե ուր որ է անձկությունը, անհաշողությունը, դողդոջան ուղեղում ռեչիտատիվով կարձագանքեն իրար։ Սիրտը խփում էր. նորից փորձում էր ընկղմվել խոր քնի մեջ, փորձում ինքն իրեն մոռանալ։ Իզուր։ Հետո նստում էր անկողնու մեջ, ճանկում կողքին դրված հանքային ջրի շիշը, կուլ տալիս մի ումպ, որը գաղջ էր, անհամ ու անդուր, ինչպես մերջին երեք ամսվա կյանքը, և թախիծն ու ցասումը իրար խառնած, վիրավորված ինքնասիրությամբ մտածում էր.

«Ի՞նչ է կատարվում ինձ հետ, ի՞նչ է կատարվում։» Եվ գեղային դեպրեսիան, որ դիպվածաբար հաճախ էր երևան գալիս ուրիշների մոտ, հատկապես նրանց, որոնց իսկապես սիրում էր, այժմ երեսին իջած ապտակի պես նվաստացնում էր նրան։ Պատանեկության տարիներին երբեք չէր ենթադրել իր մասին, գոհացել էր նեղքին կյանքով, բայց երբ

միանգամից իր հիվանդում, անգույն կերպարն էր հայտնաբերել, անսպասելիորեն համակվել էր նախապաշարված սարսափով։ Ուրեմն ի՞նչն էր այդ երեսունհինգամյա մարդը, որ զողզոզում էր առանց պատճառի, անկողնու վրա նստած, արեածագին։ Ուրեմն մինչև այստե՞ղ էին հասցրել նրան երեսուն տարվա ծիծաղը, անհոգությունը, երբեմն նաև սիրո տվայտանքները։ Գլուխը միրճում էր բարձի մեջ, որի միակ պարտականությունը կարծես երջանիկ ննջ պարգևելը սիրտ լիներ, հետո սեղմում էր երեսին։ Բայց աչքերը չէին փակվում։ Մեկ մրսում էր, ծածկվում վերմակով, մեկ շոգում էր ու բացվում և չէր կարողանում դուրս մղել այդ զոզը, այդ կիսահուսահատությունը, ամբողջացած այդ թախիծը։

Անկասկած, եթե ցանկանար, կվերադառնար էլոիզի մոտ և կսիրաբաներ նրա հետ։ Բայց չէր կարող։ Արդեն երեք ամիս է, որ ձեռք չէր տվել նրան, ավելին՝ երեք ամիս է, որ չէին խոսում այդ մասին։ Գեղեցի՞կ էլոիզ... Հետաքրքիր է, կարողանո՞ւմ էր հաշտվել այս ամենի հետ։ Թվում է, նա ժիլի մոտ ինչ-որ հիվանդություն էր հայտնաբերել կամ տարօրինակ երևույթներ նկատել, կարծես նույնիսկ խղճում էր։ Եվ խղճահարության միտքը ավելի էր զայրացնում ժիլին, քան այդ կնոջ ցասումը կամ հավանական դավաճանությունը։ Ինչ ասես չէր տա, որ նրան տենչաբ, նեղվեր վրան, այդ կանացի մարմնի ջերմության մեջ կատաղի շարժումներ գործեր և վերջապես ընկներ ինքնամոռաց վիճակի մեջ, սակայն՝ ոչ քիչու գնով... Բայց չէր կարող։ Իսկ էլոիզի մի քանի երկչոտ փորձերը, որ համարձակվել էր կատարել, անասելիորեն զզվեցրել էին նրան։ Նա, որ այնպես պաշտել էր սերը և կարողացել էր ամենագավեշտական, ամենատարօրինակ պարմանների՞ անտարբերությամբ սեր խաղալ, այժմ անգոր ընկած էր անկողնու մեջ, այն կնոջ կողքին, որը զուրկ էր ու գեղեցիկ, և ավելին, սիրում էր։

Ի դեպ, նա չափազանցում էր։ Մի անգամ, Ժանենց տան հոչակավոր երեկոյից հետո, երեք շաբաթ առաջ, էլոիզն իր գրկումն էր։ Բայց հիմա չէր հիշում։ Շատ էր խմել այդ երեկո և պատճառներ ուներ։ Նա ազատ կերպով մտաբերում էր իր մեծ անկողնու մեջ գայթակղող սև ու անորոշ զանգվածը, և այն հաճելի թեթևությունը, որ զգում են թղթախաղի հաջող արարքից հետո։ Տրված ու ստացած հաճույքի կարճատև վայրկյանը կարծես անհանգիստ գիշերների, անհաջող պատճառաբանությունների, կեղծ քաղաքավարության հաղորդումը լիներ։ Մեծ բան չէր։ Կյանքը, որ մինչ այդ ամեն ինչ տվել էր նրան, զոնե այդպես էր կարծում, և դա էր նրա հաջողության պատճառներից մեկը, այժմ այդ կյանքը ընկրկում էր նրանից, այն ծովի նման, որ ետ է քաշվում միջատամից ու լքում երկար ժամանակ փայփայած ժայռը։ Իր տեղի հետ ընդհանրացված հին ժայռի գաղափարը մի պահ աննկատ ու դառը ծիծաղ առաջացրեց։ Բայց իրականում համոզված էր, որ կյանքը, ինչպես փակ վերքի մեջ, խույս էր տալիս իրենից։ Ժամանակն այլևս ոչ թե անցնում, այլ անէանում էր։ Եվ որքան շատ էր հիշում, այնքան ավելի էր խոստովանում ու անձայն կրկնում իր առավելությունները, որոնցից կարող էր հիմա էլ օգտվել, եթե ցանկանար. առողջ մարմին, հաճելի մասնագիտություն, բազմապիսի հաջողություններ։ Սակայն ներկայումս դրանք այնքան հոռի էին, այնքան զուրկ հետաքրքրությունից, որքան սուրբ ատամածածնին նվիրված շարականները։ Մեռած..., բառերը մեռել էին։

Բացի այդ, Ժանենց տանն անցկացրած երեկոն այս ամենի հանդեպ ֆիզիոլոգիական զզվանք էր առաջացրել։ Նա մի պահ գուրս էր եկել հյուրասրահից և զարդասենյակում սանրվել էր, ձեռքերը լվացել։ Այդ ժամանակ օճառը սահել էր ձեռքից, ընկել գետնին լվացարանի տակ, և նա կռացել էր վերցնելու։ Օճառը ընկել էր ինչ-որ խողովակի տակ և ասես թաքնվել։ Վարդագույն օճառ էր. հանկարծ գտնում է կեղտոտ, զզվելի մի օճառ։ Ձեռքը մեկնում է վերցնելու, չի կարողանում։ Կարծես անծանոթ խավարասեր մի կենդանի մթան մեջ սպասում էր, որ գիպչի իրեն։

Մի անսպասելի սարսափ զամել էր նրան տեղում։ Իսկ երբ ոտքից-գլուխ քրտնած վեր էր կացել, ուշադիր դիտել էր հայելու մեջ, խմբագրության խորքերից հանկարծ գլուխ էր բարձրացրել ինչ-որ անջատված հետաքրքրասիրություն, որը սակայն անմիջապես տեղի էր տվել սարսափին։ Ջրասույզի

պես ուժեղ՝ շնչելուց հետո նա նորից էր պպզել և բռնել օճառը։ Բայց իսկույն նետել էր լվացարանի մեջ, ինչպես գյուղերում շպրտում են քնած սողունը, երբ առանց խմանալու-բռնում են կոտրած ճյուղի փոխարեն, և մի բոպե շարունակ երեսը թրջել էր առատ ջրով։ Դրանցից հետո միայն սկսել էր մտածել, որ «այստեղ ո՛չ լյարդն է մեղավոր, ո՛չ հոգնությունը, ո՛չ արդի ժամանակաշրջանը, այլ՝ ուրիշ մի բան»։ Հենց այստեղ էլ որոշել էր, որ «այդ բանը» իրոք գոյություն ունի, և ինքը հիվանդ է։

Բայց ի՞նչ անել։ Կյանքում ով է ավելի մենակ զգում իրեն, քան այն մարդը, որ ուրախ, երջանիկ, անխռով ցինիզմով է որոշել ապրել, նույնիսկ ավելին, որոշել է միանգամից և բնազդով, սակայն այդ վճիռը անհետանում է հատկապես Փարիզում, մեր թվարկության 1967 թվականին։ Հոգեբույժին ներկայանալու գաղափարը նվաստացուցիչ էր, նույնիսկ վերջնականապես վանեց իրենից այդ միտքը, որովհետև հպարտ էր և իր կարծիքով դա նրա լավագույն հատկություններից մեկն էր։ Մնում էր լռել։ Եվ շարունակել։ Մի խոսքով, փորձել շարունակել։ Բացի այդ, կյանքում անբաժան դարձած կույր հավատը և երջանիկ պատահականությունները նրան այն հույսն էին ներշնչում, թե այս ամենը ժամանակավոր երևույթ է։ Ժամանակը՝ միակ տիրակալը, որից հրաժարվել չէր կարող, խորտակել էր իր սիրափոփոխները, երջանկությունը, վշտերը, երբեմն գաղափարները, և պատճառ չկար, որ չխորտակեր նաև «այդ բանը»։ Բայց «այդ բանը» անգույն էր, անանուն, նույնիսկ չգիտեր ինչ է։ Եվ գուցե միայն ժամանակը կարող է իշխել այն ամենի վրա, որ ունի որևէ անվանում։

## 2

Աշխատում էր թերթի միջազգային բաժնում։ Ամբողջ առավոտն անց էր կացրել լրագրատանը։ Աշխարհը լի էր արյունոտ, անհավատալի դեպքերով, որոնք իր աշխատակիցների մոտ արթնացնում էին զգոնություն պատճառող սարսափ, և դա զայրացնում էր նրան։ Դեռ երեք ամիս առաջ ինքն էլ նրանց նման կզգուշանար, կզայրանար, բայց հիմա չէր կարող։ Նույնիսկ մի փոքր վրդովված էր, որ Միջին Արևելքում, ԱՄՆ-ում կամ այլուր փորձում էին իրեն ցիրկել սեփական ողբերգությունից։ Երկիրը՝ շարժվում էր քաոսի մեջ, և ո՞վ ցանկություն կամ ժամանակ կունենար այս մանր հարցերով զբաղվելու։ Եվ ի՞նչ, քի՞չ էր վատնել ժամանակը հուսահատ ճառեր, պարտության խոստովանանքներ լսելով, քի՞չ էր կեղծ փրկության քաջագործություններ արել։ Ո՛չ։ Մարդիկ խանդավառությունից փայլող աչքերով բայլում էին շուրջը, իսկ ինքը մենակ էր, կատարելապես դրկված համոզմունքից՝ մոլորված շան պես, որոշ ծերունիների նման եսասեր, նրանց նման՝ ոչնչություն։ Միանգամից որոշեց ժանի մոտ բարձրանալ, մի հարկ վերև և խոսել հետը։ Իր վերջին շրջանի ծանոթներից ժանը միակն էր, որ կարող էր հանկանալ իր դժբախտությունը և կարեկցել։

Երեսունհինգ տարեկան հասակում ժիլը դեռևս գեղեցիկ էր։ Այո, «դեռևսը» նշանակում է, որ քսան տարեկանում հազվագյուտ գեղեցկության տեր էր, գեղեցկություն, որ խմիչքայլոց երբեք չէր գիտակցել, սակայն ուրախությամբ օգտվել էր դրանից, և հավասարապես հրապուրել և՛ կանանց, և՛ տղամարդկանց. վերջիններին՝ սակայն իգուր։ Տասնհինգ տարի անց նա նիհարեց, դարձավ ավելի առնական, բայց իր շարժուձևի, քայլվածքի մեջ հաղթական պատանեկությունից ինչ-որ բան մնաց։ Եվ ժանը, որ առաջ խելագարի պես սիրել էր նրան, բայց ոչ մի անգամ չէր արտահայտվել, նույնիսկ ինքն իրեն չէր խոստովանել, լսեց սրտի զարկերը, երբ ժիլը ներս մտավ։ Այդ նիհարությունը, այդ կապույտ աչքերը, մի փոքր երկար ու սև մազերը, նյարդային շարժումները... Ի միջի այլոց, նա ավելի ու ավելի էր նյարդայնանում, և ժանը պետք է զբաղվեր նրանով։ Բայց չէր կարողանում որոշում կայացնել։ Երկար ժամանակ ժիլը նրա համար երջանկության, անհոգության խորհրդանիշն էր եղել, և այժմ շատ տհաճ էր խոսել այդ մասին, կարծես սիրած կերպարը ջախջախվում էր։ Իսկ եթե կերպարը ցնդե՞ր... Անհիշելի ժամանակներից կլորիկ, ճաղատ և կյանքից հալածված ժանը, եթե հայտնաբերեր, որ «անհրաժեշտաբար» երջանիկ մարդ չկա՞, Քանի անգամ էին խորտակվել նրա պատրանքները, բայց ժանը միամտորեն մտածում էր,

որ այս մեկի կորուստը ամենածանրն էր լինելու։ Մի աթոռ հրեց, ժիլը զգուշությամբ նստեց, որովհետև բառիս բուն իմաստով սենյակի չորս կողմը՝ գրասեղաններին, գետնին, բուխարիկին, իրար վրա դարսած գործերի կապոցներ էին խճողված, ծխախոտ մեկնեց նրան։ Լուսամուտից բացվում էր գորշ ու կապույտ տանիքների մի տեսարան, անձրևատար խողովակների և հեռուստատեսային անտենաների մի ամբողջ աշխարհ, որ երկար ժամանակ հետաքրքրել էին Ժիլին։ Բայց հիմա նույնիսկ չնայեց այդ կողմը։

— Դե ի՞նչ կա,— ասաց Ժանը,— լավ էր, չէ՞։

— Սպանության մասի՞ն է խոսքդ։ Այո, պետք է ասել, որ ճարպիկ վարվեցին։

Հետո լռեց, կախեց աչքերը։ Անցավ մի րոպե, և Ժանը վերջին ճիգով, սուլելով դասավորեց ևս մի քանի կապոց, կարծես մեկ րոպեի լռությունը շատ բնական էր նրանց համար։ Ի վերջո որոշում կայացրեց։ Հոգու մեջ մեծ բարություն էր աճում։ Ժանը հիշեց, թե որքան ջերմ, ուշադիր ու բարյացակամ էր եղել Ժիլը, երբ իր օրինական կինը լքել, հեռացել էր իրենից, իսկ հիմա, հանձինս իրեն, տեսնում էր ամենավերջին, ամենաստոր եսասերին։ Երկու ամիս շարունակ զգում էր Ժիլի դժբախտությունը, երկու ամիս շարունակ խուսափում էր խոսել հետը։ Խոսք չկա, լավ ընկեր էր։ Այժմ քանի որ Ժիլը թույլ էր տալիս, կամ ավելի ճիշտ, առաջարկում էր հարձակում գործել, նա չկարողացավ զսպել իրեն մի փոքր ներկայացում չսարքելու համար։ Երեսուն տարեկանից հետո բոլորն էլ այդպես են. յուրաքանչյուր դեպք, վերաբերի ընդհանուրին, թե կապված լինի որևէ անհատի զգացմունքի հետ, պահանջում է ինչ-որ թատերականացում, որպեսզի օգտակար լինի դիմացինին կամ ուղղակի անվնաս կերպով անցնի կողքով։ Այսպիսով Ժանը մոխրամանի մեջ ճզմեց կիսավառ ծխախոտը, նստեց, խաչաձևեց թևերը։ Մի պահ ուշադիր զննեց Ժիլին, հառաչեց և լրջորեն ասաց

— Դե ի՞նչ։

— Ի՞նչ, դի ինչ,— պատասխանեց Ժիլը։ Արդեն ուզում էր վեր կենալ դնալ, բայց քայ դիտակցում էր, որ չէր անի այդ



բանը, նա ամեն ինչ արել էր Ժանին իր հարցին մղելու համար, մինչև իսկ թեթևացած էր զգում իրենն։

— Դե ինչ, գործերը վատ են, չէ՞։

— Այո՛։

— Արդեն մեկ կամ երկու ամիս կլինի, հը՞։

— Երեք։

Ժանը պատահականորեն էր նշել այս ժամկետը ցույց տալու համար Ժիլին, որ ուշադիր է նրա նկատմամբ, իսկ եթե ավելի շուտ չէր խոսել այդ մասին, սոսկ այն պատճառով, որ առաքինի մարդ էր։ Բայց Ժիլն իսկույն մտածեց. «Ըհը՛, նրբանկատ է ձևանում խորամանկը ու մի ամբողջ ամսով էլ սխալվում է» և շարունակեց.

— Արդեն երեք ամիս է, որ ես... որ ես... վատ եմ զգում։

— Հիմնական պատճառնե՞ր,— հարցրեց Ժանը կտրուկ շարժումով ծխախոտը վառելով, և մի պահ Ժիլն ատելությամբ լցվեց նրա հանդեպ. «Գոնե՛ ոստիկանական պաշտոնյայի, կոպիտ հետաքննիչի տոնը թողներ, գոնե վերջ տար այս կատակերգությանը»։ Բայց և այնպես պետք է խոսեր. ջերմ, թեթևասահ, անդիմադրելի մի հոսանք տանում էր նրան դեպի խոստովանություն։

— Ոչ մի։

— Դա արդեն լուրջ բան է,— ասաց Ժանը։

Զայնի հարձակողական տոնը Ժանին դուրս բերեց հոգեբույժի դերից։ Վեր կացավ, պտտվեց սեղանի շուրջը, ձեռքը դրեց Ժիլի ուսին, մրթմրթալով. «Խե՜ղճ ծերուկ, ոչի՞նչ, ամեն ինչ լավ կլինի», որ ամենասարսափելին էր, քանի որ Ժիլի աչքերը արցունքով լցվեցին։ Այլևս չէր կարող դիմանալ։ Ձեռքը մեկնեց գրասեղանին, վերցրեց գնդիկավոր գրիչն ու մեծ հետաքրքրասիրությամբ սկսեց ներս ու դուրս անել գրչածայրը։

— Իսկ ի՞նչն է վատ, տղա՛ս,— հարցրեց Ժանը,— վստա՞հ ես, որ հիվանդ չես։

— Ոչ մի բան։ Ոչ մի բան էլ չի պատահել։ Այլևս ոչ մի բանի ցանկություն չունեմ և վե՞րջ. Մոդայիկ հիվանդություն է, չէ՞։

Նույնիսկ փորձեց քմծիծաղ տալ։ Բայց իրականում որքան էլ հաճախակի հանդես եկող երևույթ լիներ, որքան էլ

բժիշկների կողմից և՛ գործնականորեն, և՛ պաշտոնապես մանրամասնորեն ուսումնասիրված լիներ, այդ պատճառաբանությունը նրան չէր հանգստացնում։ Ավելացրած դրան, նույնիսկ վիրավորական էր։ Մայրահեղ դեպքում նա հակված էր այդ երևույթը առանձնահատուկ մի դեպք համարել։

— Ահա՛,— դժվարությամբ վերսկսեց նա,— այլևս աշխատելու ցանկություն չունեմ, սիրելու ցանկություն չունեմ, շարժվելու ցանկություն չունեմ։ Միակ ցանկությունս ամբողջ օրը ծածկոցը գլխիս քաշել ու անկողնուս մեջ մենակ պառկելն է։ Ես...

— Դու փորձե՞լ ես։

— Իհարկե։ Բայց կարճ տևեց։ Ուզում էի ինքնասպանություն գործել, երեկոյան ժամը իններին։ Անկողինս կարծես ապականված լիներ, նույնիսկ սեփական հոտից էի զզվում, ամենօրյա ծխախոտիս մակնիշն անգամ ատելի էր դարձել աչքիս։ Ինակա՞ն ես համարում այս ամենը։

Ժանը քրթմնջաց, ավելի շուտ՝ ցնցված էր նրա հոգեկան անհավասարակշռությունն արտահայտող այս մանրամասնություններից և մի վերջին անգամ փորձեց տրամաբանական բացատրություն գտնել.

— Իսկ էլոի՞զը։

— Էլոի՞զը։ Նա ինձ հանգստացնում է։ Բայց ինչ ասեմ, դու շատ լավ գիտես, սովորաբար իրար ասելու ոչինչ չունենք։ Ինձ շատ է սիրում։ Ես անզոր եմ որևէ բան անելու։ Ոչ միայն նրա հետ, ո՛չ, ընդհանրապես։ Մի խոսքով, համարյա չեմ կարող։ Համենայն դեպս, եթե նույնիսկ այդտեղ հասնեմ, զզվելի է։ Ուրեմն...

— Լուրջ բան չկա,— ասաց Ժանը,— դրա ճարն էլ կգտնենք։

Փորձում էր ծիծաղել, խոսքը տանել հասցնել մինչև ինքնասիրությունը վիրավորված աքլորի պատմությունը։

— Պետք է լավ բժշկի դիմես, վիտամիններ ընդունես, մաքուր օդում լինես և տասնհինգ օր չանցած նորից կսկսես հավերի ետևից վազել։

Ժիլը բարձրացրեց աչքերը։ Ինքն իրենից դուրս էր եկել։

— Բայց ամեն ինչ դրան՝ մի վերագրի։ Թքած ունեմ, հասկանու՞մ ես, թքած ունեմ։ Ես ոչ մի բանի ցանկություն



չունեմ, հասկանու՞մ ես։ Նույնիսկ կանանց։ Ցանկություն չունեմ ապրելու։ Կարո՞ղ ես այնպիսի վիտամիններ առաջարկել, որ օգնի ինձ ապրելու։

Տիրեց լռություն։

— Սրո՞թ,— ասաց Ժանը։

Բայց արեց մի դարակ, վերցրեց շիշը, մեկնեց Ժիլին, որը մեքենայաբար կուլ տվեց մի ումպ։ Ցնցվեց, թափ տվեց գլուխը։

— Սա նույնպես չի օգնում։ Բացի կիսամեռ վիճակում քնի մեջ նետելուց։ Այլևս խմիչքն էլ չի հրապուրում։ Եվ ամեն դեպքում դա սխալ ելք՝ է, չէ՞։

Իր հերթին Ժանն էլ վերցրեց շիշը, խմեց մի մեծ ումպ։

— Արի՛,— ասաց նա,— գնանք թափառելու։

Դուրս եկան։ Փարիզը հրապուրիչ էր կապույտ հեղեղող դարձանամուտի մեջ։ Փողոցները նույնն էին. նույն գիններները, նույն «Շլյուզը», որտեղ որևէ իրադարձության առիթով խմբով գնում էին խմելու, նույն բարը, ուր Ժիլը գաղտնի մտնում էր Մարիային զանգ տալու։ Երանելի օրեր էին, սիրում էր նրան։ Ասված իմ, նա հիշում էր այդ ժամանակվա սարսուռները, խցիկի ջերմությունը, հիշում էր, թե ինչպես առանց ընկալելու կարդում ու կարդում էր պատին փակցրած գրությունները, այնինչ հեռախոսը զնգում էր, զնգում ու չէր պատասխանում։ Ինչպես էր տանջվում և ինչպիսի ինքնավստահ տեսքով էր բարն սպասարկող տիրուհուց մի բաժակ խմիչք խնդրում և կուլ տալիս մի ումպով, ինչպես էր սիրտը կատաղությունից, ցավից ճմլվում, բայց ինչքան լավ էր ապրում։ Ջնայած դառն էին այդ օրերը. ինչ-որ մեկից կախում ուներ ինքը, ոտնահարված էր այդ նույն անձնավորությունից, սակայն ներկայիս համեմատությամբ երանելի օրեր էին։ Ճիշտ է, վիրավորված էր, բայց այդ վիրավորանքը գոնե դեմք ուներ։

— Իսկ եթե տասնհինգ օրով մի կողմի վրա գնայի՞նք,— ասաց Ժանը,— մի լավ ռեպորտաժ էլ կպատրաստեինք։

— Ցանկություն չունեմ,— պատասխանեց Ժիլը,— երբ մտածում եմ ինքնաթիռի, շվացուցակի, անծանոթ հյուրանոցների, նյութիր սպասարկող մարդկանց մասին... ո՛չ, չեմ կարող... ճամպրուկներն էլ մի կողմից... ահ, չէ՞։

Ժանը խնդրեց նայեց նրան՝ մտածելով, թե չէ՞ր չափազանցում արդյոք։ Ժիլն առաջ շատ էր սիրում օլինեներ խաղալ, նրանն մեկի հետ յուրովի։ Սակայն այդ վայրկյանին նրա գայացքում երևացող վախի ու զզվանքի արտահայտությունը համոզեցին Ժանին։

— Իսկ ի՞նչ կասես, եթե երեկոյան ես ու դու հանձնենք ժամանակ անցկացնենք աղջիկների հետ, ինչպես առաջ էինք անում։ Պատկերացնենք, որ երկու գյուղացի տղաներ ենք և հասարակական վայրեր ենք հաճախում... է՞, չէ՞ հիմարություն է... Իսկ գի՞րքդ։ Ամերիկայի մասին ռեպորտա՞ժ։

— Արդեն հիսունից ավելի այդպիսի գրքեր կան և ավելի քավերը։ Ինչ ես կարծում, հիմա, որ ոչ մի բանի մասին չեմ մտածում, կարո՞ղ եմ որևէ հետաքրքիր տող գրել։

Գրքի գաղափարը վերջնականապես ընկճում էր նրան։ Ճիշտ է, ցանկացել էր ԱՄՆ-ի մասին ռեպորտաժ գրել, որովհետև քաջ ծանոթ էր այդ երկրին։ Ճիշտ է, երազել էր այդ մասին, նույնիսկ պլան մշակել։ Սակայն ճիշտ է նաև, որ հիմա անկարող էր որևէ տող գրել կամ այդ նյութի շուրջ մտքեր ծավալել։ Բայց վերջ ի վերջո ի՞նչ էր կատարվում իր հետ։ Հանուն ինչի՞ էր այդպես պատապարտվում։ Եվ ու՞մ կողմից։ Միշտ եղբոր նման էր եղել ընկերների հետ, իսկ կանանց հետ նույնիսկ քնքուշ էր վերաբերվել։ Ոչ մեկին գիտամտավոր կերպով վատություն չէր արել։ Ինչու՞ էր երիտասարդ տարվա կյանքը թունավոր բոմերանգի[1] պես գլխի մեջ մխրճվում։

— Ես կարող եմ ասել, թե ինչ է կատարվում քեզ հետ,— անմիջապես մտից լսվեց Ժանի ձայնը՝ հանդարտ ու անտանելի մի ձայն,— դու հոգնած ես, դու...

— Դու՞ չես ասելու, թե ինչ է կատարվում ինձ հետ,— հանկարծ փողոցի մեջտեղում ոռնաց Ժիլը,— դու չես կարող ասել, որովհետև չգիտես։ Որովհետև «ես» ինքս էլ չգիտեմ, դեռ ավելին,— ավելացրեց նա ծայրահեղ անամոթությամբ,— կորի՛ր դնա։

[1] Բոմերանգ—բնիկ ավստրալիացիների նետաձիգ զենք փայտե ծայրով, որը նպատակին չհասնելու դեպքում վերադառնում է հարձակվողի մոտ (Ս. Թ.)։



Մարդիկ նրանց էին նայում, իսկ նա հանկարծ կարմրեց, ձեռքը մեկնեց Ժանի քաճկոնի օձիքին, կարծես ինչ-որ բան ավելացնելու համար, հետո առանց ցտեսություն ասելու արագ հեռացավ քարափի ուղղությամբ։

3

Էլոիզը սպասում էր նրան։ Էլոիզը ամեն օր էր սպասում։ Նա աշխատում էր որպես մանեքեն նորաձևությունների խոշոր հիմնարկներից մեկում և ընդհանրապես կյանքում բախտը չէր բերել։ Երկու տարի առաջ, մի իրիկուն, ոգևորված համաձայնեց տեղափոխվել Ժիլի մոտ, երբ Մարիայի հուշապատկերը շատ էր տանջում վերջինիս, և մենակությունն այլևս անտանելի էր դարձել։ Էլոիզը եռամսյակը մեկ դառնում էր թուխ, երբեմն շիկահեր, երբեմն կարմրահեր, լուսանկարչական պահանջներին համարմարվելու նպատակով, մի բան, որից Ժիլը երբեք գլուխ չէր հանում։ Շատ գեղեցիկ կապույտ աչքեր ուներ, գեղեցիկ կառուցվածք և անփոփոխ, բարձր տրամադրություն։ Երկկողմանի համաձայնությամբ նրանք լեզու էին գտել իրար հետ, իսկ այժմ Ժիլը տխուր մտածում էր, թե ինչ պատասխան պիտի տա նրան, երեկոն ինչպես պիտի անցկացնի նրա հետ։ Կարող էր միշտ էլ դրսում պատրվակ դտնել և առանձին դուրս գալ, Էլոիզը չէր նեղանա, բայց ցանկություն չուներ շփվելու փողոցի, գիշերվա, Փարիզի հետ, նա ուզում էր թաքնվել, առանձնանալ։

Ժիլն ապրում էր Մրսյո-լը-Փրենս փողոցում, երեք սենյականոց մի փոքրիկ հարկաբաժնում, սակայն չէր համակերպվում։ Սկզբում խանգավառված՝ գրագարակներ կախեց, տեղափոխեց ռադիոյի բարձրախոսը, գրագարանը, հեռուստացույցը, մի խոսքով, ժամանակակից տասնյակ մանր-մունր իրեր, որոնք հաճելի են դարձնում կյանքը և հարստացնում մարդու ներքին աշխարհը։ Այսօր նայում էր դրանց մի տեսակ ձանձրույթով, ում չուներ նույնիսկ գրադարանից գիրք վերցնելու, նա, որ ամբողջ օրը գրականությամբ էր սնվում։

Երբ ներս մտավ, Էլոիզը հեռուստատեսային հաղորդում էր դիտում ծրագիրը ձեռքին, որպեսզի բաց չթողնի հատվա-

պես հետաքրքիր հաղորդումները։ Ժիլին համբուրելու համար նա այնպիսի ուրախ ոստյունով ցատկեց տեղից, որ վերջինիս աչքին ծիծաղելի ու չափազանցված թվաց նրա շարժումը, կարծես «իսկական փոքրիկ կինը» լիներ։ Ժիլն ուղղակի մոտեցավ բարին, ավելի ճիշտ, անվավոր սեղանին, որ ծառայում էր որպես բար և առանց ուղելու մի բաժակ վիսկի լցրեց։ Հետո տեղավորվեց էլոիզի նստած բազկաթոռի նման մի ուրիշ բազկաթոռի մեջ և իր հերթին ուշադիր սկսեց դիտել փոքրիկ էկրանը։ Էլոիզը մի պահ հայացքը կտրեց հաղորդումից և շրջվեց նրա կողմը։

— Օրդ լա՞վ անցկացրիր։

— Շատ։ Իսկ դու՞։

— Ես նույնպես։

Կարծես թեթևացած՝ էլոիզը շարունակեց դիտել էկրանը։ Երկու երիտասարդ անծանոթներ փորձում էին մի բառ կազմել փայտե տառերով, որ հաղորդավարուհին մեծ քանակությամբ թափում էր նրանց առջև։ Ժիլը վառեց ծխախոտը, փակեց աչքերը։

— Կարծում եմ «դեղատուն» է,— ասաց էլոիզը։

— Համմե՞։

— Կարծում եմ «դեղատուն» բառն են ուզում, կազմել։

— Շատ հնարավոր է,— ասաց Ժիլը։

Կրկին փակեց աչքերը։ Հետո փորձեց ձեռքի բաժակից մի ումպ խմել։ Խմիչքն արդեն տաքացել էր։ Բաժակը դրեց գորգին։

— Նիկոլան զանգահարեց, հարցնում էր այս երեկո իրենց հետ Ակումբ գնալու՞ ենք։ Ի՞նչ կարծիքի ես։

— Տեսնե՛նք,— ասաց նա,— նոր եկա։

— Եթե չես ուզում, սառնարանում ապուխտ կա, հեռուստացույցով էլ դետեկտիվ կինոնկարների շարք։

«Հրաշալի է,— մտածեց Ժիլը,— կեղծիքի բնաբույն, կամ Նիկոլայի հետ պետք է ճաշեմ և մեկ անգամ ևս բացատրություններ լսեմ, որ եթե կինոն իր գործն ապրած չլիներ, ինքը վաղուց իր պլուսկորժոքը աված կլիներ։ Կամ կնստեմ բազկաթոռիս մեջ և ինչ-որ էլուիյուն նայելով սառը ապուխտ կուտեմ։ Զզվելի է։

Բայց, համենայն դեպս, քար ժամանակ, որ հանգիստում



էր նոր մարդկանց հետ, ամեն երեկո քեֆ-ուրախություն էր... Ո՞ր էին կորել ընկերները։ Նա շատ լավ գիտեր, թե որտեղ էին նրանք, մնում էր միայն ձեռքը մեկնել հեռախոսափողին։ Իսկ նրանք արդեն հոգնել էին երեք ամիս շարունակ առանց արդյունքի զանգահարելով, ահա և ամենը։ Սակայն իզուր էր որևէ անուն կամ դեմք փնտրում, որի հետ ցանկանար հանդիպել, չէր գտնում։ Միայն այդ տականք Նիկոլան էր կպել ու պոկ չէր գալիս։ Պատճառը պարզ էր, երևի էլի խմելու փող չունի։

Հեռախոսը զնգաց, տեղից չշարժվեց։ Կար ժամանակ, որ ամեն մի զանգի հետ տեղից թռչում էր. սերը, բախտը կամ արկածները էին կանչում նրան, այն ժամանակ վոտահ էր իր վրա։ Հիմա էլոիզն էր վերցնում լսափողը։ Կողքի սենյակից բարձրաձայն կանչեց նրան.

— Քեզ են ուզում, Ժանն է։

Մի պահ տատանվեց։ Ի՞նչ ասեր։

Հետո մտածեց, որ առավոտյան կոպիտ էր վերաբերվել, իսկ կոպիտ լինելը ամոթ է ու մեծագույն հիմարություն։ Բացի այդ, ինքն էր գնացել և այդ խեղճ Ժանի գլուխը տարել իր հիմարություններով ու հետո փողոցում մենակ թողնելով հեռացել։ Վերցրեց լսափողը։

— Դու՞ ես, Ժիլ։ Լա՞վ ես։

— Այո,— պատասխանեց նա։

Ժանի ձայնը ջերմ էր, անհանգիստ, իսկական ընկերոջ ձայն։ Ժիլը հուզվեց։

— Այս առավոտվա կատարվածի համար ցավում եմ,— սկսեց Ժիլը,— ես...

— Վաղը ավելի լուրջ կխոսենք,— ասաց Ժանը,— ի՞նչ ես անելու այս երեկո։

— Կարծում եմ, ես... մենք կմնանք [illegible] պատասխանեց Ժիլը,— և սառը ապուխտ [illegible]

Դա իսկական, հազիվ քողարկված [illegible] որին հաջորդեց կարճատև լռություն։ [illegible] Ժանը, հանգիստ ձայնով շարունակեց.

— Կարող էիր դուրս գալ, [illegible] պրեմիերան է, եթե ուզում ես, տոմսեր ունեմ, ես...

— Շնորհակալություն,— ասաց Ժիլը [illegible]





ДРАМ Н. Ф. [illegible]
[illegible] Ս. Պետրոսյան

ցանկություն չունեմ։ Եթե ուզում ես, վաղը մի լավ քեֆ կանենք։

Նա չէր էլ մտածում այդ մասին, և Ժանը գիտեր։ Վերջինս ուշանում էր, պետք է փոխեր հագուստները, դուրս գար, այս կեղծ խոստումը սրտովն էր։ Համաձայնեց, համենայն դեպս հարկ համարեց «Ցտեսություն, սիրելիս» ասել սովորականից ավելի մեղմ ձայնով և ցած դրեց խոսափողը։ Ժիլը ավելի մենակ զգաց իրեն։ Վերադարձավ հյուրասենյակ ու նստեց։ Էլոիզը առաջվա պես տարված էր հեռուստատեսային հաղորդումով։ Ժիլը հանկարծ նյարդայնացավ։

— Ինչպե՞ս ես կարողանում նայել այդ հիմարությունը։

Էլոիզը նույնիսկ չզարմացավ, անտարբեր, մեղմ, համակերպված հայացքով նայեց նրան։

— Կարծում էի, այսպիսով հնարավորություն կունենաս ինձ հետ չխոսել։

Ժիլը մի պահ այնքան զարմացավ, որ չկարողացավ պատասխանել։ Միաժամանակ, «մեկին տանջել» ստորացուցիչ նախադասությունը լցվում էր իր ողջ էության մեջ շատ ծանոթ, խուլ արգահատանքով, և զգում էր, որ դիմակազերծված է։

— Ինչու՞ ես այդպես ասում։

Էլոիզը ցնցեց ուսերը։

— Հենց այնպես։ Կարծում եմ... Ինձ թվում է, որ ուզում ես մենակ մնալ, որ ոչ մեկը չհետաքրքրվի քեզանով։ Դրա համար էլ հեռուստացույց եմ դիտում։

Աղջիկը խղճալի հայացքով նրան էր նայում, շատ էր ուզում, որ իրեն ասեր. «Չէ՞, ինչ ես ասում, ընդհակառակը, խոսիր ինձ հետ, դու ինձ շատ պետք ես», և Ժիլի մոտ մի ակնթարթ ցանկություն առաջացավ հաճույք պատճառելու համար այդպես էլ ասել։ Բայց խաբկանք կլիներ. ես մի խաբկանք, և նա իրավունք չուներ այդ անելու։

— Այս րոպեին վատ եմ զգում,— թույլ ձայնով ասաց նա,— մի՛ նեղացիր։ Չգիտեմ ինչ է պատահել։

— Չեմ նեղանում,— ասաց Էլոիզը,— ես գիտեմ, թե ինչ է պատահել։ Քսաներկու տարեկան հասակում նույն բանը կատարվեց ինձ հետ։ Հղային ընկճվածություն։ Անընդհատ լաց էի լինում։ Մայրս զժվում էր։

Անխուսափելի էր, այդպես էլ պիտի լիներ, համեմատություն։ Ինչ ասես, որ Էլոիզին չէր պատահել։

— Իսկ ինչպե՞ս անցավ։

Ժիլը դավեշտական ու չոր ձայնով էր խոսում։ Իրականում ինչպե՞ս կարող էր իր հիվանդությունը համեմատվել Էլոիզի հիվանդության հետ։ Դա նույնիսկ վիրավորական էր։

— Միանգամից անցավ, հենց այնպես։ Մեկ ամիս դեղահաբեր ընդունեցի, պարզապես հիմարություն է, մոռացել եմ դեղի անունը։ Իսկ մի առավոտ ամեն ինչ դեպի լավը փոխվեց։

Էլոիզը նույնիսկ չէր էլ ծիծաղում։ Ժիլը մի տեսակ ատելությամբ էր նայում նրան։

— Ափսո՞ս, որ մոռացել ես անունը։ Գուցե զանգ տայիր, մորդ հարցնեիր։

Աղջիկը վեր կացավ, մոտեցավ նրան, բռնեց գլուխը։ Ժիլը սևեռուն նայում էր նրա հանդարտ դիմագծերին, շատ ու շատ անգամ համբուրած բերանին, կապույտ ու խղճալի արտահայտությամբ աչքերին։

— Ժի՛լ... Ժի՛լ... Գիտեմ, որ այնքան էլ խելացի չեմ և շատ բան չեմ կարող անել քեզ համար։ Բայց ես սիրում եմ քեզ, Ժի՛լ, սիրելիս...

Ընկած նրա բաճկոնին, Էլոիզը լաց էր լինում։ Իսկ Ժիլը խղճում էր նրան՝ միաժամանակ անսահման ձանձրույթ զգալով։

— Լաց մի լինի,— ասում էր նա,— լաց մի լինի, այս ամենը կանցնի... վատառողջ եմ, վաղը բժշկի կգնամ։

Եվ որովհետև Էլոիզը վախեցած երեխայի պես անընդհատ անձայն հեկեկում էր, Ժիլը երդվեց հաջորդ օրն իսկ բժշկի գնալ, ժպտալով կերավ ստոր ապուխտը և փորձեց մի քիչ խոսել։ Հետո քնքշությամբ համբուրեց նրա այտը և իրենց անկողնում շրջվեց կողքի, հուսալով, որ արշալույսը չի բացվի։

## 4

Բժիշկը խելացի մարդ էր, բայց ի՞նչ էր փոխվելու դրանից։ Ընդհակառակը։ Նա քննել էր Ժիլի թոքերը, լսել սիրտը և անտարբեր հայացքով այնպիսի պարզունակ հար-

ցեր էր տվել, որ ուշադրության արժանի չէին։ Ժիլը նստած էր «Լյուդովիկոս 13-րդ» բազկաթոռի մեջ, բժշկի դիմաց և նայում էր ակնդետ այն աղոտ հույսով, որ նրա վստահ ու վճռական կեցվածքի մեջ հայտնաբերի վերջնական բուժման անհնարինությունը։ «Հավանաբար բժիշկներին հատուկ վճռական տեսք է ընդունում, ինչպես փաստաբանների դեմքին համոզվածություն ես կարդում, ինչպես ինքս էլ երբեմն լուրջ, հետաքրքրասեր լսողների և հասկացող մարդու պես եմ պահում ինձ»։ Բայց և այնպես հոգու խորքում հույսը չէր կորցնում։ Գուցե ինչ-որ տեղ մարդկանց կյանքի կոչող փոքրիկ դեղահաբեր կան։ Իսկ ինչու չէ։ Գուցե կալցիումի, երկաթի կամ աստված գիտե, որևէ այլ նյութի պակասության պատճառով է դժբախտ զգում իրեն։ Համենայն դեպս գոյություն ունեն նման միջոցներ։ Մարդ միշտ էլ ուզում է ինչ-որ բանի հասնել ուզեղի, կամքի, ազատության հաշվին և հանկարծ զգում է, որ շղթայված է, որովհետև վիտամին B-ի կարիք ունի։ Խնդրե՛մ։ Հենց սրա մասին էր հարկավոր մտածել։ Համոզվել դրանում։ Մարդու մարմինը շատ նուրբ կառուցվածք ունի և...

— Կարճ ասած, լավ չեք զգում,— ասաց բժիշկը,— ոչինչ չեմ թաքցնի, մեծ բան անել չեմ կարող։

— Այդ ինչպե՞ս։

Ժիլը զայրացած էր, նվաստացած էր զգում իրեն։ Մեկ ժամ շարունակ այդ մարդու հովանավորությանն էր հանձնել իրեն, բարոյապես վստահել էր նրան, իսկ այդ շառլատանը սառնասրտորեն հայտարարում էր, որ հույսեր չկապի իր հետ։ Բայց չէ՞ որ բժիշկ է և վերջ ի վերջո դա նրա արհեստն է, նրա աշխատանքը։ Նա «պետք է» մի բան անի։ Եթե դարաժում աշխատող արհեստավորները ավտոմեքենայից ոչ մի բան չհասկանային, կամ եթե...

— Ֆիզիկապես շատ առողջ եք։ Մի խոսքով, արտաքուստ տպավորությունը այդպիսին է։ Կարող եմ անալիզներ վերցնել, եթե ուզում եք։ Կամ մարմնի լարվածությունը բարձրացնելու համար կարող եմ դեղեր նշանակել։ Ճաշելուց առաջ ամեն անգամ մի դեղահաբ կընդունեք, օրական հինգ հատ...



Նա համարյա ծիծաղում էր, և Ժիլը ատելությամբ լցվեց նրա հանդեպ։ Բարեգութ հայր էր փնտրում, կասկածամիտ պիանիստի հանդիպեց։

— Եթե կարծում եք, որ դա ինձ կօգնի, ես պատրաստ եմ կրկնապատիկ չափերով դեղեր ընդունել,— չորությամբ վրա բերեց Ժիլը։

Բժիշկը շարունակեց ծիծաղել։

— Իսկ ի՞նչ դեղ։ Դուք տառապում եք ընդհանուր ներվերի թուլությունից, որը բժշկության մեջ կոչվում է դեպրեսիա։ Ազդում է և՛ մտավոր կարողությունների, և՛ սեռական կյանքի վրա, և՛ ընդհանրապես։ Եթե ուզում եք, կարող եմ հոգեբույժի մոտ ուղարկել ձեզ։ Երբեմն արդյունք տալիս է, երբեմն՝ ոչ։ Դոկտոր Ժիրոն, օրինակ, շատ լավ մասնագետ է...

Ժիլը ձեռքը թափ տվեց, որ նշանակում էր, թե հրաժարվում է այդ ծրագրից։

— Կարող եմ ճամփորդություն առաջարկել, օդափոխություն, կամ առաջարկում եմ ուժերը սպառել։ Այս բնագավառում ես վատ բժիշկ եմ, խոստովանում եմ, և չեմ կարող վստահ խոսել մի բանի մասին, որից ոչինչ չեմ հասկանում։ Պետք է սպասել, սա է իմ միակ խորհուրդը։

Որից հետո կանչեց քարտուղարուհուն և որպես ողորմածություն, անվնաս, բայց միաժամանակ խիստ բարդ բազադրությամբ մի դեղատոմս թելադրեց։ Նա բարի, խելացի և հոգնած դեմքով մարդ էր։ Ստորագրեց թուղթը և մեկնեց Ժիլին։

— Այնուամենայնիվ, փորձեք։ Որոշ չափով կհանգստացնի ձեր կնոջը, եթե ամուսնացած եք։

Ժիլը վեր կացավ, տատանվում էր դուրս գալ։ Ուզում էր հարցնել. «Բայց, վերջ ի վերջո, ի՞նչ եմ անելու»։ Այնքան հաղվադեպ էր լինում բժշկի մոտ, որ վերջինիս անփութությունը զարմացնում էր նրան։

— Շնորհակալ եմ,— ասաց նա։— Գիտեմ, որ շատ եք զբաղված և ժանն է...

— Ժանը իմ ամենալավ ծանոթներից մեկն է,— պատասխանեց բժիշկը։— Համենայն դեպս, մոտավորապես չորաթիր տասնհինգ հոգի ձեզ նման հիվանդների ընդունում

եմ։ Սովորաբար ամեն ինչ լավ է վերջանում։ Ժամանակներն են այդպիսին, ինչպես ասում են։

Հիվանդ Ժիլի ուսին և դուրս հրեց նրան։ Նա հայտնվեց մայթին երեկոյան ժամը հինգին, զայրացած և շշմած, այնպիսի մարդու տեսքով, որին իր մոտալուտ մահվան բոթն են հայտնել։ Չնայած ժամը նախապես ասել էր. «Գնա այդ բժշկի մոտ, սա գոնե հեքիաթներ չի պատմի»։ Բայց իրավունք ունի՞ բժիշկը՝ այդ արհեստի տերը, հեքիաթներ շպատմել։ Նա կնախընտրեր զուշակությամբ զբաղվող ստահակին կամ դեղերով խաբող ապուշին։ Այնքան էր փոքրացել, որ գերադասում էր բացեիբաց խաբված լինել, որ իր երեսին սուտ խոսեին, վերաբերվեին իր հետ ինչպես իրենք կցանկանային, միայն թե վերադտներ իրեն։ Ահա թե ուր էր հասել, և այդ իսկ մտքից ավելանում էր իր անձի նկատմամբ ստածած զզվանքի զգացումը։

Ի՞նչ անել։ Նա իհարկե կարող էր վերադառնալ խմբագրություն, չնայած աշխատանքից «բացակայելու» համար պատրվակ ուներ։ «Բժշկի մոտ էի, պարոն»։ Մանկական այդ պատճառաբանություններ, արդարանալու, սուտ խոսելու մոլուցքը այն հասուն մարդկանց մոտ, որոնք նման են հեշտությամբ խաբվող խնամակալների՝ նրանց հետ այդպես վարվելու իր ներքին համոզմունքը ավելի ու ավելի էր ընկճում նրան։

Իսկ աշխատանքը, այդ նույն աշխատանքը, որով այնքան ոգևորվել էր, այժմ զզում էր, որ անկարող է շարունակել։ Ժանը ամեն ինչ անում էր նրա համար, և սակայն վերջ ի վերջո ամեն ինչ բացահայտվելու էր։ Նրան դուրս կշպրտեին, կվանդեին խմբագրությունից։ Նա շատ էր կապված իր աշխատանքին և մեծ դժվարությամբ էր կարողացել այդ պաշտոնը զբաղեցնել։ Ստիպված նորից պիտի դառնար ողորմելի խզբզող, թերթերի համար արկածախնդիր նյութեր որոնող։ Նա առանց դժվարության կարող էր այդպիսի աշխատանք կատարել։ Եվ իր վերջն էլ զզվելի պիտի լիներ, ուղղակի թերթերին նյութ պիտի մատակարարեր, զբաղվեր հարբեցողությամբ, գիշերները գինետներում ողբար իր ճակատագիրը։ Ահա և ամենը։

Ինչ արած, խրվելու ես, միանգամից խրվիր։ Ջիլդան



Ֆրեի տանն է, Ջիլդան որևէ ելք կգտնի, Ջիլդան միշտ պատրաստ է ուրիշներին հաճույք պատճառել, թեկուզ իրեն, թեկուզ երկուսին միասին։ Տարիներ շարունակ այդ կինը գտնվում էր մի բարի բրազիլացու տրամադրության տակ, տարված էր նրա ցինիզմով և ընդհանրապես դուրս չէր գալիս Պասսիի գետնահարկ բնակարանից, նա շատ էր ընտելացել այդ կյանքին ու մեծ հաճույք էր զզում, ինչպես ուրիշները հաշիշով տարվելիս։ Քառասունութ տարեկան էր, բայց պահպանել էր հրաշալի կառուցվածքը, առյուծի նուրբ դիմագծերն ու վայրի բնավորությունը։ Ժանը նրա մասին ասում էր, որ նման է Բարբեյ դ'Օրվիլի վերջին շրջանում կերտած կերպարներին, և Ժիլը զուցե հավատար նրա խոսքերին, եթե կանանց ճանաչելու հարցում մեծ գիտակ չլիներ և եթե նրա հաղթական դիմագծերի տակ կարդացած չլիներ մատչելի և մի փոքր դրքային կատակերգությունը։ Ով էլ լիներ այդ Ջիլդան, բարի աղջիկ էր և շատ էր սիրում իրեն։

Տաքսի կանգնեցրեց և տվեց Ջիդայի հասցեն։ Արդեն երկու ամիս է, որ նրա «սիմկան» դուրս չէր գալիս Փարիզում մեքենա վարելու միտքը անտանելի փորձություն էր թվում։

Այս անգամ, որպես բացառություն, Ջիլդան մենակ էր տանը իր խայտաբղետ բարակ ներքնազգեստի մեջ, որ շատ էր սազում իրեն։ Դիմավորեց մեծագույն սիրով և միաժամանակ բազմաթիվ հանդիմանական խոսքերով։ Ժիլը նստեց անկողնու ծայրին և լսեց նրան։ Ջիլդան զգացել էր նրա բացակայությունը։ Վերադարձել էր Բահամասյան կղզիներից։ Այնպես էր ասում տաք երկրները, ինչպես կատեր Այսնապատ վայրերը։ Տանիենամյա մի նոր սիրեկան էր հարել, որի հետ «հոգյակ-հոգյակ» էր խաղում։ Բայց նրա քույրը ավելի էր դուր գալիս իրեն։ Վիսկի՞, թե գնաը մարտինի կնախընտրեր Ժիլը։ Առաջ միշտ մարտինի էր խմում։ Երբ իրար հետ էին։ Իսկապես, երկար ժամանակ իրար հետ են եղել։ Քիչ էր մնացել Ջիլդան սիրեր նրան։ Եվ իսկական սիրով, այո՛։ Տասը բոպե չանցած նա ընդհատեց խոսքը և լուրջ հայացքով նայեց նրան։

— Դու իմ գեմ ինչ-որ գավ ես նյութում։

Եվ երկուսով բարձրաձայն քրքրջացին։ Նրանք վաղուց

էին օգտագործում «զզվեցրիր, էլի» արտահայտությունը։ Սկզբում Ժիլը անհանգիստ էր, հետո սկսեց հարմար դիրքով մեկնել ոտքերը և նախկին տանտիրոջ չերմ ու կարոտած հայացքով նայել սենյակի այլ շլացնող առարկաներին։

— Բժշկի մոտից եմ գալիս,— ասաց նա։

— Դու՞։ Ի՞նչ է պատահել։ Իսկապես նիհարել ես։ Քո մեջ բան չի՞ դրել արդյոք...

Ցարտասանված բառը սահեց նրանց արանքով, և Ժիլը ծաղրանքով նկատեց, որ Ջիլդայի մոտ այդ բառը միայն կարող էր դեռևս բարեպաշտություն արթնացնել։

— Ո՛չ, քաղցկեղի մասին խոսք լինել չի կարող։ Ոչ մի բան էլ չի պատահել, ուղղակի սև մտքեր են պաշարել ինձ։ Մթնել եմ։

— Դե լավ է,— ասաց Ջիլդան,— թե չէ վախեցրիր։ Վաղո՞ւց է։

— Դե... կարծում եմ... մոտ երեք ամիս...

— Դա ոչ էլ մթնածություն է,— վճռական տոնով ասաց հանկարծ Ջիլդան,— դեպրեսիա է։ Հիշո՞ւմ ես 63 թվին ինչ վիճակում էի...

Այս հիվանդության մեջ ամենազզվելի կետն այն է, որ առաջին հերթին բոլորին էլ թվում է թե իրենք էլ նույն վիճակում են գտնվել և հետո բոլորն էլ այդ մասին ոգևորված սկսում են խոսել։ Ժիլը ստիպված լսեց Ջիլդայի դեպրեսիայի պատմությունը. կարծես դա պատահել էր Քարրիում, և մի գեղեցիկ առավոտ արթնանալով զգացել է, որ միանգամից անցել է հիվանդությունը։ Եվ նա հեռավոր, բայց ընդհանուր նշաններ գտավ իր և Ժիլի զգացածի միջև։ Իզուր։

— Գիտեմ ինչի մասին ես մտածում,— միանգամից վրա բերեց Ջիլդան,— մտածում ես, որ քեզ մոտ լրիվ այլ բան է։ Բայց սխալվում ես։ Նույն բանն է։ Մի գեղեցիկ առավոտ առաջվա պես ուրախ-զվարթ կարթնանաս երգող սիրինոսի նման կամ առրճանակը կուղղես ճակատիդ։ Դու ինձնից ավելի խելացի ես, համաձայն եմ, բայց ի՞նչ օգուտ այս պարագայում խելացի լինելը, չէ՞։

Ջիլդան խոսում էր քնքշորեն, ձեռքը դրած նրա ծնկին, գեղեցիկ մարմնով հենված Ժիլին, իսկ վերջինս շատ էր զարմանում, որ ոչ մի տարփանք չի զգում։ Առաջ, երբ



էլ հանդիպում էին, միշտ փափագում էր նրան տիրանալ։ Ժիլը ձեռքը սահեցրեց նրա ներքնազգեստի վրայով, բայց կինը կանխեց նրա շարժումը։

— Ո՛չ,— ասաց նա,— զգում եմ չէ՞, ցանկություն չունես։

Այդ ժամանակ Ժիլը գլուխը հենեց Ջիլդայի ուսին և հազուստներով անշարժ մեկնվեց նրա կողքին։ Ջիլդան անխոս շոյում էր նրա մազերը։ Ժիլը շրջափակվել էր խավարի մեջ։ Քիթը խրած այդ կնոջ մետաքսե ներքնազգեստի մեջ դժվարությամբ էր շնչում, վատ էր զգում և անկարող էր շարժվել։ Վերջապես Ջիլդան ցնցեց նրան, իսկ նա կամացուկ գոմռաց։

— Լսի՛ր, Ժիլ, Արնոն հիմա գալու է։ Պետք է հագնվեմ, ուզում է ինչ-որ նոր կալի գիշերային կաբարե սանել ինձ։ Բայց դու կմնաս այստեղ։ Եթե ուզում ես Վերոնիկային ուղարկեմ մոտդ։ Ջնաշխարհիկ հնգկուհի է և ճանաչածս կանանց մեջ՝ ամենաօժտվածը։ Մի քիչ կցրվես։ Մինչև հիմա դեռ քո այդ էլոիզի հետ ես։

Ջիլդան սկսեց միանգամից արհամարհական տոնով խոսել, նման այն կանանց, որ պախարակում են իրենց նախկին սիրեկաններին ամեն մի երկարատև մտերմության համար։ Ժիլը շարժեց գլուխը։

— Ուրեմն, այո՞։

Ժիլին միայն մի միտք էր զբաղեցնում. անշարժության մատնվել, չնեռվել Փարիզի հորձանուտի մեջ, շտապող ամբոխի մեջ երեկոյան ժամը 7-ին տաքսի չփնտրել։

— Այո,— ասաց նա։

Ժիլը մեծագույն բավականությամբ նայում էր, թե ինչպես է նա շպարվում, հագուստները փոխում, զանգահարում։ Նույնիսկ չերմությամբ սեղմեց երիտասարդ Արնոյի ձեռքը, որ կատարյալ փիսիկի էր նման։ Եվ հանդուրժողաբար։

Այս հեռավոր բնակարանում մի անծանոթ կնոջ սպասելու վիճակը նրան դետեկտիվ հերոսի դերում էր պահում և դա ինչ-որ չափով զվարճալի էր։ Իսկ հետո, երբ նրանք մեկնեցին, մեկնվեց հյուրասենյակի բաղմոցին՝ հրաշքով այնտեղ մնացած ինչ-որ տղամարդու խալաթը հագին, վառեց ծխախոտը, վերցրեց մի ամսագիր, ոտքերի տակ

մի բաժակ դրեց, ստիպված վեր կացավ մոխրամանը վերցնելու, ստիպված վեր կացավ Ջիլդայի միացրած նվագարկիչի ձայնը իջեցնելու, հետ վեր կացավ լուսամուտը բացելու, որովհետև խեղդվում էր, հետո վեր կացավ փակելու. որովհետև մրսում էր, ստիպված վեր կացավ Ջիլդայի սենյակում մոռացած ծխախոտատուփը վերցնելու, վեր կացավ գաղջացած վիսկիի մեջ սառույցի մի կտոր գցելու, ստիպված վեր կացավ ձայնապնակը փոխելու, որ անընդմեջ երեք անգամ դրեց, ստիպված վեր կացավ ամստդիրը փոխելու եվ մեկ ժամ անց, երբ սաստիկ զայրույթով էր լցված իր դեմ, լսեց դռան զանգի ձայնը և չշարժվեց տեղից։

5

Քայլում էր փողոցներով՝ տուն գնալու մտադրությամբ, սակայն մեծ-մեծ շրջանցումներ էր կատարում և չէր հաջողվում վերադառնալ։ Գլխի մեջ անսահման դատարկություն էր զգում, թվում էր, թե բոլորն իրեն են նայում, նրանց նման ինքն էլ էր համոզված, որ արգահատելի ու թշվառ տեսք ունի։ Երբեմն կարծում էր, թե տեղից չի շարժվում, երբեմն ուշքի գալով տեսնում էր, որ առանց զգալու պատվել է հրապարակի չորս բոլորը։ Հանկարծ հայտնվեց Թյուլերիների զբոսայգում, հիշեց Դրիո լա Ռոշելին, նույն վայրում կատարած նրա վերջին կարծեցյալ զբոսանքը և համարյա ծիծաղեց։ Ինքը նրա նման ինքնասպանություն գործելու քաջություն կամ ցանկություն չի ունենա երբեքից։ Նույնիսկ այդքան բան։ Դա այնպիսի մի հուսահատություն էր, որ արժանի էր ամեն տեսակի անուն կրելու, բացի՝ «քաջ» կամ «ռոմանտիկ» բառերից։ Նա ինչ-որ շափով կուզենար անձնասպան լինելու ցանկություն ունենալ։ Կամ կուզենար որևէ բան պատահեր, միայն թե արտաքոց լիներ։

«Գուցե հենց այստեղ էլ վերջացնեմ,— կարծես ինքն իրեն վստահեցնելով մտածում էր նա,— իսկապես, եթե այսպես շարունակվի, այլևս չեմ դիմանա... «ես» պետք է անպայման մի բան անեմ...»

Եվ հույսն ու վախը իրար խառնած նա մտածում էր այդ «ես»-ի մասին այնպես, ինչպես կարող էր մտածել որևէ օտարականի մասին, որն իր փոխարեն գործելու հնարա-



վորությամբ էր օժտված։ Բայց դա ավելի ուշ կլիներ, քանի որ այժմ նրա մեջ ոչ մեկը չկար, որ ընդունակ լիներ առերեսման վերցնելու և իր բեռանի մեջ կրակելու, կամ նրա մարմինը Սենայի մուգ կանաչ ջրերի խորքը գցելու, նա չէր պատկերացնում, թե ինչպես էր մեռնելու, ոչ էլ պատկերացնում էր, թե ինչպես էր ապրելու։ Եվ այս պարզ պատճառով մնում էր կանգնած՝ շնչելով, գոյատևելով, տանջվելով։

Մարմնով հանկարծ սարսուռ սահեց, որոշեց Ակումբ գնալ ու հարբել։ Դա իհարկե փրկություն չէր, բայց այլ կերպ վարվել չէր կարող։ Շարունակ քայլել սառած ձեռքերը անձրևանոցի գրպաններում խրած և զգալ էլեկտրականացած նիպերի յուրաքանչյուր թելը, որ ձեռքերը կապում են ուսերին, սրտին, թոքերին։ Նա մեռնելու աստիճան հարբելու էր, և մեկնումեկը երևի տուն կհասցներ իրեն։ Գոնե կքներ։ Իսկ էլորիը կծածկեր վրան։

Մտավ Ակումբ, ողջունեց մատուցողին, մտերմաբար խփեց ժուլիին, ինչ-որ կնատակ փոխանակեց Պիեռի հետ, հետևից ձեռքի շարժումով ողջունեց Անդրեին, Բիլլին, Ջանին, կարճ ասած, արեց այն ամենը, ինչ պատշաճության սահմաններում կարող էր և, չնայած տարբեր կողմերից կանչում էին, բարում նստեց մեն-մենակ։ Խմեց մի բաժակ օրոթ. հետո մեկ ուրիշը։ Հետևից նայողը պիտի կարծեր, թե չորս է խմում։ Հենց այդ պահին նրան մոտեցավ Թոմասը, նկատելիորեն հարբած, երջանիկ ժպիտը դեմքին, տեղավորվեց ժիլի մոտ։ Նրանք արդեն չորս տարուց ի վեր մի աղջկա և ինչ-որ ռեպորտաժի պատճառով խմբագրությունում ախոյան-ընկերներ էին դարձել։ Մութ ու խառը պատմություն էր, որի մանրամասնությունները այլևս չէր հիշում ժիլը։ Նա մի բան միայն ստույգ գիտեր. այն է, որ ընդհարված էին։ Թոմասը կարճահասակ, նիհար, սուր դիմագծերով մի մարդ էր։ Նրա զիլ ձայնը համբերությունից հանում էր ժիլին։

— Ըհը՛, անուշիկ ժիլն էլ է այստեղ.— բացականչեց նա բիրիբ մտնելով, իսկ ժիլը նրա շնչառությունից խեղդվելով մի քայլ ընկրկեց։ Միայն սա էր պակաս, որ երեկոն կատարյալ վախճան ունենար։

— Ինչո՞ւ ես հեռանում, ինչ է, դուրդ չեկա՞։ Ասա՛ դուրդ չեկա՞...

Պիեռը հեռվից նշաններ էր անում։ Նա ամբողջ երեկոյի ընթացքում հերթապահել էր և հիմա նշաններով հասկացնում էր Ժիլին, որ հարբած է, մի բան, որ խիստ ակնհայտ էր։ Թոմասը պնդում էր.

— Դե՛, անուշիկ Ժիլ, պատասխանելու՞ ես թե չէ։

Եվ հանկարծ մի շարժումով, որ չկիսես դիտումնավոր արվեց, թե անդիտակցաբար, բաժակը շրջվեց Ժիլի վերնաշապկի վրա։ Բաժակը փշրվեց գետնին, և բոլոր խոսակցությունները միանգամից ընդհատվեցին։

Միաժամանակ Ժիլի մեջ էլ ինչ-որ բան խորտակվեց. դա երջանկության հանգեպ ունեցած անունն էր, մարդկանց հանդեպ ունեցած հարգանքը, ինքնատիրապետումը, որ թվաց. վերջնականապես կոտրվում է, ամեն ինչ կորչում է մոլուցքի մեջ, և հանկարծ զգաց, որ հարձակվել է Թոմասի վրա ու ծեծում է նրան։ Սեղանը առաջին իսկ հարվածից գետնամած ընկել էր, և Ժիլը նրա առջև ծնկած՝ բռունցքներով հարվածում էր սուր դիմագծերով դեմքին, հարվածում էր կյանքը, կյանքում կրած հուսախաբությունը, հարվածում էր ինքն իրեն, այնինչ ինչ-որ մեկի ուժեղ ձեռքերը բռնած իր ուսերից քաշում էր ետ։ Իսկ ինքը, համարյա հեկեկալով, անընդհատ շարունակում էր հարված հարվածի հետևից տեղալ, մինչև որ բերանին իջած ուժեղ հարվածի հետ միաժամանակ նրա ականջին հասավ «կատաղած շուն» արտահայտությունը։ Տիրեց լռություն։ Երբ դադարեցին հարվածները, նա իրեն շրջապատված տեսավ տասնյակ անհասկանալի, զայրացած դեմքերով, տեսավ չորեքթաթ փախչող փոքրամարմին Թոմասին, իսկ շրթունքին զգաց աղի արցունքի ու արյան խառնված տհաճ համը։ Նա ետ-ետ գնալով դուրս եկավ. ոչ մեկը ոչ մի բառ չասաց։ Նույնիսկ Պիեռը չխոսեց, որի հետ երիտասարդական տարիներին հարբել էր այնքան։ Այդ նույն Պիեռն էր ողջամտորեն հարվածել իրեն ու լավ էր արել։ Վերջ ի վերջո դա նրա աշխատանքն էր։ Յուրաքանչյուր ոք պետք է իր ապրուստը հոգա։

Ժիլի բնակարանից ձայներ էին լսվում, մի պահ դարմացած կանգ առավ շեմին։ Դիշերվա տասներկուսը կլիներ։ Գրպանից հանեց թաշկինակը, սրբեց բերանին շորացած



արյունը։ Նա դանկություն չուներ Ֆրանկենշտեյնի[1] նման ներս բնկնեիր, եթե տասը լիներ, չէր վարանի։ Այդ փոքրիկ կատաղիներն էլ, որ ժամանակին այնքան զվարճալի էին իրեն, արդեն կորցրել էին իրենց ողջ հմայքը։ Ժանն իր բնկերուհու՝ դիրուկ, թխորակ, հիմարիկ և նազելի Մարթայի հետ հյուրասենյակում սպասում էր, իսկ Էլոիզը լուսամուտից նայում էր դուրս։ Վերջինս ցնցվեց, երբ Ժիլը ներս մտավ։ Ժանը նրա կողմը շրջեց ինքնատիրապետած, հանդիսա մի դեմք, իսկ Մարթան ճչաց.

— Աստվա՛ծ իմ, Ժիլ... ի՞նչ է պատահել։

«Կարծես իսկական ընտանեկան հավաք լինի,— մտածեց Ժիլը,— հարազատ, բարեհոգի ընկերները հավատարիմ կնոջ հետ վերջապես անհանգստանում են... Եվ գեռ ավելին, ինչպիսի՞ բարեբախտություն, հերոսը տուն է վերադառնում վիրավոր»։

Էլոիզն արդեն լողասենյակ էր նետվել բամբակ բերելու։ Ժիլը բազկաթոռի մեջ գցեց իրեն և ժպտաց.

— Ես կռվեցի, այն էլ հիմար ձևով, ինչպես սովորաբար կռվում են ամեն անգամ։ Գիտե՞ս ում հետ, Ժան, Թոմասի։

— Թոմասի՞ հետ։ Միայն չհամոզես, թե Թոմասն է քեզ այդ օրը գցել։

Ժանը սրտանց ծիծաղեց այն անհավատ մարդու պես, որ ամեն երկուշաբթի գնում է բռնցքամարտի։

— Ո՛չ,— ասաց Ժիլը,— Պիեռն արեց բաժանելու ժամանակ։

Հանկարծ վերհիշելով այդ ողորմելի վիճաբանությունը, իրեն համակած գազանային կատաղությունը, մեծագույն նողկանք զգաց։

«Բավական է որ զզվելի դառնամ ինքս իմ աչքին, այդպիսին կդառնամ նաև ուրիշների համար...» Նա բարձրացրեց ձեռքը.

— Այլևս չխոսենք։ Վաղը խմբագրությունում ինձ ան-

[1] Ֆրանկենշտեյն—բազմաթիվ սարսափագրող կինոնկարների հերոս, կիսամարդ, կիսամեքենա (Ս. Թ.)։

առաջ կասեն, հաջորդ օրը կմոռանան։ Ո՞ւմ եմ պարտական ձեզ տեսնելուս հաճույքը։

Հարցը Մարթային էր ուղղված, որն առանց պատասխանելու սիրալիր ժպտաց։ Ժանը անպայման նրան ասած կլինի «Ժիլի մոտ ինչ-որ բան խախտված է», և Մարթան ուշադիր նայում էր այն մարդուն, որի մոտ ինչ-որ բան խախտված էր, մի իրավիճակ, որ բնականորեն հեռու էր նրան հասու լինելուց։ Էլոիզը՝ նման այն խստապահանջ կանանց, որոնց դերում սիրում են հանդես գալ գթության քույրերը, ինքն իրեն տիրապետած, վերադարձավ և բարձրացնելով Ժիլի գլուխը, ասաց.

— Չշարժվե՛ս։ Մի քիչ կմրմռա և վերջ։

«Սա էլ մայրիկը։ Տղաս շարությունն է արել։ Բայց ի՞նչ են ուզում այս մարդիկ իրենց հիմար կատակերգություններով։ Քիչ առաջ առնական, բայց հուսահատ ընկերներն էին ներկայացում սարքել. «Թզուկին չի կարելի քոթակե՛լ»։ Իսկ հիմա վերադարձ դեպի ընտանեկան օջախ, գաղտնի համագործակցության գիրկը, որ հարցեր է լուծում հօգուտ ինձ։ Ժանը, որի ընկերը տուրուդմփոց է սարքել, ուժեղ տղամարդ է ձևանում, այ, այ, ա՛յ։ Էլոիզը տանտիրուհու դերում է հանդես գալիս, Մարթան՝ ոչ մի դերում, որովհետև ոչ մի դեր չի կարող ստանձնել։ Այլապես կվերցներ 90 ատիճանի սպիրտը և կմեկներ Էլոիզին, որ նույնպես կանգնած է կողքիս»։

— Դե՛,— ասաց Ժանը,— ի՞նչ ասաց Դանիելը։

— Դանիե՞լը։

— Բժիշկը։

— Զանգ չտվի՞ր։

Նա պատահարար տվեց այդ հարցը, լարությունից մղված, ցանկանալով շեշտել իր նկատմամբ տածած հայրական վերաբերմունքը, խնամակալի վերաբերմունքը, որն այլևս չափ ու սահման չէր ճանաչում։ Եվ տեսնելով Ժանի կարմրած դեմքը, զգաց, որ ճիշտ նշան էր բռնել։ Ուրեմն Ժանն իրոք անհանգստանում էր։ Եվ հանկարծ սաստիկ վախեցավ, կենդանական, բնազդային սարսափելի վախ էր դա. իսկ եթե այս ամենը իր ավարտը հոգերուժական հիվանդանոցում գտնի՞։



— Այո՛,— ասաց Ժանը սուտ խոսել չցանկացող բարեպաշտ մարդու տեսքով, քանի որ սուտ խոսելն այլևս անօգուտ էր։ — այո՛, զանգահարել եմ։

— Անհանգստացա՞ր։

— Մի քիչ։ Չնայած նա վստահեցրեց ինձ։

— Վստահեցրեց, դրա համա՞ր ես կեսգիշերին այստեղ։ Ժանը միանգամից բորբոքվեց.

— Այստեղ եմ, որովհետև Էլոիզն էլ գիտեր, որ ժամը չորսին բժշկի մոտ պիտի լինես, որովհետև նա ոչ մի լուր չուներ քեզնից և խելքը թոցրել էր։ Եկա մենակ չթողնելու համար, եկա վստահեցնելու նրան։ Խոսել եմ Դանիելի հետ, ներվային վիճակում ես, հոգնած, թուլացած, ինչպես տասը փարիզաբնակներից ինը։ Բայց դա պատճառ չէ, որ մարդկանց անհանգիստ վիճակում պահես և գինետներում կովես Թոմասի կամ մի ուրիշի հետ։

Տիրեց լռություն։ Հետո Ժիլը ժպտաց.

— Այո՛, պապա, էլ ուրիշ բան չասա՞ց ընկերդ։

— Պետք է հանգստանալու գնաս։

— Տե՛ս է... խմբագրությունը ինձ ձրի տուրիստական ուղեգիր կհատկացնի, և ես կգնամ Բահամայան կղզիներ։ Մեր շեֆի հետ կխոսես, չէ՞։

Ժիլն զգում էր, որ հիմար վիճակի մեջ է ընկել, լարացած է, զարմանալու ոչինչ չկա, բայց չէր կարողանում իրեն զսպել։

— Կարծում եմ շատ լավ է այնտեղ, Բահամայան կղզիներում,— կենսուրախ տոնով ասաց Մարթան՝ այդ միամիտ արարածը, իսկ Ժանը զայրացած այնպես նայեց նրան, որ Ժիլի մեջ քրքջալու մեծ ցանկություն առաջացավ։ Նա ցավ պատճառելու չափ կրծոտեց շրթունքները, բայց զգում էր, որ ծիծաղի ալիքը այնպիսի անզուսպ ընթացքով էր ծառս լինում իր մեջ, ինչպես քիչ առաջ՝ մոլագարությունը։ Նա հուսահատորեն ճիգ գործադրեց, խոր շունչ քաշեց, բայց Մարթայի նախադասությունը գլխից դուրս չէր գալիս և անասելիորեն կոմիկական էր թվում իրեն։ Թեթևակի հազաց, փակեց աչքերը և ծիծաղը պոռթկաց միանգամից։

Միծաղում էր, շնչահեղձ լինելու չափ ծիծաղում։ «Բահամասյան կղզիներ, Բահամասյան կղզիներ», կարծես ներում խնդրելով քրթմնջում էր նա ծիծաղի նոպայի միջից։ Իսկ երբ բացում էր աչքերը և տեսնում դիմացը կանգնած երեք անհանգիստ դեմքեր, կրկնապատկվում էր ծիծաղը։ Բերանի վերքը բացվել էր նորից, և զգում էր կղակի վրայից հոսող արյան շիթը։ Տարտամորեն գիտակցում էր, որ կեսգիշերին թավշապատ բազմոցի մեջ նստած իր այս կերպարանքով, արյունոտ դեմքով, ծիծաղի ցնցումներով, նման պիտի լիներ խելագարի։ Հրաշքով ամեն ինչ միանգամից փոխվել էր ծայրաստիճան անհեթեթության ու զվարճանքի... և ամբողջ օրը... Աստվա՜ծ իմ, այդ ինչ երեկո անցկացրեց... ուրիշի խալաթը հագին փաշայի նման բազմած՝ ինչ-որ կնոջ սպասելով, որից հետո դուռն անգամ չէր բացել նրա առջև...

Եթե միայն հաշողվեր ժանին պատմել այս ամենը... Բայց անընդհատ ծիծաղում էր, ծիծաղում և ոչ մի հնչյուն չէր կարողանում արտաբերել։ Դողում էր Ծիծաղից։ Հիմարություն, կյանքն էլ հիմարություն է, ուրեմն ինչու՞ կողքին կանգնածները հետը չեն ծիծաղում։

— Վերջացրու՛,— ասում էր ժանը,— վերջացրու՛։

«Վստահ եմ, հիմա կապտակի, համոզված է, որ նման դեպքերում այդպես են վարվում։ Բոլորն էլ կարծում են ամեն առիթով կյանքում պետք է չափված-ձևված գործել։ Եթե շատ ծիծաղես՝ կապտակեն, շատ լաց լինես՝ կքնեցնեն կամ կուղարկեն Բահամասյան կղզիները»։

Բայց ժանը չէր ապտակում։ Բացել էր պատուհանը, կանայք ննջասենյակ էին մտել, ծիծաղի նոպան հանդարտվում էր։ Նա չգիտեր նույնիսկ, թե ինչու էր ծիծաղել։ Առավել ևս, հիմա էլ չէր հասկանում, թե ինչու էին անընդհատ հոսող տաք ու հանդարտ արցունքները ողողում դեմքը և ինչու էր ժանի ձեռքն այդպես դողում կարմիր վանդակներով կապույտ թաշկինակն իրեն մեկնելիս։

# ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

## ԼԻՄՈԺ

### 1

Բերանքսիվայր պառկել էր խոտերի մեջ և դիտում էր լեռների եռակից բարձրացող արևը։ Եկած օրվանից արթնանում էր առավոտ շուտ, վատ էր քնում։ Նա նույնքան ուժասպառ էր եղել գյուղի անդորրից, որքան Փարիզի խելակորույս աղմուկից։ Քույրը, որի տանն էր ապրում այժմ, զգում էր այս ամենը և ներքուստ վշտանում։ Վերջինս երբեք երեխա չէր ունեցել և ժիլին իր տղան էր համարում։ Տասնհինգ օրում չկարողանալով նրան առաքի կանդնեցնելը, ինչպես ինքն էր ասում, ուղղակի անպատվություն էր համարում և՛ Լիմուզենի ջինջ ու մաքուր օդի, և՛ ընդհանրապես իրենց ընտանիքի համար։ Անշուշտ թիթեռներից արդեն գիտեր, թե ինչ բան է այդ «անիրավային դեպրեսիան», բայց, ըստ նրա, դա ավելի շուտ կամակորություն էր, քան հիվանդություն։ Քառասուն տարվա ընթացքում Օդիլը, ըստ օրինաց, բաժանելով ժամանակը նախ ծնողների, հետո ամուսնու և տան հոգսերի վրա, զուրկ էր երևակայությունից, սակայն դրա փոխարեն նույնքան բարի էր։ Նա ամբողջ հոգով հավատում էր, որ հանգիստ վիճակը, բիֆշտեքսները և բացօթյա զբոսանքները ամեն տեսակի հիվանդություն կարող էին բուժել։ Իսկ ժիլը շարունակ նեղվարում էր, լոմ և միայն երբեմն զուրս էր գալիս սենյակից այն ժամանակ, երբ քույրը խոսում էր վերջին իրադարձությունների մասին ամուսնու՝ Ֆլորանի հետ։ Եվ Օդիլը եթե պատահմամբ միացներ հեռուստացույցը՝ երկու ալիքով հրաշալի ընդունիլը,

որ վերջերս էին գնել, փակվում էր սենյակում և հայտնվում միայն հաջորդ օրը։ Սկզբից նույն նա ուղղակի չեղված մարդ էր, իսկ Փարիզն իսկապես խանգարել էր նրան ամբողջապես ետ՝ դեպ Ժիլ... Օդիլը երբեմն մատները խրում էր նրա մազերի մեջ, զարմանալի է, Ժիլը չէր ասարկում։ Նույնիսկ, երբ քույրը գործում էր, հանգիստ առանց խոսելու նստում էր նրա ոտքերի տակ, կարծես թեթևանում էր նրա ներկայությամբ։ Քույրը, երբեմն բնազդով, պատմելու համար այնպիսի անհետաքրքիր նյութ էր բերում, ինչպես՝ եղանակի, ձերբակալվածի, զրոցիների մասին առօրյա թեմաներ, որ հանգստացնում էր նրան։

Փարիզի այդ դժնդակ օրից հետո Ժիլն անմիջապես որոշեց հեռանալ քաղաքից։ Եվ քանի որ պարտքերի մեջ խրված էր, ավելին, նույնիսկ վախենում էր յուրաքանչյուր անծանոթ մարդուց, պատսպարվեց Օդիլի մոտ, ծնողներից մնացած խարխուլ տան մեջ, որտեղ նրանցից հետո ապրում էր քույրը ամուսնու՝ բարեհամբույր Ֆյոբանի հետ։ Վերջինս աշխատանքային հարցերում երեխայի պես անճարակ էր, օրվա ապրուստը հայթայթում էր ազարակից ստացած եկամուտներով ու ռենտայով, հնարավորին չափ քիչ առնչվելով ժամանակակից կյանքի հետ։ Ժիլն իմարկի համոզված էր, որ այստեղ շատ պիտի ձանձրանար, բայց գոնե կպաշտպանվեր, զերծ կլիներ այդ ծիծաղի նոպաներից, որոնք, ինչպես ինքն էր զգում, ավելի ու ավելի հաճախակի պիտի կրկնվեին, եթե մնար Փարիզում։ Իսկ այստեղ, թեկուզ գետնին թավալվեր, միայն Լիմուզենի ոչխարներն էին ականատես լինելու նրա տանջանքին, իսկ դրա համար նրանք չէին նեղվի, ինչպես ընկերները կամ սիրուհին։ Բացի այդ, նա քրոջ մոտ էր, իր արյունակցի, որի հետ կապված էր բնազդային թելերով։ Երկնքից իջնող օրհնություն էր կարծես նրա համար։ Կարեկցանքի յուրաքանչյուր դրսևորում, յուրաքանչյուր արտահայտություն սարսափեցնում էին նրան։ Իսկ հիմա ուրիշի ներկայությամբ հանդիմանանքի խոսք լինել չէր կարող։ Մեկ ամսից բուժված վերադառնալու հաստատ որոշումով մեկնել էր։ Արդեն երկու շաբաթ էր անցել այն օրից, բայց դեռ անհույս վիճակում էր։ Գեղեցիկ էր դյուղը, նա դիտեր այդ, բայց չէր զգում, տունը հարազատ էր, բայց



ինքն ազատ չէր, յուրաքանչյուր ծառ, յուրաքանչյուր պատ, յուրաքանչյուր միջանցք կարծես խոսում էին հետն ու ասում. «Առաջ երջանիկ էիր այստեղ, լավ էիր զգում քեզ»։ Իսկ հիմա գողեգող էր անցնում ծառուղիների եզրով կամ միջանցքների պատերի տակով։ Մինչև վերջին ունեցվածքը կողոպտված գող էր կարծես, որից անգամ մանկությունն էին հափշտակել։

Արևը բարձրանում էր արդեն և ողողում դաշտերը։ Նա ջրից գեմքը խոնավացած խոտի մեջ՝ մեկ անգամ, երկու անգամ, դանդաղորեն շնչելով հողի բույրը, համառորեն փորձելով վերագտնել երբեմնի ճաշակած երանելի հաճույքը։ Սակայն ամենապարզ քմայքն անգամ ձեռք չի բերվում պատվերով։ Նա զգվանքով էր նկատում կոմիկ դերասանի նման բնության կեղծ սիրահարի շարժումները, այն մարդու պես, որ տենչում է կնոջը, բայց այլևս չի սիրում նրան, այնուամենայնիվ պատկում է հետը, օգտագործելով միևնույն բառերը, կատարելով միևնույն շարժումները, տակայն հանգած, հուսաբեկ սրտով։ Վեր կացավ գետնից, տհաճությամբ նկատեց, որ բրդյա հյուսվածքը թրջվել է, և քայլերն ուղղեց դեպի տուն։

Հին ու մոխրագույն տուն էր, կապույտ տանիքով, վեր խոյացող խիստ տարօրինակ երկու եռանկյուն որմերով, առջևում պատշգամբն էր, ետևում՝ բլրակ. իսկական լիմուզենյան տուն։ Ամառ-ձմեռ, առավոտ-իրիկուն, տարվա բոլոր եղանակներին ու բոլոր ժամերին այնտեղից թմբիր բույր էր տարածվում։ Համենայն դեպս նրան այդպես էր թվում. նա զգում էր բույրը նույնիսկ արշալույսի շողի մեջ, որից սարսռաց մի փոքր և մտավ խոհանոց։ Օդիլը արդեն վեր էր կացել, առավոտյան երկար շրջազգեստը հագին սուրճ էր պատրաստում։ Ժիլը համբուրեց նրան, իսկ սա քթի տակ ինչ-որ բան մրթմրթաց թոքերի բորբոքումով հիվանդանալու մասին՝ ցող ու շաղի մեջ թավալվելու դեպքում։ Համենայն դեպս իրեն լավ էր զգում քրոջ ներկայությամբ, երբ շնչում էր նրա օծանելիքի և սուրճի բույրը, բուխարիկի մեջ վառվող փայտի անուշ հոտը։ Ժիլը կուզենար լինել այն թավամազ դեղին կատուն, որ վերջապես որոշելով արթնանալ, ձգվում էր մեղուկի վրա։ «Աստվա՜ծ իմ, աստ-

վա՜ծ իմ, սա է կյանքը, այսքան պարզ ու այսքան խաղաղ։ Բայց ավա՜ղ, հազիվ մի քանի բոպեով մերձեցած անցյալի հիշատակին, կյանքն ու հալածանքը իսկույն հարձակվում էին նրա վրա, ինչպես կատաղած շան ոհմակն է երկու-երեք բոպե շունչ քաշելու համար դադար տալիս եղնիկին, որպեսզի երկարաձգի որսի հաճույքը։

Ֆլորանը նույնպես խալաթով մտավ խոհանոց։ Կնոջ նման կարճահասակ ու գիրուկ էր, միայն թե սրա անծայրածիր կապույտ աչքերը նման էին լճակների, որ կարծես սիալմամբ էին ընկել նրա կարմրավուն դեմքի մեջ։ Ավելին, նա զարմանալի սովորություն ուներ մնչախաղի օգնությամբ տեղ հասցնել ասածները։ Թևը պահում էր դեմքին, երբ խոսում էին պատերազմի մասին, իսկ երբ խոսքը սիրո մասին էր, մատը տանում էր շրթունքին, և այսպես շարունակ։ Այդ պատճառով էլ Ժիլին տեսավ թե չէ, թևերը տարածեց օդում և այնպես ողջունեց, կարծես հարյուր մետր հեռավորության վրա գտնվեին։

— Հանդիստ քնեցի՞ր, սիրելիս։ Հաճելի երազնե՞ր։

Եվ նշանակալից հայացք գցեց նրա վրա։ Ֆլորանը համառորեն աշխատում էր Ժիլի վիճակը բացատրել ինչ-որ կնոջ հետ կապված պարզ ու դժբախտացած սիրո պատմությամբ։ Ժիլի ժխտական պատասխանները ոչ մի արդյունք չէին տալիս, նրա աչքում Ժիլը հմայելու վարպետ էր, բայց այս անգամ անառակի մեկը պարանը գցել էր վիզը։ Այդ էր պատճառը, որ Ժիլին բազմոցի մեջ փլված էր տեսնում, խոսք էր գցում. «մեկի փոխարեն տասը կունենաս» և ոգևորված բաց էր անում երկու ձեռքի տասը մատները։ Նման պահերին Ժիլը չգիտեր՝ խենթի պես ծիծաղեր թե կատաղեր, բայց ոչինչ չէր ասում։ Լավ մտածելուց հետո նա մի տեսակ հաճելի բավականություն էր զգում, որ չեն հասկանում իրեն։ Եվ ի վերջո դա կարող էր իրականություն լինել։ Նրանց մտքերը պղտորելով, հանգամանքները մեղմանում էին, այնպես ինչպես դեղնախտով հիվանդ, լիմոնի պես դեղին բարձին գամված մարդուն այցի եկած բարեկամը հայտնում է իր անհանգստությունը նրա մոտ ճաղատություն սկսվելու կապակցությամբ։

— Ժամը քանի՞սն է,— ուրախ տրամադրությամբ հարցրեց Ֆլորանը,— ու՞թը։ Հրաշալի օր...

Ժիլը սարսռալով լրջվեց պատուհանի կողմը։ Իսկապես, ինչ հրաշալի օր էր սպասվում։ Մի քիչ հետո քրոջը գյուղ կատնի գնումներ կատարելու, լրագրեր, ծխախոտ կգնի, կվերադառնա և նախաճաշից առաջ պատշգամբում նստած կկարդա, հետո կփորձի պառկել ու քնել, բայց իզուր։ Հետո առանց ցանկության կգբոսնի անտառում, վերադառնալուց հետո կգնա քնելու, որպեսզի քույրը, որ ժամը ութից սկսած հանդիստ չի կարողանում տեղում մնալ, չհասցնի հեռուստացույցը միացնել։ Զզիտես ինչու, մի տեսակ զզվանքով էր նայում այդ գործողությանը։ Բայց մի պահ խղճի խայթ արթնացավ, ինչ իրավունքով էր քրոջը զրկում այդ հաճույքից, մի՞թե մահացու հանցանք էր հեռուստացույց նայելը։ Առանց այն էլ մի ուրախ կյանք չուներ խեղճը։ Նա կռացավ դրոջ վրա։

— Այս երեկո ձեզ հետ հեռուստացույց կնայեմ։

— Չէ՛, չէ՛,— առարկեց քույրը,— ոչ այսօր։ Գնալու ենք Ռուարդների մոտ, անցյալ օրը ասել եմ քեզ այդ մասին։

— Ուրեմն մենակ կդիտեմ հաղորդումները,— կատակեց Ժիլը։

Օդիլը ցատկեց տեղից.

— Դժվել ես, ինչ է, դու էլ ես գալու։ Տիկին Ռուարդը շատ սկզբից Հինգ տարեկանից ճանաչում է քեզ...

— Ես այստեղ հյուր գնալու համար չեմ եկել,— գայրացած գոռաց Ժիլը,— եկել եմ հանգստանալու։ Ձ՛մ գա...

— Ո՛չ, կգա՛ս... անդաստիարա՛կ... անսի՛րտ, փողոցայի՛ն...

Երկուսն էլ ոռնում էին՝ միանգամից վերագտնելով մանկական տարիների վիճաբանությունների տոնը։ Իսկ Ֆլորանը, գլուխը կորցրած, զուր էր բազմապատկում խաղաղություն հաստատելու նշանները, մերթ թևերի շարժումներով կարծես ընդօրինակելով չափազանցության մեջ ընկած դիրիժորի, երբեմն էլ մի մատը շարժելով նմանվում էր համոզմունքների մեջ վստահ քարոզչի։ Այս ամենը անտեղի էր։ Հինգ բոպեում ոգեկոչվեցին և՛ նրանց մայրը, և՛ Ժիլի անառակ կյանքը, Օդիլի ակամա համակերպվածությունը, կնությունը և հիմար վիճակը, վերջին կետը Ժիլի պատճառով, որից հետո պայթեցին քրոջ արցունքները։ Ֆլորանը

գրկեց նրան, իհարկե, կամքից անկախ Ժիլին ցույց տալով բռնցքամարտի ամենածիծաղելի կեցվածքը, իսկ Ժիլը, կատաղած ու պարտված, իր հերթին գրկեց Օդիլին՝ երդվելով, որ կգնա ուր ցանկանա։ Որպես հատուցում՝ նրան համենայն դեպս հորջորջեցին «բարի մանչուկ»։

Երեկոյան ժամը ութին բոլորը միասին նստեցին Ֆլորանի հին «սիտրոենը»։ Նա այնքան տարօրինակ էր վարում ավտոմեքենան, որ մինչև Լիմոժ ընկած երեսուն կիլոմետր տարածությունն անցնելը Ժիլը բացի անձնական կյանքի մասին մտահոգվելուց, ուրիշ ոչ մի բանի մասին չմտածեց։

## 2

Լիմոժում նմուշի համար մնացել էին մի քանի կապույտ սալոններ, և Ռուարգներինը վերջիններից մեկն էր։ Այս քաղաքում տարիներ առաջ մի տեսակ ընդհանուր մոլություն էր դարձել թավշապատել կահույքը կապույտ գույնով, և որոշ ընտանիքներ գուցե նյութական ընդհանուր պայմաններից կամ հավատարիմ մնալու սկզբունքներից դրդված պահպանել էին դրանք։ Մտնելով Ռուարգների սալոնը, Ժիլը կարծես միանգամից վերապրեց իր մանկությունը. աչքի առջևով անցան հազարավոր ընթրիքներ, ձանձրույթի բազմաթիվ ժամեր, երբ պուֆիկի վրա նստած սպասում էր ծնողներին, բազմաթիվ երևակայական երազներ, որոնք հյուսվում էին գունաթափ կապույտի մեջ։ Բայց այդ պահին վարդաճերմակ տանտիրուհին գրկեց նրան ու սեղմեց կրծքին։

— Ժի՛լ, փոքրիկ Ժի՛լ... քսան տարի չեմ տեսել ձեզ... բայց գիտե՞ք, ամուսինս ու ես կարդում ենք ձեր բոլոր նյութերը, գուք մեր տեսադաշտից չեք հեռանում... Անշուշտ բոլոր մտքերի հետ համաձայն չենք, որովհետև միշտ էլ ինչ-որ չափով պահպանողական ենք եղել,— ավելացրեց տանտիրուհին իր տարօրինակությունը պարզելով,— բայց հետևում ենք ձեզ... Երկա՞ր ժամանակով եք մեզ մոտ... Մի փոքր սակավարյունությո՞ւն, այդպես անաց Օդիլը... Որքան երջանիկ եմ ձեզ տեսնելով, նկե՛ք, ուզում եմ ձեզ բոլորին ներկայացնել։



Այս ու այն կողմ հրվող, սարսափած տեսքով Ժիլը ճանաչեցնել էր իրեն պառավ կնոջ համբույրներին, շոշափումներին, շնորհավորանքներին։ Սալոնը լեփ-լեցուն էր ոտքի կանգնած մարդկանցով, բացառությամբ երեք ծերունիների, որոնք ամրացված էին աթոռներին, և Ժիլը սկսեց խուճապի մատնվել։ Նա կատաղած հայացքներ էր նետում քրոջ վրա, բայց վերջինս ցնծության մեջ, առագաստները պարզած, պլանում էր տալոնով մեկ ու նետվում Ժիլին անծանոթ մարդկանց վզերին։

«Որքա՞ն ժամանակ կլինի, որ այստեղ չեմ եկել,— մտածեց Ժիլը։— Ասված իմ, հորս մահից հետո տասհինգ տարի է անցել։ Եվ ի՞նչ գործ ունեմ այստեղ»։ Հետևեց պառավ կնոջը, խոնարհվեց տասը ձեռքի վրա, տասներկու այլ ձեռք սեղմեց, ամեն անգամ փորձելով ժպտալ՝ հաղիվ նայելով անծանոթ դեմքերին, չնայած կանանցից շատ շատերը գեղեցիկ էին և ճաշակով հագնված։ Ի վերջո պատրաստվեց նստած մի ծեր պարոնի մոտ, որը ներկայացավ որպես հոր մտերիմ ընկերներից մեկը և նախքան բացատրությունների անցնելը, հարցրեց, թե ինչ էր մտածում քաղաքական իրադրության մասին։ Ժիլը թեթևակի հակված ձևացնում էր, թե լսում է, երբ տիկին Ռուարգը բռնեց նրա թևը։

— Էդմո՛ն,— ձայն տվեց նա,— բավական է տանջեք մեր երիտասարդ բարեկամին։ Ժիլ, կուզենայի ձեզ ներկայացնել մադամ Սիլվերներին։ Նաթալի, ահավասիկ Ժիլ Լանթիեն։

Ժիլը շրջվեց և իր դիմաց տեսավ ամբողջ հասակով մեկ ձգված գեղեցիկ մի կնոջ, որ ժպտում էր։ Համարձակ հայացքով կանաչ աչքեր ուներ, շիկահեր էր և դեմքի վրա հպարտություն ու միաժամանակ մեծահոգության արտահայտություն ուներ։ Ժպտաց Ժիլին, ցածր ձայնով «բարի երեկո» արտասանեց և իսկույն հեռացավ։ Ժիլը վախեցած հայացքով հետևեց նրան։ Այս փոքրիկ գունաթափ, կապույտ հնամած սալոնում նա զարմանալի կերպով շլացուցիչ էր իր բոցեղեն տեսքով։

— Հեղինակության հարց է,— շարունակում էր անսպառ Էդմոնը։— Ա՛, գեղեցիկ մադամ Սիլվերնե՞ր նք նայում։

Մեր քաղաքի թագուհին է... Եթե ես ձեր տարիքում լինեի՞... Ինչ վերաբերում է այնպիսի երկրի ներքին քաղաքականությանը, ինչպիսին մերն է...

Ճաշկերույթը անվերջանալի էր թվում։ Սեղանի հակառակ ծայրին նստած, Ժիլը երբեմն տեսնում էր գեղեցիկ մադամ Սիլվընեերին, որի հայացքն ուղղված էր իրեն. մեղմ ու կանխամտածված մի հայացք, որն ընդհանրապես հակակություն էր կազմում նրա վարմունքի հետ։ Շատ էր խոսում, ուրջը շատ էին ծիծաղում, իսկ Ժիլը անենկատելի հեգնանքով նայում էր նրան։ Իրոք, որ Լիմուզենի թագուհին էր զգում իրեն և ըստ երևույթին կուզեր դուր գալ անծանոթ փարիզցուն, առավել ևս՝ լրագրողին։ Կար ժամանակ, որ Ժիլը հաճույքով կընդուներ այս ամենը. տասնհինգօրյա կապեր դավառական դատավորի կնոջ հետ, և ընկերների մոտ վերադառնալուց հետո բալզակյան գեղեցիկ սիրավեպի նյութ կունենար։ Բայց այժմ ամենաչնչին ցանկությունն անգամ չուներ։ Նայում էր սփոցին դրված սեփական, նիհար, անկարող ձեռքերին և ուզում էր հեռանալ այնտեղից։

Մինչև ճաշի ավարտը երեխայի նման կուչ եկավ Օդիլի մոտ, և քույրը տեսավ, թե ինչպես էին ձգվում նրա դիմագծերը, դողում ձեռքերը, տեսավ նրա աղերսագին հայացքը։ Առաջին անգամ լինելով, լուրջ վախեցավ եղբոր համար։ Նեղում հայցեց տիկին Ռոսարգին և կիսահարբած Ֆլորանին քարշ տալով, հնարավորին չափ անենկատ, որքան թույլ կտար դավառական մի սալոն, առանց հրաժեշտ տալու դուրս եկան։ Ավտոմեքենայի մեջ կծկված, Ժիլը դողդողալով կրծում էր եղունգները, երդվում, որ այլևս նման արշավանքներ երբեք չի ձեռնարկի։

Ինչ վերաբերում է Նաթալի Սիլվընեերին, առաջին իսկ հայացքից սիրեց նրան։

3

Ժիլը ձուկ էր որսում, ավելի ճիշտ, անփութորեն նայում էր Ֆլորանին, որ թաղմաթիվ հնարքներով զզվելի որդեր էր առաջարկում իրենից ավելի խորամանկ ձկներին։ Կեսօրվան



մոտ էր, արևն այրում էր, հանել էին բրդյա հագուստները և, այդրան երկար ժամանակից հետո առաջին անգամ լինելով, Ժիլը համակվեց շատ հաճելի զգացումով։ Ջուրը զարմանալի կերպով վճիտ էր, և փորի վրա պառկած նայում էր հատակի ողորկ քարերին ու ձկների ոլորանման գրավիչ կատարին, որ նետվում էին Ֆլորանի խայծի վրա, նրբորեն պոկում կերը և գոհունակությամբ հեռանում, այնինչ փեսան կտրուկ շարժումով թափ էր տալիս կարթը դատարկության մեջ, անամոթ հիշոցներ արձակելով։

— Խայծերդ խոշոր են,— ասաց Ժիլը։

— Հատուկ խարականների համար են պատրաստված,— ջղայնացած վրա տվեց Ֆլորանը,— փոխանակ ծիծաղելու, ինքդ փորձիր։

— Ո՛չ, շնորհակալ եմ,— պատասխանեց Ժիլը,— այսպես շատ լավ է։ Տե՛ս է, այդ ո՞վ է։

Նա տագնապահար թռավ տեղից։ Փոքրիկ զառիվայր արահետով դեպի դեսն էր իջնում մի կին, նա ուղիղ նրանց կողմն էր գալիս։ Պատսպարվելու նպատակով Ժիլը հայացքով մի անկյուն փնտրեց։ Բայց գետափի կանաչուտը հարթ էր ու մերկ։ Արևը շողարձակեց կնոջ մազերի մեջ, և Ժիլն իսկույն ճանաչեց նրան։

— Նաթալի Սիլվընեերն է,— բացականչեց Ֆլորանը և կաս-կարմիր կորեց։

— Սիրահարվա՞ծ ես նրան,— կատակեց Ժիլը, բայց դրա փոխարեն այնպիսի մի կատաղի հայացքի արժանացավ, որ անմիջապես լռեց։ Նաթալին արդեն կանգնած էր նրանց մոտ, հմայիչ տեսքով, արևի մեջ, սլացիկ ու ժպտադեմ, նախորդ օրվանից ավելի կանաչ աչքերով։

— Օդիլն ուղարկեց։ Անցյալ օրը խոստացա այցելել իրեն և խոսքիս տերն եմ։ Ձկան որսը հաջո՞ղ է։

Տղամարդիկ վեր էին կացել, և Ֆլորանը խղճալի տեսքով ցույց էր տալիս դույլը, որտեղ ինքնասպան ու միայնակ մի ձուկ կար միայն։ Բարձրաձայն ծիծաղեց, շրջվեց Ժիլի կողմը։

— Իսկ դո՞ւք, բավարարվում եք նայելո՞վ։

Առանց պատասխանելու Ժիլը ծիծաղեց։ Նաթալին նստեց նրանց կողքին, կանաչ գետնի վրա։ Սրճագույն կաշվից կի-

տաշրջազգեստ էր հագել, ջազանակագույն բլուզ, ցածրակրունկ կոշիկներ, ավելի երիտասարդ էր, քան նախորդ անգամ։ Պակաս ճակատագրական։ «Երեսունհինգ տարեկան կլինի»,— մտածվորապես եզրակացրեց Ժիլը։ Հիմա այնքան էլ չէր վախենում այդ կնոջից, ինչպես առաջին անգամ, ավելի ճիշտ, կարծես այնքան էլ օտար չէր։

— Ցույց տվեք ձեր շնորհքը,— ասաց Նաթալին Ֆլորանին, և նույն տեսարանը կրկնվեց։

Վախեցած հայացքով դիտեցին, թե ինչպես միանգամից խցանն ընկղմվեց շրի մեջ, թե ինչպես Ֆլորանը կտրուկ շարժումով անմիջապես վեր քաշեց կարթաձողը և ինչպես դատարկ խայծը կախվեց նրա ծայրին։ Ժիլը ծիծաղից թուլացավ, այնինչ Ֆլորանը կարթաձողը գետնին շպրտելուց հետո ձեացրեց, թե ոտնահարում է այն։

— Բավական է, վերադառնում եմ,— ասաց վերջինս,— եթե ուզում եք, ձեզ համար «Պորտո-Ֆլիպ» կոկտեյլ կպատրաստեմ։

— «Պորտո-Ֆլի՞պ»,— զարմացավ Ժիլը,— դեռ գոյություն ունի՞ այդ խմիչքը։

Նրանք մի փոքր էլ զվարճացան հեռացող Ֆլորանին նայելով, որ մագլցում էր զառիթափ ճանապարհով իր երկու կարթաձողերի մեջ խճճված ծալովի աթոռն ու դույլը ձեռքին։ Հետո, երբ տեսադաշտից անհետացավ, զգացին, որ մենակ են մնացել, անհարմար վիճակում։ Ժիլը մի կանաչ ծիլ պոկեց և դրեց առամների արանքը։ Կնոջ հայացքն ընկել էր վրան, և ներքուստ շփոթված՝ մտածում էր. «բավական է ձեռք մեկնեմ»։ Բայց չգիտեր ապտակ, թե համբույր կհաջորդեր դրան։ Համենայն դեպս ինչ-որ բան տեղի կունենար, վստահ էր։ Միայն թե նա կորցրել էր հուզումնալից վիճակում գտնվելու սովորությունը, Փարիզում ամեն ինչ մատուցվում էր, իրավիճակը միշտ պարզ էր։ Կոկորդը մաքրեց, բարձրացրեց աչքերը։ Նաթալին մտածկոտ նայում էր նրան, ինչպես անցյալ օրը այդ անիծյալ ճաշի ժամանակ։

— Քրոջս ընկերուհի՞ն եք։



— Ո՛չ։ Խոստովանեմ, որ շատ զարմացավ ինձ տեսնելով։

Այստեղ կանգ առավ. «Է՜»,— մտածեց Ժիլը,— համբույր է լինելու։ Գյուղերում էլ ժամանակը զուր չեն անցկացնում։ Բայց այդ կնոջ մեջ ինչ-որ բան խանգարում էր, որ տուրք տա իր ցինիզմին։

— Իսկ ինչո՞ւ եկաք։

— Ձեզ տեսնելու,— հանգիստ պատասխանեց կինը,— այն երեկո միանգամից զուր եկաք ինձ։ Ուզեցի մի անգամ էլ տեսնել։

— Ցավոքանց ազնիվ եք։

Ժիլին անհանգստացնում էր նրա ուրախ և հանդարտ ձայնը։ Նա շփոթված էր։

— Երեկոյան, երբ այդքան շուտ մեկնեցիք, բոլորը խոսել սկսեցին ձեր մասին, ձեր կյանքի, ձեր ջղային հիվանդության մասին... Կրքահույզ վիճակ էր։ Ֆրեյդը, հատկապես գավառում, շատ կրքահույզ է։

— Իսկ դուք եկաք ախտանշանները հայտնաբերելու։

Այդ րոպեին նա շատ զայրացած էր։ Ե՛վ նրա համար, որ իր մասին որպես հիվանդի էին խոսում, և՛ նրա համար, որ սա կրկնում էր նույն բանը այդպիսի ամբարտավանությամբ։

— Արդեն ասացի, որ եկել եմ ձեզ տեսնելու, ձե՛զ։ Կարծես ինձ շատ պետք է ձեր հիվանդությունը։ Գնա՛նք «Պորտո-Ֆլիպ» խմենք։

Նաթալին միանգամից վեր կացավ տեղից, Ժիլը այս միջոցի ընդհատումից դժգոհ դեռ շարունակում էր փորի վրա պառկած մնալ։ Դժգոհ տեսքով, ներքև հակած թարթիչների արանքից նայում էր նրան այնպիսի արտահայտությամբ, որ շատ էր սազում իրեն և ինքն էլ շատ լավ գիտեր այդ։ Հանկարծ նույնպիսի արագությամբ Նաթալին ծնկի իջավ նրա մոտ, Ժիլի գլուխն առավ ձեռքերի մեջ և դեմքին շատ մոտ խորհրդավոր տեսքով ժպտաց ու ասաց.

— Շատ նիհար եք։

Սեհեռուն հայացքով իրար նայեցին։ «Եթե համբուրի,— մտածեց Ժիլը,— ամեն ինչ կորած է, այլևս չեմ կարող տեսնել նրան։ Ափսո՜ս»։ Այս հիմար մտքերը հապճեպորեն անցան նրա ուղեղով, և սիրտն հանկարծ սկսեց ուժգին

բարախել։ Բայց Նաթալին արդեն վեր էր կացել, թափ էր տալիս հագուստները այլևս նրա կողմը չնայելով։ Ժիլը բարձրացավ և հետևեց նրան։ Ճանապարհին մի պահ կանգ առավ, և կինը շրջվեց.

— Դուք մի փոքր խելագար չե՞ք, ասացեք տեսնեմ։

Նաթալին հանկարծ լուրջ տեսք ընդունեց, որ տասը տարով մեծացրեց նրան, և թափ տվեց գլուխը.

— Ո՛չ, ամենևին։

Մինչև տուն գնացին առանց որևէ բառ փոխանակելու «Պորտո-Ֆլիպը» սառն էր, Օդիլը բարկությունից կարմրատակել էր, որովհետև Նաթալին հայտնի կին էր, իսկ Ֆլորանը մաքուր բաճկոն էր հագել։ Կես ժամ մնաց նրանց մոտ, որի ընթացքում իրեն դրսևորեց որպես քաղցրաբարո և շատախոս կին։ Ժիլը նրան ուղեկցեց մինչև ավտոմոբիլնան։ Օրվա երկրորդ կեսին գալու էր Ժիլի մոտ, քանի որ վերջինս մեծ ցանկություն ուներ թանգարանում Մատիսի ցուցահանդեսը դիտելու։ Իսկ Ժիլը օրվա մյուս մասն անցկացրեց մռայլ ու կատաղած վիճակում, սովորականից շուտ գնաց քնելու։ «Ինչիս էր պետք, ինչու՞ այդ կնոջը բեռ դարձրի։ Այս ամբողջ պատմությունը իր վախճանը կգտնի Լիմոժի մոտակա գյուղերից մեկի բոզանոցում, և ես անկարող կլինեմ։ Իսկ վաղը երկու ճանձրալի ժամ կանցկացնեմ ինչ-որ թանգարանում։ Գժվե՞լ եմ, ինչ է»։ Այդ մտքից ահաբեկված՝ արթնացավ շատ վաղ, սիրտը տրոփում էր։ Նա անձկությամբ հիշում էր այն դյուրալի ճանձրույթը, որ սովորաբար իշխում էր իր օրերի վրա։ Բայց հեռախոս չունեին, և անկարելի էր նախազգուշացնել Նաթալիին։ Մնում էր սպասել։

## 4

— Դե, ահա,— ասաց Ժիլը,— գո՞հ եք։

Քրտնաթաթախ, շնչասպառ, ստորացած՝ շրջվել էր մեջքի վրա։ Ավելի շատ ստորացած վիճակ էր, քանի որ մեղավոր էր զգում իրեն, իրականում ինքն էր քարշ տվել նրան այս անկողնու մեջ։ Պանդոկում թեյ խմելուց հետո ինքն էր պանդոկապանի ձեռքի մեջ փող սահեցրել այս խղճուկ սենյակի համար։ Երբ Նաթալիին հայտնել էր այդ մասին, վերջինս այլևս անգամ չէր թարթել, չէր դիմադրել, նույնիսկ ոչ մի բան չէր արել Ժիլին օգնելու համար, այնինչ վերջինս իպոլոր չարչարվել էր նրա վրա։ Հիմա Նաթալին մերկ, հանգիստ, կարծես նույնիսկ անտարբեր, պառկած էր նրա մոտ։

— Իսկ ինչից պիտի զոհ լինեմ, այնպիսի կատաղած տեսք ունեք...

Ժպտում էր։ Ժիլը գայրացավ։

— Տղամարդուն երբեք հաճելի չէ։

— Ոչ էլ կնոջը,— հանգիստ պատասխանեց նա,— բայց դու նախապես գիտեիր, որ այդպես էլ պիտի ստացվեր, ի միջի այլոց, ես էլ գիտեի։ Դու դիտմամբ վարձեցիր այս անկյունը։ Քեզ դուր է գալիս անհաջողությունը։ Այդպես չէ՞։

Այո, այդպես էր։ Ժիլը գլուխը դրեց նրա մերկ ուսին և փակեց աչքերը։ Հանկարծ նրան այնպիսի զգացում պատեց, կարծես իսկական սիրո ըմբոշխնումից հետո սպառված լիներ։ Սենյակը սարսափելի կերպով տհաճ տեսք ուներ իր ծաղկավոր վարագույրներով և զզվելի սնդուկով, որն անհարիր էր ժամանակին, անհարիր էր ամեն տեսակի դատողությանը, որպիսին նաև ինքն էր։ Որպիսին նաև իրավիճակն էր։

— Իսկ ինչու՞ համաձայնեցիր,— երազկոտ արտահայտությունը դեմքին հարցրեց Ժիլը,— եթե գիտեիր...

— Կարծում եմ դեռ շատ հարցերում պիտի համաձայնեմ քեզ հետ,— ասաց նա։

Տիրեց լռություն, որից հետո կինը շշնջաց. «սրատմիրս», և նա սկսեց պատմել։ Ամեն ինչ. Փարիզ, էլոիզ, ընկերներ, աշխատանք, վերջին ամիսների իրադարձությունը։ Թվում էր, թե ամիսներ էին հարկավոր այս ամենը վերարտադրելու համար։ Այս «ոչինչը» սահմանազատելու համար։ Նաթալին անխոս լսում էր նրան, միայն երբեմն երկու ծիծաղոտ էր վառում, մեկը տալիս նրան։ Երևի արդեն երեկոյան ժամը վեցը կամ յոթը կլիներ, բայց բոլորովին չէր անհանգստանում։ Չէր դիպչում Ժիլին, չէր շոյում նրա մազերը, անշարժ հենվել էր նրան, հավանաբար անդգայացած ուսով։

Վերջապես Ժիլը լռեց և մի փոքր անհարմար զգալով հենվեց արմունկին ու նայեց նրան։ Նաթալին անշարժ,

հայացքը սևեռեց նրա վրա լրջախոհ և ուշադիր, հանկարծ ժպտաց։ «Բարի կին է,— մտածեց Ժիլը,— անասելի լավով բարի»։ Եվ այս կատարյալ բարության գաղափարը, պատրաստակամությունը, այն միտքը, թե ինչ-որ մեկը ամբողջությամբ հետաքրքրվում է իրենով, արտասվելու չափ հուզեցին նրան։ Գլուխը կախեց՝ զգացածը նրանից թաքցնելու համար, մեղմորեն համբուրեց այդ ժպիտը, այտերը, այդ փակ աչքերը։ Վերջ ի վերջո նա այնքան էլ անզոր չէր։ Նաթալին թևերի մեջ առավ նրա ուսերը։

Ավելի ուշ նա հիշելու էր, որ այդ բարության գաղափարն էր նրան ստիպել առաջին անգամ սիրով համակվել այդ կնոջ հանդեպ։ Եվ նա, որի համար էրոտիկան երբեք չէր միահյուսվել ազնիվ զգացմունքների հետ, նա, որի մոտ «քածի մեկն է» արտահայտությունը անմիջապես զրգիռ կարող էր առաջացնել, ավելի ուշ, շատ ավելի ուշ, նույնիսկ շատ-շատ ուշ նա սրելու էր ականջները «բարի աղջիկ է» անփութորեն արտասանված բառերի ներկայությամբ։ Իսկ հիմա նայում էր նրան, ժպտում էր, մեղադրում իրեն, որ առանց բավարարվածություն զգալու կոպիտ էր վարվել։ Նաթալին անկողնուց դուրս էր եկել ու հագնվում էր, հանկարծ միանգամից շրջելով գլուխը ընդհատեց մտքերը։

— Չեմ ասի, որ հաճելի էր, բայց ավելի լավ ես զգում քեզ, այնպես չէ՞։ Երդմնազա՞նց եղար։

Ժիլը թռավ նստած տեղից, փիրավորվեր, թե ինչ աներ...

— Ինչ է, մի՞շտ ես իրավունք վերապահում քեզ նման ճշմարտություններ ասելու։

— Ո՛չ,— պատասխանեց նա,— առաջին անգամն է։

Ժիլը ծիծաղեց և իր հերթին վեր կացավ։ Ժամը յոթն անց քիչ էր։ Նաթալիի համար երևի ուշ էր։

— Այսօր ընթրիքի հրավիրվա՞ծ ես։

— Ո՛չ, տանն եմ ճաշելու։ Ֆրանսուան կանհանգստանա։

— Ո՞վ է Ֆրանսուան։

— Ամուսինս։

Այդ ժամանակ Ժիլը զարմանքով մտաբերեց, որ երբեք չեր մտածել, թե նա ամուսնացած է և նրա մասին ոչինչ չգիտեր, ո՛չ անցյալի, ո՛չ ներկայի։ Օդին անցյալ օրը Նաթալիի աշխարհիկ կյանքից էր խոսում, բայց ինքը պարզապես չէր լսել։ Մի փոքր անհարմար զգաց։

— Քո մասին ոչինչ չգիտեմ,— շշնջաց նա։

— Մեկ ժամ առաջ ես էլ ոչինչ չգիտեի քո մասին։ Եվ ավելին էլ չիմացա։

Նաթալին ժպտաց, իսկ նա սառեց մի պահ ժպիտի դիմաց։ Հենց հիմա, անմիջապես, Ժիլը պետք է ամեն ինչ ընդհատի, եթե հարկավոր է։ Եվ հարկավոր է։ Նա անկարող է սիրել որևէ մեկին այն պարզ պատճառով, որ չի կարող նախ իրեն սիրել։ Նա կարող է միայն տանջել նրան։ Հիմա բավական է մի կոպիտ կատակ թույլ տա, կամ նման մի բան, որ ստիպի նրան արհամարհել իրեն։ Բայց զզվում էր այդ մտքից, և այդ կնոջ համարձակ, անկեղծ, խոստումներով լի ժպիտը վախեցնում էր Ժիլին։ Նա կմկմաց.

— Գիտե՞ս... ես...

— Գիտեմ,— հանգիստ պատասխանեց նա,— բայց ես արդեն սիրահարված եմ քեզ։

Ժիլը մի պահ ուզեց առարկել, մինչև իսկ զայրանալ։ Բայց վերջ ի վերջո սա չէր կարող սիրային խաղ համարվել, ինչպե՞ս կարելի է բոլոր նավերը հանձնել ինչ-որ անծանոթի։ Այդ կինը խենթ է։ Իսկ ինքը նրան հմայելու համար էլ ինչ բավականություն պիտի ստանար։ Երբ դիմացինն արդեն այդ վիճակումն էր։ Ինչ հավանականությամբ կարող էր նրան սիրել, երբ սկզբից ևեթ կասկածել չէր կարող նրան։ Ամեն ինչ փչացնում էր, խախտում էր բոլոր օրենքները։ Բայց միաժամանակ նման շռայլությունը, անհոգությունը հղփացնում էին Ժիլին։

— Որտեղի՞ց կարող էիր իմանալ,— ասաց վերջինս նույն թեթև, հաճելի ձայնով և նրան նայելու ժամանակ հանկարծ զգաց, որ շատ գեղեցիկ է, շատ կատարյալ սիրո համար և զուցե ձեռ է առնում իրեն։

Նաթալին նայում էր ակնդետ և սկսեց ծիծաղել.

— Դու վախենում ես, որ կարող է իրականություն լինել կամ միաժամանակ՝ չլինել, այնպես չէ՞։

Ներքուստ հիացած, որ գուշակել է միտքը, Ժիլը շարժեց գլուխը։

— Ինչ արած, իրականություն է,— շարունակեց Նաթա-

լին։— Երբևիցե՞ ռուսական վեպեր կարդացե՞լ ես։ Ինչ-որ մեկը ինչ-որ մի ուրիշի ասում է միանգամից. «Ես ձեզ սիրում եմ»։ Եվ սա է ճշմարիտը։ Պատմությունն ուղիղ գծով հասնում է ողբերգական ավարտին։

— Իսկ ի՞նչ ողբերգություն ես կանխատեսում մեզ համար Լիմոժում։

— Չգիտեմ։ Սակայն ռուս հերոսների նման ինձ համար էլ ոչ մի նշանակություն չունի։ Շտապի՛ր։

Դուրս եկան միասին, Ժիլը մի փոքր ավելի վստահ էր։ Կարդացած կինը անհանգստացնելու ավելի քիչ պատճառներ ուներ։ Նա թեկուզ աղոտ կերպով, բայց կարող էր ասել, թե ինչ է սպասում իրեն կամ ինչ է սպասում դիմացինը։

Դրսում արևը ձգել էր շեղակի սավերներ, ոսկեկարմիր երանգներով ողողելով կարոտված հարդը, իսկ Ժիլը գոհունակությամբ նայում էր իր նոր սիրուհու կիսադեմին։ Ի վերջո նա գեղեցիկ էր, գյուղը՝ նույնպես, եթե չասենք մեծ հաշողությամբ՝ գոնե Ժիլը ցուցաբերել էր առնականություն, իսկ այդ կինն ասում էր, որ սիրում է իրեն։ Զգերի հիվանդությամբ տառապող մարդու համար այնքան էլ վատ չէր։ Սկսեց ծիծաղել, իսկ Նաթալին շրջվեց նրա կողմը։

— Ինչո՞ւ ես ծիծաղում։

— Ոչ մի բան։ Ուրախ եմ։

Նաթալին միանգամից արգելակեց ավտոմեքենան, ժակետը երկու ձեռքերով բռնեց ու թափ տվեց, բայց այնպիսի արագությամբ, որ Ժիլը ապշած մնաց։

— Ասա՛, նորից ասա։ Ասա՛, որ ուրախ ես։

Խոսելու նոր տոն էր ընդունել. պահանջկոտ, հրամայական, զգայական, և Ժիլը հանկարծ նրան տիրելու ցանկություն ունեցավ։ Բռնեց ձեռքերը, համբուրեց, փոխված ձայնով կրկնելով. «ուրախ եմ, ուրախ եմ», իսկ Նաթալին թողեց նրան, շարունակեց վարել մեքենան առանց որևէ բառ ասելու։ Մինչև տուն համարյա չխոսեցին, Նաթալին իջեցրեց նրան դարբասի մոտ առանց ժամադրություն նշանակելու։ Բայց երեկոյան իր սենյակը քաշվելուց հետո Ժիլը անկողնու վրա պառկած վերհիշում էր ճամփեզրի տարօրինակ պահը և ժպիտը շուրթերին մտածում, որ դա խելահեղորեն նման էր կրքի։



## 5

Արդեն բանի օր է ոչ մի լուր չուներ և բոլորովին չէր պարմանում։ Ըստ երևույթին սովորական մի միջադեպ էր, այն էլ վատ միջադեպ, այդ կինը խոսել էր սիրո մասին պատշաճության սահմաններում, գուցե քաղքենիական արատոց պատշաճություն էր դա, կամ պարզապես մոլություն։ Համենայն դեպս մի փոքր հուսախաբված էր, որն ավելի էր բնորոշում նրա բնական տխրությունը։ Քիչ էր խոսում, երկու օրը մեկ էր սափրվում և փորձում էր գրքեր կարդալ, խուսափելով հատկապես ռուսականից։

Հինգերորդ օրը երեկոյան հորդառատ անձրև էր տեղում, ստանց սափրվելու, հյուրասենյակի բազմոցին ծնկները ծալած պառկել էր, երբ հանկարծ Նաթալին մեն-մենակ մտավ սենյակ, եկավ նստեց նրա մոտ և անթարթ աչքերով սկսեց դիտել նրան։ Ժիլը տեսավ նրա խոշոր բացված կանաչ աչքերը և բրդյա հագուստի վրայից շնչեց անձրևի բույրը։ Երբ Նաթալին բռնազբոսիկ ձայնով խոսեց հետը, նույն բոպեին մեծ թեթևություն ապրեց։

— Չկի՞ր կարող զանգ տալ կամ ինքդ գալ։

— Ո՛չ հեռախոս կա, ո՛չ ավտոմեքենա,— զվարթ ձայնով պատասխանեց Ժիլը և փորձեց բռնել ձեռքը, բայց նա լորությամբ ետ քաշեց։

— Հինգ օր է սպասում եմ,— ասաց նա,— հինգ օր է դարանակալ սպասում եմ կեղտոտ, մազակալած երեսով մի մարդու, որ, ավելին, խալբառով է զբաղված։

Նա իրոք հասել էր բարկության գագաթնակետին, որն ուրախացնում էր Ժիլին, նույնիսկ ավելին՝ քան կարող էր պատկերացնել։ Եվ զարմանալի է, առաջին անգամ լինելով այն կարծիքին չէր, որ գործը լավ է առաջ տարել, այլ մտածում էր, որ սխալվել է այդ կնոջ հարցում։ Աշխատեց բացատրություն տալ.

— Վստահ չէի, որ կցանկանաս նորից տեսնել ինձ։

— Ես չասացի՞, որ սիրում եմ քեզ,— խոժոռ տեսքով վրա բերեց Նաթալին,— ասացի՞, թե չէ։

Եվ միանգամից այնպիսի արագությամբ վեր կացավ տեղից ու գնաց դեպի դուռը, որ քիչ էր մնում Ժիլը բաց

թողնի նրան ձեռքից։ Նախասենյակում արդեն անձրևանոցն էր հագնում, երբ հասավ նրան։ Կարող էին ամեն վայրկյան ներս մտնել Օդիլը, կամ խոհարարուհին, բայց Ժիլը գրկեց նրան ու սեղմեց կրծքին։ Դրսում անձրևի կաթկթոցը, ջղային վիճակում ընկած այս կինը, նրա անակնկալ այցելությունը, աստիճաններից բարձրացող վառվող փայտի բույրը, տան լռությունը, այս ամենը հարբեցնում էին Ժիլին։ Հուշիկ համբուրում էր նրան, իսկ սա Համառորեն կախել էր գլուխը, բայց միանգամից բարձրացրեց ու փաթաթվեց նրա վզին։ Այդ ժամանակ առանց նենգամտության Ժիլը նրան տարավ իր սենյակը այն խոլ համարձակությամբ և հաջողությամբ, որ տենչանքի առկայությամբ են միայն ձեռք բերում, ու այն ժամանակ միայն նրանք դարձան իսկական սիրահարներ, ինչպիսին կարող են լինել լոկ սիրուց սիրահարված և սիրուն գիտակ զույգերը։ Այսպիսով Ժիլը վերագտավ հաճույքի բավականությունը։

Իրիկնանում էր։ Ժիլը ներքևից լսում էր քրոջ բնականից ավելի բարձր ձայնը, նա հրահանգներ էր տալիս, և իսկույն հասկացավ պատճառը, նայելով Նաթալիին՝ սկսեց լուռ ծիծաղել։ Վերջինս ծուլորեն բացեց աչքերը և անմիջապես փակեց։

— Որտե՞ղ ես կանգնեցրել մեքենան,— հարցրեց Ժիլը։

— Դուռն առջև։ Ինչո՞ւ։ Ա՜խ, ասուված իմ, ամբողջովին մոռացել էի քրոջդ ու Ֆլորանին։ Եկել էի լուտանքներ թափելու գլխիդ ու հեռանալու։ Ի՞նչ կմտածեն հիմա։

Նա խոսում էր հանդարտ, հոգնած ձայնով, սեր ճաշակելուց հետո ծնված ձայնով, իսկ Ժիլը մտածում էր, որ չորս ամիս շարունակ առանց այսպիսի ձայն լսելու ինչպե՞ս էր կարողացել ապրել։ Եվ ժպտաց։

— Իսկ ի՞նչ ես կարծում, ի՞նչ կմտածեն։

Առանց պատասխանելու շրջվեց կողքի։

— Ես գիտեի,— այնուհետև ասաց նա,— գիտեի, որ մեզ մոտ այսպես պիտի ստացվի։ Գիտեի, հենց որ տեսա քեզ։ Տարօրինակ է։

— Ավելի քան տարօրինակ է,— ասաց Ժիլը,— արի գնանք «Պորտո-Ֆլիպ» խմենք։



— Հենց այսպես, առանց բացատրություն տալու պիտի իրե՞նք։

— Միակ միջոցն է,— պատասխանեց Ժիլը,— ընդհանրապես ոչ մի բանի համար չարժե բացատրություն տալ։ Հապնվի՛ր։

Նա վերագտել էր իր հեղինակավոր, վճռական, հրամայողական տոնը, որ վաղուց կորցրել էր և միանգամից զգաց այդ բանը, երբ նկատեց Նաթալիի զվարթ ու մի փոքր ծաղրական հայացքը, որ գեռ անկողնու միջից դուրս չէր եկել։ Ժիլը կռացավ նրա վրա և համբուրեց ուսը։

— Այո՛,— ասաց նա,— թույլ արարածներ ենք։ Եվ հանկարծակի տարվում ենք հսկողությունից դուրս գտնվող ինչ-որ բանով։ Շնորհակալ եմ քեզնից, Նաթալի։

Այնպիսի անհոգությամբ մտան փոքրիկ հյուրասենյակ, կարծես երեսուն տարի հետո իրար հանդիպած սիրահարներ լինեին, որ հաջողությամբ են անձնատուր եղել սիրո համար խիստ կարևոր գործողությանը, և Ֆլորանն ու Օդիլը շիկնեցին դեմ առ դեմ հանդիպելով նրանց։ Ֆլորանը թեներն օդի մեջ տարածելով բացականչեց. «Ինչպիսի՜ անակնկալ», իսկ Օդիլը գովեց Նաթալիի քաջությունը, որ նման եղանակի հանդգնել է դուրս գալ, ինքը չէր համարձակվի քիթն անդամ տնից դուրս հանել։ Իսկ դա նշանակում էր, որ ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, չէին նկատել իրենց դարբասի մոտ երկու ժամից ավելի կանգնած ավտոմոբիլեանն։ Նման տակտ և ազնվարար աչք փակելու հմտություն ցուցաբերելով, ի շրխնություն եղբոր, Օդիլը խոսեց եղանակից, տարբանալու համար մի բան խմելու անհրաժեշտության մասին, այստեղ նորից կարմրեց, իսկ Ֆլորանը նետվեց դեպի «Պորտոյի» ջիշը։ Անշարժ առարկայի նման բազմոցին տեղավորված, երկար ձեռքերը ծնկներին դրած, Նաթալին ժպտում էր, պատասխանում, երբեմն մի ակնթարթ նայում էր Ժիլին, որ ֆանդնել էր բուխարիկին հենված և զվարճանում էր դավատակն այս փոքրիկ տեսարանը դիտելով։

Այս եղանակը երևի խանգարի Քասինյակներին բացթյա պարահանդես կազմակերպելու,— ցավով ասում էր Օդիլը։

— Գնալո՞ւ ենք,— հարցրեց Նաթալին։

— Վախենում ես, որ Ժիլը չհամաձայնի,— շփոթված վրա բերեց Օդիլը,— բայց հիմա...

Երկրորդ անգամ լինելով կարկամեց, միանգամից ձայնը կտրեց, իսկ Ֆլորանը բաժակը մեկնելու ժամանակ անշարժացավ ու աչքերը ոլորեց վրան։ Ժիլը քիչ էր մնում ծիծաղից խեղդվեր և անմիջապես շրջվեց։

— ...Հիմա, որ ավելի լավ տեսք ունի,— շղթայակցեց Օդիլը ոգևորությունից զուրկ իր խոսքը,— երևի արդեն կուզենա՞ մեկ ուղեկցել...

Նայում էր եղբորը թախանձագին հայացքով, և Ժիլը գրպանները շարժեց գլուխը նրան վստահեցնելու համար։ Նաթալիի աչքերն արցունքով էին լցված, նա էլ երևի զսպում էր իրեն, որ չբռնկվի խելագար ծիծաղով։ «Ասված իմ,— հանկարծ մտածեց Ժիլը,— որքան նրախատապարտ պետք է լինեմ այս կնոջը։ Որքան ժամանակ հոգնություն այսպիսի հաճելի վիճակ չեմ ըմբռնելու, որ արդյունք է սիրո, նրան հաջորդում է կա՛մ խելագար ծիծաղ, կա՛մ արցունք»։

— Դե, իհարկե կգամ,— ուրախ ձայնով ասաց նա,— բայց միայն ձեր երկուսի հետ եմ պարելու։

Եվ այնպիսի քնքուշ հայացք գցեց Նաթալիի վրա, որ վերջինիս թարթիչները դողդողացին, գլուխը շրջեց։

— Պետք է գնամ,— ասաց նա,— ուրեմն վաղը կհանդիպենք Քասինյակների մոտ։

Ժիլը օգնում էր Նաթալիին վերարկուն հագնել, բաց արեց մեքենայի դուռը, գլուխը պատուհանից ներս մտցրեց.

— Իսկ վաղը ցերե՞կը։

— Չեմ կարող,— պատասխանեց հուսահատ տեսքով,— «Կարմիր խաչ» ընկերության կանանց հավաքն է։

Ժիլը բարձրաձայն ծիծաղեց։

— Ճիշտ է, բարձրատիճան մարդու կին ես։

— Մի՛ ծիծաղիր,— միանգամից նրան ընդհատեց Նաթալին բարձր ու դողդողացող ձայնով,— չպետք է ծիծաղես։

Եվ անմիջապես շարժվեց, թողնելով Ժիլին խորվահույզ ու մտազբաղ վիճակում։ Ամբողջ երեկոյի ընթացքում քույրը նորանոր հոգատարությամբ շրջապատեց նրան և անընդհատ ծիծաղելու ցանկություն առաջացրեց Ժիլի մոտ։ Կանայք շատ են սիրում իրենց եղբայրներին, երբեմն նաև որդիներին



տեսնել որսորդի դերում, հատկապես, Օդիլի պես փանայք, որոնք զուրկ են եղել ռոմանտիկ կլանքից։ Դա նրանց մի փոքր թույլ է տալիս վրեժ լուծել իրենց շլուսաբանված անհաջողությունների համար։

## 6

Եղանակը նպաստավոր էր Քասինյակների համար։ Երբ նրանք ժամանեցին, այգում արդեն եռուզեռ էր։ Հունիս ամսվա առաջին օրերն էին, բացօթյա պատշգամբում հաճելի մեղմություն էր ծփում, Եվ կանանց հրաշալի զարդարանքը, տղամարդկանց ծիծաղը, շագանակենիների բույրը Ժիլի մոտ անմիջապես այնպիսի տպավորություն առաջացրին, կարծես տեղափոխված լիներ նախապատերազմյան ժամանակաշրջանը, անիրական մի աշխարհ։ Այս մարդկանց հարաբերությունների մեջ խաղաղ հանդարտություն կար, մթնոլորտը մեղմ էր, և Ժիլի աչքին իսկույն իր շատ սիրելի Փարիզը հայտնվեց մղձավանջի մեջ։ Օդիլը թևը մտած, աջ ու ձախ ներկայացնում էր եղբորը, հուսալով ամբոխի մեջ հանդիպել տանտիրուհուն։ Հանկարծ Ժիլն զգաց, որ նրա ձեռքը սեղմվում է թևին, և Օդիլը կանգ առավ բարձրահասակ, բավական գեղեցիկ արտաքինով մի տղամարդու առջև, որը Ֆրանսիայի հարավ-արևմտյան հատվածի բնակիչներից ինչ-որ չափով տարբերվում էր իր անգլիացու դիմագծերով։

— Ֆրանսուա... ճանաչո՞ւմ եք եղբորս։ Ժի՛լ, ծանոթացիր, պարոն Սիլվընները։

— Դե, իհարկե, Ռուարգների տանը նույն սեղանի շուրջն էինք,— դարմացավ Սիլվընները։

— Անշուշտ,— ասաց Ժիլը, որ ամենևին չէր հիշում։

Նա մտածմունքի մեջ էր ընկել. «Դե, ահա և ամուսիններ։ Վատը չէ։ Եվ շատ հարուստ է, ինչպես ասում են։ Երևի այնքան էլ համակերպվող չէ։ Ոչ էլ այնքան ուրախ։ Տեսնես նրա ականջին էլ շշնջո՞ւմ է այն բառերը, ինչ-որ ինձ է ասել։ Անհասկած՝ ոչ»։ Եվ սեղմելով Սիլվընների ձեռքը, մեծ ցանկություն առաջացավ նրա մեջ նախորդ օրվա պես կրծքին սեղմել Նաթալիին։

— Փարիզո՞ւմ եք ապրում,— հարցրեց Սիլվերները։

— Այո, արդեն տասը տարի։ Հաճա՞խ եք գնում այնտեղ։

— Հնարավորին չափ քիչ։ Կինս, ինչ խոսք, պաշտում է այդ Փարիզը, բայց ես՝ անձամբ, չեմ ախորժում։

Օդիլը տեսնելով, որ Սիլվերների և Ժիլի միջև անմիջապես մենամարտ չծագեց, թեթևացած հեռացավ ուրիշ խմբի միանալու։ Ժիլը շատ կուզենար հետևել նրան. նա միշտ խորշել էր իր սիրուհիների ամուսինների կամ մտերիմների հետ բարեկամ-բարեկամ խաղալուց, իր մեջ մնացած վերջին բարոյական նորմից կամ պարզապես ազնիվ զգացմունքից մղված։ Բայց Սիլվերները մենակ էր և դժվար էր նրանից բաժանվել։ Հայացքով փնտրում էր Նաթալիին և չէր գտնում, շարունակելով խոսել Փարիզի դժվարին երթևեկության, հյուրանոցների գնի և մեծ քաղաքների դժոխային աղմուկի մասին։ «Պետք է անմիջապես տուն գնալ,— միանգամից որոշեց Ժիլը զայրացած,— բավական է այս հիմար վիճակի մեջ մնամ։ Ամեն դեպքում Նաթալին կարող էր որևէ հնարքով գտնել ինձ...»։ Աշխատում էր քաղաքավարական որևէ դարձվածք գտնել Սիլվերներին հայտնելու համար, երբ նրանց մոտեցավ Նաթալին։ Հագել էր իր աչքերի գույնին համապատասխան, շատ ճաշակով կարված կանաչ հագուստ։ Մի փոքր գունատ այտերով, ժպտագեմ նայում էր Ժիլին, իսկ վերջինս անմիջապես որոշեց մնալ։

— Կարծում եմ, ծանոթ եք,— ասաց Սիլվերները։

— Ռուարգների տանն ենք հանդիպել,— կրկնեց Ժիլը խոնարհվելով, բավականին գոհ, քանի որ այդ նախադասությունը երկիմաստություն պարունակելուց ավելի համապատասխանում էր իրականությանը. մի բան, որ նույնպես տհաճ էր հսկողության տակ գտնվող սիրեկանների համար։

— Ճի՛շտ է։ Պարոն Լանթիե, անշարժության մատնված մադամ Քասինյակը իր բազկաթոռի միջից նկատել է ձեզ և ինձ հանձնարարեց իր մոտ ուղեկցել։ Գնա՞նք։

Ժիլը հետևեց նրան։ Գլխի թեթև շարժումով ողջունելով ճանապարհին հանդիպող մարդկանց, որոնց կարծես ճանաչում էր, միաժամանակ ինքն իրեն ժպտում էր պատկերացնելով Ժանի դեմքի արտահայտությունը, եթե տեսներ իրեն այստեղ։ Նրանք անցել էին պատշգամբով և գնում էին ան-



պի սաղարթախիտ պարտեզը, որտեղ ժանգապատ երկաթե տաղավարի տակ տանտիրուհու շարժական բազկաթոռն էր բազմել։ Նաթալին հանկարծ խրտնած ձիու նման կտրուկ շրջադարձ կատարեց դեպի աջ և ժիլին քաշեց ծառի տակ։ Մի ակնթարթում մազերը հայտնվեցին Ժիլի այտերին, մարմնով հպվեց նրան, և խենթությունը, արարքի անզգուշությունը այնպես շիկացրին Ժիլի այտերը, սիրտը, որ սկսեց համբույրներով ողողել նրան, կարծես խենթի պես սիրահարված լիներ։

— Բավական է,— շշնջաց Նաթալին,— բավական է։

Ո՛չ, Ժիլ, բավական է, ես...

Մարդիկ լին անցնում ծառուղիով, և Ժիլը հապիկ ժամանակ ունեցավ կռանալու՝ ձեռքնելով, թե կոշիկն է կապում, այնինչ Նաթալին ցրված տեսքով մազերն էր թափ տալիս։ Նա մի կատակ փոխանակեց անցորդների հետ և ներկայացրեց Ժիլին։ Հետո Ժիլը գնաց համբուրելու մադամ Քասինյակի ձեռքը դեռևս տրոփող սրտով, իսկ տանտիրուհին շնորհավորեց նրան իր հոդվածների համար, որ բացարձակապես չէր կարդացել։ Ապա Նաթալին ու Ժիլը հանդարտ քայլերով գնացին դեպի պատշգամբ։ Երեկոն իջնում էր, մադամ Քասինյակի թոռը մի հին ձայնարկիչի վրա շեղկ էր միացրել և ամենաերիտասարդները համաչափորեն շարժում էին կոնքերը ռիտմիզմով տառապող մի քանի տարեց մարդկանց հեգնամբույր ու ծաղրական հայացքների ներքո։ Քիչ առաջ ապրած հուզիչ վայրկյանների համար Ժիլը չէր կարողանում ներել իրեն։

— Գիտես, որ ամուսինդ բոլորովին էլ վատը չէ,— ասաց նա գնահատող մարդու արհամարհական տոնով։

Նաթալին նայեց նրան։

— Մի՛ խոսիր նրա մասին։ Չխոսե՛նք նրա մասին։

— Պարզապես փորձում եմ օբյեկտիվ լինել,— ասաց Ժիլը նույն ծաղրական տոնով։

— Քեզ չեմ խնդրում օբյեկտիվ լինել,— չորությամբ պատասխանեց նա և հեռացավ։ Ժիլը ծխախոտ վառեց, սկսեց ծիծաղել և հանկարծ զզվանքով լցվեց ինքն իր նկատմամբ։ Ի՞նչ մարդու տեղ էր դրել իրեն։ Ի՞նչ դեր էր ստանձնել արձակուրդի մեջ գտնվող այս ցինիկ ու վայելչաշուք փարիզցին։ Որ-

տեղի՞ց էր գտել էպինալի հմայողի այս պատկերը։ Նա մի պա՛հ հենվեց ծառին։ Ա՜հ, հարկավոր էր հեռանալ, անհետանալ, թողնել այդ կնոջը, որ իր ուղիով ընթանա։ Նա շատ ավելի լավն էր իրենից, ավելի կատարյալ և շարժիր, որ կապվեր այլասերված, դժբախտ, խեղկատակ և խաբեբայի հատկություններ ձեռք բերած մի մարդու հետ։ Հարկավոր էր իսկույն ևեթ ամեն ինչ բացատրել։

Բայց, երբ նորից հանդիպեց նրան, մենակ չէր։ Իր դժբախտ զոհը շրջապատված էր երեք տղամարդկանցով, որոնցից մեկը շատ գեղեցիկ էր, բոլորն էլ ակնհայտորեն հմայված նրանով և բարձրաձայն ծիծաղում էին։ Ժիլը պարի հրավիրեց Նաթալիին, բայց գեղեցիկ անծանոթը նրբորեն կանխեց նրա մտադրությունը ձեռքի շարժումով։

— Դուք ուզում եք Նաթալիին իր երեք ասպետներից առանձնացնե՞լ, չէ՞ որ մենք նրա երեք սուսերակիրներն ենք։ Իմ անունը Պիեռ-Լաքուր է, ահա ժան Նորլը և Պիեռ Գրանդեն։ Մի բան խմեք մեզ հետ և մի քիչ էլ խոսեք Փարիզի կյանքից։

Նրա աչքերը փայլում էին խորամանկորեն, հանգիստ ու վստահ արտահայտությամբ։ Նույնը կարելի էր կարդալ իր երկու ընկերների և Նաթալիի մոտ։ Ժիլին թվում էր, թե ծիծաղելի վիճակի մեջ է ընկել։ Այս տղան անկասկած նույնպես նրա սիրեկանն է, կամ եղել է սիրեկանը, այդ պատճառով փոքրիկ փարիզցու հետ ներողամտությամբ է վարվում նրա ակնկալությունների համար։ Իսկ ինքը վախենում է նրան վիշտ պատճառել, ինքը խղճի խայթ ունեցավ... Ժպտաց, սեղանի վրայից մի բաժակ վիսկի վերցրեց։

— Նաթալին վայրենաբար պատառոտեց այնքան լավ գրախոսած գիրքս,— ասաց Լաքուրը։— Ի միջի այլոց ասեմ, որ գրականության դասախոս եմ Լիմոժում և երբեմն համեստաբար թղթակցում եմ տեղական թերթին։

— Ուրեմն պաշտոնակիցներ ենք,— քաղաքավարությամբ նկատեց Ժիլը։

Նա մահու չափ ատում էր իրեն, ինչ հիմարն է եղել, ինչպես կարող էր մտածել, որ իր գիրքը նեռված այդ կինը, երբ առաջին իսկ հանդիպումից հետո հանձնվել էր, որ սիրո վերաբերյալ լայն ճանաչողություն ուներ, ինչպե՞ս կարող էր մտածել, որ այդ կինը սիրահարվել է իրեն։ Հեշտամոլ կին էր (նիմֆոմանուհի), դեռ ավելին, այն էլ զարգացած ժիլին էր (նիմֆոմանուհի), դեռ ավելին, այն էլ զարգացած ժիլը կատաղած էր և զարմանում էր։ Շատ վաղուց չէր զայրացել։

— Կարո՞ղ եմ պնդել այս պարի համար,— ասաց նա,— այստեղ երևում է դանդաղ ֆոքստրոտ հազվադեպ են պարում։ Իսկ ակրոբատիկայով զբաղվելու տարիքս արդեն անցել է։

Նաթալին ժպտաց, ձեռքը դրեց նրա թևին, և գնացին պատշգամբի պարկետապատ կլոր պարահրապարակը։ Առանց խոսելու երեք քայլ գցեցին, որից հետո Նաթալին գլուխը բարձրացրեց.

— Այլևս չես կրկնի, չէ՞։

— Ինչի՞ մասին է խոսքը։

— Ֆրանսուայի։

Նա ամբողջովին մոռացել էր այդ միջադեպը։ Եթե միայն հարցը այդ լինե՛ր... Սիրալիր ժպտաց։

— Ո՛չ, էլ չեմ կրկնի։ Բայց լսիր, շատ հմայիչն է քո այդ առաջին ասպետը, գրականության դասախոսը։ Նա կարծես պաշտում է քեզ։

— Հավատացած եմ, որ պաշտում է։ Ողբալիս է։ Գեղեցիկ է, չէ՞։

Մի քիչ հետո շշնջաց.

— Այդպես մի սեղմիր, ժի՛լ, մարդիկ մեզ են նայում։ Ժի՛լ, ժի՛լ, երջանի՞կ ես։

— Այո՛,— պատասխանեց նա։

Եվ այդ բոպեին իրոք ճշմարտությունն էր ասում։

## 7

Առավոտը ժանից հեռագիր էր ստացել, խնդրում էր շտապ զանգ տալ իրեն։ Կեսօրին մոտ էր։ Թեյլաքի փոքրիկ փոստային բաժանմունքում խեղդվում էր շոգից, անհանգիստ վիճակում էր, միաժամանակ ուրախ այդ հեռախոսային զանգի համար։ Նա դարձյալ կարևոր անձ էր պատկերացնում իրեն իր մասնագիտության բնագավառում։ Երեք հեռախոսավարուհիների հետ խոսեց, մինչև որ լսեց ժանի ձայնը։ Շատ հեռվից էր գալիս, կարծես ուրիշ մոլորակից հասներ։

— Այո՞, Ժիլ։ Ինչպե՞ս եւ Այո՞։ Ա՜, վստահ էի... անչափ ուրախ եմ, ծերո՛ւկ...

«Հիմար,— անիրավացիորեն մտածում էր Ժիլը,— ամենեին էլ վստահ չէիր։ Չէիր էլ կասկածում։ Մի էլ ասա, որ Օդիլի նման հույսդ դրել էիր Լիմուզենի մաքուր օդի վրա։ Լավ եմ զգում, որովհետև այստեղ մի կին կա, որ սիրում է ինձ և որի սերը հաճելի է։ Ինչպե՞ս կարող էիր կանխատեսել այդ բանը»։

Նա համենայն դեպս համառոտ և հանգիստ պատասխաններ էր տալիս, ինչպես ծանր վիրավորը, որ վերջապես փրկված է և պատկերացնում է, թե ինչպիսի սարսափի մեջ է պահել բարեկամներին։

—... Գիտե՞ս,— շարունակում էր ծանը,— Լընուն վերջնականապես զժվեց շեֆի հետ։ Ենթադրում ենք, որ քեզ կվստահեն ամբողջ արտասահմանյան բաժինը։ Երդվում եմ, որ ճիշտ եմ ասում... Այդ մասին նույնիսկ չեմ խոսել... Ինչ ես ասո՞ւմ։

Կատարյալ ցնծության մեջ էր, իսկ Ժիլը իզուր էր փորձում մասնակցել նրա ուրախությանը։ Քքել էր ամեն ինչի վրա։ Այդ պաշտոնը, որ ժամանակին այնքան երազել էր, այժմ անիրական էր թվում։

—... Իհարկե, հոկտեմբերից առաջ չի լինի։ Շեֆին հենց այնպես ասացի, որ փախել գնացել ես։ Դեպրեսիայիդ մասին ոչ մի խոսք, կարող է լավ չընկալվել, այս էլ այսպիսի ժամանակ, հասկանում ես, չէ՞... Պետք է անմիջապես վերադառնաս, գոնե մի քանի օրով... Թող քեզ տեսնի... այլապես, գիտես էլի, հեռու-մոտիկ ընկերներ կան...

«Ուրեմն այսպես, իմ դեպրեսիան կարող էր վատ ձևով ընկալվել,— հեգնանքով մտածում էր Ժիլը,— հարգարժան մարդը իրավունք չունի վատ զգալու... Լավ լրագրողը պետք է միշտ երջանիկ լինի, ակտիվ, նույնիսկ ցոփակյաց... ամեն ինչ, բացի ընկճվածությունից։ Ազնիվ խոսք, այնտեղ ենք հասնելու, որ մի գեղեցիկ օր թախծոտ մարդկանց թունավորելով վերացնելու են... Այ թե գործ կունենան»։

— Գո՞հ ես,— հարցնում էր ծանի բարեհամբույր ձայնը, և հավատացած էր, որ իրոք այդպիսին է իր ձայնը,— ե՞րբ կգաս։



— Վաղը գնացք կնստեմ,— ասաց Ժիլը, բայց համոզված չէր իր ասածի մեջ,— ինքնաթիռ չկա, այդ լավ գիտես։ Երեկոյան ժամը տասնմեկին կլինեմ այդտեղ, կգամ ճեպընթացով։

— Դե որ այդպես է այսօր նստիր։

Ժիլը հանկարծ բորբոքվեց։

— Կրակի վրա է նստած, ինչ է... եթե որոշել է ինձ վերցնել, կարող է մի օր էլ սպասել։

Տիրեց լռություն, հետո լսվեց ծանի ձայնը՝ կարուկ և հուսախաբ։

— Կարծում էի, որ դու էլ ես կրակի վրա նստելու, վերջ։ Վաղը կայարանում կդիմավորեմ։ Ցտեսություն, ծերուկ։

Լսափողը կախեց, իսկ Ժիլը տաք խցիկում ճակատի քրտինքն էր սրբում։ Ժամը երեքին ժամադրված էր Նաթալիի հետ։ Գուցե դա՞ նրան ետ պահեց։ Այո, շատ լավ գիտեր, որ Փարիզում, այդ խմբագրությունում կրակի վրա են նստում, երբ ամեն անգամ որևէ կարևոր պաշտոն է ազատվում։ Նույնիսկ հիմա արդեն շատերը եռում էին։ Իսկ ինքը ինչ-որ կնոջ պատճառով երևի բաց էր թողնում այդպիսի մի առիթ։ Քիչ էր մնում նորից զանգ տար ծանին ասելու համար, որ այսօր եթե դուրս կգա։ Տատանվում էր, քրթմնջում հեռախոսավարուհու հայացքի տակ։ Հետո պատուհանից տեսավ քամու տակ ծփացող ցորենի արտերը, կանաչապատ գյուղը, աչքերի առջևով սահեց Նաթալիի մարմինը, զգաց նրա ջերմությունը, պատկերացրեց նրա տված խորհուրդները և անմիջապես դուրս եկավ։

Ֆլորանը ղեկին նստած սպասում էր դռան առջև։

— Դե ի՞նչ, լավ լուրեր կա՞ն։

Նա իրոք անհանգստացած էր, և Ժիլը, որ երբեք «չէր տեսնում», մի պահ իսկական համակրանքով լցվեց նրա խոշոր կապույտ աչքերի հանդեպ։ Քաջարար ժպտաց, որովհետև Ֆլորանը քսվելով անցնում էր մի բեռնատար մեքենայի կողքով։

— Խմբագրությունում շատ կարևոր պաշտոն են առաջարկում ինձ։

— Ամեն ինչ հաջող է ընթանում,— բացականչեց Ֆլորանը,— ամեն ինչ միանգամից է հաջողվում... Ես միշտ էլ

ասել եմ, որ կյանքը ալիքների է նման, մեկը վատ, մյուսը լավ...

Եվ ձեռքերով ալիքների շարժումը գծագրեց, որի պատճառով քիչ մնաց փոսի մեջ ընկնեին։ Գուցե իրավունք ուներ։ Բայց Ժիլը չէր համարձակվում նրան ասել, որ հավասարապես վախենում է և՛ լավ, և՛ վատ ալիքներից, հավասարապես վախենում է և՛ նոր պատասխանատվությունից, և՛ Նաթալիի կրքոտ սիրուց, ինչպես նաև միջակությունից ու մենակությունից։

## 8

— Ուրեմն վաղը մեկնո՞ւմ ես,— կրկնեց Նաթալին։

Նա երազկոտ հայացքով առանց հանվելու պառկել էր Ժիլի մահճակալին։ Տուն հասնելուն պես Ժիլը ամեն ինչ պատմել էր նրան և այնքան լավ էր զգում իրեն, որ կարողացել էր նրա ներկայությամբ հաղթանակած փառասերի դերն ստանձնել, մի դեր, որ սիրով էր փոխանակում ջղագրգիռ մարդու դերի հետ։ Ինքնամոռաց վիճակի մեջ ընկած, նույնիսկ որոշ լիրիկայով տարված, նկարագրել էր իր նոր աշխատանքի կարևորությունը, բարոյական այն պատասխանատվությունը, որ անմիջական կապի մեջ էր ընթերցողների հետ, այն մեծ հետաքրքրությունը, որ առաջացնում էր արտաքին քաղաքականությունը, մի խոսքով, այնպիսի ոգևորություն է ապրում, որ ավելի լավ կլիներ, եթե այդ ամենը արտահայտած լիներ հնոտխոսով ժանի հետ խոսելու ժամանակ։ Միգուցե խղճի խայթ էր առաջացել նրա մեջ, այն պատճառով, որ վերջինիս հուսախաբ վիճակի էր մատնել և այժմ նրան մղում էր կատարելու այդ քայլը՝ շլացնել իր սիրուհուն, այդպես էր մտածում Ժիլը մի փոքր հեգնանքով։ Սակայն բոլոր հոգեվիճակներում կարելի էր պատկերացնել Նաթալիին, բացի շլացած լինելուց։ Ավելի շուտ, նա անտարբեր էր։

— Մեկնում եմ մի շաբաթով,— ասաց Ժիլը,— մեկ կամ երկու շաբաթ։ Հետո կվերադառնամ։ Հոկտեմբերից եմ աշխատելու, գիտե՞ս։



— Ինչպես դպրոցականները,— մտացիր ասաց Նաթալին։

Ժիլն սկսում էր զայրանալ։ Որքան խոսում էր, այնքան համոզվում էր այդ պաշտոնի կարևորության մեջ, նա պետք է շահագրգռված լիներ և ի վերջո ջղայնանում էր իր վրա, որ այդ կնոջ հետ մի երեկո ավելի անցկացնելու համար վտանգի էր ենթարկում այդպիսի կարևոր պաշտոնը։ Բայց չէր համարձակվում բարձրաձայն արտահայտվել։ Այդ մասին նա ինքն ասաց Ժիլին.

— Եթե այդքան կարևոր էր, ինչո՞ւ այսօր երեկոյան գնացքով չմեկնեցիր։

— Ժամադրված էինք։

Նրան թվում էր, թե կեղծում է, այնինչ ճշմարտությունն էր ասում։

Նաթալին շեշտակի նայեց նրան։

— Երևի պարզապես մտածում էիր, որ նույնիսկ տասնչորս հինգ օրվա ծանոթ կնոջից չի կարելի հեռանալ մի փոքրիկ գրություն թողնելով։

Նա հանգիստ էր խոսում, և Ժիլը զարմանում էր, թե ինչու է թափ տալիս գլուխը, կարմրում ստոխոս մարդու նման։ Գուցե իրավունք ուներ այդ կինը, գուցե այլևս չէ՞ր վերադառնալու։ Փարիզը, ամառը, ընկերները, ծովը, ճամփորդությունները ևս կխլեին նրան, և հնարավոր է, որ Նաթալին ինքը միայն տասնհինգ օրով հանդիպած լինեին Լիմուզենում, ամառվա առաջին օրերին։ Այդ կնոջ-հայացքում միանգամից իրեն ապատ, վճռական, թեթևացած ու ուժեղ մարդ զգաց, ինչպիսին եղել էր ողջ կյանքում։ Անսահման քնքշությամբ համակված, նա չգիտեր ինչով բացատրեր այդ երևույթը. երախտագիտության զգացումով, որ նրա միջոցով վերագտել էր նախկին կայտառ, մտացումի մեջ նետված կերպարանքը, թե՞ տանջվում էր նախօրոք զգացած խղճահարության մտքից, որ ինքն այլևս չէր վերադառնալու։ Թեքվեց նրա վրա։

— Եթե չվերադառնամ ի՞նչ կանես։

— Կգամ քո ետևից,— հանգիստ պատասխանեց Նաթալին,— համբուրի՛ր ինձ։

Համբուրեց նրան և իսկույն մոռացավ Փարիզն ու քաղաքականությունը։ Սկզբում նա ցինիկաբար մտածեց, որ ամեն գեպքում որպես սիրուհու զգալու էր նրա բացակայությունը, այնուհետև դա էլ մոռացավ և երկար ժամանակ նրա ուսին հենված՝ անշարժ մնաց, սարսափելով այն մտքից, որ նույնիսկ մեկ շաբաթով պիտի հեռանար նրանից։ Նաթալին անխոս շոյում էր նրա մազերը, ծոծրակը։ Մայր մտնող արևը ողողել էր սենյակը, Ժիլն հանկարծ մտածեց, որ երբեք, երբեք չէր մոռանալու այս պահը։ Ինչ էլ պատահեր։

— Վաղը կգամ կայարան ճանապարհելու,— ասաց Նաթալին,— բայց ոչ թե Լիմոժի, այլ Վիերզոնի։ Իսկ երբ վերադառնա, կդիմավորեմ։

Նրա ձայնի մեջ համարյա հուսահատության հասած զարմանալի հանդարտություն կար։

# ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

## ՓԱՐԻԶ

### 1

Էլոիզին հիշեց միայն այն ժամանակ, երբ կառամատույցում տեսավ իրեն ընդառաջ վազելիս։ Բարեհամբույր և բանիմաց արտահայտությունը դեմքին՝ ժանը գալիս էր նրա ետևից։ Ժիլն իր իսկ ցրվածությունից շվարած ստիպված էր երկար-բարակ համբուրել այդ օտարացած կնոջ շրթունքները։ «Բայց չէ որ նա գոյություն ունի,— մտածում էր Ժիլը,— և ապրում է իմ տանը, սարսափելի է... Համենայն դեպս, ժանը կարող էր զգուշացնել ինձ»։ Եվ այդ պարզունակ մտքից ծիծաղեց։ Կարծես ամեն անգամ արձակուրդից վերադառնալիս մտերիմ ընկերը պարտավոր էր իրեն զգուշացնել, որ տանը սիրուհի կա... Հիմա արդեն զզվելի էին Էլոիզի օծանելիքի բույրը, շրթունքների հպումը։ Նա հիշում էր երեք ժամ առաջ Վիերզոնի կայարանում Նաթալիի վերջին համբույրը, նրանց շնչակուր, ինքնամոռաց հրաժեշտը, և մի տեսակ սնահավատությամբ էր լցվում։ Եթե հանկարծ որևէ վթարի հանդիպի... ետդարձի ճանապարհին, քաղաքացիական շրջապտույտներից մեկի ժամանակ, չէ՞ որ վերջին րոպեին նկատել էր նրա աչքերում լցված արցունքը։ Ինքն էլ էր հուզված և հինգ րոպեի չափ շվարած, նստած էր մնացել վագոնի խցիկում, որից հետո վեր էր կացել և վրատահ քայլերով ուղղվել դեպի վագոն-ռեստորանը։ Նման պահերին ինքն անկարող կլիներ զնկին նստել, իսկ Նաթալին այնքան արագ էր վարում։ Չնայած շատ լավ, բայց շատ արագ... Ժիլը խելքը թռցնելու էր։ Նա կամաց հեռացավ Էլոիզի կողքից, խփեց ժանի ուսին, փորձեց ժպտալ։ Կա-

գարանը սևացել էր մխից և լցված էր խլացուցիչ աղմուկով։ Միայն Ժանի մեքենայի մեջ նա վերագտավ իր սիրելի Փարիզը, որ այնքան մեղմ էր և կապույտ, իր ամառային, իր գիշերային Փարիզը։ Եվ միայն այն մտքից, որ տասը երկար տարիներ այս նույն Փարիզում չատ երջանիկ էր զգացել իրեն, սիրտը ճմլվեց, կարծես այդ ուրախությունը առհավետ կորել էր նրա համար։ Սկսեց վախենալ, կարծես գարձյալ մոլորվեց, կարծես դարձավ անկարող մի մարդ։ Ինչ ասես չէր տա, որ Լիմուզենի մարգագետիններից մեկում լիներ, Նաթալիի շուրջ տակ պառկած։

— Ուրա՞խ ես, որ վերադարձել ես,— հարցնում էր Ժանը։

— Շատ։ Իսկ դո՞ւ ինչպես ես։

Ջանում էր անհոգ տեսք ընդունել։

— Բարեբախտաբար Ժանն ինձ նախազգուշացրեց,— լսվում էր Էլոիզի ուրախ ձայնը ետևից,— չես կարող ասել, որ նամակներով հեղեղեցիր...

— Չէի ուզում Էլոիզը նեղություն կրեր, տաքսի պիտի նստեր, քեզ դիմավորելու գար,— ասաց Ժանը,— գնացի նրան էլ վերցրի։ Կարծես երկնքում ճախրեր...

Ժանն էլ էր ծիծաղում, բայց նրա ուրախությունը մի փոքր շինծու էր։ Զախորդ ընկերոջ նման աչքի տակով նայում էր Ժիլին։

— Փորձեցի զանգ տալ,— խարեց Ժիլը Էլոիզին,— բայց պատասխանող չեղավ։

— Չեմ զարմանում, ամբողջ օրը լուսանկարվում էիր։ Եվ գիտե՞ս, որ ամսագրի համար. «Վոգի» համար։

Ցնծության մեջ էր Էլոիզը։

«Ինչ կա որ, ավելի լավ,— անամոթաբար մտածեց Ժիլը,— գոնե ինչ-որ բան հաջող է ընթանում»։ Բայց մի միտք սկսում էր անհանգստացնել նրան. զանգ տա՞ր Նաթալիին, թե՞ Ժանի միջոցով աներ այդ բանը։ Նախապես պայմանավորվել էին, որ հաջորդ օրը Ժիլը զանգահարելու էր, մանավանդ հիմա գիշերվա ժամը տասնմեկն էր, վտանգավոր էր, կարող էր ամուսինը վերցնել լսափողը, բայց չէր էլ կարողանում ձերբազատվել այդ հիմար վթարի մրցքից։ Ինչ խոսք, նա ամենևին էլ սիրահարված չէր Նաթալիին, բայց ուզում էր սիրտը հանգստացնել, իմանալ ողջ



առողջ տեղ հասել է թե ոչ։ Կար նաև մի ուրիշ հանգամանք. ինչպե՞ս զանգահարեր տնից, երբ Էլոիզն այնտեղ էր լինելու և ոչ մի քայլ չէր հեռանա իրենից, իսկ Ժանը միայն գործից էր խոսելու...

— Ավելի լավ տեսք ունես,— ասաց Ժանը,— նույնիսկ մի քիչ էլ սևացել ես արևից։ Շատ լավ է ստացվում, պետքն ասել եմ, որ Լազուր ափերում ես հանգստանում ինչ-որ մի իտալուհի կինոաստղի հետ։

— Եվ ես պետք է հանգուրժեմ այս ամենը,— ծիծաղելով ասաց Էլոիզը, իսկ անհանգիստ Ժիլը ավելի ամուր տեղավորվեց նստարանին։ Բայց Նաթալիին պատկերացնելով իտալուհի կինոաստղի դերում, անսահման հպարտությամբ լցվեց։ Նա իտալացի կինոաստղից ավելի գեղեցիկ է և ունի այն բոլոր առավելությունները, որ ընդհանրապես պակասում են իտալացի կինոաստղերին։

Բնակարանը անփոփոխ վիճակում էր, միայն ավելի հարմարեցված կանացի ոճին։ Մի հսկայական թավշյա արջուկ, որ Էլոիզը նվեր էր ստացել ինչ-որ լուսանկարչից, մի պահ ցնցեց Ժիլին, բայց նա իսկույն շրջվեց։ Հոգը չէր բոլորովին։ Կատարյալ օտար էր զգում իրեն իր իսկ տանը։ Ընկղմվեց բազկաթոռի մեջ, հուսալով, որ Ժանը ու Էլոիզը նույն դիրքը կընդունեն, և ինքը, իբր հենց այնպես, կգնա մյուս սենյակը, որտեղ հեռախոսն է դրված։ Սակայն Էլոիզն արդեն, որպես օրինավոր կին, ննջասենյակ էր քարշ տալիս ճամպրուկը և աղմուկով բաց անում պատի պահարանը։ Ժիլը ջղային վիճակի մեջ ընկած՝ չէր լսում Ժանին, որն ի վերջո նկատեց այդ և հարցական արտահայտությունը դեմքին դադարեց խոսելուց։ Ժիլը վեր կացավ։

— Ներիր մի բոպե, ծերո՞ւկ, խոստացել եմ տեղ հասնելուն պես զանգահարել քրոջս, գիտես էլի, ինչ անհանգիստ մայրիկ է...

Շփոթվում էր։ Ժանը բավարարվեց պատշաճորեն գլուխը շարժելով։ Ժիլն անկարող էր չպատասխանել այդ ժպիտին և, որպես հին մեղսակից, բուռն համակրանք առաջացավ նրա նկատմամբ։ Կողքով անցնելիս գլխին թեթևակի հարվածեց, մտավ ննջասենյակ և խիստ բնական շարժումով վերցրեց հեռախոսը, նստեց մահճակալին ու թերթեց հեռախո-

ոչ գիրքը։ Նաթալիի հետ խոսելու համար պետք է տասնյակ թվեր հավաքեր։

— Ուշ չէ՞ զանգահարելու համար,— ասաց էլոիզը կապույտ ժակետը կախիչի վրա հարմարեցնելով։

— Քույրս,— հակիրճ պատասխանեց Ժիլը։

Հավաքեց համարը։ Եթե ամուսինը վերցնի, լսափողը ցած կդնի։ Շատ դանդաղ գնացին, հետո շատ մոտիկից լսեց Նաթալիի աշխույժ ձայնը, այդ ժամանակ միայն զգաց, որ ձեռքը, որով բռնել էր լսափողը, խոնավացել է։

— Ալո՛,— ասաց նա,— ես եմ։ Ուզում էի ասել, որ հաջող տեղ եմ հասել։ Ուզում էի իմանալ,- զո՞ւ ինչպես տեղ հասար։

Շատ արագ խոսեց, ցրված տոնով։ Մի բոպեի չափ խոր լռություն տիրեց, հետո Նաթալիի հուզված ու մի փոքր խզված ձայնը.

— Երևի սխալվել եք,— ասաց նա և անմիջապես քնքշորեն ավելացրեց,— բայց ամենևին չանհանգստացրիք ինձ, պարոն։— Եվ խոսափողը դրեց տեղը։

Ժիլը մի պահ անշարժացավ, հետո՝ «երկուսիդ էլ համբուրում եմ»,— ասաց նա լուռ ու համր հեռախոսափողի մեջ, ի ցույց էլոիզի, և դրեց տեղը։ Քրտինքը ծորում էր ճակատից։

Ուրեմն ամուսինն այնտեղ էր, նրա մոտ։ Եվ նա ոչինչ չէր կարող ասել իրեն։ Բայց ինչ խորամանկն էր... և այդ «պարոն, ամենևին չանհանգստացրիք ինձ» նախադասությունը որքան արտասովոր և հուզիչ էր... Իսկ ինքը ողջ էր իհարկե։ Եվ սիրում էր իրեն։ Տարօրինակ է, որ երբեմն ջղերը թունդ են ելնում... Նա զործունյա մարդու նման մտավ հյուրասրահ. թեթևացած, աղաս քայլերով, այլևս չէր անհանգստանում Նաթալիի համար, այնպես ինչպես չէր անհանգստանում էլոիզի համար, նրա հետ կապված բոլոր հարցերը պարզ էին։ Եվ ոչ մի բոպե չմտածեց, որ եթե ինքը հանգստացել էր, ուրեմն կարիք էր զգում, որ իրեն՝ հանգստացնեին։

— Ահա, ամեն ինչ առաջվա տեսքն ընդունեց,— մթան մեջ լսվեց էլոիզի ձայնը,— ես շատ լավ գիտեի, որ մեր հարաբերությունը երկար է տևելու, շատ երկար։



— Ժիլը չպատասխանեց, անկողնու մեջ շրջվեց կողքի, ինքն իր դեմ զայրացած։ Իրիկունը ժանի հետ շատ էին խմել, խմել էին երեքով և՛ վերադարձի, և՛ իր նոր հաջողությունների համար։ Առավոտվա մոտ ժամը երեքին ժանը մեկնել էր, Ժիլը քնելու ցանկություն չուներ, ուրախ, հաղթանակած, ինքնավստահ էր զգում իրեն։ Այսպես ասած, մի քիչ հարբել էր և էլոիզի հետ պառկել էր համարյա անդիտակցաբար, կարծես վերջին անգամ ուժն ու կարողությունը ապացուցելու համար, ինչպես կպառկեր պատահական որևէ կնոջ հետ, ով էլ լիներ իր անկողնում։ Մի խոսքով, դավաճանել էր Նաթալիին, բայց դա այնքան էլ կարևոր չէր, նա կարող էր ամենևին չիմանալ այդ մասին, դավաճանել էր ինքն իրեն, քանի որ, նույնիսկ հարբած վիճակում, նա միայն մի տեսակ ջղային ու լարված հաճույք էր ստացել և ի վերջո, դավաճանել էր էլոիզին, քանի որ այդ ապացույցը նա վերագրել էր սիրո։ Հարկավոր էր բացատրել նրան, խոսել Նաթալիի մասին հատկապես հիմա, երբ իր իսկ մեղքով նա սկսել էր հավատալ, որ ինքը պատկանում է էլոիզին։ Ժիլը միանգամից վառեց լույսը, ծխախոտ փնտրեց, առանց որևէ հետաքրքրություն ցուցաբերելու նկատեց, որ էլոիզը սքանչելի է այդ դիրքով՝ մազերը բաց թափած, և սկսեց ատելի որսալ խոսակցություն բացելու համար։ Գլուխը ցավում էր, հոգնած ու ծարավ էր։

— Համենայն դեպս տարօրինակ է,— երազկոտ ասաց էլոիզը,— ամեն հաջողություն միանգամից է գալիս. այդ ամերիկացի լուսանկարչի շնորհիվ «Վոգի» մշտական բնորդուհին եմ մնալու, դու քո երազած պաշտոնն ես ստանալու և բուժված ես։ Մեկ ամիս առաջ մտքովդ կանցնե՞ր այսպիսի բան։ Վախեցրիր ինձ, գիտես։ Շատ վախեցրիր։ Շա՛տ, շա՛տ, շա՛տ։

Սիրո հաճույքն ըմբոշխնելուց հետո նա միշտ երեխայի պես էր խոսում։ Սկզբում Ժիլին հուզում էր դա, բայց հետո սկսեց ջղայնանալ։ Իսկ հիմա կրկնապատկվում էր խզճի խայթը։

— Ամեն ինչ այդքան պարզ մի պատկերացրու,— ասաց Ժիլը խզված ձայնով,— դեռ ամրողջովին չեմ լավացել, գի-

տես, հենց որ այս գործը գլուխ բերեմ, վերադառնալու եմ քրոջս մոտ։

— Համենայն դեպս ամբողջ ամառվա ընթացքում պիտի մասնակցեմ հավաքածուների ցուցադրման աշխատանքներին,— ասաց Էլոիզը,— բայց դրանց միջև ընկած ազատ օրերին կգամ քեզ մոտ։ Հիմա մինչև Լիմոժ թռչող ինքնաթիռ կա։

«Միայն այդ էր պակաս»,— մտածում էր Ժիլը։ Տեխնիկայի առաջընթացը փչացնում էր գործը։ Հարկավոր էր խիստ որոշակիորեն խոսել նրա հետ։ Նա միշտ էլ անսահմանորեն խորշել էր ընդհարումներից... Ո՛չ։ Միայն թե ոչ այս գիշեր։ Իր վերադարձից հետո առաջին անգամ նայեց Էլոիզին, նայեց նրա վստահություն ներշնչող աչքերին, հարազատ դարձած մարմնին, այս ամբողջ գեղեցկությանը, որոնք հիմա արդեն անիմաստ էին դարձել, և հանկարծ այնպես խղճաց նրան, իրեն, Նաթալիին, սերը, այն բոլոր սերերը, որոնք մի օր դատապարտված են մահանալու լացի ու ափսոսանքի մեջ, որ այլևս չդիմանալով՝ արցունքը աչքերին, նորից նետվեց բարձին։

Էլոիզը հակվեց նրա վրա։

— Տխո՞ւր ես, բայց չէ՞ որ ամեն ինչ լավ է։

Ոչինչ չպատասխանեց, հանգցրեց լույսը։ Պառկել էր և գլուխն առած թևերի մեջ տեսնում էր գետափին փռված մարգարեատինը, մոտեցող Նաթալիին։ Նա շնչում էր արևի տակ վառվող խոտի բույրը, տեսնում էր, թե ինչպես են իր գլխավերևում հանդարտ օրորվում բարդիները և տեսնում էր Նաթալիի պայծառ աչքերի խորհրդավոր խոստովանանքը։

## 2

Ֆերմոնը՝ թերթի գլխավոր խմբագիրը, բարձրահասակ, լիքոր, ձախորդ և շատ աշխատասեր մի մարդ էր։ Սերած լինելով բուրժուական տոհմիկ ընտանիքից, նա, ի օգուտս բոլորի, և շնորհիվ սեփական հարստության, հիմնել էր ձախ հոսանքին հարող այս թերթը, որն իսկապես այնքան ձախ էր, որքան կարող էր՝ համապատասխանելու համար այդ խառը ժամանակներին։ Համենայն դեպս նրա մոտ դեռ պահպանվել էր իշխանական, բռնապետական վարվեցողությունը, և խմբագրությունում բոլորն էլ գիտեին, որ դատապարտելով ամեն տեսակի առանձնաշնորհ, նա արդեն քանի տարի է փորձում էր վերականգնել Կառլոս 10-րդի օրոք անհետացած կոմս դը Ֆերմոն տիտղոսը։ Ժանի ընկերակցությամբ Ժիլը նրա գրասենյակում նստած փորձում էր հետաքրքրությամբ հետևել խիստ լուրջ խոսակցությանը, որ վերաբերում էր նրա հետագա պարտականություններին։

—... Անհերքելի փաստ է, որ դուք պետք է հրաժարվեք ձեր արտառոց քայլերից,— ասում էր Ֆերմոնը,— ցանկալի չէ ձեզ փնտրել Սեն-Քրոիեզում, երբ Ամերիկայի և Վիետնամի միջև խաղաղություն է հաստատվում։ Այդ պաշտոնը գրաղեցնելու համար շատ երիտասարդ եք, գիտեմ, և դա, առավել ևս մի պատճառ է, որ ավելի խորանաք գործի մեջ։ Անշուշտ լսած կլինեք, որ Գարնիեն պետք է ստանձներ այս պաշտոնը, եթե այդ միջադեպը տեղի ունեցած չլիներ։

Ժիլը լարեց լսողությունը։ Նայեց Ժանին, որ անհանգստացած շարժում էր գլուխը։

— Տեղյակ չեմ,— ասաց Ժիլը։— Ճի՛շտ է, Գարնիեն վաղուց է աշխատում այստեղ, գործի մեջ եփված է...

— Գարնիեն բարոյականության հետ կապված խնդիրներ ունեցավ, հիմա ոստիկանների ձեռքն է ընկել, ինչ-որ մի փոքր տղայի պատճառով։

— Բայց,— ասաց Ժիլը,— ի՞նչ կապ ունի։

Նա վրդովված էր, զայրացած. Ժանը նրա վրա մի հայացք գցեց, որ հանգստանա։ Բայց Ժիլն այլևս չէր կարող զսպել իրեն։

— Եթե ճիշտ եմ հասկանում, այս պաշտոնի համար պարտական եմ պատվախնդրությանը։

Ֆերմոնը սառած աչքերով նայեց նրան։

— Ոչ թե ձեր պատվախնդրությանը, այլ՝ իմ։ Ես չեմ ուզում այսպիսի կարևոր, պատասխանատու աշխատանք հանձնարարել մի մարդու, որից կարելի լինի հեշտությամբ գաղտնիքներ կորզել։ Կսկսեք սեպտեմբեր ամսից։

Ժանի գրասենյակում Ժիլը պոռթկաց իր ամբողջ բարկությամբ։ Նրա անդրդվելի հայացքի ներքո ձեռքով-ոտքով խոսելով ետ ու առաջ էր գնում։

— Չեմ կարող ընդունել այդ պաշտոնը, դա գողություն է։ Ի՞նչ է նշանակում այս ամբողջ պատմությունը։ Սա ինչ մաքրամտություն է։ Ո՞վ կարող է մեր ժամանակներում որևէ մեկից իր բարքերի վերաբերյալ գաղտնիքներ կորզել։ Չեմ կարող համաձայնել... Իսկ դո՞ւ, դու ինչ կասես այդ ամենի համար։ Չէի՞ր կարող ինձ նախօրոք զգուշացնել։ Ո՛չ շատ է, ես լրիվ մոռացել էի Գարնիեին։

— Մոռացել էիր և՛ Գարնիեին, և՛ Էլոիզին, և՛ ինձ,— հանդարտ ձայնով ավելացրեց Ժանը,— ի միջի այլոց, կարող ես չանհանգստանալ, եթե մերժես, ուրիշին կգտնենք։ Օրինակ, քո ընկեր Թոմասը։

— Թքել եմ ամեն ինչի վրա, ուզում է Թոմասը լինի՝ ուզում է մեկ ուրիշը։ Ես չեմ կարող Գարնիեի հետ այդպես վարվել։ Գարնիեին շատ եմ սիրում։ Եվ նա ինձնից վատ չգիտի իր գործը։

Իրար ետևից բաց էր թողնում ծխախոտի ծուխը, պտտվում սենյակում։ Ժանը ի վերջո կանգնեցրեց նրան.

— Նստի՛ր։ Գլուխս պտտվեց։ Գարնիեի հետ խոսել եմ արդեն։ Նա մտածում է, որ ամենաարժանավորը դու ես։ Նա ոչ մի պատրանք չի ստեղծում իրեն համար։ Գնա նրա մոտ։

— Հարմար է,— զոմռաց Ժիլը,— իսկապես հարմար է։

Ուժասպառ եղած ընկավ բազկաթոռի մեջ։ Ժանը ժպտաց։

— Վիրավորվեցիր, որ միայն խելքիդ վրա չհիմնվեցին ընտրության ժամանակ։

— Չես հասկանում,— ասաց Ժիլը,— անարդարություն է թույլ տրվում, և չեմ ցանկանում օգտվել դրանից։

Բայց, իրոք, նա միաժամանակ վիրավորված էր զգում իրեն։ Վիրավորված և զզված։ Ցանկություն ուներ ամեն ինչ դրոզի ծոցն ուղարկել. Փարիզը, նրա որոգայթները, նրա օրենքները, թծեանքները։ Ուզում էր նորից տեսնել գյուղը և Լիմոժի հանգիստ, վաղանցիկ, իր փեսայի աչքերի պես կապույտ սրահները։ Ցանդահարելու էր Նաթալիին և խորհուրդ էր հարցնելու նրանից։ Նա կիմանար, թե ինչ է անելու ինքը։ Նրա մոտ բնավորության աննկուն մի գիծ կա

անականից անբիծ։ Եվ որի կարիքը սաստիկ շատ էր զգում Ժիլը։

— Ցանգահարելու եմ,— մեքենայաբար շշնջաց նա։

— Ո՞ւմ։

Ժանի վճռական ձայնը զարմացրեց նրան։ Առհասարակ նա զուսպ բնավորության տեր մարդ էր։

— Ինչո՞ւ ես հարցնում։

— Հետաքրքրության համար։ Այստեղից մեկնեցիր սանատորիում նման, գոյատևության շղթաները ոտքերիդ և վերադառնում ես ամպերին հեծած։ Հետաքրքիր է, այս ամենը ո՞ւմ շնորհիվ։

— Բայց դու սխալվում ես,— բացականչեց Ժիլը ահաբեկված և, միամտաբար ավելացրեց,— ես ամենևին սիրահարված չեմ, հազիվ եմ ճանաչում նրան, հմայիչ կին է, ահա և բոլորը։

Ժանն սկսեց ծիծաղել։

— Ահա և բոլո՞ր։ Բայց և այնպես, երբ առաջարկում եմ քոնդիդ միակ նպատակը դարձած պաշտոնը, հաջորդ օրն դու միայն գալիս։ Բայց և այնպես, երբ տեսնում ես Էլոիզին, արծեն ամպերից ես իջնում։ Բայց և այնպես միջոցներ ես մտածում, որ տեղ հասնելուց պես զանգ տաս այդ կնոջը, բայց և այնպես ամենամփոքր դժվարության դեպքում ուզում ես նրա խորհրդին դիմել։ Ինչպես, ահա բոլորը։ Այդպես մի այլիր ինձ, կարծես ծաղրածուի դրակ կա ղլխիս, այնքան համար տեսք ունես, որ մարդ կվախենա։

— Դա արդեն չափից դուրս է,— ասաց Ժիլը (և զայրույթից կմկմալով ուզո՞ւմ էր հավատալ Ժանին, հավատալ սեփականներին),— ես քեզ ասում եմ, որ նա պարզապես շատ դուր գալիս ինձ, ահա և բոլորը։ Ինչ է, կարծում ես ինձնից ավելի լա՞վ գիտես իմ զգացմունքները։

— Նոր չեմ ճանաչելու քեզ,— ասաց Ժանը,— արդեն սանհինգ տարի է։ Դի արի, դուրս գանք, մի՛ մի բաժակ խմենք, այդ ընթացքում կպատմես նրա մասին։

Նրանք գնացին «Ճլյուպ», նստեցին բացօթյա տաղավարում։ Հրաշալի եղանակ էր, արևը մի փոքր այրում էր նրանց մարմը, և Ժիլը Ժանի պնդումով սկսեց իր գյուղական հարսանիքի ու հակիրճ պատմությունը։ Ի՞նչ մեծ զարմանս իրեն, նա

բավական դժվարություն էր կրում իր պատմության մեջ խցկելու ցինիզմի կամ ծաղրանքի ինչ-որ տոն, որպեսզի կարողանար համոզել Ժանին իր անկեղծության կամ ավելի ճիշտ, կեղծության մեջ։ Բայց համառում էր։ Ժանը կարծես ենթադրում էր ծխամորճ ծխելով։

— Եթե ամեն ինչ այդքան պարզ է,— ասաց նա,— ինչո՞ւ ես վերադառնում։ Սովորականի պես էլոիզի հետ գնա հարավ։

— Բայց դա ինչ նշանակություն ունի,— ինքն իրենից դուրս գալով ասաց Ժանը,— այդ կինը, համենայն դեպս, հետաքրքրում է ինձ։ Հոգեբանորեն...

— Արդեն քառասունհինգ րոպե է այդ մասին ես խոսում,— ասաց Ժանը,— և ժամացույցով։ Նույնիսկ գարեջուրդ չես խմել, չնայած այն հանգամանքին, որ արևն ու ջրամուղությունդ տոչորում են քեզ։ Խեղճ էլոիզ։ Եվ խե՜ղճ Ֆրանսուա։ Այո՛, ամուսինը։ Հիմա արդեն անունն էլ գիտեմ։

Ժիլը ապշած նայեց նրան։ Մի պահ գլխապտույտ ունեցավ, նրան թվաց, թե ինչ-որ բան զարթնում է իր մեջ, ողողում ջերմությամբ ինչ-որ սարսափելի և միաժամանակ դյուրակիր զգացումով, ու նա մեկնեց ձեռքը, վերցրեց բաժակը, հանդիսավորությամբ տարավ շրթունքներին։ Գլուխը նստ դցեց, աչքերը փակեց. տաքացած գարեջուրը ողողեց բերանը, կոկորդը, և կարծես, թե կարող էր այդ գարեջրից լիտրերով խմել և կարող էր անընդհատ նման հաճույք վայելելով՝ հագենալ։ Նա բաժակը ցած դրեց.

— Իրավունք ունես,— ասաց նա,— անկասկած, սիրում եմ նրան։

— Համենայն դեպս կարողացա օգտակար լինել քեզ,— առանց ծիծաղելու եզրակացրեց Ժանը։

## 3

Օրը երազի նման անցավ։ Վառվում էր Նաթալիին զանգ տալու ցանկությունից, ուզում էր հանդիսավորությամբ հայտնել իր սերը։ Բայց միաժամանակ ցանկանում էր որպես հաճելի անակնկալ անձամբ ավետել այն և հանձնել չնախատեսված հրաշալի մի ընծա, ուզում էր անձամբ տեսնել նրա դեմքի արտահայտությունը այդ լուրը հայտնելու ժամանակ։ Եթե կարողանար մի քանի օր էլ համբերել, եթե կարողանար համբերել մինչև կայարան, երբ դիմավորելու գար իրեն... Հենց որ քաղաքից դուրս գալին, կանգնեցնել կտար մեքենան, նրա դեմքը կվերցներ ափերի մեջ ու կասեր. «Գիտես, զժի նման սիրահարված եմ քեզ»։ Եվ այն գաղափարից, որ Նաթալին երջանիկ պիտի զգար իրեն, մի տխուր հպարտությամբ ու քնքշությամբ էր լցվում հոգին և մտածում էր, թե որքան վիհանձն է ինքը։ Տարված իր սիփական մեծահոգությամբ, մտավ գոհարեղենի խանութ, վերջին փողերով գնեց զվարճալի մի զարդասեղ, որ ավելի քնքշացրեց իրեն և հորդաբուխ սրտով զանգ տվեց նրան ինչպես պայմանավորվել էին, իր տան մոտ գտնվող սրճարանից։

Նաթալին անմիջապես վերցրեց լսափողը, բայց ձայնը չոր էր, համարյա անտարբեր, որ նախ և առաջ զարմացրեց Ժիլին, հետո վիրավորվեց։ Անմիջապես մտածեց. «Դե, իհարկե, բնական է»։ Նա գիտեր, որ սիրո մեջ միշտ մի կողմը տանջում է մյուսին և երբեմն միայն, հազվադեպ է պատահում, որ նման վիճակ չի ստեղծվում։" Բայց հիմա, այսքան արագ, տանջվել նրա համար, այն դեպքում, երբ հաղիվ ինքն իրեն խոստովանեց, որ սիրում է, այն դեպքում, երբ Նաթալին չգիտի էլ այդ մասին։ Հանկարծ այս ամենը նրան անարդար և միաժամանակ շատ հուսահատական թվացին, բայց մի վայրկյանի ընթացքում այդ նույն վիրավորանքի պատճառով նա համոզվեց գոյություն ունեցող իր սիրո ճշմարտության մեջ։

— Ի՞նչ է պատահել,— ուրախ ձայնով հարցրեց Ժիլը։

— Պատահել է այն, որ շատ շոգ է, որ առավոտվանից սարսափելի ամպրոպ է և որ... որ սարսափելի կերպով վախենում եմ այդ ամպրոպից։ Մի՛ ծիծաղիր,— անմիջապես վրա բերեց Նաթալին,— ոչինչ չեմ կարող անել։

Բայց ծիծաղում էր, միաժամանակ թեթևացած ու զարմացած։ Դա Նաթալիի անկեղծության առաջին արտահայտությունն էր։ Նրա այդքան տարված, անզգույշ, բացարձակ վերաբերմունքը թվում էր ավելի հարազատ է պատանեկությանը, քան քաղքենիությանը կամ վախվորած մանկությանը։

— Քեզ համար նվեր եմ գնել,— ասաց նա։

— Որքան ազնիվ ես... լսի՛ր, Ժիլ, լսափողը դնում եմ տեղը։ Շատ վտանգավոր է ամպրոպի ժամանակ էլեկտրական լար բռնել։ Վաղը նորից զանգահարիր։

— Բայց հեռախոսը էլեկտրականության հետ գործ չունի։ Դա...

— Խնդրում եմ,— լսվեց վայրի, վախից փոփոխված մի ձայն,— համբուրում եմ։

Նա ցած դրեց լսափողը, իսկ Ժիլը դեռ ձեռքի մեջ պահած այն, սառած մնացել էր տեղում, փորձում էր ծիծաղել։ Փորձում էր մտածել, որ հաջորդ փոթորիկի ժամանակ Լիմոժում սիրով գգվելու էր նրան և հետաքրքիր է, վա՞խը պիտի հաղթեր, թե բավականությունը։ Բայց տխուր էր, լքված, արևը լցվել էր փողոցների մեջ, իսկ գնած նվերը կարծես ավելի ծիծաղելի էր, քան՝ սրտաշարժ։ Ուզում էր տեսնել նրան, և անմիջապես։ Անշուշտ, գոյություն ունի «Air Inter»-ը, հոչակավոր «Air Inter»-ը, որը հակառակ պարագային, եթե շատ վատ ղրա իրեն, կարող է ինքնաթիռ նստել ու թռչել։ Զանգահարեց Օրլիի օդանավակայան, երկու օր թռիչք չէր լինելու։ Գնացքը մեկնել էր, «սիմկան» վաճառել էր և ոչ մի սու չուներ։ Հաջորդ օրն էլ խմբագրության ադմինիստրատորի հետ ժամադրություն էր նշանակված ստանձնելիք նոր աշխատանքի կապակցությամբ, խոսելու էր նաև Էլոիզի հետ, և ընդհանրապես կյանքը դժոխք էր։ Անողոքելի չէր, այսպես էլ պիտի լիներ։ չէ՞ որ ամբողջ օրը շատից ավելի էր երջանիկ զգացել իրեն։ Եվ այն գաղափարը, որ նրան մղել էր մտածելու, թե «ամեն ինչի համար պետք է վճարել», նողկանք էր առաջացրել նաև իր անձի հանդեպ։ Ա՛հ, չէ՛, չէր բուժվել։ Այժմ նա կրկնապատիկ հիվանդ էր, ընկճված, այն էլ ինչ-որ մի օտար կնոջ պատճառով։ Մի օտար կին, որ հավատացնում էր, թե սիրում է իրեն և ամենաշնչին ամպրոպի պատճառով քթի առաջ կախում էր լսափողը։ Ժիլն իր զայրույթն էր որոճում սրճարանի տիրուհու բարեհամբույր հայացքի տակ, և ի վերջո նկատելով, որ իրեն է նայում, փորձեց ժպտալ։

— Հրաշալի եղանակ է,— ասաց նա։



— Մի քիչ շոգ է,— սիրալիորեն պատասխանեց կինը,— ամպրոպ է սպասվում։

Ժիլն անմիջապես վրա տվեց.

— Վախենո՞ւմ եք ամպրոպից։

Կինը բարձրաձայն ծիծաղեց.

— Ամպրոպի՞ց, կատակում եք, ինչ է։ Մենք հարկերից ենք վախենում։

Նա այսքանով էլ ուզում էր սահմանափակել խոսակցության նյութը, բայց տեսնելով Ժիլի դեմքի արտահայտության փոփոխությունը, իր բնաղդային և աստվածային բարությամբ առաջնորդվելով, որ հաճախ է երևան գալիս սրճարանների տիրուհիների մոտ, այն պատճառով, որ նրանց հայացքը միշտ թափառում է մենակյացների, երջանիկների կամ մոլորվածների դեմքերին, ավելացրեց.

— Բայց, տեսնեք, քրոջս աղջիկը, որ Մորվանից է, չնայած այնտեղ սարսափելի շատ ամպրոպներ են պայթում, չի հաշտվում դրանց հետ։ Նույնիսկ ճաշի ժամանակ, եթե որոտի ձայն լսի, կմտնի անկողնու տակ։ Ջղերն են։

— Այո՛,— գոհունակորեն ասաց Ժիլը,— «ջղերն են»,— խորհելով, որ մինչև հիմա Նաթալին ավելի շատ իր ջղերի մասին էր մտածել, քան՝ սեփական, և հնարավոր է, որ հակառակը տեղի ունենար։ Նա երկար ժամանակ զրույցի բռնվեց սրճարանի տիրուհու հետ, պորտվեյն հյուրասիրեց նրան, նրա հաշվին խմեց այդ գինուց, որ սովորաբար տանել չէր կարող, բայց հիշեցնում էր իր քեռայրի կոկտեյլները, և կիսահարբած վիճակում, լավատեսորեն տրամադրված, դուրս եկավ սրճարանից։ Հիմա հարկավոր էր խոսել Էլոիզի հետ։ Վաղը կգնար խմբագրություն, կաշխատեր պարտքով մի քիչ դրամ խնդրել և երեկոյան կարող էր մեկնել։ Արդեն պատկերացնում էր այն հարյուր կիլոմետրը, որ անցնելու էր Նաթալիի կողքին նստած, գիշերային և հրապույրով լի այն հարյուր կիլոմետրերը, սիրո խոսքերով տոչորված հարյուր կիլոմետրերը։ Ինչու՞ էր նրան ասել, որ մեկ կամ երկու շաբաթից են իրար հանդիպելու։ Գուցե ինքնապաշտպանության միջոց էր, կամ մի փորձ՝ նրան համոզելու ընթացքում ինքնահամոզման գալու, որ առանց նրա կարիքն զգալու կարող էր հեշտ ու հանգիստ ապրել, մի փորձ՝ համոզելու

համար իրեն, որ գոյություն ունի Փարիզ, գոյություն ունեն ընկերներ, փառասիրություն, սակայն դրանք կեղծ մտքեր դուրս եկան, իհարկե, քանի որ երկու օրվա ընթացքում դարձան անիրական։ Ժիլը ոչինչ չէր տեսնում, ոչինչ չէր զգում, նրա սրտում միայն Լիմուզենի բարձունքներն էին ապրում, մեկ էլ՝ Նաթալիի դեմքը։ Բայց ի՞նչ կարող էր մտածել նա իր շուտափույթ վերադարձի համար, եթե իմանար, որ կապված է նրան ամուր շղթաներով։ Արդյոք նրան չէ՞ր պաշարի անխուսափելի և չափազանց մեծ մի վստահություն, որ ձեռք է բերվում կասկածից դուրս գտնվող մարդու ներկայությամբ։ Թե՞ ուրախությունից խելքը թռցնելու էր։ Նա հաջորդաբար հիշում էր կայարանում արցունքով լեցուն նրա աչքերը, քիչ առաջվա չոր ձայնը, և մտածում էր, որ երկու կին գոյություն ունի նրա մեջ, ու բազմապատկելով, բարդացնելով, մշուշապատելով Նաթալիի տարբեր կերպարները, կամքից անկախ մտորում էր մեծ սիրո առկայության հնարավորության մասին։

Երբ Ժիլը ներս մտավ, էլոիզը հեռուստատեսային հաղորդում էր դիտում, իսկույն թռավ տեղից և փաթաթվեց վզին։ Ժիլը հիշեց վաղուց կատարված համանման մի տեսարան և զարմանքով մտաբերեց, որ այդ ժամկետը հաղիվ էր մեկ ամսի հասնում։ Նրան թվում էր, թե այդ ժամանակից շատ դեպքեր են անցել-գնացել... Բայց իրականում ի՞նչ էր տեղի ունեցել։ Տասնհինգ տաղտկալի, միալար օրեր էր անցկացրել քրոջ տանը, որից հետո տասը օր երեկոները սիրաբանել էր ինչ-որ մի կնոջ հետ։ Եթե ցանկանար, կարող էր այս ամենը սահմանափակել։ Բայց արդեն չէր ուզում և վե՛րջ։

— Դե ի՞նչ, ամեն բան լա՞վ անցավ։ Տեսա՞ Ֆերմոնին։

— Այո,— ասաց նա,— տեսա նրան, համաձայնվեցինք։

Ցանկություն չուներ բացատրություն տալու, պատմելու Գարնիեի գործի մասին։ Նա ուզում էր միայն Նաթալիի հետ խոսել։ Հավանաբար սերը երբեմն այս տեսքով էլ է հանդես գալիս. ամեն ինչի մասին միայն մի հոգու հետ կիսվելու ցանկությամբ։ Ժիլը քթի տակ մրթմրթաց.

— Պորտվեյն չունե՞ս,— և իսկույն զղջաց ասածի համար. հյուրի պես էր պահում իրեն։

— Պորտվե՞յն, բայց չէ՞ որ զզվում ես այդ խմիչքից...



— Արդեն երեք բաժակ խմել եմ, խառնել չեմ սիրում ե...— ասաց նա կոկորդը մաքրելով,— կարիք եմ զգում ես մի բաժակ խմելու։

Ահա՛, Մի քայլ կատարել էր էլոիզը կասեր «ինչու՞» և նա կպատասխաներ «որովհետև պետք է խոսեմ քեզ հետ»։ Բայց նա մտադրություն էլ չուներ հարցեր տալու, միայն բացականչեց.

— Հասկանում եմ քեզ, շատ ծանր օր էր քեզ համար, անուշիկս... Մի բոպե սպասիր, վազեմ ներքև, խանութից բերեմ։

— Ջարժե,— հուսահատ ձայնով ասաց Ժիլը, բայց էլոիզն արդեն շրխկացրել էր դուռը։

Մոտեցավ լուսամուտին, նայեց նրա հետևից, տեսավ, թե ինչպես իր մանեկենի շորորուն քայլվածքով մտավ խանութ։ Ժիլը զննող հայացքներից շուրջը. փոքրիկ սեղանին իր սիրած ծխախոտն էր դրված, երեկոյան թերթը խնամքով ծալված էր, ծաղկամանի մեջ թարմ ծաղիկներ կային։ Նույնիսկ առանց նայելու գիտեր, որ իր սպիտակ վերնաշապիկը և ամառային ամենաթեթև մոխրագույն կոստյումը դրված էին կից ննջասենյակի մահճակալին։ Մինչև իսկ արջուկը, այդ սարսափելի բրդոտ արջուկը, որի մասին ոչ մի բան չէր ասել նրան, անհետացել էր։ Միգուցե էլոիզը իր լռությունը համարել էր նրբանկատություն, այնինչ սոսկ անտարբերությունից էր Ժիլը լռել։ Իսկ ինքը, իսկական անտաշ մարդու նման, անհոգ ու հարբած՝ պառկել էր նրա հետ։ Ատում էր իրեն։ Այս ամենի մասին նույնպես պատմելու էր Նաթալիին, ոչինչ չէր թաքցնելու նրանից։ Արդեն հպարտ էր զգում հետագայում ցուցարերելիք անկեղծության համար, իր իսկ ստորացման համար, նա չէր էլ մտածում, թե ինչ դեր կարող էր խաղալ մեղքը խոստովանելու ցանկությունը, խոստովանելով նրան ուզում էր և չքմեղացնել իր ամոթալի վարմունքը, և այսպիսով Նաթալիի աչքին ավելի մեծ արժեք տար էլոիզի հետ ընդհարվելու դեպքը։

Տխուր տեսքով մի բաժակ պորտվեյն խմեց և որոշեց հեռուստատեսային լուրերից հետո խոսել էլոիզի հետ։ Բայց դրանից հետո էլ էլոիզը մեծ հետաքրքրությամբ պիտի ուզեր լազմաերիանոց կինոնկարի հետաքրքիր մասերից մեկը

դիտել, նա էլ իր քրոջ՝ Օդիլի նման, մեկ ամսից ավելի հրապուրված դիտում էր հեռուստատեսային այդ նկարը։ Այսպիսով, իր կամքից անկախ, նա շահեց ևս հիսուն բոպե, որ միայն ու միայն երկարաձգեց իր անհանգիստ վիճակը։ Շատ կուզենար էլոիզին քարշ տալ որևէ տեղ, ասենք թեկուզ Ակումբ, և այնտեղ ամեն ինչ բացատրել նրան երաժշտության աղմուկի մեջ, որտեղ նաև մարդիկ էին շատ, ավելի հեշտ կլիներ։ Բայց վայելուչ չէր այդ քայլը։

— Քաղցած չե՞ս,— ասաց էլոիզը անջատելով հեռուստացույցը։

— Ո՛չ, էլոիզ... ես ուզում էի քեզ ասել... ես... ես հանդիպել եմ մեկ ուրիշին, գյուղում և ես... ես...

Նա անընդհատ շփոթվում էր։ Էլոիզը անշարժացել էր, գունատվել, նայում էր նրան։

— Նա ինձ շատ օգնեց,— իսկույն փոա բերեց Ժիլը,— իրականում նրա շնորհիվ ոտքի կանգնեցի։ Ներողություն եմ խնդրում դրա համար, ինչպես նաև գիշերվա համար։ Ջղետք է անեի։

Էլոիզը հանդարտ նստեց։ Ոչ մի բառ չարտասանեց։

— Պետք է վերադառնամ, Իշարկի, կարող ես մնալ այստեղ որքան կամենաս... շատ լավ գիտես, որ ես ու դու տոհավետ բարեկամներ ենք...

«Մարդ սրանից ավելի ապուշ չի կարող լինել,— մտածեց Ժիլը, արդեն վճռականորեն համոզված,— սա դեռևս ամենակատարյալ, ամենաամբողջական, ամենադաժան ընդհարումն է։ Բայց ոչինչ չեմ կարող անելու։ Նա կարծես սառել էր։

— Սիրո՞ւմ ես,— հարցրեց էլոիզը։

Նրա գեմքին հավատքի նշույլ անգամ չկար։

— Այո՛, Գոնեն այդպես եմ կարծում։ Եվ նա էլ ինձ է նիրում,— արագ ավելացրեց Ժիլը։

— Որ այդպես է ինչու՞... ինչու՞ երեկ իրիկուն ...

Էլոիզը չէր էլ նայում նրան։ Լաց չէր լինում, ալքը հեռուստացույցին հառած նայում էր անթարթ, կարծես անտանելի կինոնկար էին ցուցադրում նրա համար։

— Ես... երեկ, ուզում էի քեզ,— ասաց նա,— ներիր, ամեն ինչ պետք է սկզբից ասեի։



— Այո՛,— պատասխանեց էլոիզը,— այդպես պետք է անեիր։

Նա այլևս չխոսեց։ Լռությունն անտանելի էր դառնում։ Բայց գոնե ճշմարիտ, հարցեր տար, կատաղեր, որ ինքն էլ ջնջելու հնարավորություն ունենար։ Մազերի մեջ խրեց մատները, քրտնել էր։ Բայց էլոիզը առաջվա պես ոչինչ չէր ասում։ Ժիլը վեր կացավ, երեք քայլ արեց սենյակում։

— Եմել ուզում ես։

Էլոիզը բարձրացրեց գլուխը։ Լաց էր լինում, Ժիլը թնազդով գնաց նրա մոտ, բայց նա ետ քաշվեց ձեռքերով փակելով աչքերը։

— Հեռացի՛ր,— ասաց նա,— խնդրում եմ, ժի՛լ, իսկույն հեռացի՛ր... վաղը կգնամ։ Ո՛չ, խնդրում եմ, հեռացի՛ր։

Ժիլը աստիճաններով ցած նետվեց, վազեց փողոց, սիրտը խփում էր։ Շնչասպառ հենվեց մի ծառի, գրկեց երկու ձեռքերով։ Ամոթն ու տխրությունը կիսամեռ վիճակի մեջ էին գցել նրան։

— Ես շատ ուրախ եմ, որ հատկապես ձեզ ընտրեցին,— ասաց Գարնիեն։

Նրանք նստած էին «Արքայական կամուրջ» հյուրանոցի բարում, գետնահարկ, մի բար էր դա, որտեղ ամառ-ձմեռ լուսավորությունն անփոփոխ էր։ Ժիլը քնել էր հյուրանոցում, չէր սափրվել, վերնաշապիկը կիդտոտ էր, մղձավանջի մեջ էր անցկացրել գիշերը։ Գարնիեն ամրակազմ և ուժեղ տղամարդ էր, մոխրագույն աչքերով, մոխրագույն մազերով, գեմքի մեղմ արտահայտությամբ, զարմանալի է, որ նա իրեն ավելի լավ է զգում։

— Այդ... այդ տեղը ետ վերցրեք,— ասաց Ժիլը,— ինձ համար հաճելի չէ գրավել այն։

— Դուք մեղավոր չեք։ Ֆերմոնին դուր չի գալիս իմ բարոյական կերպարը, ահա և բոլորը։

Սկսեց ծիծաղել, իսկ Ժիլը կարմրեց։

— Տեսնում եք,— շարունակեց Գարնիեն մեղմ ձայնով,— մեծ բան չէ։ «Ամեն ինչ կորավ, բացի պատվից»։ Իրոք, սիրում եմ այդ տղային։ Տասնյոթի փոխարեն գոնե ասած լիներ, որ տասնիսը տարեկան է, և երբ բռնեցին

նրան, գոնե ասեր, թե ինչով է ապրում կամ ավելի ճիշտ, ում հաշվին, սա արդեն նորմալ կլիներ։ Շատ հանգիստ կարող էի ժխտել Ապացույցներ չունեին։ Բայց հենց այստեղ էլ կկորցնեի պատիվս, եթե ժխտեի նրա գոյությունը և փրկեի իմ հեղինակությունը։ Սիծաղելի է, չէ՞։

— Ի՞նչ եք անելու,— ասաց Ժիլը։

— Վեց ամսից գուրս կգա։ Տասնութ տարեկան դարձած և ազատ կլինի ընտրություն կատարելու. հանդիպել ինձ հետ, թե՝ ոչ։

Ժիլը հիացմունքով էր նայում նրան։

— Իսկ եթե չվերադառնա ձեզ մոտ,— ասաց նա,— ամեն ինչ կորցրած կլինեք վասն ոչնչի...

— Այն, ինչ հոժարակամ եմ տվել, երբեք չեմ կորցրել,— հանգիստ պատասխանեց Գարնիեն։— Երբ մարդուն են կողոպտում, այդ դեպքում է դժվար, սիրելիս, միշտ հիշեք այս...— բարձր-բարձր ծիծաղեց,— երևի շատ տարօրինակ է ձեզ համար հոմոսեքսուալիստից նման բարոյախոսություն լսել։ Բայց հավատացեք ինձ, այն օրը, որ ամաչեք ձեր սիրած բանի համար, կործանված եք։ Կործանված հենց ձեզ համար։ Այժմ խոսենք աշխատանքի մասին։

Բազմաթիվ խորհուրդներ տվեց Ժիլին, որ համարյա չէր լսում։ Նա մտածում էր այն մասին, որ կողոպտել էր էլոիզին, մտածում էր, որ Նաթալիի համար երբեք չի ամաչելու, մտածում էր, որ նույն սիրով ու պատվով էր սիրելու, ինչպես Գարնիեն էր սիրում այդ փոքրիկ տղային։ Նա պատմելու էր այս ամենի մասին, պատմելու էր Գարնիեի մասին, նա մեռնում էր Նաթալիին տեսնելու տենչից։ Կես ժամ հետո կկնար խմբագրություն, հնարավորին չափ շուտ կկարդաղրեր գրամական հաշիվները, կճաշեր ժանի հետ, էլոիզին կվստահեր նրան, ճամպրուկը կպատրաստեր և ժամը հինգին կնստեր գնացքի մեջ։ Հենց այստեղից էլ զանգ կտա Լիմոժ։

Նաթալին ուրախ ու զվարթ ձայնով պատասխանեց, և Ժիլն ղգաց, որ մեծ երջանկությամբ է ողողված։

— Ձղջում եմ երեկվա արածիս համար,— անմիջապես ասաց Նաթալին,— իսկապես շատ էի վախենում, ջղայնանում եմ։



— Դիտեմ,— ասաց Ժիլը,— Նաթալի, ի՞նչ կասես, եթե այսօր երեկո գամ։

Տիրեց լռություն։

— Այս իրիկո՞ն։ Ոչ, Ժիլ, դա չափից դուրս հրաշալի է։ Կարո՞ղ ես։

— Այո, կշտացա այս քաղաքից։ Եվ քո կարիքն եմ զգում,— ավելացրեց նա իջեցնելով ձայնը։— Գնացք եմ նստելու։ Կգա՞ս ինձ դիմավորելու։

— Ասված իմ,— հուսահատորեն պատասխանեց նա,— այսօր Քուզերքների մոտ ճաշի ենք հրավիրված։ Ի՞նչ անեմ։

Նրա ձայնի մեջ արտահայտված ճշմարիտ վիշտը մխիթարում էր Ժիլին։ Նա ուղամարդու նման պահեց իրեն։

— Կգամ միևնույն Լիմոժ, տաքսի կնստեմ և վագը կտեսնեմ։ Ինձ հետ կճաշե՞ս։ Կարմիր խաչի հավաքույթ չունե՞ս։

— Օ՜հ, Ժիլ,— ասաց նա,— ...Ժիլ, պատկերացնու՞մ ես, վագը քեզ հետ եմ ճաշելու... ի՞նչ երջանկություն, սարսափելի ձանձրանում էի։

— Կեսօրին կգա՞ս քրոջս մոտ։ Կարո՞ղ ես նրան նախազգուշացնել։

Զգում էր, որ միանգամից տիրապետել է իրեն, դարձել վճռական, առնական։ Նա վեր էր բարձրանում այդ խառնափնթոր քաոսից, որ ներկայացնում էր իրենից Փարիզը։ Նա վերակենդանանում էր։

— Մի քիչ հետո նրա մոտ կգնամ,— ասաց Նաթալին,— իսկ վաղը կեսօրին կլինեմ այնտեղ։ Գործերդ լա՞վ են, ամեն ինչ լա՞վ է։

— Որոշ դժվարություններ հանդիպեցի, նույնիսկ բավական շատ, բայց ես... ես ամեն ինչ կարգավորեցի,— վճռականորեն եզրակացրեց Ժիլը։

«Շատ չեղա՞վ,— հանկարծ մտածեց նա,— գրավեցի ուրիշի տեղը, լացացրի կնոջը։ Բայց նա չէր կարող դեմն առնել իր մեջ բարձրացող ցնծության, այն լավ, զաժան, անդարմանելի խղճմտանքի, որ ծնվում էր երջանկությունից։

— Ցտեսություն, մինչև վաղը, սիրում եմ քեզ։

Ժիլը չհասցրեց ասել. «ես էլ քեզ եմ սիրում»։ Նա լսափողը դրել էր տեղը։

# ՀՈՐԴՈՐԴ ՄԱՍ

## ԼԻՄՈԺ

### 1

Գնացքն անվերջ անցնում էր Ֆրանսիայի տարածքով։ Կայարանից շարժվելուց անմիջապես հետո նախ և առաջ Ժիլի աչքերի առջևով երկարորեն ձգվեցին արվարձանները. ամառվա երեկոյան արևի շողերի մեջ նրանք կարծես բանաստեղծական շունչ էին ստանում։ Այնուհետև, նախքան Լուարա հասնելը, հաջորդեցին ծառերի անկանոն երկարաձիգ ստվերով երիզված առաջին մարգագետինները իրենց փայլուն ու կանաչ սեղերով, այնուհետև մոխրագույն Լուարան։ Այնուհետև գիշերն ընկավ, և պատուհանից շրջվելով՝ Ժիլը նայեց ուղևիցների խաղաղ դեմքերին։ Լավ էր զգում իրեն այս գնացքի մեջ, որը շարունակ սլանում էր դեպի քրոջ տունը, դեպի Նաթալին։ սլանում էր միաժամանակ դեպի խաղաղություն և դեպի սեր, ու նրան թվում էր, թե կյանքում առաջին անգամն էր այսպիսի կապ տեսնում։

Ժամը տասնմեկին մոտ հասավ Լիմոժ։ Չորս կողմը խավար էր, և այնպես ապշեց, երբ հանկարծ Նաթալին նեռվեց դիրքը։ Ժիլը ձեռքից բաց թողեց ճամպրուկը և հրջանկությունից շվարած, առանց բառ արտասանելու սեղմեց նրան կրծքին։ Մի անհատնում վայրկյան նրանք մնացին այսպես կանգնած կայարանի կառամատույցում, մեկը մյուսին կառչած, օրորվելով և կատարյալ անտարբեր իրենց վրա կանգ առնող հայացքներին։ Ի վերջո Ժիլը մի փոքր հեռացավ ու նայեց նրան. մոռացել էր, որ Նաթալին այդքան խոշոր, այդքան լայն բացված աչքեր ուներ։

— Ի՞նչ հնարքով կարողացար գալ այստեղ։



— Փոխա,— ասաց Նաթալին,— այլևս չէի կարող։ Ճաշը մոդամանջ էր դարձել։ Ապուրի ժամանակ գիտեի, որ Օլիան ես հասել, երբ ձուկը բերին՝ անցնում էիր Շատոռուով, թվում էր ուշքս պիտի գնա։ Համբուրի՛ր ինձ։ Ժիլ, այլևս չե՛ս գնա։

Ժիլը համբուրեց նրան, թևը մեջքին գցած դուրս եկավ գոնով, հասավ ավտոմեքենային, ճամպրուկը գցեց մեջը, ինքն էլ անմիջապես նեռվեց նստարանին ու Նաթալին ասավ գրկի մեջ։

— Ավելի ես նիհարել,— ասաց Նաթալին,— ես փոխվե՞լ եմ։

— Ընդամենը երեք օր եմ բացակայել,— ասաց Ժիլը։

— Ճաշից հետո բրիջ խաղացին։ Աստցի լավ չեմ զգում, տան եմ գնում։ Քիչ էր մնում ուշանայի գնացքից, քիչ էր մնում ամբողջ Լիմոժը ճամի ճանապարհին։

Ժիլը համբուրում էր նրան, հոգով-սրտով երջանիկ էր, հոգով-սրտով գատարկված։ Այլևս ոչինչ չուներ ասելու, այնինչ հիշում էր, որ մեծ նորություն ուներ հայտնելու, որ սիրում էր նրան։ Որ այդ մասին երկար էր մտածել։ Բայց հիմա այնքան էլ կարևոր չէր, ինչպես Փարիզում էր պատկերացնում, այնքան էլ ցնցող լուր չէր։ Սակայն ցանկանալով հավատարիմ մնալ այն երիտասարդին, որով հիանում էր և Փարիզում մի ամբողջ օր հանդես էր եկել նրա գերում, ջանք գործադրեց ու Բոսանորոյ Ռայնով ասաց.

Գիտես՝ Նաթալի, գիտես, ես քեզ սիրում եմ,— և իր խոկ Ռալիր [illegible] Ելի Ռեմով արձագանքից ականջներում,

Նաթալին սկսեց ծիծաղել։

Հասկանում եմ,— ասաց նա ամենափոքր զարմանքն իսկ չարտահայտելով,— և միայն այդ էր պատճառ՝ ինձ չսիրելիր։

Ժիլն էլ իր հերթին սկսեց ծիծաղել։ Նաթալին իրավունք ուներ։ Կատարյալ ապուշ էր։ Նման ակնարկությունները ձևակերպման կարիք չեն զգում։ Նաթալին առաջին օրն էր ասել, որ սիրում է իրեն և մեծ համբերությամբ սպասել էր նրանից սիրվելու։ Ուժեղ կին էր, ավելի ճիշտ մի կին, որի թուլությունները շատ մեծ ուժ ունեին, հնարավոր չէր դիմադրել դրանց։ Այո՛, Ժիլի սանդղելիք սպավորությունը ձախողություն էր մատնվել, և շատ ուրախ էր դրա համար։

Ոչինչ չունե՞ս պատմելու,— հարցրեց Նաթալին։

— Ոչինչ չունեմ պատմելու,— ասաց նա,— լավ եմ զգում։ Այս երեկո գյուղը շատ գեղեցիկ էր գնացքի միջից։

— Զարմանալի պատմություն է...

— Համբուրի՛ր ինձ,— ասաց Ժիլը,— վաղն ամեն ինչ կպատմեմ։ Կգնանք գետափ, ինձ հետ ճաշելո՞ւ ես, ըստ պայմանավորվածության։

— Այո՛։ Բայց հիմա պետք է վերադառնամ։ Ցրանսուան երեք արդեն տանն է։ Չպետք է գալի,— ցածրաձայն ավելացրեց նա,— իսկ այժմ սարսափելի է քեզնից բաժանվելը։

Նրանք անցնում էին Լիմոժով, Նաթալին վարում էր դանդաղ և երեկոյան զով օդը լցվում էր պատուհանից ներս։ Ժիլը բռնել էր նրա ձեռքը, ոչ մի բանի մասին չէր մտածում, միայն հուզմունքով մտաբերում էր այն սահմանումը, թե մտքերի բացարձակ բացակայությունը կոչվում է երջանկություն։ Նաթալին տաքսիի մոտ իջեցրեց Ժիլին և վերջին նույն հիպնոսացած վիճակով անցավ երեսուն կիլոմետր ճանապարհ, մինչև հասավ իրենց հին տան մոտ, արթնացրեց Օդիլին և Ֆլորանին ու միանգամից վերադառնելով ուժերի ողջ թարմությունը, սկսեց պատմել նրանց, չնայած նրանք դեռ չէին թոթափվել իրենց քաղցր մրափից, գնացքի մեջ Նաթալիի համար ժամերով պատրաստած զարմանալի և բարդություններով լի անվերջանալի պատմությունը։

Պառկել էր գետափին, Նաթալիի մոտ։ Շոգ էր, նրանք կկոցում էին աչքերը արևի վերջին ճառագայթների ներքո։ Նաթալին մտածում էր, որ մարդիկ արևի տակ թուխ գույն են ստանում, իսկ Ժիլը ձեռ էր առնում նրան ասելով, որ միայն Միջերկրական ծովի ափին կարելի է սևանալ, իսկ ամառվա վերջին նրանք կհասցնեն միայն գեղնել։ Սակայն շատ հաճելի էր այս դիրքով մնալ. վերնաշապկի օձիքը բաց, երեսը նուրբ խոտերի մեջ թաղած։ Այնինչ, առանց խենթի պես սիրում էր կրակե ավազի վրա թափվող թեժ արևը, չափից ավելի մաշկված և հեշտությամբ տրվող մարմինները, իսկ հիմա մի տեսակ նողկանք էր զգում այդ բոլորի հանդեպ։ Նրան հարկավոր էր այս մեղմ բնապատկերը և բարդություններով լի այս կինը։ Նա շատ լավ էր զգում, որ Նաթալին բարկացած է Փարիզում իր անցկացրած այն մի քանի օրերի պատճառով։



Ժիլի պատմածները վերլուծելով՝ նա երկու հանգամանքի վրա էր սևեռել իր ուշադրությունը. մեծ ցանկասիրություն էլոիզի հանդեպ, հիացած հետաքրքրասիրություն Գարնիեի նկատմամբ։ Իսկ իր մասին, Ժիլը՝ ոչ մի խոսք։ Նաթալին բնազդային խանդի նշույլ անգամ չուներ էլոիզի հետ անցկացրած գիշերվա համար, ոչ էլ համակրանքի նշույլ՝ Ֆերմոնի վերաբերմունքի հանդեպ։ Նաթալին այս ամենը որակում էր միայն իր նախասիրած տերմինով. «վշտալի է»։ Եվ եթե Ժիլի նպատակն իրոք նրան վշտացնելն էր, ապա հույս ուներ, որ Նաթալին կմխիթարեր իրեն և ոչ թե կդատապարտեր։ Բայց և այնպես նա բացեիբաց դատապարտում էր Ժիլին և դատապարտում նրա թուլությունը։

— Բայց ի վերջո,— ասաց Ժիլը զայրացած և միաժամանակ ծույլ տոնով, որովհետև ամբողջ երեկոն անցկացրել էին իր սենյակում,— բայց ի վերջո ի՞նչ կուզեիր անեի։ Մնայի էլոիզի հե՞տ։ Եմբարգրությունը թողնեի՞։

— Չգիտեմ։ Չեմ սիրում նման իրարդրություն։ Եվ այն տպավորությունն եմ ստացել, որ միշտ այդպես ես անցկացնում կյանքդ։ Մի փոքր խարկանք։ Զիմանալով ինչն է հիշտ։ Մի փոքր մեղավոր զգալով քեզ և դրանից էլ հաճույք ստանալով։

— Ի՞նչ, մինչև ուղն ու ծուծը նեխած մարդ եմ, հա՞,— ասաց Ժիլը ծիծաղելով։

— Գուցե՛, այո՛։

Նաթալին չէր ծիծաղում։ Ժիլը շրջվեց, գիրկն առավ նրան։ Նաթալին տաք խոտի բույր էր արձակում և նայում էր նրան սևեռուն հայացքով, աչքերը լայն բաց արած, համարյա սարսափած։ Բայց Ժիլը չէր տեսնում նրա աչքերի արտահայտությունը, միայն իր մեղքով նրանց տակ գծագրված կապույտ գծերն էր նկատում։ Ժպտում էր, համբուրում այդ կապուտակ ծիրը, ծիծաղում.

— Իսկ դու կարո՞ղ ես մինչև ուղն ու ծուծը նեխած մի մարդու սիրել։

— Սերն ընտրություն չի ճանաչում։

— Այդքան զարգացած կին ես և չե՞ս վախենում մաշված արտահայտություններ օգտագործելուց,— ասաց նա։

— Շատ եմ վախենում,— ցածր ձայնով պատասխանեց

Նաթալին,— դրանք համարյա միշտ համընկնում են իրակա-նությանը։

Ժիլը նայեց նրան, տեսավ իրոք վախենում է և մի պահ կիսեց նրա վախը։ Այսպես ո՞ւր են գնում միասին։ Իսկ եթե մի օր այդ կինը արհամարհի իրեն։ Եվ եթե իսկապես արժանի է արհամարհանքի։ Եթե դադարի այլևս իրեն սիրելուց։ Գլուխը թաղեց խոտերի մեջ, հառաչեց։ Հանգստություն չկար, չկար խաղաղություն։ Սիրում էր այդ կնոջը, խոստովանում էր նրան, իսկ սա վախենում էր իրենից։

— Եթե վախենում ես, հեռացիր ինձանից,— շշնջաց Ժիլը։

Զգաց նրա այտի ու շրթունքների հպումը ծոծրակին։

— Չե՛մ կարող,— ասաց Նաթալին,— նույնիսկ եթե կարողանամ էլ չե՛մ անի։

— Ինչո՞ւ։

— Իմ կյանքը շատ անխռով է անցել, խաղաղ ու ձանձրալի,— հանգիստ բացատրեց նա,— այսպիսի մի իրադարձության էի սպասում։

— Երջանիկ պատահականությո՞ւն ես համարում սա, թե՞ չարիք։

— Առայժմ՝ երջանիկ պատահականություն,— պատասխանեց Նաթալին։

Նրանք անշարժ պառկել էին խոտերի մեջ, Նաթալին թեթևորեն ընկած Ժիլի վրա՝ գլուխը դրել էր մեջքին, վերջինս ճակատի վրա խոտերի խտուտն էր զգում, մեծ խաղաղություն էր իջել վրան, մի տեսակ թմբիր։ Նույնիսկ զարմացավ, երբ լսեց իր ձայնը։

— Ի՞նչ ենք անելու Ֆրանսուայի հետ։

Նաթալին հեռացավ նրանից, շրջվեց մեջքի վրա։ Ժիլը թեքել էր գլուխն ու տեսնում էր նրա էխսադեմը, երկնքին հառած հանգիստ աչքերը։

— Չգիտեմ,— պատասխանեց նա,— պետք է լքեմ նրան։

Ժիլը կամաց ցատկեց տեղից։ Նա անգիտակցաբար հարմարվել էր այդ տեսիլային և ոչ մի բանով համարյա իրեն չխանգարող Ֆրանսուային։ Գիտեր, որ այլևս իրար հետ չեն պառկում, Նաթալին էր այդ մասին պատմել, և Ժիլը հավատում էր նրա բացարձակ ճշմարտախոսությանը, չէր կասկա-



ծում նրա խոսքին։ Բայց այդ բացարձակ ճշմարտությունն ուներ այլ հետևանքներ։

— Ի՞նչ ես մտադիր անելու։

Նաթալին շրջեց դեմքը դեպի Ժիլն ու ժպտաց։

— Երևի քեզ հետևել, այնքան ժամանակ, որքան շարունակես ինձ սիրել։

Իրավունք ուներ, լիովի իրավունք ուներ։ փոխադարձաբար սիրում էին իրար, պետք է միասին ապրեին։ Նա բավական շատ էր վաստակում և կարող էր կերակրել մի կնոջ։ Այդ ի՞նչ ազատասիրություն էր բուն դրել իր մեջ, ինքնամփոփ դառնալու ի՞նչ ցանկություն էր դա։ Այդ ազատությունը կամ ինքնամփոփվածությունը՝ ուրախությունից զուրկ այդ երկու պագշտուհիները չէի՞ն արդյոք իրեն ուղղակիորեն ջղային դեկրեսիայի մեջ գցողները։ Նա կարող էր գրոզի ծոցն ուղարկել այս ամենը... բայց վախենում էր։ Նաթալին մեկնեց ձեռքը, շոյեց նրա մազերը։

— Մի՛ անհանգստացիր, Ժիլ, այս ամառ չեմ լքի նրան։ Վերջում։ Եվ կհետևեմ քեզ միայն այն ժամանակ, եթե շատ թախանձես։

Ժիլը հանկարծ բորբոքված թռավ տեղից, բորբոքված այն բանի համար, որ բացահայտվել էր, բորբոքված այն բանի համար, որ եթե բացահայտվել էր, ուրեմն նման բան անցկացրել էր մտքով։

— Բայց ես չեմ անհանգստանում։ Ես ուզում եմ քեզ։ Ուզում եմ, որ հետևես ինձ։ Անմիջապես մեկնենք։ Այսօր երեկոյան խոսիր նրա հետ, վաղը մեկնենք։

«Բայց ո՞ւր,— մտածում էր նա միաժամանակ,— ո՞ւր։ Ընդամենը երեք ֆրանկ ունեմ։ Այստեղ մնալ չենք կարող այն խայտառակ աղմուկից հետո, որ տեղի է ունենալու։ Ի՞նչ անել մինչև սեպտեմբեր ամիսը»։ Բայց Նաթալին ժպտում էր և այդ ժպիտը կատաղեցնում էր նրան։

— Ուզում եմ հետևես ինձ։

Նա համարյա գոռում էր։

— Լա՛վ, կհետևե՛մ,— հանգիստ ասաց Նաթալին,— միայն թե խնդրիր, և ոչ թե հրամայիր։ Այդպես մի գոռա, ամբոխին կարմրել ես։ Այստեղ լավ չէ։ Ո՞ւր ես ուզում գնալ։

— Չեմ սիրում կեղծ իրավիճակներ...— ասնվաբար վեր-

սկսեց ծիլը, բայց Նաթալին այնպես նայեց նրան, որ վերջինս տարակուսելով ընդհատեց խոսքը։ Նաթալին բարձրաձայն ծիծաղեց։ Ծիլն էլ սկսեց ծիծաղել և ընկավ վրան, նրանց մազերը խառնվեցին իրար, պատահական տեղում թափվող համբույրները ողողեցին նրան։ «Օ՜, Նաթալի,— ասում էր նա,— Նաթալի՜, դու այնքան լավ ես ճանաչում ինձ,... օ՜, սիրում եմ քեզ»։ Եվ Նաթալին արտասվելու չափ ծիծաղում էր՝ նրա թևերի մեջ փայլակնացայտ աչքերով ու չէր կարողանում զսպել իրեն։

## 2

Զարմանալի է, որ մեկի կողմից «հարթված» խոշընդոտը մյուսի համար դառնում է հարմարավետ։ Հենց որ Նաթալին որոշեց լքել ամուսնուն, Ծիլին այլևս չէր անհանգստացնում Ֆրանսուային հանդիպելը։ Նաթալին հանուն Ծիլի լքում էր մյուսին, իսկ Ծիլի հոգն էլ չէր։ Այն պահից, երբ Նաթալին մտահղացել էր այդ գաղափարը, արտասանել այդ բառերը, ընտրությունը կատարված էր, ճակատագիրն էր իրագործվում։ Ծիլը ոչ մի վայրկյան չէր կասկածում, թե կփոխի իր կարծիքը։ Ինչպես բոլոր օրիգինալ խաբեբաները՝ լիովին հավատում էր նրան։ Ավելին, նա բնավ այն կարծիքին չէր, որ գողանում է Ֆրանսուայից օրևէ բան։ Նաթալիի սիրո ճիչերը, հեշտանքի պահերը բացարձակապես իրենն էին, ամբողջովին կախված իրենից, և Նաթալիին ճանաչողներից ոչ մեկը չէր կարող նույնը ակնկալել նրանից։ Այն, ինչ գողանում էր Ֆրանսուայից, կին-Նաթալին չէր, այլ՝ «ստրատած»-Նաթալին, բացարձակ, աննկուն-Նաթալին, և ինքը պետք է խոստովաներ, որ այդ մարդը տարիներ շարունակ շատ էր զբաղվել Նաթալիով։ Այնքան լավ էր զբաղվել, որ այժմ Ծիլին էր հանձնում և՛ սիրուհի, և՛ մայր՝ խստապահանջ ու մոլեգին, այն ամենը ինչի կարիքը շատ էր զգում։ Անշուշտ անպատկառություն էր այդպես դատելը, բայց երջանկությունը անպատկառ է դարձնում մարդուն։ Իսկ Ծիլը երջանիկ էր։

Ամենահաճելի ժամերը թերևս այն ժամերն էին, որ նրանք անցկացնում էին իր սենյակում ամուսնի բոլոր երեխաներին, ավելի ճիշտ, շրջապատից առանձնացած ձեղնահարկում՝ սպասուհու հախիին կացարանում։ Երկար տարիներ անց Ծիլն այն նորից բացել էր և հնարավորին չափ հարմարավետ դարձրել։ Տան ետնամասից աստիճաններն ուղղակի տանում էին ձեղնահարկ և այսպիսով փրկում ոչ միայն Նաթալիի պատիվը, որի համար վերջինս շնայած ամենևին չէր մտահոգվում, այլև Օդիլինը, որը որոշ սկզբունքներից ելնելով, դեռ առիթներ ուներ հուզվելու։ Մեծ սենյակ էր, համարյա պատարկ, փոշոտ, հիմնական կահույքը մահճակալն էր ու կարմիր փայտից մի բազկաթոռ, ուր Նաթալին նստում էր իր հագուստները։ Ծիլն այնտեղ էր բարձրանում ժամը երեքին, փակում էր փեղկերը, պառկում, բաց էր անում մի գիրք ու սպասում։ Շուտով գալիս էր Նաթալին, հանվում էր, սահում ծածկոցի տակ, երբեմն վայրենու պես, առանց մի բառ արտասանելու, երբեմն դանդաղ, ծուլորեն, զավեշտորեն պատմելով մահու չափ ձանձրալի ճաշերի մասին։ Ծիլը չգիտեր, թե սրանցից ո՞րն էր նախընտրելի, սակայն դրանք միշտ ավարտվում էին սիրո գգվանքներով։ Եվ այնքան շոգ էր տանիքի տակ, որ ի վերջո հեռանում էին իրարից քրտնաթոր, ճարպոտված, այլևս չզգալով, թե ով է մեկը, ով է մյուսը, ամբողջովին սպառված, բայց երբեք չհագեցած։ Ծիլը ճմրթված սավանով սրբում էր Նաթալիի ընդարմացած մարմինը, շփում՝ զամբիկի տեղ դնելով նրան, իսկ սա աչքերը փակ՝ չէր բողոքում, և Ծիլն ափի մեջ զգում էր նրա դեռևս արագ-արագ թպրտացող սիրտը։ Նաթալին դանդաղ ձերբազատվում էր հագուստից, ինչպես թմբիրից հետո, և Ծիլը անսահման հարգանքով ծիծաղում էր նրա վրա։ Վերջապես կյանքի էր վերադարձվում, բացի իր արյան զարկերից, լսում էր նաև այլ ձայներ, բաց էր անում աչքերն այնպես, որ սենյակի առանց այն էլ թույլ լույսը չթափանցի ներս և շրջվում էր արդեն ծխախոտով զբաղված Ծիլի կողմը, մի տեսակ ահավոր երախտապիտության զգացումով համակված։

Խոսում էին։ Ծիլը քիչ-քիչ ամեն ինչ իմանում էր նրա մասին. Թուրում անցկացրած մանկության, Փարիզում անցկացրած ուսումնական տարիների, նրա առաջին տարփածուի, Ֆրանսուայի հետ հանդիպելու և նրա հետ ամուսնանալու մասին։ Պարզ և միաժամանակ խճճված մի կյանք էր. պարզ՝ որովհետև ամեն ինչ շատ սովորական էր, խճճված՝ որովհետև

Նաթալին երբեմն այնպիսի ձևով էր լռում կամ արտասանում որևէ ածական, կամ փոխարինում մի նախադասություն մեկ ուրիշով, որ այդ կյանքը դառնում էր խաղաղ, երջանիկ, բայց սրտակեղեք։ Երբ Ժիլը հարցնում էր նրան. «Իսկ դու ուրա՞խ էիր, որ Փարիզ ես գնում դիպլոմ ստանալու», պատասխանում էր. «Ես՝ նի՞թ ես... առաջին անգամն էի եղբորից բաժանվում»։ Եվ Ժիլը երևակայությամբ տեսնում էր շլացած գեղատի գեղջկուհու դասական պատկերը Փարիզում և օտար քաղաքում եղբոր պատճառով արտասվակալած փոքրիկ աղջկա երկրպագուներին։ Իսկ երբ Ժիլը հարցնում էր, թե առաջին անգամ ինչ տպավորություն էր թողել Ֆրանսուան իր վրա, պատասխանում էր. «Անմիջապես մտածեցի, որ սպառվախնդիր մարդ է», և անկարելի էր դրանից ավելի շատ բան իմանալ նրանից։ Ինչ վերաբերում է նրա սիրեկաններին, կարծես Ֆրանսուայից առաջ. երեքն էին եղել, իսկ մեկը նրանից հետո, նա շատ հանգիստ խոստովանում էր, որ մեծ հաճույք է վայելել նրանց հետ։ Մի օր Ժիլը հիմարաբար հարցրել էր. «ինչքան ինձ հի՞ա» և պատասխանը եղել էր. «բնականաբար», որ կատաղություն դուռն էր հասցրել նրան։ Իզուր Նաթալին երբեք նրա շափ որևէ մեկին չէր սիրել, բայց ուրիշներից հաճույք ստացել էր, չէր հրաժարվում իր խոսքից։ Այս անկեղծությունը հրապուրում էր Ժիլին, միաժամանակ զայրացնում, բայց իր խորամանկ քայլերից ոչ մեկը, նույնիսկ ամենակրքոտ պահերին, չէին կարող նրան ստիպել հրաժարվելու որոշումից։ Նաթալին նայում էր, թե ինչպես է Ժիլը որոգայթներ լարում, հետո ծիծաղելով մեկ բառ էր ասում ու բանդում էր դրանք։ Եվ Ժիլն էլ էր ծիծաղում նրա հետ։ Ինչոր ճիշտ է, նա ոչ մի անգամ որևէ կնոջ հետ չէր ծիծաղել ինքն իր վրա։ Այդ հաճելի զբաղմունքին անձնատուր էր եղել միայն ժամի կամ այլ տղամարդկանց հետ, առաջնորդվելով իրեն տղամարդ զգալու կեղծ սկզբունքով։ Եվ այդ զոհողամտությունից ձերբազատվելու հանգամանքը ավելի էր կապում նրան այդ կնոջ հետ, ավելի շատ, քան ինքն էր կարծում։

Սրեկոյան մոտ ժամը վեցին նրանք իջնում էին պատշգամբ, միանում էին թիկնաթոռների մեջ տեղավորված Ֆլորանին և Օդիլին, «Պորտո-Ֆլիպ» խմում, խոսելով եղանակից։



Օդիլն ամեն առիթով այլևս չէր կարմրում, Ֆլորանը նույնիսկ աշխատում էր հաճելի երևալ, մի բան, որ անչափ զվարճացնում էր Ժիլին։ Ջռելով իր խոշոր կապույտ աչքերը, Ֆլորանը հազար ու մի շնորհալի շարժուձևերով Նաթալիին էր առաջարկում ոսկեգույն ֆիլտրով տհաճ ծխախոտներ և այն կարծիքին էր, թե շրջանում միայն ինքը կարող էր դրանցից ճաշակել։ Նաթալին անհոդդողդ ծխում էր դրանք Ժիլի ծաղրական հայացքի տակ. խմում էր «Պորտո-Ֆլիպը», հետո տխուր ձայնով ասում. «Պետք է գնամ», և բոլորն սկսում էին բողոքել։ Օրերը դնալով ավելի էին երկարում, երեկոյան զովը ժամը յոթից առաջ չէր ընկնում, ծառերի ստվերները դեռ ձգվում էին պարտեզամրում։ Երբեմն Ժիլն իրեն պատկերացնում էր 1900-ական թվականներին ստեղծված կատակերգությունների հերոսներից մեկը՝ այս փոքրիկ, կլոր, մեկ ոտքի վրա ամրացված սեղանի, քաղցրահամ խմիչքների, շատախոս նոտարի շրջապատում... Հետո Նաթալին թափ էր տալիս մազերը դեպի հետ, և Ժիլը մի բոպե փակելով աչքերը, վերապրում էր երեկոյի հրաշալի զգացումը։ Եթե սա իրոք կատակերգություն էր, ամեն ինչից ավելի կնախընտրեր, որ այդպես էլ լիներ։

## 3

Այդ ամառ շատ ընդունելություններ կազմակերպվեցին, բայց Ժիլը ոչ մեկին չմասնակցեց։ Կարծում էին հիվանդ է, գնպրեսիայով է տառապում, դարձել է ինքնամփոփ, և բոլորին էլ ձեռնտու էր այդպես մտածել, ներառյալ, ինչպես Ժիլն էր մտածում, Նաթալիին։ Որքան էլ Նաթալին պատրաստ լիներ իրեն հետևելու, համենայն դեպս Ժիլն իրեն ամուսնացած կնոջ սիրեկան էր համարում։ Եվ ո՞վ կարող էր կասկածել այդ ամուսնացած, առաքինի կնոջը, որ ամեն երեկո վաթսուն կիլոմետր ճանապարհ էր անցնում ջղագրգիռ մարդու անկողնու մեջ ընկնելու համար։ Բավարարվել էր Օդիլին պատասխանելով. «Դեմ առ դեմ Սիլվերների՞ն...», երբ հանդիմանել էր իրեն ծուլության պատճառով աշխարհիկ հաճույքներից զրկվելու համար, և քույրը, ամբողջովին կարմրելով, համարյա ներողություն էր խնդրել։ Երեկոները հաճախ էր նայում հեռավոր ստնախմբության սլացող Ֆլորանի փոքրիկ

մեքենայի եռանից, որ անհետանում էր ծառուղու մեջ և ինքը մնում էր մենակ ընդարձակ տանը, քարշ էր գալիս հյուրասենյակում, հանգիստ բացում էր մի գիրք կամ բարձրանում էր երրորդ հարկ, շնչում էր դեռևս չհավաքված անկողնու միջից Նաթալիի բույրը, Նաթալիի սիրո բույրը և նետվում էր մահճակալի վրա աչքերը լայն բաց արած։ Թավշաձայն չղջիկները ճեղքում էին մուգ կապույտ երկինքը, գորտերն սկսում էին իրենց միալար ողբերը պարտեզում, մեղմ, բուրավետ մի քամի էր սահում սենյակի միջով, իջնում էր զով խաղաղություն, ուր քիչ առաջ հրակեզ մարտադաշտ էր։ Երազում էր Նաթալիի մասին, բայց չէր տեսնում նրա ներկայությունը։ Երբեմն քնում էր իր հին բրդյա հագուստով, իսկ խճաքարերի վրա գլորվող ավտոմեքենայի անիվների աղմուկը արթնացնում էր նրան։ Իջնում էր ներքև, օգնում կիսագինով Ֆլորանին դուրս գալու մեքենայից, նրանց ետևից մտնում էր խոհանոց, իսկ Օդիլը բացականչում էր. «Ինչպե՞ս, մինչև հիմա չե՞ս քնել»։ Բայց միաժամանակ շատ ուրախ, որ Ֆլորանից ավելի ուշիմ ունկնդիր է գտել, սկսում էր ոգևորված նկարագրել Քուդերքների կազմակերպած հրաշալի երեկոն, որի համար չէր ամաչի նաև դքսուհի Գերմանթը։ Օրվա թագուհին, ինչպես միշտ, Նաթալին էր, որին նկարագրելիս Օդիլը «տիկին Սիլվբներ» էր անվանում։ Ուրեմն, տիկին Սիլվբներն այդ երեկո հրաշալի երկնագույն զգեստ էր հագել և կոպտել էր Բրիվի դատախազի օգնականին, որ... և ոստիկանապետը ոչ մի քայլ չէր հեռացել տիկին Սիլվբներից և այլն։ Եթե Ժիլն այդ օրը իր ժամանակը նրա հետ մերկ անցկացրած լիներ, դպրոցականի նման պիտի մտածեր տիկին Սիլվբների մասին։ Բայց ժպիտը երեսին, քնքուշ արտահայտությամբ նա լսում էր Օդիլի կչկչոցը, ծիծաղում էր դատախազի օգնականի վրա և փորձում էր պատկերացնել նրա հագուստի կապույտ երանգը։ Օդիլը, հավանաբար հոգու բարությունից մղված՝ պատմությունը միշտ ավարտում էր գաղտնի թախծի քող նետելով տիկին Սիլվբների վրա, իսկ Ժիլն անտարբերություն էր խաղում, կարծես իրեն չէր էլ հետաքրքրում այդ մարդուքը։

Ռոմանտիկայով հագեցած Օդիլը վերջապես գնում էր քնելու շամպայնով հագեցած Ֆլորանի մոտ, և այդ երկու էակները անմիջապես ապահովում էին իրենց քունը։

Արդեն տասնհինգ օր է, ինչ Ժիլը վերադարձել էր Փարիզից և ոչ մի անգամ տնից դուրս չէր եկել, միայն առավոտները Օդիլին հարևան գյուղն էր ճանապարհում, գնումներ կատարելու։ Ինչ-որ տեղ կարծես նրա բախտն անշարժացել էր։ Նրան թվում էր, թե ողջ կյանքն այսպես է անցկացնելու. քարշ գալով արևի տակ, երեկոները Նաթալիի հետ սիրաբանելով, իսկ գիշերները՝ երազելով։ Եվ երբ մտածում էր, թե երկու ամսից քաղաքական բաժնում աշխատելու էր որպես խմբագիր, մինչև կոկորդը խրված էր լինելու աշխատանքի մեջ, այնքան քիչ ժամանակ էր ունենալու, որքան անփութորեն վատնում էր հիմա, այդ նույն ժամանակին անցկացնելու էր գորշ ոլորապտույտի նմանվող Փարիզում, կատարյալ անհնթություն էր թվում։ Ի միջի այլոց նա շատ էլ չէր մտահոգվում դրա համար, որովհետև մինչև այժմ նրա կյանքում որոշ ծրագրերի իրագործման անարգել հաղթահարումը սովորական էր դարձել։ Զարթնելուց անմիջապես հետո նա պարզունակ հարցեր էր տալիս իրեն. նախաճաշից առաջ Ֆլորանի հետ գնալո՞ւ էր ձուկ որսալու, այդ օրը Նաթալին քնքո՞ւշ էր վերաբերվելու իր հետ, թե՞ պահանջկոտ էր լինելու, կարո՞ղ էր ինքնուրույն վերանորոգել շոգ սենյակի պատուհանի կախված փեղկը։ Երբեմն լրագիր կարդալու ժամանակ ինքն իրեն հարցնում էր, թե ի՞նչը կարող էր մղել մարդուն մեկ ուրիշին տասնութ կտորի վերածելու և իր մտքերին հաղորդակից էր դարձնում Օդիլին, որը սիրամարգի ճիչեր էր արձակում, իսկ Ֆլորանը, սովորության համաձայն, ցուցամատով կամ խփում էր ճակատին, կամ մնջախաղով փոխկապ էր հանգուցում ու ձգում։ Մի խոսքով, Ժիլը երջանիկ էր, ավելին, ընդունում էր, որ երջանիկ է, և Նաթալիի ներկայությամբ ձայնի տարբեր երանգներով, աղամարդու հպարտությամբ, կրկնում էր շարունակ. «Պատկերացնո՞ւմ ես, դու պատկերացնո՞ւմ ես, երկու ամիս առաջ կորած մարդ էի, իսկ հիմա որքան երջանիկ եմ...»։ Նրա ձայնի մեջ մի տեսակ բավարարված կասկած կար, որ մշտապես զվարճացնում էր Նաթալիին և ավելի ուրախացնում, երբ ավելացնում էր. «և քո շնորհիվ, ու Նաթալին սկսում էր արագ-արագ թարթել արտևանունքները։

Հերթը հասավ Սիլվբներների երեկույթին։ Ամեն տարի, համարյա նույն ամիսներին, Ֆրանսուա Սիլվբները հրալի-

բում էր ամբողջ Լիմոժի ու շրջակայքի հասարակությանը, այն համարվում էր ամառվա սեզոնի ամենապերճ երեկույթը։ Իսկ Օդիլը, գրողի ծոցն ուղարկելով ամեն տեսակի բարոյախոսություն, արդեն տասը օր է չէր կարողանում զսպել ուրախությունը։ Այս երեկույթը նաև այն միակն էր, որին Ժիլը որոշել էր զոհաբերել իր ինքնամփոփվածությունը։ Ուզում էր տեսնել, թե որտեղ է ապրում Նաթալին։ Նախապես հրճվելով, ուզում էր որպես տանտիրուհի տեսնել նրան։

Ֆրանսուա Սիլվքների տունը տասնութերորդ դարի մեծ շինություն էր. այն հավանաբար միշտ պատկանել էր օրենսգետների։ Գտնվում էր Լիմոժի կենտրոնում, դռներն ու պատուհանները բացվում էին ընդարձակ, հոյակապ պարտեզի կողմը, որը շատից ավելի էր լուսավորված հանդիսությունների համար։ «Եվ որքան շատ ծաղիկներ կան,— մտածում էր Ժիլը աստիճաններով բարձրանալիս,— այստեղից դրամի հոտ է փչում»։ Անշուշտ, պատվով ձեռք բերված դրամ, ժառանգությամբ ստացված դրամ, բայց համենայն դեպս դրամ. ծանրագիր, փայլեցված կահույք, հինավուրց գորգեր, թեթև գունազարդված հսկայական հայելիներ, կարմիր դեմքով երկու սեղանապետ՝ իրենց սպիտակ ձեռնոցներով անհանգիստ կանգնած սպասքապահարանի մոտ։ Այս ամենը խոսում էր գավառական ճոխության և հարմարակեցության մասին։ Իսկ Ժիլը, քանի որ փարիզցի էր, լրագրող և մասնակցել էր ավելի ճոխ ու խելակորույս տոնահանդեսների, որոնք կազմակերպված էին այդ մթնոլորտում սնանկացած մարդկանց կողմից, այստեղ, նրանց համեմատությամբ, իրեն մի փոքր ավելի բարձր էր զգում։ Նա այն դրամն էր սիրում, որը քամուն է տրվում։ Այստեղ գերիշխում էր ոչ թե շքեղությունը, այլ ապահով վիճակը։ Աստիճանների ծայրին, վերնադավթում, ինչպես 1900-ական թվականների վեպերում, Նաթալի և Ֆրանսուա Սիլվքներները կողք-կողքի կանգնած ընդունում էին իրենց հյուրերին։ Երբ Ժիլը համբուրեց Նաթալիի ձեռքը, նրա հայացքում դուր գալու այնպիսի մի անհանգստություն, այնպիսի մի արտահայտություն կարդաց, որ որոշակիորեն նշանակում էր. «այս ամենը քեզ համար է», և Ժիլն իր իսկ մեծամտությունից խսկույն ամաչեց։ Հնարավորին չափ ջերմ տոնով գովաբանեց նրա տան գեղեցկությունը, սեղմեց Սիլվքների ձեռքը և ուղղվեց դեպի մեծ սրահը։

Շլացած ամբոխն արդեն շտապում էր այնտեղ, և նա ստիպված էր իր առաջնական վիճակի մասին շռայլված բառեր ու հաճոյախոսություններ լսել, մինչև հասավ որպես գրադարան ծառայող սենյակին։ Նա փորձում էր Նաթալիին պատկերացնել այս բազկաթոռի մեջ ընկղմանած, բուխարիի անկյունում, ամուսնու դիմաց. անկարելի էր։ Նաթալիին պատկերացնում էր միայն գողտրիկ շոգ սենյակի մեջ անկողնու վրա փռված կամ խոտերի մեջ պառկած։ Գրադարանում մի փոքր շունչ քաշեց, գնաց դեպի պատշգամբ, բախվեց մի մարդու։ Դա նա էր, որին, Նաթալիի կյանքի պատմությունները լսելուց հետո, իր մտքում «Փոքրիկ եղբայր» էր անվանում։ Չնայած նրանք ընդամենը մեկ անգամ էին հանդիպել, բայց Պիեռ Լաքուրը անմիջապես մեկնեց ձեռքը։ «Փոքրիկ եղբայրը» հրաշալի հասակ ունի և առնական է,— մտածեց Ժիլը,— միաժամանակ շատ գեղեցիկ»։ Հիշեց, թե ինչպես էր այն օրը խանդել նրան և ժպտաց։

— Ձեզ տեսնելու հույսը կորցրել էինք,— ասաց Լաքուրը,— երևում է այնքան էլ աշխարհիկ չեք։ Ամենուրեք տեսնում եմ ձեր քրոջը, իսկ ձեզ՝ երբեք։

— Իրոք այնքան էլ աշխարհիկ չեմ,— ասաց Ժիլը։

— Մեր գավառական տոնախմբությունները ձեզ ձանձրացնո՞ւմ են։

Նրա ձայնի մեջ հարձակողական տոն կար, իսկ Ժիլն արդեն սկսել էր անհանգստանալ. հանկարծ ընկեր չշահի՞։

— Ամենևին։ Փարիզում հոգնել էի, եկա այստեղ հանգստանալու։

Մի վայրկյան լռություն տիրեց, հետո Պիեռ Լաքուրը կարծես միանգամից որոշում կայացնելով, բռնեց Ժիլի թևից։

— Կուզեի խոսել ձեզ հետ... Դուք գիտեք, որ ես շատ եմ... ը՛ը՛ը՛... շատ մտերիմ եմ քրոջս հետ։

— Այո,— ասաց Ժիլը ժպտալով,— գիտեմ։

Զարմանալի է։ Այս տղան կամ ամեն ինչ գիտեր, կամ ոչինչ ինչից անտեղյակ էր։ Համենայն դեպս նրա դեմքին Ժիլի համար դուրեկան ինչ-որ արտահայտություն կար, մի

տնական ձախորդ պատվախնդրություն՝ շաղախված մեծ խելքի հետ։ Առաջին իսկ բառերը կարծես շփոթեցրին նրան։

— Նաթալին ձեզ սիրում է,— կցկտուր ասաց նա,— իսկ ես շատ եմ ցավում դրա համար։

Այդ բանն ասելու համար նա շրջվել էր, և Ժիլը մի պահ մտածեց, արդյոք ճի՞շտ էր հասկացել նրան։

— Իսկ ինչո՞ւ եք ցավում։

— Որովհետև մեծ հարգանք չեմ տածում ձեր նկատմամբ, ներեցե՛ք, որ այսպես եմ արտահայտվում։

Նրանք խոսում էին կիսաձայն, խավար սենյակում, երկու սխալանների պես, կարծես անխուսափելի և գաղտնի մենամարտ էին ծրագրում։ Ժիլի սիրտն սկսեց ամուր բաբախել։

— Ինչո՞ւ չեք հարգում ինձ։ Ես ձեզ չեմ ճանաչում։

— Նաթալին սիրում է ձեզ, նույնը ասում եք դուք։ Իսկ ի՞նչ գործ ունի նա այստեղ։ Կարծում եք, թե նա փոքրիկ քաղքենուհի է և սիրաբանելը սովորական բա՞ն է նրա համար։ Կարծում եք նրա վիճակը Ֆրանսուայի հետ շա՞տ լավ է։ Այդքան վա՞տ եք ճանաչում նրան։

— Նա որոշեց սպասել մինչև ամառվա վերջը...— սկսեց Ժիլը։

Պիեռ Լաքուրը թափ տվեց ձեռքը։

— ... Նա ոչ մի բան չի որոշել, մտածում է, որ դուք վստահ չեք ձեզ վրա, չի ուզում ձեզ հակառակել։ Այս է բոլորը։ Եվ արդեն մեկ ամիս է այնպիսի վիճակ է ապրում, որ ամբողջ կյանքում խորթ է եղել նրան. փոխզիջումների գնալ։ Ձե՛ր մեղքով։

Ժիլը նյարդայնանում էր։ Ազնվականի գերում Գանդեսը եկող եղբայր է, ինչ է, շատ էր առաջ գնում։

— Հուսով եմ, որ չեք մտածում, թե ես եմ եղել նրա սիրույին վեպերի առաջին հերոսը։

— Ո՛չ։ Բայց նրա առաջին կիրքը՝ վստահաբար։ Եվ շատ եմ ցավում դրա համար։

— Իսկ ինչո՞ւ։

— Որովհետև թույլ մարդ եք, եսասեր, հեղհեղուկ։

— Բոլոր տղամարդիկ էլ այդպես են,— շորությամբ պատասխանեց Ժիլը։



— Բայց բոլոր տղամարդիկ հաճույք չեն ստանում դ
նից։

Արդեն պատրաստ էին մեկը մյուսի վրա հարձակվել
Ժիլը փորձում էր հանդարտվել։ Այդ տղան իրավունք ուներ
միամտանակ սխալվում էր։ Երկար ու հանգիստ շունչ քաշ

— Ի՞նչ կանեիք իմ փոխարեն։

— Ես երբեք հանդես չէի գա ձեր փոխարեն. եթե ուրիշ
լինեի, և Նաթալին իմ քույրը չլիներ, վաղուց նրան փախցրա
կլինեի...

Բարձրացրել էր ձայնը, իսկ Ժիլը ժպտում էր։

— Աստված իմ, որքա՞ն շատ եք սիրում նրան...

— Ե՞ս պետք է այդ բանը ձեզ ասեի, չէ՞։

Տիրեց լռություն։

— Բայց ես սիրում եմ նրան,— կամաց ասաց Ժիլը։

— Ուրեմն հոգացեք նրա մասին։

Առաջվա կատաղած արտահայտությունը չկար այլևս դեմքին, ընդհակառակը, լացակումած, տխուր, համարյա ընկճված արտահայտություն էր երևում, որի նմանը արդեն Ժիլը տեսել էր Նաթալիի դեմքին։ Ինչ-որ բան ճմլեց սիրտը։

— Կարծում եք պե՞տք է տանեմ նրան։ Վա՞ղը։

— Այո՛,— ասաց Լաքուրը,— հնարավորին չափ շուտ։ Նա շատ դժբախտ է։

Մի պահ իրար աչքերի մեջ նայեցին։ Մի քանի քայլ այն կողմ լսվում էր Սիլվընների առնախմբության զվարթ աղմուկը։ Հանկարծ Ժիլը կրծքի տակ զգաց քնարական, ռոմանտիկ ինչ-որ խլրտում։

— Այդպես էլ կանեմ,— ասաց նա,— և կհոգամ նրա մասին։

Նա արդեն պատկերացնում էր իրեն պարահանդեսի գահլիճով անցնելիս Նաթալիի ձեռքից բռնած, անխոս տանելով նրան իր հետևից զարմացած հյուրերի միջով։ Նա սավառնում էր 19-րդ դարի միջով։ Լաքուրի ձայնը ընդհատեց մտքերը։

— Սիլվընները հարգանքի արժանի մարդ է։ Նաթալին պատշաճորեն պետք է հեռանա նրանից։ Եթե հնարավոր է պատշաճորեն հեռանալ որևէ մեկից։

Ժիլի մոտ հիշողություններ արթնացան էլոիզի մասի՞ ոչինչ չպատասխանեց։

— Երբեք չմոռանաք, որ Նաթալին բացառիկ կին է, ցածրաձայն ասաց Լաքուրը,— բացառիկ և սիրատենչ։

Եվ անցնելով Ժիլի առջևից, անհետացավ։ Այս մի քանի բառերը երազի պես էին անցել։ Եթե խորը մտածենք, այդ տղան երևի խելքը թոցրել էր։ Բայց Ժիլն արդեն հասկացել էր ամեն ինչ։ Երեկույթի վերջում, Նաթալիի ձեռքը համբուրելիս, ամուսնու մոտ մենակ թողնելով նրան իր տան մեջ, եղրակացրել էր, որ իրեն պատկանող այդ կինը չէր կարող նույն բոպեին գալ իր ետևից, և ինքն էլ նրա պես հուսահատ վիճակում էր. այստեղ էլ նա որոշում կայացրեց։

# ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

## ՓԱՐԻԶ

### 1

«Բայց վերջ ի վերջո ի՞նչ պատահեց»։

Նրանք Փարիզի իրենց տանն էին, Նաթալին նոր էր եկել, Ժիլը երեք օր շարունակ, առանց որևէ լուր ստանալու, սպասում էր նրան։ Եվ Նաթալին հիմա այստեղ էր, շփոթված, միաժամանակ հանգիստ, նման այն մարդուն, որ շշմել է հարվածից։ Հենց նոր էր ճամպրուկը թողել միջանցքում, վերարկուն գցել էր աթոռին, եկել էր առանց նախազգուշացնելու և թվում էր, թե ուր որ է պիտի մեկնի։ Նույնիսկ բնակարանին ուշադրություն չէր դարձնում. եթե խորը դատենք, մի քիչ տարօրինակ էր, քանի որ, լավ թե վատ, համենայն դեպս ապրելու էր նրա հետ, այստեղ, և այդ որոշումը միասին էին կայացրել Լիմոժի երեկույթի հաջորդ օրը, ոգևորության պահին, խորազգաց երջանկությամբ տարված։ Եվ խելոք ձևով։ Ժիլը չգիտեր, որ երջանկությունը կարող է երանգավորված լինել աննկուն և նուրբ խելամտությամբ ու ստիպել կատարել այն, ինչ կատարվելու է։ Բայց այնուամենայնիվ Նաթալին նախապես Ժիլին էր ուղարկել Փարիզ. «Ըստ պատշաճության»,— ասել էր նա, և անհանգստությունից արդեն կիսախելագար դարձած Ժիլին էր ներկայացել միայն երեք օր անց։ Վերջինս բռնել էր նրա ձեռքերը, նրատեցրել, մի բաժակ խմիչք էր առաջարկել, բայց Նաթալին ոչ մի խոսք չէր արտասանել։

— Դե՛, պատասխանիր, ի՞նչ է պատահել։

— Ոչինչ,— շփոթված պատասխանեց նա։— Խոսեցի

Ֆրանսուայի հետ, տեսա եղբորս, ճանապարհեց մինչև գնացք, ժամանակ չունեցա նախազգուշացնելու քեզ, տաքսի նստեցի, հասցեն ունեի...

— Իսկ եթե այստեղ չլինեի՞...

— Ասել էիր, որ կսպասես ինձ։

Եվ Ժիլը Նաթալիի հայացքում ինչ-որ բան նկատեց, անկասկած դաժան, աննկարագրելի պահերի հիշողություն, և նա հասկացավ, թե որքան չնչին են եղել իր՝ ամուրի մարդու սպասման ջղային րոպեների ապրումները։ Նաթալին վերջնականապես թողնում էր մի ամբողջ կյանք, իսկ ինքը միայն ձանձրույթ էր ապրել։ Կարելի՞ էր արդյոք համեմատության եզր անցկացնել այս երկու զգացողությունների միջև. մի բան է՝ անընդհատ կարդալ ու կարդալ հին թերթերը, այլ բան է, երբ ամուսնուդ ասում ես, թե այլևս չես սիրում նրան. սրանք տարբեր բաներ են։ Ժիլը թեքվեց Նրա կողմն ու համբուրեց այտը։

— Ինչպե՞ս ընդունեց այս ամենը։

Նաթալին զարմացած նայեց նրան։

— Իսկ ինչո՞ւ ես մտահոգվում։ Քեզ ամենևին չի հետաքրքրել, թե ինչ վիճակում է եղել ինքը, երբ ապրում էի նրա հետ, այնպես չէ՞։ Ուրեմն ինչ ձևով էլ հեռացած լինեմ նրանից...

— Ուզում էի իմանալ, արդյոք... շատ վիրավորական չէ՞ր քեզ համար, հատկապես...

— Ա՜հ, ես,— ասաց Նաթալին,— ես նրանից հեռացա մի մարդու պատճառով, որին սիրում եմ։ Նա մնաց մենակ։ Տեսնում ես...

Ժիլի ուղեղով մի անպատկառ միտք անցավ. եթե զգացմունքներից ելնելով դատենք, վերջ ի վերջո, լքված ամուսնու վիճակը ավելի ծանր է, քան ամուսնու դերում հանդես եկողինը։ Նաթալին դողում էր աննկատ, Ժիլն զգում էր, թե ինչպես են ձեռքերը պաղում իր ձեռքերի մեջ, ներքուստ ցանկանում էր, որ Նաթալին լաց լինի, ամեն ինչ պատմի, թուլանա կամ նեռվի իր գիրկը և զգայական ցնցումների մեջ տրվի իրեն, որը հաճախ ծնվում է մեկ ուրիշի հանդեպ գործված դաժանությունից հետո։ Անտանելի էր նայել այդ քնդարմացած, բարեպաշտ և անձայն կնոջը։



— Դու վախենում ես, վատ ես զգում, Արի՛, ուստմնասիրիր բնակարանս։

Ժիլը իր էությանը անհամապատասխան ու անբնական ձևով նրա համար «կարգի էր բերել» բնակարանը։ Դոնապանուհին մաքրել էր տունը։ Ժիլը անձեռոցիկներ, թեյ, մեծ քանակությամբ ծաղիկներ, պաքսիմատ և մի նոր ձայնապնակ էր գնել։ Դոնապանուհու ամուսինը վառված էլեկտրական լամպերը փոխարինել էր նորերով և միացրել սառնարանը։ Ճիշտն ասած, մի վայրկյան անգամ մտքով չէր անցկացրել Նաթալիի դժբախտ վիճակը։ Ավելի ճիշտ, պատկերացրել էր բեմական ձևավորումով, պատկերների անակնկալ փոփոխություններով, նույնիսկ՝ հոգիչ տեսարաններով։ Այս հանդիսատ հուսահատության մասին չէր էլ մտածել։

Նաթալին վեր կացավ, մեքենայաբար հետևից նրան։ Իրականում բացի խոհանոցից, ննջասենյակից և փայտապատ փոքրիկ լողասենյակից (որ էլոիզի գեղագիտական նորաբարությունն էր) ուրիշ ոչինչ չկար տեսնելու։ Այս ամենի վրա մի բարեհամբույր ու ցրված հայացք գցեց։ Նրան տեսնելով ոչ ոք չէր ենթադրի, թե նա քնելու էր այս անկողնում, հյուրասենյակը կախելու էր այս պահարանում, ոչ ոք, և ի վերջո նույնիսկ՝ Ժիլը։ Վերջինս խուճապի մատնվեց։ Իսկ եթե Նաթալին չէր կարողացե՞լ... Եթե եկել էր միայն ասելու (որովհետև սովորություն չուներ գրելու կամ զանգահարելու), եկել էր գնացքով միայն բացատրություն տալու, որ չէր կարող հետևել իրեն։ Հանկարծ գնած ծաղիկները, նրա համար բացված մեծ անկողինը, սեպտեմբեր ամիսը, գալիք ձմեռը, կյանքը, ամեն ինչ զզվելի դարձան Ժիլի համար, անտանելի։ Բռնեց թևից, երեսը շրջեց իր կողմը.

— Այստեղ քեզ դուր գալի՞ս է։

— Իհարկե,— պատասխանեց Նաթալին,— հրաշալի է։

Եվ «հրաշալի» բառը առավել ևս համոզեց Ժիլին։ Այդ լռությունը, դեպի իրեն նետվելու անտարբերությունը, այդ սառած ձեռքերը, խուսափող հայացքը... Նաթալին այլևս չէր սիրում իրեն։ Սպասումով լի անհանգիստ, խելակորույս վիճակում անցկացրած այդ երեք օրերը՝ գետին շպրտելով լրագրերն ու վերցնելով հեռախոսափողը՝ իսկույն տեղը դնելու համար, այս ամենը, ուրեմն, նախանշաններ են եղել

Այս անգամ էլ մեկընդմիշտ մնալու էր մենակ, Նաթալին լքելու էր իրեն։ Շրջեց երեսը նրանից, գնաց պատուհանի մոտ։ Մութն ընկել էր, ամառը դեռ գոյատևում էր փողոցներում։ Նա մենակ էր։

— Ժի՛լ։

Շրջվեց։ Նաթալին մեկնվել էր անկողնու վրա, հանել կոշիկները։ Ո՛չ, անմիջապես չէր գնալու, մի երեկո, մի գիշեր էլ էր անցկացնելու «իր սիրո», «իր թանկագին սիրոջ» հետ, ինչպես նա էր ասում և առավոտյան մեկնելուց առաջ էլ նույնը կկրկներ։ Ինչ խոսք, նա օրինական կին էր, բայց հանգամանքներ կան, որ պետք է հաշվի առնել։ Ժիլն զգաց իր մեջ մոլեգնող ողջ բարկությունը, հեռացավ լուսամուտից, նստեց անկողնու ծայրին։ Գեղեցիկ էր Նաթալին այս դիրքով, հոգնած ու ցրված, նույնիսկ, կարծես, արհամարհական հայացքով։ Իսկ Ժիլը սիրում էր նրան։

— Ինձ կանչեցի՞ր։

Նաթալին զարմացած նայեց նրան, մեկնեց ձեռքը։ Ժիլն իսկույն որսաց այն ու սեղմեց։

— Կնվիրե՞ս ինձ մի վերջին գիշեր.

Նաթալին թեթևորեն վեր կացավ։ Ժիլը շարունակեց.

— Իսկ վաղը կբացատրես, որ շատ ծանր է Ֆրանսուայի համար, որ քո սովորությունները... և այլն, և այլն։ Եվ կգնաս։ Այդպե՞ս է, չէ՞։

Իր մոլուցքի մեջ, կարծեցյալ ճշմարտության հարվածի տակ, հույս ուներ այլափոխված տեսնել նրան իր ներքին զգացողության առաջ անակնկալի գալով։ Բայց Նաթալին հայացքը սևեռեց նրա վրա ու անշարժացավ, հանկարծ աչքերը արցունքով լցվեցին, դեմքը մնաց խաղաղ, և Ժիլն հասկացավ, որ սխալվել էր։ Այլևս չէր կարող խոսել։ Նաթալին առաջինը շշնջաց.

— Աստվա՞ծ իմ, Ժիլ, որքա՜ն եսասերն ես...

— Այնքան վախեցա,— ասաց նա,— երեք օր։ Իսկ հիմա... Դու ինձ երբեք չե՞ս լքի։

Տիրեց կարճատև լռություն։ Հետո լսվեց Նաթալիի սովորական ձայնը, որ ի վերջո վերագտել էր. կիսով չափ մեղմ, կիսով չափ կատաղած։



— Ո՛չ։ Մինչև դու ցանկանաս։

— Ես չեմ դիմանա,— ասաց Ժիլը,— հենց նոր հայտնաբերեցի։

Ժիլը չէր շարժվում։ Կրկին շնչում էր նրա բույրը։ Նրա համար այնքան տարօրինակ էր, համարյա սրբապղծություն, գտնվել նրա հետ այս քաղաքային սենյակում, որտեղով բազմաթիվ կանայք էին անցել, որտեղ էլոիզն էր ապրել, իսկ այժմ շնչում էր այդ բույրը։ Նաթալիի ուսի վրայով և այդ բույրի միջով նայելիս՝ սենյակն այլևս առաջվա տեսքով չէր երևում։ Ինքն օտար մարդ էր այս սենյակի մեջ, օտար էր նաև այս սարսափահար կինը։ Նրանք կարող էին նույնքան լավ զգալ որևէ հյուրանոցում, որքան Պիգֆի երգերի դժբախտ սիրահարները։ Սակայն արդեն միասին էին և՝ իրենց հարկի տակ։ Իսկ որտեղի՞ց էր այս անհանգիստ վիճակը։ Ինչ-որ բան սեղմում էր կոկորդը, դա այլևս խուճապ չէր, ինչպես նախորդ օրերին, ոչ զայրույթ. ոչ էլ վիշտ, դա ավելի խոր, անծանոթ մի բան էր, կարծես անծայրածիր մի զգացում։

Ժիլը փարվեց նրան, քնքուշ բառեր շշնջաց, հեծեծաց։ Նաթալին, ձեռքը նրա ծոծրակին, շնչում էր հանդարտ, և Ժիլը մտածեց, որ քնած է։ Վեր կացավ, վերցրեց սառնարանից շամպայնի շիշը, լցրեց բաժակի մեջ և վերադարձավ անկողնու մոտ։ Նաթալիի դեմքի հոգնած ու մեղմ արտահայտությունը վստահություն էր ներշնչում։ Հանկարծ Ժիլը բաժակը բարձրացրեց, երդվեց երբեք վատություն չանել նրան և կուլ տվեց պաղ շամպայնի մի մեծ ումպ։ Անմիջապես հիշեց այն կիս բաժակ գաղջ գարեջուրը, որ նույն ձևով ժանի հետ խմել էր սրճարանում և ընդունել, որ սիրում է այդ կնոջը։ Մեկ ամիս էր անցել, ավելի ճիշտ՝ տասը տարի։ Հիմա Նաթալին իր տանն էր և իրեն էր պատկանում, ինքը շահել էր։ Չկարողացավ զսպել ժպիտը։ Իր իսկ անձնական կուրության, իր իսկ համառության, իր իսկ պատասխանատվությունների կատարման, իր խենթությունների, իր հաղթանակների հանդեպ։

## 2

— Էլոիզի մասին նորություններ չե՞մ հայտնել քեզ,— ծիծաղելով ասաց Ժանը,— Կարծում եմ ձեզ պատմած կլինի այդ խեղճ Էլոիզի մասին։

Նաթալին ժպտաց, շարժեց գլուխը։ Կարամատույցի փոքրիկ ռեստորաններից մեկում նստած էին երեքով, և Ժանն ու Նաթալին կարծես իրար հետ ընդհանուր լեզու էին գտել։ Ժիլը շատ դո՞հ էր։

— Վստահ էի, որ պատմած կլինի։ Ժիլը բացարձակապես լռել չգիտե։ Միակ դեպքը, որ փորձեց՝ ձեզ հետ կապված պատմությունն էր։ Հենց այստեղ էլ հասկացա, որ սիրում է ձեզ։ Եվ խոստովանել տվի նրան։ Բայց կարծում եմ չի պատմել սրա մասին։

— Բավակա՛ն է,— մեղմորեն ասաց Ժիլը։

Եվ նա ժպտում էր։ Անկասկած, պատանեկան տարիների հաճույքն էր վերապրում և այն քաղցր հաճույքներից մեկը, երբ մտերիմ ընկերդ ու սիրուհիդ սկսում են մեղմորեն ծաղրել քեզ։ Այդ ժամանակ քեզ պահում ես մի քիչ հեռու նրանցից՝ հետաքրքրական, նուրբ, անձեռնմխելի մի առարկայի նման և բանը հասնում է այնտեղ, որ դո՛ւ ես դառնում նկարագրվող այդ առարկան, հետո զգում ես, թե որքան կարևոր ու սիրված ես։

— Ինչ արած, հուսախաբ եմ անելու քեզ. Էլոիզը զարմանալի կարիերա է ստեղծել. «Վոգ» ամսագրի համար առաջին լուսանկարչի սիրուհին է և ամեն ինչ լավ է ընթանում։ Լավ նայեք նրան, Նաթալի, որքան հուսախաբ է։ Դա կուզենար, որ կանայք մինչև իրենց կյանքի վերջը լաց լինեին իր համար։

— Թքա՛ծ նրանց վրա,— ասաց Ժիլը։

— Քո փոխարեն ես էլ այդպես կվարվեի,— ասաց Ժանն ու բռնելով Նաթալիի ձեռքը համբուրեց։ Նաթալին ժպտաց։

Ութ օր է, ինչ նրանք քարշ էին գալիս օգոստոսյան արձակուրդներից դատարկված Փարիզում, ութ օր է, ինչ ամեն գիշեր միասին քնում էին Մրսյո լը Փրենս փողոցում գտնվող տան մեծ անկողնու մեջ, Նաթալին շատ երջանիկ էր։ Նրանք ոչ մեկի հետ չէին հանդիպել, բացի Ժանից, որ նախորդ օրն



էր վերադարձել։ Երկու ժամ հետո, երբ գնացել էր նրանց տուն, Նաթալին պատահաբար այցելած հյուրի պես էր պահել իրեն, և Ժիլն էր մատուցել բաժակները, սառույցի կտորները բերել և նման կարգի այլ բաներ։ Ավելի ուշ, նա իրեն հարց էր տալու, թե ինչու էր այդպես։

— Մի քիչ հետո գնալու եմ Ակումբ,— ասաց Ժանը,— Նաթալին չի՞ եղել այնտեղ։ Ո՞չ։ Պետք է անպայման դաք և տեսնեք, թե ինչ է սպասվում ձեզ երեկոները այս դատարկապորտի հետ։

Նաթալին վեր կացավ, գնաց մազերը հարդարելու Ժանը նայեց նրա հետևից և մի տեսակ թախիծ իջավ խոշոր դեմքին։

— Զարմանալիորեն գեղեցիկ է։

— Կարծո՞ւմ ես,— ասաց Ժիլը և այնպիսի նուրբ ու քնքուշ ձայնով, որ միասին սկսեցին ծիծաղել։

— Քեզնից լավն է,— շարունակեց Ժանը երազկոտ,— շատ ավելի լավը, խոսքս արտաքինի մասին չէ,— ավելացրեց նա։

— Շնորհակալ եմ։

— Աշխատի՛ր...— վերսկսեց Ժանը, հետո կանգ առավ, թափ տվեց գլուխը։

— Գիտե՛մ,— զվարթ ձայնով ասաց Ժիլը,— աշխատի՛ր չվշտացնել նրան, պահպանել այնպես, ինչպես կա, եսասեր չլինել, պահել քեզ խելոք մարդու նման և այսպես շարունակ։

— Այո՛,— ասաց Ժանը,— աշխատի՛ր։

Նրանք նայեցին իրար աչքերի մեջ, հետո միաժամանակ շրջեցին հայացքները։ Ժիլը երբեմն ատում էր իր արտացոլումը Ժանի աչքերի մեջ։ Հենց որ Նաթալին եկավ, վեր կացան ու գնացին։

Ակումբում ուրախ մթնոլորտ էր և արդեն լեփ-լեցուն։ Կարծես փարիզցիների համար օգոստոս ամիսը վերջացել էր։ Նրանց դիմավորեց արևից լավ սևացած Պիեռը և Ժիլին գրկեց՝ «որդիս» անվանելով նրան, ամբողջովին մոռացած վերջին միջադեպը՝ բռունցքի հարվածը։ Գնահատողի պես խարդավանական մի հայացք գցեց Նաթալիի վրա։ Ժիլը տարակուսեց։ Մի՞ ուրիշ անգամ ով էլ լիներ իր հետ կանգնած կինը, կասեր. «Նաթալի՛, ահա Պիեռը» և դրանով ամեն ինչ

կվերջանար. Ժիլ Լանթիեի նոր տիրուհու անունը Նաթալի էր։ Բայց հիմա չէր կարող Հանդիսավոր տոնով ասաց. «Թույլ տուր ներկայացնել Պիեռ Լբրուին։ Տիկին Սիլվընները» եվ կարմրեց։ Սարսռված տասնհինգ անգամ կրկնեց այդ երեկո նույն հանդիսավորությունը։ Տղամարդիկ խփում էին նրա ուսին, աղջիկները համբուրում էին նրան փոխադարձ զգացմունքի ընդհանուր օրենքի համաձայն, որ ընդունված էր այդ ժամանակներում, և ամեն անգամ ազատում էր ուսը ծանր կամ փափուկ ձեռքերից (նայած որ սեռին էր պատկանում, և երբորեն) ու շրջվելով Նաթալիի կողմը, սրան կամ նրան էր ներկայացնում տիկին Սիլվընեերին։ Ակնհայտ էր, որ նրա քաղաքավարությունը զարմանք էր պատճառում, բայց Ժիլը համառում էր ժանի զվարթ և Նաթալիի կատարելապես անհասկանալի հայացքի ներքո։ Հավանաբար նրա հին բարեկամ ու բարի ընկերը՝ Նիկոլան արդեն կոնձել էր, նա էլ իր հերթին ներկայացավ, որից հետո դիմեց Նաթալիին.

— Այդ դո՞ւք էիք նրան մեզնից խլել։ Անհանգստանում էինք, գիտե՞ք։ Իմացե՛ք, նրա տեղը լինեի, երբեք չէի վերադառնա։

Վայելուչ տղամարդու պես պահելով իրեն, բարեհամբույր ծիծաղեց և հանգիստ նստեց նրանց սեղանին։

— Հուսով եմ մի բաժակ կհյուրասիրեք, նշելու համար այս պահը։

— Ոչինչ էլ չենք նշում,— գայրացած վրա տվեց Ժիլը,— մինչև քո գալը մեր հանգստությունն էինք նշում։

— Աստվա՞ծ իմ,— ասաց Նիկոլան մի փոքր վիրավորված, բայց և այնպես ամեն կերպ խմել էր ուզում,— աստվա՞ծ իմ, ինչ խանդոտն է... Վստահ եմ, որ տիկինը շոյված կզգա, եթե խմենք առաջին անգամ Ակումբ գալու կենացը... որովհետև ոչ մի անգամ ձեզ չեմ տեսել այստեղ, այնպես չէ՞։ Թե չէ կհիշեի. հավատացնում եմ ձեզ.»

Ներբորեն ժպտալով Նաթալիի երեսին, նա տիրացել էր շշին և մեծ բաժակի մեջ վիսկի էր լցնում։ Ժիլը կատաղած էր, առավել ևս՝ տեսնելով սեղանի մյուս ծայրին նստած ժանի դեմքը, որ հազիվ էր զսպում ծիծաղը։ Նաթալին նրա կողքին նստած՝ չէր խոսում։



— Լսի՞ր, Նիկոլա,— ասաց նա,— մենք լուրջ գործերի մասին ենք խոսում։

— Եթե լուրջ գործերի մասին խոսեք, տիկինը կձանձրանա։ Կուզենայի՞ք ինձ հետ պարել, տիկին։

Հանկարծ Նաթալին պայթեց ծիծաղից, ժանը նույնպես։ Այլևս չէին կարողանում զսպել իրենց։ Մի ուրիշ բաժակ լցնելով, բնական զվարթությունից մղված, Նիկոլան նույնպես հետևեց նրանց։ Ժիլը մնաց մենակ իր հարգալից վիճակի հետ, նվաստացած ու զայրացած։

— Հա՜, հա՜, հա՜,— քրքջում էր ժանը,— մի տեսնես, թե ինչ դեմք ես ընդունել։

Նաթալիի աչքերը ծիծաղից արցունքակալվել էին, և Ժիլն ակամա մի ժպիտ ուրվագծեց շրթներին։ Նա ամբողջ հոգով ցանկանում էր հեռանալ այդ երկու հիմարների մոտից և գնալ հին ընկերների հետ հարբել ուրիշ սեղանի մոտ։ Եվ ի վերջո, երկար ժամանակ չէր տեսել Փարիզը։ Իսկ սիրուհուն ամեն տեսակի վիրավորանքից փրկելու համար իր թափած այն մեծ ջանքը, եթե սրան էր հանգելու, ավելի լավ էր հրաժարվեր։ Դժվար չէր։

— Ինչո՞ւ չես գնում պարելու,— ասաց Նաթալիին։

— Այս պարը չգիտեմ,— պատասխանեց նա,— դու դա շատ լավ գիտես։ Մի՛ նեղացեք, պարոն,— ասաց Նիկոլային,— գավառից եմ եկել։

— Աստվա՞ծ իմ,— ասաց Նիկոլան,— ո՞ր գավառից։

— Լիմուզենից։

— Լիմուզե՞ն։ Պաշտում եմ Լիմուզենը։ Նույնիսկ ազգականներ ունեմ այնտեղ։ Ուրեմն... պետք է ջրել։ Ժի՛լ, խմենք Լիմուզենի կենացը։

Այս ամենից հետո էլ, Ժիլի զայրացած հայացքի տակ Նաթալիի և Նիկոլայի միջև երկարատև խոսակցություն ծավալվեց գյուղի հմայքների, հունձի, բերքահավաքի շուրջը, որ կարծես վերջինս հատկապես, ավելի էր դուր գալիս Նիկոլային։ Գիշերվա ժամը երկուսն էր, ժանի գլուխը նույնպես մի փոքր տաքացած էր, նրանց ուղեկցեց մինչև իրենց շքամուտքը։ Նաթալին թեթևակի օրորվում էր։ Իսկ Ժիլը շան պես անտրամադիր էր։ Լողասենյակում նա մի քանի կծու

նախադասություն պատրաստեց, բայց երբ մտավ ննջասենյակ, Նաթալին խոր քուն էր մտել։ Պառկեց կողքին և երկար ժամանակ քունը չտարավ։

## 3

Հաջորդ առավոտ Նաթալին արթնացավ ամոթի և զարմանքի արտահայտությունը դեմքին, նման այն մարդկանց, որ մի քանի բաժակ ավելի խմելով ու գիտակցելով իրենց մեղքը, քնում են հանգիստ և առավոտյան թարմ ու առույգ են զգում իրենց։ Նա անսովոր հայացքով նայեց Ժիլին, որը չկարողացավ պահել ժպիտը։

— Դե ի՞նչ,— ասաց նա,— Նիկոլայի մասին շատ երազեցի՞ր։

— Պաշտում եմ Նիկոլային,— պատասխանեց Նաթալին,— կարծես խոշոր շուն լինի։

— Հարբեցող խոշոր շուն, այո՛ — ասաց Ժիլը,— ի միջի այլոց, չգիտեի, որ խմել գիտես։

Նաթալին նայեց նրան, վարանեց.

— Այսինքն...— ասաց նա,— ... այսինքն, շատ էի վախենում։ Ոչ մեկին չէի ճանաչում, դու ծանոթ էիր բոլորին, եվ այնքան ծիծաղելի տեսք ունեիր այդ բոլոր աղջիկների մոտ...

Ժիլն ապշած նայեց նրան։

— Այո, ես իմ կարճ սև հագուստով, ադամանդե վզնոցով, իսկ նրանք բոլորն էլ Արտեմիս որսորդուհու պես հագնված։ Դու էլ ինձ ներկայացնելու ժամանակ այնպիսի կաշկանդված տեսք ունեիր...

— Սա արդեն չափն անցնում է,— ասաց Ժիլը,— ամեն տեսակի չափն անցնում է... Դու իսկապե՞ս հավատացած ես, որ կարող էի ամաչել քեզ համար։

Նեռվելով անկողնու վրա, Նաթալիին պահեց ձեռքերի մեջ։ Նաթալին վախենում էր... Նա, որ ոչ մի բանից վախ չուներ, ամբողջ Լիմուզենն էր արհամարհել, լքել էր ամուսնուն, նույն Նաթալին վախեցել էր անվնաս հարբեցողների ինչ-որ ակումբից։ Ժիլին այս ամենը ծիծաղելի թվաց, միանգամայն ժամանակ հուզեց։



— Ոչ թե ամաչում էիր, իրոք այդպես չէր,— երազկոտ ասաց Նաթալին,— ոչ թե ամաչում էիր, այլ հնարավոր է՝ ձանձրանայիր։ Դրա համար էլ շատ ուրախացա, երբ Նիկոլան նստեց մեր կողքին։

— Բայց ժանն այնտեղ էր։ Ժանը գտնում է, որ դու հրաշալի կին ես։

— Ամեն դեպքում ժանը նախ և առաջ քո ընկերն է։ Ինչպես ուզում ես՝ վարվիր նրա հետ էլ, ինձ հետ էլ, նա քեզ կների։ Նույնիսկ ինչ-որ տեղ կասկածում եմ, արդյոք նրան դուր չի՞ գալիս, երբ վատ ես պահում քեզ։

— Դու խենթ ես,— ասաց նա։

Բայց և այնպես հիշեց ժանի մի քանի ուրախ արտահայտությունները, երբ ինքը գանվում էր, այսպես ասած, նոպայի շրջանում և ամեն բռնկում, հաճախ ամեն հիմարություն ժանին դուր էր գալիս։ Ճիշտ է, վերջինս հանգստացնում էր Ժիլին, համոզում էր խոհեմ լինել, բայց մի տեսակ հաճելի ներողամտությամբ, համարյա հիացմունքով և հաճախ ավելի եռանդով հրահրում էր իրեն։ Համենայն դեպս, հնարավոր չէ որևէ ընկերոջ մինչև վերջ հասկանալ, ոչ էլ որոշել նրա այն հոգեկան ազդեցությունը, որը հաճախ չի գիտակցում նաև նա, ով ներգործում է։ Բայց և այնպես, ժանի՝ այդ բարի ժանի կերպարը, ներկայացնել որպես սատանա հրեշտակի կերպարանքով, զավեշտական էր։ Ժիլն սկսեց ծիծաղել։

— Ամեն ինչ հարցականի տակ ես դնում։ Որոշել ես ամբողջ կյանքս այսպես խարազանե՞լ։

— Ձեմ կարծում, որ դու էլ իմ կյանքն ես խնայել,— հանգիստ պատասխանեց Նաթալին։

Կիսաբաց աչքերով, ժպիտը դեմքին նայում էր Ժիլին։ Գուցե նախորդ օրը իսկապես վախեցե՞լ էր այդ մարդկանցից, բայց այս առավոտ բացահայտորեն չէր վախենում նրանից, բոլորովին։

— Դու շատ ծանր բնավորության տեր կին ես և դաժան։ Դու ոչ մի բանից չես վախենում։ Դեռ ավելին, հարբեցողի մեկն ես։ Դեռ ավելին, դու անամոթ ես,— եզրակացրեց Ժիլը ընկնելով նրա վրա,— հարկավոր է քեզ Ջիլդայի հետ ծանոթացնել։

— Ո՞վ է Ջիլդան։

Ժիլը պառկել էր նրա վրա, ցանկանալով տիրանալ նրան և ամենևին չէր ուզում խոսել Ջիլդայի մասին։ Բայց և այնպես տարտամորեն պատասխանեց.

— Անամոթ մի կին։

— Օ՜,— ասաց Նաթալին,— բոլոր կանայք էլ անամոթ կարող են լինել։ Գիտես, ես էլ կարող եմ... անամոթ լինել դեռ ոչինչ չի նշանակում... Հաճույքը, երբ մեկին սիրում ես...

— Լռի՛ր,— ասաց Ժիլը,— շառաչոսի մեկը։

Նրանք շատ ուշ գնացին Լիպպի մոտ ճաշելու, և Ժիլը շարունակեց ծանոթությունները, սակայն շատ ավելի աղատ։ Նրանք օրից հետո աշխատելու էր, սիրունին գեղեցիկ էր և սիրում էր իրեն, երջանիկ էր։ Մտածում էր շարունակ, թե երեք ամիս առաջ ինչպես էր կարողացել հանդես գալ դոզահար ու հուսահատ ուրվականի կերպարանքով։ Առանց հաշիվ տալու իրեն երևի հասել էր վերջակետին։ Այսօր աշխարհն իրենն էր։ Սիրոը շամպայն էր ուզում, հիմարություն էր պահածոյացված աղի կաղամբի հետ շամպայն խմել, բայց խմեցին շամպայն։

Հետո տան մոտ գտնվող կինոդահլիճում հիմար մի կինոնկար դիտեցին, Ժիլն իր ժամանակն անցկացրեց ջղայնացած Նաթալիի ականջին անհեթեթություններ փսփսալով, որովհետև վերջինս յուրաքանչյուր տեսարան ընկալում էր ուշադրությամբ և մանկական լրջությամբ։ Արդեն երեք օր է Ժիլի գլուխը տանում էր ինտելեկտուալ որևէ ներկայացում դիտելու համար, ինչպես ասում էին, հրաշալի ներկայացում էր, բայց այդ մասին միայն մտածելիս Ժիլի արյունը սառչում էր երակների մեջ։ Քանի տարի է թատրոն չէր գնացել, նախապես զրաղված երեկոները զայրացնում էին նրան։ Նաթալիին ձեռ էր առնում, ինչպես ինքն էր ասում, նրա գավառայնության համար։

— Ժամանակ շատ կա,— ասում էր նա,— մեկ շաբաթով չես եկել Փարիզ։ Քեզ ոչ մեկը չի ստիպում մեկ շաբաթվա մեջ ամեն ինչ միանգամից տեսնել, որպեսզի հետո Լիմոժում կարմիր խալի ընկերության անդամներին պատմես տեսածներիդ մասին։



— Բայց ինձ դուր է գալիս,— ասում էր Նաթալին,— դու չես հասկանում։ Դրանից հետո էլ միայն քե՛զ հետ կուզեի մաքերս կիսել։

— Զվարճալի է,— հեծեծում էր Ժիլը,— մտավորական կնոջ եմ հանդիպել, ինչ արած։

— Սրբեք չեմ թաքցրել քեզնից,— պատասխանում էր Նաթալին առանց ծիծաղելու։

Եվ Ժիլը պատկերացնելով Նաթալիի՝ իր սիրունու տենչալի մարմինը վերափոխված մտավորականի, ծիծաղից թուլանում էր։ Այնինչ, երբեմն, երբ մանրամասնորեն վերլուծում և տեսնում էր, թե որքան խոր, որքան ընդլայնված է նրա զարգացության մակարդակը համեմատած իր հետ, զարմանում էր մի փոքր։ Ինչ խոսք, նա կարդալու շատ ժամանակ է ունեցել, երեսուն տարի շարունակ գավառում, բայց և այնպես նա իրոք սիրել է այդ զբաղմունքը։ Եվ երբ Ժիլը հոգնում էր, հայտնում էր որևէ միտք, որին ինքն էլ չէր հավատում, կամ մոդայիկ դարձած հասարակ արտահայտություն էր օգտագործում, Նաթալին պատասխանում էր նրան զարմանալի կատաղությամբ, կարծես միանգամից անարժան դարձնելով նրան իր իսկ աչքին։

— Սիրելի՛ս,— ասում էր Ժիլը, չնայած հակառակ կարծիքին,— ես այնքան էլ խելացի մարդ չեմ։ Պետք է համակերպվես։

— Կարող էիր այդպիսին չլինել,— սառնորեն հակաճառում էր Նաթալին,— եթե խելքդ օգտագործած լիներիր անձնական հաճույքներիդ համար։ Դու ոչ մի հետաքրքրություն ունես։ Զարմանում եմ, թե ինչպես են մինչև հիմա քեզ պահել խմբագրությունում։

— Որովհետև լավ աշխատող եմ, հնազանդ և լավ եմ մեքենագրում։

Նաթալին թափ էր տալիս ուսերը, ծիծաղում էր, բայց ծիծաղի մեջ մի փոքր ոխ էր թաքնվում։ Երբ բանը հասնում էր այստեղ, Ժիլը ցնծություն էր ապրում։ Նրա համար միշտ հաճելի էր «ալպանվելը»։ Այս ամենը, ինչ խոսք, վերջանում էր սիրո խոսքերով, գրկախառնություններով, և Ժիլը Նաթալիին ենթարկելով փրեն, հեշտանքի մեջ սղոցված ձայնով հարցնում էր, թե դո՞ւր է գալիս նրան այն, ինչ անում է հիմար

սիրեկանը։ Նրանք ապրում էին սիրո այն հրաշալի ժամանակաշրջանը, երբ սիրում են վիճաբանել և նույնիսկ չեն էլ կարող պատկերացնել, որ այդ գորովագութ կռիվների թեման կարող է տխուր վիճեի նախատիպն ու աղդարարը դառնալ։

## 4

Աշխատանքային երկու ամիսներից հետո առաջին անգամ լինելով, տուն վերադառնալուց առաջ Ժիլը ցանկություն ունեցավ որևէ բարում, առանձին, մի բաժակ խմել։ Շատ հաճելի է պատկերացնել, որ երիտասարդ ես ու ազատ, երբ ինչ-որ մեկը, որին սիրում ես և վստահ ես դրանում, ինչ-որ տեղ սպասում է քեզ։ Փարիզի սրճարանները վիհեր են միայնակ մարդկանց համար, իսկ երջանիկ սիրահարների համար՝ ոստանակներ։ Նա նույնիսկ ժամանակ գտավ հաճոյախոսություններ շռայլելու բարն սպասարկող կնոջը, աչքի անցկացնելու երեկոյան լրագիրը։ Չէր էլ մտածում, թե ինչու անմիջապես տուն չի վերադառնում։ Նա երախտապարտ էր Նաթալիին այն բանի համար, որ նրան հանդիպելուց առաջ այնքան մեծ նշանակություն ստացած այդ հիմար ժամանակահատվածը դարձրել էր ազատ, երջանիկ և նախապես իմաստավորված մի պատկեր։ Մարդ կարող է ազատ լինել միայն մեկ ուրիշի հետ հարաբերության մեջ գտնվելով։ Իսկ եթե դա երջանկությամբ է ուղեկցվում, ինչպես ինքը հիմա, համարվում է աշխարհի ամենամեծ ազատությունը։

Այդ օրը շատ էր աշխատել և երեկոյան ճաշելու էր Ֆերմոնի, Ժանի ու Նաթալիի հետ։ Հայտնի չէր, Ֆերմոնը կնոջ հետ կգար, թե ոչ։ Հավանաբար ոչ, որովհետև Ժիլն ու Ժանը գալու էին իրենց հարգարժան սիրուհիների հետ։ Պետք է շտապ վերադառնար տուն և փոխեր հագուստները։ Բարում անհոգությամբ ու ծուլությամբ էր համակվել, մի բան, որ դժվար էր թոթափել։ Երբ տուն գնա, Նաթալին անկասկած արդեն այնտեղ կլինի, մի քիչ հոգնած՝ Փարիզի թանգարաններում, թաղամասերում կատարած անվերջանալի հայտնագործություններից և միշտ նոր եռանդով, որին ամեն անգամ Ժիլը մի փոքր անվստահորեն էր վերաբերվում։ Նաթալին այժմ այնպիսի փողոցներ, սրճարաններ, պատկերասրահներ գիտեր, որոնց մասին -ինքը գաղափար անգամ չուներ և մի փոքր անհամբեր ու անհանգստացած հարց էր տալիս իրեն, թե երբ էր հաշիվները մաքրելու այս քաղաքի հետ։ Իսկ հետո ի՞նչ էր անելու։ Նրանք ամեն երեկո ճաշում էին դրսում, երբեմն գնում էին ակումբ, որտեղ Նաթալին ամեն անգամ գտնվելով հետաքրքիր մարդկանց շրջանակում, որ ներկայացնում էր Ժիլը, ձերբազատվում էր բոլոր տեսակի զգացմունքներից և մի տեսակ ռուսական խանդաղատանք էր տածում Նիկոլայի հանդեպ՝ ժամանակը ամբողջությամբ նվիրելով նրան։ Ի միջի այլոց, Ժիլը զարմանքով էր նկատում, որ այդ ճարպակալած հիմար Նիկոլան շատ կարդացած էր, բավականին նրբազգաց, եթե կերած-խմած չէր, և բացեիբաց սիրահարված էր Նաթալիին։ Ի վերջո բավական զվարճալի էր. փոխանակ մոդալիկ մի դերասանի վարքագծի մասին շաղակրատեին, խոսում էին Զոլայի հերոսներից, և եթե Ժիլը չէր էլ ցանկանում նրանց լսել, այնուամենայնիվ քիչ բան չէր սովորում։ Նաթալին հետո բորբոքված հայտարարում էր, թե իսկապես մեծ ամոթ էր, որ Նիկոլան չի կարողացել գտնել խելացի մի պրոդյուսեր երեք հարյուր միլիոն ֆրանկ վստահելու համար, և պետք է փառք տալ, որ այդ տղան ավելի շատ չի դառնացել կյանքից, իսկ Ժիլը թողնում էր նրան խոսել, ավելի շուտ՝ լսում էր հիացած և չէր ուզում բացատրել Նաթալիին, թե Նիկոլան շան լակոտի նման ծուլ է, ինչպես հայտնի էր բոլորին, վեց անհաջող սրսկումներից հետո էլ մինչև կյանքի վերջը ալկոհոլիկ էր մնալու և մոտ տասը տարի առաջ, բառիս բուն իմաստով, կորցրել էր առնականությունը։ Ժանը երբեմն միանում էր նրանց իր կովի նման Մարթայի հետ, որն ակներևորեն սարսափում էր Նաթալիից ու նրա ելույթներից, ինչպես կսարսափեն անվայել արարքից, նրա կարծիքով կանայք պետք է լռեին և լռեին։ Երբեմն Ժանի հայացքում էլ նույն ահիթով զայրույթ էր երևում։ Ժիլը գիտեր, թե որտեղից է գալիս դատապարտելի տարի շարունակ նրանց խոսակցությունները տեղի են ունեցել միայն ենթարկվող և տենչալի կանանց ներկայությամբ ու հանկարծ նրանց միջև հայտնվում է մեկը՝ միաժամանակ ցանկալի և ուշիմ, որ չէր կարող Ժանի մոտ խանդ չառաջացնել։ Ընկերական խանդերից մեկը, որ հաճախ

ամենավտանգավորն է։ Բայց Ժիլը մեծահոգաբար և բավականին հպարտ լսում էր Նաթալիին, որ հարցեր էր տալիս, ուզղիկ էր բաց թողնում, երբեմն չոր պատասխան էր տալիս երբեք խոսքի տակ չմնալով։ Մեկ-երկու ժամից հետո այդ կինն իրեն է պատկանելու այնպիսի հնազանդությամբ, որ երբեք չի եղել, և գա լիուլի բավարարում էր Ժիլին։ Աթենասը արագ ձևափոխվելու էր սիրահարված աղջկա. նա շատ լավ գիտեր այդ։ Եվ եթե Նաթալին գեռ չէր սեփականացրել պիժամաների ու Ակումբի Արտեմիս-որսորդուհիների երկարաճիտ կոշիկների ոճը, նրա հպարտ կեցվածքը, կանաչ աչքերը, հոգում պարփակված վախը խսկույն քող էին սփռում նեղ ու կարճ սև հագուստի, հնաոճ վզնոցների վրա, որոնցից չէր ուզում հրաժարվել։ Ընդհակառակը, Ժիլը մի տեսակ էրոտիկ կիրք էր զգում նրան նայելիս, նորաձևությունից մի փոքր հետ մնացած այդ երիտասարդ կնոջը, որ Բալզակի մասին խոսում էր ոգևորված, «գոլֆ»-ով դիմում բոլոր այդ երջանիկ կավազան և մաերմիկ լուսնոտներին, այդ երիտասարդ կնոջը, որ, հաստատ գիտեր, մի քանի ժամ հետո մերկացած կանգնելու էր իր դիմաց և անկասկած ավելի ազատ էր զգալու իրեն սիրո մեջ, քան այս գերմոդային կանանցից որևէ մեկը։ Ի միջի այլոց, մի քանի խոսուն հայացքներ, որոնք պատկանում էին իսկական, հագվադյուտ տղամարդկանց և գիտեն կանանց արժեքը, դդացնել էին տվել Ժիլին իրենց նախանձը։

Ճաշկերույթը տեղի էր ունենալու Սենայի աջ ափին, մեծ ռեստորաններից մեկում։ Ժիլի պատճառով մի փոքր ուշացումով հասան այդտեղ։ Ֆերմոնը մենակ էր եկել և կնոջ փոխարեն ներողություն խնդրելու համար այնպիսի մի նախադասություն արտասանեց, որ Ժիլն ու Ժանը ծիծաղելու ցանկություն ունեցան։ Մի հայացք ղցեց Նաթալիի վրա, դարմանալով գուցե, որ չէր ճաշելու կինոդերասանուհու հետ և մի փոքր շփոթված տեսքով պատվիրեց ճաշը։ Մարթան, որին հավանաբար Ժանը խիստ կշտամբել էր, նայում էր Ֆերմոնին այնպիսի հիացած, հիացքից քար կտրած հայացքով, որ Ժիլն հազիվ էր զսպում ծիծաղը։ Վերջինս գիտեր, որ Ֆերմոնը գոհ է իրենից. Նաթալին շատ էր ուզում ծանոթանալ նրա հետ, ամեն ինչ լավ էր ընթանալու։ Եվ



իրոք սկզբում ամեն ինչ լավ էր։ Ֆերմոնը հարցրեց Նաթալիին, թե դո՞ւր էր գալիս այս ռեստորանը, պատասխանեց, որ մի քանի անգամ եղել է այստեղ ամուսնու հետ և համեղ ոստրեներ են ճաշակել։ Ինչպես երևում է Ֆերմոնը անտեղյակ չէր և առանց խուսափելու հարցրեց Լիմուզենի մասին, Նաթալին կարճ ու կտրուկ պատասխանեց, և խոսակցությունը շատ հանդիստ բնույթ կրեց։ Փաստորեն Նաթալին և Ֆերմոնը խոսակցության ամբողջ ծանրությունը իրենց վրա վերցրին։ Այնպես որ վերջում Ֆերմոնը երկբայորեն էր նայում նրան, կարծես ասելու համար, թե ինչ էր գտել Ժիլի նման մի մարդու մեջ, իսկ Նաթալին, գուշակելով այդ հայացքի իմաստը, այնպիսի քնքուշ ժպիտ նվիրեց իր սիրեկանին, որ մի պահ, վերջինս, բռնեց նրա ձեռքն ու սեղմեց։ Այժմ Ֆերմոնն ուզում էր դուր գալ, շաղակրատում էր, մի քիչ խմած էր, իսկ Մարթայի կլոր աչքերը կկոցվում էին, երբ ջանք էր թափում հասկանալու նրանց խոսակցությունը։

— Շատ դժվարին կացության մեջ ենք,— ասում էր Ֆերմոնը,— իրավիճակները այնքան հակասական են...

— Միշտ էլ այդպես է եղել,— պատասխանեց Նաթալին։

— Վերջ ի վերջո,— հանկարծ բացականչեց Ֆերմոնը,— «Սիրտը պետք է կոտրվի, կամ այրվի», ինչպես ասում էր Ստենդալը։

— Կարծում եմ Շամֆորն է ասել,— ասաց Նաթալին։

— Ներեցե՞ք։

Ֆերմոնն անշարժացել էր պատառաքաղը օդում պահած։ Նա սիրով հրավիրում էր իր աշխատակիցներին, ընդհուպ նրանց սիրուհիներին, բայց մշակույթի վերաբերյալ դասեր ուսանել շատ չէր սիրում։ Ժիլը ոտքը կպցրեց Նաթալիին, իսկ սա զարմացած հայացք նկտեց նրա վրա։

— Ցավոք հակաճառում եմ ձեզ,— վերջնական տոնով հայտարարեց Ֆերմոնը,— բայց այս խոսքերը պատկանում են Ստենդալին։ Նույնիսկ կարծում եմ «Պարմի մենաստանից» է,— ավելացրեց նա մտածկոտ տեսք ընդունելով, որը սարսափեցրեց Ժիլին, քանի-որ հեռավոր մի կասկած սկսել էր կրծել սիրտը, հավատում էր Նաթալիի իմացությանը։

— Համենայն դեպս հրաշալի նախադասություն է,— արագորեն վրա բերեց Ժիլը։

— Ձեր թույլտվությամբ կստուգեմ,— ասաց Ֆերմոնը Նաթալիին ուղղելով խոսքը,— բայց ամեն դեպքում հիացած եմ տեսնելով, որ զարգացած կնոջ հետ է ձեր գործը,— շրջվելով Ժիլի կողմը ավելացրեց նա քաղցր ձայնով, որ սովորաբար արտահայտվում էր նրա զայրույթի պահերին,— դուք փոխված եք։

Տիրեց կարճատև լռություն։ Ժիլը խոնարհվեց.

— Շնորհակալությո՛ւն։

Շատ էր զայրացած Ֆերմոնի դեմ, որին կոպիտ էր համարում, Նաթալիի դեմ, որին ձախորդ էր համարում։ Նաթալին շառագունել էր մի փոքր, նա նույնպես բարկացած էր. տիրեց մի բոպեի ճնշող լռություն, և այն պահին, երբ Ժիլն ինքն իրենից դուրս էր գալու բարկությունը թափելով սպիտակուցով պատրաստած ուռած-բարձրացած յուղալի ձվածեղի վրա, իրեն շատ մոտ լսեց Նաթալիի ձայնը։

— Ցավում եմ, եթե նախապես մտածեի, թե ինչ-որ մեջբերում ուղղելով կարող եմ այս աստիճան վշտացնել ձեզ, կլռեի։

— Այն, ինչ զեղեցիկ կինն է անում, ինձ չի վշտացնում,— ասաց Ֆերմոնը աննկատ ժպտալով։

«Համբարությունում գործս որպես ցրիչ եմ ավարտելու» մտածեց Ժիլը, ողբալի հայացքով նայեց Ժանին, որ այս ամենին հետևում էր անխռով հայացքով։ Անխռով և ներքուստ նույնիսկ հիացած։ Սակայն ո՞րն էր պատճառը. այն որ տեսել էր Ֆերմոնին վերջապես պախարակվա՞ծ, թե՞ Նաթալիի վերաբերմունքն էր պատճառը, որ հենց իրեն՝ Ժիլին, դժվարին կացության մեջ էր գցել... Ճաշի մնացած մասը ձանձրալի անցավ, և բոլորն էլ իրարից շատ շուտ բաժանվեցին։ Երբ իրենց տանը մենակ մնացին, Նաթալին շրջվեց նրա կողմը.

— Զայրացած ես, չէ՞։ Բայց նրա արածն էլ շատ զայրացուցիչ էր... հազվադեպ եմ հանդիպել այդքան ինքնահավան մարդու։

— Համենայն դեպս նա՛ է մեզ ապրեցնում, գոնե առայժմ,— ասաց Ժիլը։

— Դա պատճառ չէ, որ Ստենդալն ու Շամֆորն իրար



խառնի,— հանգիստ պատասխանեց Նաթալին,— հատկապես այդ հիմարատես հեղինակությամբ...

— Հիմար է թե հիմար չէ, իմ շեֆն է,— ասաց Ժիլը։

Նա վշտացավ նման նախադասություններ արտասանելու համար։ Կարծես «նորընծա աշխատող» լիներ կամ «հին ծառայող»։ Համենայն դեպս, այն նրբամիտ ու ազատախոս լրագրողը չէր, որի դերում կուզեր հանդես գալ։ Եվ այս ամենը այդ կնոջ պատճառով, որ հիմա իր կողքին կանգնած ժպտում է։ Եվ վերջ ի վերջո ինչո՞ւ Նաթալին չէր խաղում։ Նա շատ լավ գիտեր, որ կյանքը այդպիսին է, և լինում են դեպքեր, երբ պետք է աշխատես դուր գալ դիմացինիդ, խեղդել զգացածդ, իսկ հետո առանձնության մեջ ծիծաղել քո փոքրության վրա։ Այս գործում հնարավոր չէ անկեղծություն խաղալ, այն էլ 1967 թ., Փարիզում։ Սա խիստ ակնհայտ է, և անկախ քո կամքից պետք է կառչես այդ մտքից։ Ինչո՞ւ է ամեն տեղ և ամեն ինչի մեջ բացարձակ ճշմարտություն փնտրում, նույնիսկ այդ տարսափելի կիսկատարությունների մեջ, որոնց ձեռքին են ավա՜ղ, խաղաղ կյանքդ ապահովելու պայմանները։ Ժիլին պատել էր այն զգացումը, թե Նաթալին դավաճանել է իրեն և չթաքցրեց իր միտքը։

— Եթե դուք գալին ինձ կիսկատարությունները,— պատասխանեց Նաթալին,— ես այստեղ չէի լինի։ Կմնայի Լիմոժում և տասնհինգ օրը մեկ կգայի սիրաբանելու քեզ հետ։

— Դու խառնում ես իրար զգացմունքները և առօրյա գործողությունները,— ասաց Ժիլը,— դու հետևեցիր ինձ, որովհետև սիրում էիր, ուրիշ ելք չէր մնում։ Իսկ այս երեկո ամենևին հարկադրված չէիր այդպես վարվելու Ֆերմոնի հետ։

— Պարզապես ուզում էի ասել, որ եթե կարողանայի հանդուրժել այդ մարդուն, ինձ համար դժվար չէր լինի նաև հանդուրժել իմ անցյալը, և վերջ։

Կատաղության նման ինչ-որ բան էր եռում Ժիլի ներսում, ոխակալության նման մի բան, որ նախկինում երբեք չէր զգացել։

— Մի խոսքով, դու գոհ ես քո դերից. դու այն կինն ես, որ սիրածի համար լքում է ամուսնուն, թանգարանից թան-

գարան է վազվզում, ուշքը գնում է արվեստի գործերի համար, չեխովյան հերոսներ է հայտնաբերում նիկոլաևների մեջ, այն վեհերոտ, բացարձակ կինն ես, որ պատահաբար կապվում է մի թշվառական թույլ խղճուկի հետ. առավել ևս, վատ բնավորության տեր մի մարդու հետ, այն կինը, որ խելամիտ է ու կրքոտ, այն կինը, որ...

— Այո,— ընդհատեց նրան Նաթալին,— ես բավականին կատարյալ կին եմ։ Մի կողմից չեմ հպարտանում այդ հատկության համար, մյուս կողմից հավատացած էի, որ նաև դրա համար ես սիրում ինձ։

— ...Ինչ խոսք. դա ճիշտ է,— մտաղբաղ ասաց նա,— դու միշտ իրավացի ես։

— Ժի՛լ։

Ժիլը նայեց նրան։ Նրա աչքերում սարսափելի խուճապ կար։ Գրկեց Նաթալիին։ Ինչ-որ ճիշտ է, իսկական սրիկայի պես էր պահում իրեն։ Այս անծանոթ քաղաքում օրեր շարունակ թողնում էր նրան մենակ, միջին կարողությունների տեր մարդկանց հետ էր սեղան նստեցնում և այս ամենի համար հանդիմանում էր նրան։ Միգուցե շա՞տ, շա՞տ էր ձանձրանում Փարիզում։ Միգուցե այդ հուսահատ ջանքերը նրա համար էին, որ հանդես գալով սիրուհու դերում, չկորցներ իր արժանապատվությունը և համապատասխաներ Ժիլի նման մի մարդու, արդյոք այդ ջանքերը ինքնապաշտպանական բնազդից չէի՞ն բխում, որ նույնքան կենսական էր նրա համար, որքան անսահման սերը Ժիլի հանդեպ... Ինչո՞ւ չէր ամուսնանում Ժիլի հետ։ Տասն անգամ առաջարկել էր Նաթալիին, տասն անգամ մերժվել էր։ Իհարկե հանուն Ժիլի. այդ գիտեր։ Ճիշտ է, նա վախենում էր ամուսնանալ։ վախենում հիմարարար, ինչպես մի քաղքենի, չնայած պատճառաբանում էր, թե խուսափում է քաղքենիությունից։ Նաթալին որքան էլ տարակուսեր կամ վախենար իրենից, կարող էր համաձայնել, միայն «այո» ասել, ապահարզան տալ ու իր մագերից բռնած քարշ տալ քաղաքապետարան։ Լինում է մի պահ, երբ պետք է ստիպել մարդկանց, պետք է կամովին դադարել նրանց հասկանալ ցանկանալուց, պետք է գործել հանուն քո շահերի, հանդես գալով նրանց դեմ՝ նրանց միջնական երջանկության համար։ Բայց Նաթալին երբեք



չէր կարող նման քայլ կատարել, և դրա համար էր Ժիլը սիրում նրան։ Անելանելի վիճակ։

— Արի, քնիր, ուշ է,— մեղմ ասաց նա։

Այս մեծ անկողնում գոնե հարցեր չէին լինի։ Եվ անկասկած Նաթալին կիսում էր նրա կարծիքը, որովհետև, համեմատած նախորդ դիշերների, ավելի կրքոտ ու ավելի քնքուշ էր։ Առավոտվա ժամը հինգին Ժիլն արթնացավ ու տեսավ Նաթալիին մթան մեջ աչքերը լայն բացած, անշարժ նստած իր կողքին ծխելիս։ Շատ ուզեց արթնանալ, հարց տալ նրան, բայց ինչ-որ ներքին ձայն թելադրեց փակել աչքերը, ստորաբար լռել։ Վաղը կբացատրվեին, եթե բացատրելու բան կար։

## 5

— Փոքրիկ բաժակով կոնյակ կխմե՞ք, դեռ ժամանակ ունենք։

«Երևի մի դյուժին խմեիս— կատաղած մտածեց Ժիլը։ Նրանք գտնվում էին այնպիսի ռեստորանում, որտեղ ամեն գնով պետք էր համտեսել կավամանի մեջ եփած ՝միսը, իսկ տասնհինգ բոպե անց նստած կլինեն թատրոնում դիտելու համար այն հոլակավոր ներկայացումը, որ Նաթալին շատ էր ուզում տեսնել։ Վերջինս Փարիզում գտել էր մանկության տգեղ, բայց խելացի ընկերուհուն, որը շատ վատ ընտրություն կատարելով, ամուսնացել էր ինչ-որ ճղճղան և ուտող-խմող մի արդյունաբերողի հետ։ Ընկերուհին էր կազմակերպել այս ճաշկերույթը և նախազգուշացրել էր ամուսնու՝ ձանձրալի մարդ լինելու մասին, սեղան նստելուն պես սկսեց ուրախ-ուրախ շատախոսել Նաթալիի հետ, վերհիշել մանկության արկածները, թողնելով, որ Ժիլը և այդ հիմարը իրարից գլուխ հանեն։ Ամուսինն իրար ետևից շարում էր բորսայի, հարկերի, ռեստորանների և դրգռականության վերաբերյալ թեմաները, իսկ Ժիլի ջղերն արդեն չէին դիմանում։

— Հավատացեք ձեր բարեկամ Ռոժեին, ես ձեզ Ժիլ եմ անվանելու, լա՞վ, ծերուկ, մենք կհասկանանք իրար։ Թատրո-

նում տեղն ու տեղը քունս տանում է։ Իսկ կինս ինձ քարշ է տալիս ամիսը առնվազն մեկ անգամ։

«Ահա և ընդհանրություն մեր միջև,— զզվանքով մտածեց Ժիլը,— խեղճ աշխատավոր տղամարդիկ, որոնց փոքրիկ կանայք երեկոները դուրս են քաշում տնից»։

— Մանավանդ,— շարունակում էր միտքը Ռոժեն,— հեռուստացույցը, մի կարգին բան էլ չէ, համաձայն եմ ձեզ հետ, բայց, ինչ-որ ճիշտ է, երբեմն հետաքրքիր բաներ տալիս են։ Նստած ես հարմարավետ բազմոցիդ մեջ, ծխում ես, մի բաժակ խմում, քո տան մեջ ես և հետո երեք հարյուր էլ չես ծախսում, որ նստես ու զահլաղ գնաս։ Այդպես չէ՞։

— Թատրոն շատ եմ սիրում,— համառորեն պնդեց Ժիլը,— բայց մի բաժակ կոնյակ կխմեմ նորից։

— Իսկ դու հիշո՞ւմ ես...,— սկսեց Նաթալին,—... Ինչի՞ մասին ենք խոսում երկուսով։

Նաթալին պաղատական նայում էր Ժիլին, ներողամտություն հայցող հայացքով.

— Թատրոնի մասին ենք խոսում,— հեգնելով ասաց Ժիլը,— պարոնը... Ներեցեք... Ռոժեն հեռուստացույցն է նախընտրում։

— Հոգիս դուրս է գալիս մինչև դուրս եմ հանում տնից,— ասաց մանկության ընկերուհին,— մենք պայմանագիր ունենք. ամիսը մեկ անգամ զոռով քարշ եմ տալիս ներկայացում դիտելու։

— Մենք էլ, հավանաբար, այդ միջոցին դիմենք,— ասաց Նաթալիին Ժիլը չարությամբ լցված ժպիտով,— պայմանագրերը զույգերի ուժն են։

Նաթալին ժպտաց։ Նրա քիչ առաջվա զվարթ դեմքին այնպիսի ակնառու թախիծ իջավ, որ Ժիլն ամաչեց իր արածից։ Վերջ ի վերջո նա Փարիզում միայն այդ դժբախտ ընկերուհուն է ճանաչում, և վերջինս մեղավոր չէ, եթե ամուսինը այդպիսին է ու այդ կինը շատ է սիրում Թատրոն հաճախել։ Ինչո՞ւ էր փչացնում նրա երեկոն։

— Կոնյակ ուզո՞ւմ ես,— ասաց նա։

Ժիլը սեղանի տակից բռնել էր Նաթալիի ձեռքը և ժըպտում էր։ Նաթալին երախտագիտական հայացքով նայեց նրան, և Ժիլն զգաց, որ սիրտը սեղմվում է։ Ինքը զգում էր,



որ վշտացնում է կամ վշտացնելու էր նրան։ Ի՞նչ կլիներ, եթե մի երեկո էլ ձանձրալի անցկացներ։ Երեք ամիս շարունակ ով գիտի քանի այդպիսի երեկո է անցկացրել իր ընկերների հետ։ Չնայած, պետք է խոստովանել, որ նրանցից ոչ մեկը այդ սարսափելի Ռոժեի նման շաղակրատող չէ. մարդ պետք է գավառից լինի՝ սրա նման փարիզցիներին հասկանալու համար։

— Հարկավոր է շտապել,— ասաց ընկերուհին.— Ձեք կարող պատկերացնել,— դիմեց այնուհետև Ժիլին,— որքան երջանիկ եմ, որ Նաթալին վերջապես ապրելու է Փարիզում։ Հուսով լինե՞մ, որ ավելի հաճախ կհանդիպենք իրար...

Նրա ձայնի մեջ անհանգիստ հարցում կար։ Լավ դիտեր, թե ում հետ է ամուսնացել և դրա համար պետք չէր մեղադրել նրան։ Վերջ ի վերջո տրամաբանական է. գավառացի տղեղ մի աղջիկ հանդիպում է փարիզցու։ Իհարկե տրամաբանական է, բայց Ժիլը արգահատանքով էր լցվում այն մտքի նկատմամբ, որ ընկերուհին նմանություն էր գտնում իր և Նաթալիի միջև։ Ճիշտ է, նրանք մի քիչ նման էին հագնված և իրար հետ. ոգևորված խոսում էին իսկական գյուղացիների պես, մի բան, որ երբեք չես լսի փարիզուհիներից, որովհետև նրանք ընդհանրապես շատ են զբաղված իրենց տղամարդկանցով և ուրիշ նյութի շուրջ չեն խոսում միմյանց հետ։ Բայց Նաթալին գեղեցիկ էր, քաղքենի չէր, սիրում էր իրեն։ Ժպտաց։

— Անշուշտ։ Երբեմն կգնանք ամերիկյան արկածային կինոնկարներ դիտելու, այնպես, փոփոխության համար, ահա և բոլորը։

— Հենց այս երեկո այդ կինոնկարներից մեկը պիտի ցուցադրեին հեռուստացույցով,— բողոքեց Ռոժեն,— հաջորդ անգամ, ծերուկ, տղաների նման երկուսով կմնանք տանը, կանանց էլ կուղարկենք, թող գնան իրենց հեքիաթները նայեն։ Ի՞նչ կարծիքի եք։

Այդ երեկոյի պատկերացումն անգամ սարսափի մեջ գցեց Ժիլին և դա այնքան ակնառու էր, որ Նաթալին սկսեց ջղային ծիծաղել։ Նա թատրոնում էլ շարունակում էր անկատ ծիծաղել և մթության մեջ բռնեց Ժիլի ձեռքը։ Նաթա-

լին հուզելու, գայթակղեցնելու համար Ժիլը նրա վերարկուի տակից ձեռքը սահեցրեց ազդրի վրայով, բայց Նաթալին այլևս ուշադրություն չդարձրեց, տարված էր իրոք հաղորդված ներկայացմամբ, իսկ Ժիլը այդ անիծյալ ճաշից Ֆանրացած, ներվերը թունդ եկած՝ սկսեց ականջի ծայրով լսել։ Ընդմիջմանը, մինչ կանայք ոգևորված քննարկում էին ներկայացումը, նրանք գնացին անխուսափելի վիսկին խմելու, մոայլ տեսքով Ռոժեն իրար ետևից կուլ էր տալիս մի քանի բաժակ վիսկի, Ժիլը շուրջն էր նայում։ Նրան թվում էր, թե ամբողջ դավառը ժամադրվել է այստեղ։ Կային երիտասարդ զույգեր, կամ հասուն տարիքի զույգեր՝ երկուերկու, չորս-չորս կանգնած, ժանտաքիսի և ջրաքիսի մորթուց կարած գեղեցիկ թիկնոցներով կանայք, բոլորը տոնական զգեստներով, հպարտ այստեղ գտնվելու համար, և շաղակրատում էին հեղինակների միտումնավորությունների մասին, ֆրանսիական քաղքենիությանը հատուկ ինքնաբավ կամկեղծ դարձվածքներ օգտագործելով։ Ժիլը քաջ գիտեր, որ պրեմիերաների ժամանակ էլ է այսպես լինում, սակայն մարդիկ ավելի վայելուչ տեսքով են, և միանգամից նրան թվաց, թե այդ վայելչությունը շա՛տ կարևոր է։ Մարդ պետք է կա՛մ համոզված գերմոդայիկ լինի, կա՛մ կոմունիստ, բայց Ժիլը չէր կարողանում ընտրություն կատարել։ Մնաց բարովի վերջին, անխուսափելի վիսկին խմելուց հետո թատրոնի մոտ գտնվող շքեղագուշակ ինչ-որ բարում նրանք բաժանվեցին։ Հին «սիմկայում» վերջապես ինքն իրեն գտած Ժիլը պահպանեց զգույշ և մի փոքր տանջող լռություն։ Նաթալին ի վերջո տխուր ձայնով ընդհատեց այն.

— Ջափից դուրս ճանձրացար, չէ՞։

— Ի՞նչ ես ասում, չէ՞,— ասաց Ժիլը,— ներկայացումը շատ հետաքրքիր էր։ Գնա՞նք Ակումբ մի վերջին բաժակ խմելու։

— Շատ լավ աղջիկ է, գիտես,— առանց պատասխանելու հարցին շարունակեց Նաթալին,— շատ բարի, շատ ռոմանտիկ։

— Հրաշալի կին է,— ասաց Ժիլը,— ափսոս, որ այդ տիպի հետ է ամուսնացել։

— Այո, շատ ափսոս։



Ժիլը շրջվեց նրա կողմն ու ժպտաց.

— Նաթալի՛, գիտե՞ս որ սիրում եմ քեզ։

Չգիտեր, թե ինչու էր այդ բանն ասում, զգում էր միայն, որ հարկավոր էր ասել այդ խոսքերը։ Նաթալին առանց պատասխանելու գնկի վրա բռնեց նրա ձեռքը։ Նրանք Ակումբի մոտ էին։

Սխի ամպերը, կատաղած ձայների աղմուկը, դռան մոտ կանգնած հսկիչ կնոջ ծանոթ կերպարանքը Ժիլի դեմքին կարծես թարմ օդի հոսանքի ազդեցությունը թողեցին։ Ամեն դեպքում տարօրինակ էր, որ այդպես էր։ Անմիջապես մի փոքրիկ սեղան գտան և արագությամբ երկու բաժակ խմեցին։ Մի տեսակ թեթևացած զվարթություն էր լցվում Ժիլի մեջ, ուզում էր հարբել, հիմարություններ դուրս տալ, ծիծաղելու համար կռվել մեկն ու մեկի հետ, որևէ բան անելու։ Հանկարծ սրահի մյուս ծայրին տեսավ Ժանին՝ անծանոթ խմբի հետ նստած, որ ձեռքով կանչում էր իրեն, և Ժիլն իսկույն թռավ տեղից ու Նաթալիին քաշեց իր ետևից։ Ժիլը գտնվում էր իր նմանակների՝ լուսնոտների, այլասերվածների, հարբեցողների, անբանների շրջապատում։ Սեղանի մոտ նստելուց հետո միայն ճանաչեց էլոիզին։ Նա այնքան հմայիչ էր, արտակարգ գեղեցիկ իր անչափ կարճ, ամբողջապես շղթաներով զարդարված կաշվե կոստյումի մեջ։ էլոիզն առանց քաշվելու ժպտաց Ժիլին, բարյացակամորեն նայեց Նաթալիին, ներկայացրեց կիսահարբած խոշորակազմ մի ամերիկացու. ինչպես որոշ կանայք սովորաբար ծանոթացնում են իրենց պաշտոնական սիրեկաններին։ Ժանը ժպտում էր, վեր էր կենում, տեղ էր առաջարկում Նաթալիին իր կողքին։ Անկասկած Նաթալին խոսելու էր ներկայացման մասին, Ժանը սիրում էր նման խոսակցություններ վարել, ամեն ինչ լավ էր ընթանում։ Իսկ ինքը երիտասարդի դերում հանդես կգար մի քիչ։ Ամերիկացին բռնել էր նրա ուսերից և երաժշտության աղմուկի տակ տրտնջում էր ինչ-որ բան ասել նրան, իսկ Ժիլը չէր հասկանում։

— էլոիզը և դո՞ւք... before? Yes?[1]

[1] Be fore? Yes? (անգլ.) առաջ, ա՞յս։

Նա ծիծաղելով ցուցամատը մեկնեց մեկ էլոիզի կողմը, մեկ՝ Ժիլի։ Ժիլը հասկացավ և նույնպես սկսեց ծիծաղել։

—Yes, It is me[1]:

Նաթալիի և իր աչքերը խաչաձևվեցին, Ժիլը ժպտաց։ Ներքուստ շատ հպարտ էր, որ ծանոթ է եղել էլոիզին, հատկապես այս տեսքով հանդես եկող էլոիզին։ Ավելի շուտ դա շոյում էր նրան։ էլոիզին նույնպես։

— Այո, այդ նա էր ինձ այդքան տանջանքների մատնողը,— ճչում էր էլոիզը ժխորի միջից։

— Bad guy[2],— ասաց ամերիկացին ցնցելով Ժիլին,— իսկ հիմա դուք մենա՞կ։

— Ո՛չ,— ոռնաց Ժիլը, որովհետև երաժշտությունը գերիշխում էր,— սիրում եմ այդ կնոջը։

— Որի՞ն։

Մատով ցույց տվեց Նաթալիին, նկատեց նրա դեմքի սարսափած արտահայտությունը և բանի տեղ չդրեց։ Նաթալին հասկացել էր, թե ինչ են խոսում, հետո՞ ինչ։ Ժիլը այդ համակրելի, ամրակազմ տղային ասում էր, որ սիրում է իրենն։ Անքաղաքավարություն չէր արածը, պարզապես մտերիմ վերաբերմունք, գիշերային ջերմ արտահայտություն։ Մեծ բաժակով սգոթ խմեց։ Այդպիսի ծանր երեկոյից հետո, համենայն դեպս, իրավունք ուներ ընդարմանալու։ Իր իրավունքն էր։

— Ներկայացումը հավանեցի՞ր,— հարցնում էր ժանը։

— Անասելի շափով,— ասաց նա,— ա-նա-սե-լի։

ժանն սկսեց ծիծաղել, շրջվեց Նաթալիի կողմը։ Ժիլը շատ ուրախ էր, իրեն զերծ էր զգում ամեն տեսակի հանդիմանությունից, պատասխանատվությունից։ Տանջահար երեկոն լավ ավարտ էր ունենալու։

— Դու կարող էիր ինձ պարի հրավիրել,— ասաց էլոիզը,— որպես հիշատակ անցած-գնացած լավ օրերի։

Ժիլը վատ էր պարում և չէր սիրում, բայց ինչ փույթ։ Զգաց, որ մեծ քայլերով պարահրապարակ էր մտել ու դոփում էր խոլական ամբոխի մեջ։ Տղամարդիկ շատ էին նայում Տարզանի կերպարանքով էլոիզին։

— Ասուա՞ծ իմ,— ասաց նա,— ինչպես միշտ վատ ես գլուխ հանում պարից։

Առանց պատասխան տալու Ժիլը ժպտաց։ Ծանոթ էր նրա օծանելիքի բույրը, ինչ լավ է, երբ կյանքիդ ճանապարհին հանդիպում ես նշանաձողերի պես կանգնած կանանց։

— Իսկ մնացա՞ծը,— շարունակեց էլոիզը։

— Շատ հանդուգն ես դարձել,— ասաց Ժիլը,— բայց այստեղ չեմ կարող պատասխանել քեզ։

Իսկ ինչո՞ւ չէ։ Հետաքրքիր կլիներ մի օր դարձյալ վերականգնել սիրային կապերը այս նոր էլոիզի հետ։ Խիստ հաջողված բառախաղ էր, Ժիլը բարձրաձայն ասաց, բայց էլոիզը կարծես չհասկացավ։ Նաթալին կհասկանար, Նաթալին զարգացած կին է։ Այդ րոպեին սխալ քայլեր գցող ամերիկացու թևերի մեջ Նաթալին անցնում էր իր կողքով, ձանձրանում էր կարծես։ «Դե, ինչ, զվարճացիր,— կատաղած մտածում էր Ժիլը,— զվարճացիր, էլի»։ Նրանք առաջինը գրավեցին իրենց տեղերը, Նաթալին և ամերիկացին դեռ պարում էին։

— Ընկերուհիդ կարծես չի ուրախանում,— ասաց էլոիզը։

— Փոքրիկ ընկերդ երևի ոտքերն է տրորում,— ասաց Ժիլը։

— Շատ բարի է,— ավելացրեց էլոիզը։

«Երկու ամիս է ընդամենը, չպետք է որևէ մարդու մասին դատեր «բարի է» ասելով,— մտածեց Ժիլը,— ինձ հետ եղած ժամանակ երևի բոլոր տղամարդկանց չար է համարել։ Խմիչքի հետ՝ սենտիմենտալիզմը արագ համակում էր նրան։

— Ասա ինձ, որ երջանիկ ես, էլոիզ։

— Եթե դա քեզ հաճելի է,— չորությամբ վրա բերեց նա և շրջեց գլուխը։

Նույն րոպեին Նաթալիի հակված, համարյա վշտագին կիսադեմը անցավ նրա աչքերի առջևով, և Ժիլը մի բաժակ էլ կուլ տվեց։ Բոլոր կանայք էլ միատեսակ են, երբեք երջանիկ չեն զգում իրենց։ Եվ միշտ տղամարդու պատճառով։ Միայն ընկերների վրա կարելի է հույս դնել և որպես մեղ-

[1] Yes! It is me (անգլ.) Այո, այդ ես եմ։

[2] Bad guy (անգլ.) անպիտան տղա։

նակցի նայեց Ժանին, իսկ վերջինս փոխադարձեց հայացքը։ Նաթալին գալիս էր, վեր կացավ։ Նայեց Ժիլին տարակուսանքով.

— Հոգնած չե՞ս։

Հիմա, ճիշտ այն պահին, որ ինքն ուզում էր զվարճանալ, կամ, մի խոսքով, սկսել էր զվարճանալ, Նաթալին ուզում էր տուն գնալ։

— Ո՛չ,— ասաց նա,— արի պարենք։

Բարեբախտաբար դանդաղ ֆոքստրոտ էին նվագում, հին, դանդաղ ֆոքստրոտ, ինչպես ամռանը։ Հանկարծ հիշեց Լիմոժի մոտ գտնվող բացօթյա պարահանդեսը, այս նույն պարի ժամանակ էր Նաթալիին խլել իր եղբորից ուժեղ խանդի պահին։ Իսկ այն խելակորույս, ակնթարթային համբույրները ծառի տակ... Նաթալի՜... Նա հանդարտ շորորում էր իր գրկում, տենչում էր նրան, սիրում էր իր դավառացի աղջկան, կապույտ գուլպաներով իր խենթուկին։ Ժիլը կռացավ, շշնջաց բառեր ականջին և գլուխը դրեց նրա ուսին։ Այլևս չկային ընկերներ, նախկին սիրուհի, մեղսակիցներ, միայն նա կար։

Դուրս եկան բավական ուշ և հայտնվեցին լուսածաղի մեջ, Նաթալին ստիպված եղավ ղեկին նստել։ Ժիլը հաղիվ էր կանգնում ոտքերի վրա, բայց արտաբերում էր բառեր, իրար շաղախված և միաժամանակ ուժեղ մտքեր։ Նա հիշում էր, թե ինչ էր տեղի ունեցել իրենց միջև։ Այնքան ժամանակ որքան ինքը հիվանդ էր եղել, Նաթալին երեխայի պես զբաղվել էր իրենով, այդ սիրո մեջ լիարժեք մարդ էր զգացել իրեն և հավաքվել էր ամբողջությամբ։ Իսկ հիմա, երբ ինքը պետք է զբաղվեր նրանով, պաշտպաներ նրան, երկատված էր զգում իրեն, երկու մասի բաժանված, մի կողմից ինքը՝ նախկին Ժիլը, մյուս կողմից՝ Նաթալիին սիրահարված Ժիլը։ Այս ամենը բացատրեց թոթով լեզվով, երբ Նաթալին պատկեցնում էր նրան, բայց ոչ մի պատասխան չստացավ։ Հաջորդ առավոտ նրան զարթնեցրեց մի ծաղկավաճառ, հսկայական ծաղկեփունջը գրկած, և Նաթալին հորանջելով պատմեց, որ ամերիկացին ամբողջ գիշեր ամուսնության առաջարկ էր արել իրեն։



## 6

Ամբողջ օրը որոճաց իր զայրույթը։ Վերջ ի վերջո այդ գնոջ հետ միշտ հիմարի դեր էր ստանձնում։ Թատրոնից ոչինչ չէր հասկանում, ոչ էլ գրականությունից՝ մեծ բան, արվեստից՝ բացարձակապես ոչինչ և երբ պատահաբար մի միամիտ քայլ էր զցում, մտածելով, որ այդ հարցում լավ ևփված է, անտեսանելի կերպով կրկնակի քայլ էր զցում Նաթալիին։ Ով գիտե որքան էր ծիծաղել տեսնելով իրեն խեղճ էլոիզին հաճոյանալիս, այն էլոիզին, որի հարուստ սիրեկանը, որ հիմար մարդ չէր երևում, նույն րոպեին պատրաստ էր լքելու նրան Նաթալիի համար։ Որովհետև նա իր աննկուն, բարետես կեցվածքի տակ կանացի կատարելության հասած ինչ-որ բան ուներ, և այդ ամերիկացին, նույնիսկ խմիչքի միջից լրիվ զզացել էր դա։ Երբ առավոտյան, ծաղկեփունջ գրկած, Ժիլը հիմար տեսքով մտել էր իրենց սենյակը, Նաթալին նախքան անց ու դարձի մասին պատմելը, կուշտ ծիծաղել էր։ Իսկ նա մի րոպե նստել էր անկողնու եզրին մոմռալով քթի տակ. «դե՛, սա արդեն, սա արդեն» այնքան ժամանակ, մինչև Նաթալին ծիծաղելով վերցրել էր ծաղկեփունջը և վեր էր կացել նրան համբուրելու։

— Բայց դո՞ւ ինչ ասացիր նրան։

— Ասացի, որ շատ սիրալիր է, բայց ես ուրիշին եմ պատկանում։ Մոռացա մատով ցույց տալ քեզ,— ծուլորեն ավելացրեց նա։

— Բավականին համարձակն է,— ասաց Ժիլը փորձելով ծիծաղել։

Բայց վիրավորված էր։ Նրա հետ երբեք չէր կարող իր ցանկացած վիճակով հանդես գալ, ահա և բոլորը։ Ճիշտ է, սիրում էր իրեն, բայց կարևոր հարցերում իրենից ավելի ուժեղ էր։ Ժիլը մի րոպե հիշեց, որ անկասկած հենց այս հատկանիշը փրկեց իրեն երեք ամիս առաջ, բայց միաժամանակ պատճառներ էր փնտրում հակառակն ապացուցելու փրեն։ Մտածելով այդ մասին, եղբայրություն էր հանդում, իրենց մտերմության առաջին իսկ օրերից նա էր կայացրել բոլոր որոշումները։ Միակ բանը, որ ինքն էր ձեռնարկել՝

իրենց մեկնումը արագացնելն էր։ Նաթալին էր իրեն ընտրել, հմայել և տարել իր հետ կենակցելու։ Եվ որոշ ժամանակ անց զարձյալ նա էր ամբողջությամբ տնօրինելու իրենց կյանքի ընթացքը և թելադրելու իրեն, եթե թույլ տար իհարկե։ Ապացույցը՝ երեկվա երեկոն։ Անշուշտ, երկու ամսվա ընթացքում առաջին անգամն էր նման դժվարին պահանջ առաջարկում, բայց ամեն ինչ իր սկիզբն ունի։ Վիրավորված մարդուց փոխակերպվում էր շղթայված մարդու։ Այդ օրը շատ վատ աշխատեց, զզվելի տրամադրության մեջ էր և որոշեց գնալ Ջիլդայի մոտ։ Վերադառնալուց հետո չէր գնացել իր ոգջույնը հաղորդելու։ Վատ արարք էր։ Իսկ Ջիլդան երկու շատ լավ հատկություն ուներ. նախ՝ միշտ ողջամարդկանց կողմն էր բռնում, հետո՝ լռել գիտեր։ Ժամը վեցին նրա մոտ էր. սենյակ մտնելուն պես հիշեց այն սարսափելի երեկոն, որ անցկացրել էր այստեղ. զարհուրելի երեկո էր, սպասում էր ինչ-որ կնոջ և նույնիսկ դուռը չէր բացել նրա առջև։ «Նաթալիից առաջ էր». նա հաշվի նստեց ինքն իր հետ և որոշեց լռել։ Նաթալին իր գաղտնիքն էր, իր կինը, ոչ մեկի հետ չպետք է խոսեր նրա մասին, ստորություն կլիներ իր կողմից, և գուցե հազվագյուտ դեպքերից մեկը, որ Նաթալին չներեր իրեն։ Բայց արդեն նստել էր կարմիր մեծ բազկաթոռի մեջ, սառը բաժակը ձեռքին, իսկ գիմացը այդ հետաքրքրասեր և բարեկամ կինը՝ իր խենթ անցյալի հին մեղսակցուհին։ Թվում էր, թե երիտասարդանում է։ Ամեն դեպքում սիրային արկած, դա սիրային մի արկած էր։

— Դե, ի՞նչ կա,— ասաց Ջիլդան,— լավ տեսք ունես, գայլի ձագուկ, կարծում եմ շատ երջանիկ ես, հը՞։

— Շա՛տ,— ասաց նա քնքշորեն։

Ջիլդային միշտ ամեն բան հայտնի էր։

— Որ այդպես է, ինչո՞ւ ես եկել այստեղ։ (Նա սկսեց ծիծաղել)։ Տղամարդիկ, երբ ինձ մոտ են գալիս, կամ ուզում են սիրվել, կամ գանգատվել։ Կրքի պահանջ, հատկապես, չեմ տեսնում քեզ մոտ։ Ուրե՞մն

— Շատ բարդ է...— սկսեց Ժիլը։

Նա խոսեց։ Խոսում էր, մի քիչ փաստերն էր աղավաղում հօգուտ իրեն և բարկանում էր իր դեմ այդպես վարվելու համար։ Ավարտելով խոսքը, իրեն կատարյալ ընկճված զգաց։

Ջիլդան առանց ընդհատելու լսեց նրան խոնարհած աչքերով, ծխախոտ ծխախոտի հետևից վառելով, իր թախտագուշակի զվարթ ինչպես Ժիլն էր նրան մտքում արտասանում։ Երբ վերջինս լռեց, նա վեր կացավ, նրբորեն շարժելով կոնքերը երեք քայլ արեց սենյակում, վերադարձավ, նստեց տեղը և հայացքը հառեց նրա վրա։ Վերջ ի վերջո բավականին ծիծաղելի տեսք ուներ, և Ժիլն ինքն իրեն հարց տվեց, թե ինչ գործ ուներ այստեղ։ Ջիլդան որսաց նրա հայացքում լուսարձակված խորամանկությունն ու բարկացավ։

— Որքան հասկանում եմ, ինչ-որ կին քթիցդ բռնած մաե և գալիս ա չես կարողանում ազատվել նրանից։

Ժիլը մի փոքր զայրացած ասաց.

— Այդպես չէ։ Ես մոռացել եմ ամենակարևորը։ Ես քեզ չասացի ամենակարևորը։

Ամենակարևորը Նաթալիի ներմուծումն էր, նրա վրի փոսիկը քնած ժամանակ, անսպառ քնքշությունը, կատարյալ ուղղամտությունը, անսահման վստահությունը նրա հանդեպ։ Այն ամենը, որ հոխության մեջ թավալվող այս կիսապոռնիկը իր հասարակ զեխությամբ չէր կարող այլևս հասկանալ։ Եթե այդպես էր, ինչ էր անում ինքն այստեղ։

— Ո՞րն է ամենակարևորը։ Այն, որ ոտից գլուխ խրվել ես, հա՞։

Ժիլը վեր էր կացել, կմկմում էր, չգիտեր՝ զայրույթից թե ամոթից։

— Սխալ արտահայտեցի մտքերս,— դժվարությա՛մբ ասաց նա,— մոռացիր այս ամենը։ Ների՛ր ինձ։

— Երբ վերադառնա իր հաշտարար զատավորի մոտ, կգաս այստեղ,— ասաց Ջիլդան,— ես միշտ տանն եմ, գիտե՛ս։

«Այո,— ատելությամբ լցված մտածեց Ժիլը,— միշտ տանն ես։ Միշտ տանը կլինես ստորությունների, կեղտոտությունների, քո ողջամարդկանց ցանկասիրությունների համար։ Դու այն կանանց դասին ես պատկանում, որ կարծում են, թե կյանքում ամեն ինչ կարող են մոռացնել տալ, թողնելով

որ քթներդ խցկեք այդ կլանքի մեջ։ Նա արդեն դռան մոտ էր հասել, շրջվեց.

— Ոչ թե նա է քթիցս բռնած ման գալիս, ինչպես դու ես ասում, այլ ես եմ կպել նրանից։

— Ուրեմն ուրիշ հեքիաթ պատմեիր,— ասաց Ջիլդան ծիծաղելով և փակեց դուռը։

Աստիճանների վրա բարկությունից դողում էր Ժիլը, բայց չգիտեր ում դեմ էր իրականում զայրացած։ Մեծ արագությամբ կտրեց անցավ Փարիզը, պատահական տեղում կանգնեցրեց մեքենան, վազելով բարձրացավ աստիճանները։ Բայց դռան եռևում լսեց Նաթալիի ծիծաղն ու մի տղամարդու ձայն։ Խոր շունչ քաշեց։ Եթե ամերիկացին լիներ, քիթմռութը չարդելու էր, այսպիսով երկուսի հախից էլ կգար, և՛ իրեն, և՛ ամերիկացու։ Փոխանակ իր բանալիով դուռը բացելու, դռան զանգը հնչեցրեց, մտածելով, որ աղնիվ արարք է թույլ տալիս։ Սակայն Նաթալիի ծիծաղը չէր ընդհատվում նաև, երբ բացում էր դուռը։

— Կարո՞ղ ես գուշակել, թե ով է եկել։

Եղբայրը կանգնած էր հյուրասենյակի շեմին, ժպտում էր։ Ժիլի դեմքը տարօրինակ արտահայտություն պետք է ունենար, քանի որ Նաթալին հարցրեց.

— Իսկ ի՞նչ էիր կարծում, ո՞վ կարող էր լինել։

— Չգիտեմ,— ասաց նա,— բարև, Պիեռ։

— Կարծում էիր Վալտե՞րն է։

— Վալտե՞ր։

— Երեկվա ամերիկացին։ Հենց նոր այդ մասին էի պատմում Պիեռին և...

Եվ Նաթալին ծիծաղից թուլանալով ընկավ բազկաթոռին։ Եղբայրը կանգնած էր նրա կողքին, նա նույնպես ծիծաղում էր, և ինչ-որ երջանկության ալիք բարձրանում էր Ժիլի մեջ։ Նրանք նման էին երեխաների՝ մաքուր և առաքինի։ Հաճելի տեսք ունեին և վստահություն էին ներշնչում։ Նա ուժասպառ ու գոհունակ ընկավ մի ուրիշ բազկաթոռի մեջ։ Իր տանն էր, ընտանիքի գրկում, հիմար բնավորության պատճառով հիմար օր անցկացնելուց հետո։

— Երբվանի՞ց եք այստեղ։



— Այս առավոտից։ Երկու օր ազատ էի, ուզեցի Նաթալիին տեսնել։ Նամակները չէին բավարարում։

Տեսնես հաճա՞խ էր գրում եղբորը։ Ամեն մի թանգարանի այցելությունից հետո՞։ Ընդհանրապես ինչպե՞ս էր անցկացնում իր օրը։ Տուն վերադառնալուց հետո ինքը ամեն ինչ պատմում էր նրան, խելագարի նման քաղաքական թեմաների շուրջն էին վիճաբանում, նաև խմբագրության, իր ընկերների մասին, բայց Նաթալիի առօրյան երբեք չէր շոշափվել։ Նա ոչ մի անգամ իր անձնական կյանքի մասին չէր խոսում Ժիլի հետ, բացի իր հանդեպ ունեցած սիրուց։ Ի՞նչ էր գրում արդյոք եղբորը... Երջանի՞կ եմ.... ձանձրանո՞ւմ եմ... Ժիլը բարի՞ է... Ժիլը բարի չէ՞... Նայեց Պիեռին՝ փորձելով կարդալ այդ նամակների արտացոլումը նրա դեմքին, բայց ոչինչ չտեսավ։ Անկեղծ վերաբերմունք, միայն այդքան։ Ոչ, Նաթալին ինչպես մեկից, այնպես էլ մյուսից կարող էր գաղտնիք պահել։ Նա հիշեց Ջիլդայի մոտ անցկացրած ժամանակը և ամոթը պատեց նրան։

— Խմելու ոչինչ չունե՞ք, ինչ է,— շտապեց նա,— Նաթալին վատ տնտեսուհի է։

— Նաթալին ամեն տեղ իրեն հյուր է զգում,— ասաց Պիեռը,— ոչինչ անել չի կարող։

Ժպտում էր։ Նաթալին գնաց սառնարանի մոտ, և մի քանի բոպե մնացին մենակ։

— Քույրս երջանիկ է երևում,— ասաց Պիեռը։

Խոսում էր հանգիստ, բայց ձայնի մեջ, ինչպես միշտ, պահպանված էր սպառնագին տոնը։ Ինչպես այն հոչակավոր երեկոյի ժամանակ, Լիմոժում, «Աղնիվ եղբոր» դերը այս անգամ էլ մի փոքր վիրավորեց Ժիլին։

— Հուսով եմ, որ այդպես է,— ասաց նա։

— Շատ երջանիկ կզգամ, եթե սխալված լինեմ,— հանդիստ շարունակեց եղբայրը։— Համենայն դեպս Լիմոժը շատ տխուր է առանց Նաթալիի։

— Ցավում եմ,— ասաց Ժիլը,— բայց Փարիզն էլ ինձ համար նույնը կլինի։

— Նայենք այդ էլ։ Իրականում միայն դա էր ինձ հետաքրքրում։

— Իսկ նա չի՞ գրել ձեզ։

Պիեռն սկսեց ծիծաղել։

— Նաթալին երբեք իր զղացմունքների մասին չի պատմում ուրիշին։ Դա պետք է ձեզ հայտնի լիներ։

Նաթալին մատուցարանը հաղիվ ձեռքերի մեջ պահած ներս էր մտնում, երբ Պիեռը մի ոսայունով վազեց ու ազատեց նրան այդ բեռից։ Այո, երևում է, որ ամբողջ կյանքում փայփայել են նրան ու սիրել, և ով գիտե որքան է վախեցել Նաթալին ի՞նչ կողքին՝ երևս ստած երեխայի ջղայնություններից։ Նաթալիի և եղբոր միջև փոխադարձություն կար, երկկողմանի երախտագիտություն, հազար ու մի բարությունների հիշողություն, որոնք անշահախնդիր են եղել երկուսի կողմից, և հանկարծ Ժիլը մեծ ցանկություն ունեցավ զգալու այս ամենը։ Հիշեց, որ քրոջ հետ հոգեկան ոչ մի միասնություն չի ունեցել, բացի Օդիլի միակողմանի վերաբերմունքից, իսկ ընդհանրապես այլ կանանց հետ միայն անխիղճ ու տխուր վեճեր է վարել, որոնք երբեմն ուղեկցվել են նաև երջանիկ պահերով, սակայն միշտ ընդհանրացված՝ պարտության պատճառով ըմբոշխնած հաղթանակներով կամ կարճատև պարտություններով։ Նա հոգնել էր, նախորդ օրը շատ էր խմել, զզվում էր իրենից։

— Իսկ ինչո՞ւ միասին չճաշեք այսօր,— ասաց նա,— ավելի լավ կզգաք։ Իսկ ես շուտ կքնեմ։ Թույլ եմ զգում, երեկ իրիկուն շատ խմեցի։

Կարծում էր կընդդիմանան, բայց Նաթալին շատ ուրախացած ասաց.

— Իսկ դու չես տխրի, վաղուց չեմ տեսել Պիեռին։

— Իսկապե՞ս,— ասաց Պիեռը։

«Սեղմ Նաթալի,— մտածում էր Ժիլը,— վաղուց խելքը գլխին մի մարդու չես հանդիպել։ Իսկապես, ո՞ւմ ես հանդիպել. ոտքից-գլուխ կորած Նիկոլային, քեզ նախանձող Ժանին, դժբախտ ընկերուհուդ, որ միայն դառնություն կարող է պատճառել, իսկ երեկոյան ժամը ութից հետո մինչև լույս տենդում ես ինձ՝ տխուր պարոնիս, որին խելագարի պես ես սիրում»։ Թափ տվեց գլուխը։

— Չէ, իսկապես։ Առանց ինձ ճաշեք։ Եթե քնած չլինեմ, ձեր վերադառնալուց հետո մի բաժակ թմրի կխմեմ։



Երբ նրանք մեկնեցին, Ժիլը միացրեց հեռուստացույցը, հետո խկոյն անջատեց, սառնարանի մոտ կանգնած կուլ տվեց մի կտոր ապխտած միս և մտավ անկողին։ Շատ հետաքրքիր դետեկտիվ գիրք ուներ. մի մեծ հանգամանքի ջուր գրեց կողքին, ծխախոտ, միացրեց ռադիոընդունիչը, շատ հաճելի համերգ էին հաղորդում։ Միայնությունը երբեմն իր հրապույրն ունի։ Իրականում նա միշտ էլ նման է եղել բարի, մենակյաց գայլի և այսպես մտորելով իր կերպարի շուրջ, քնեց առանց լույսը հանգցնելու։

## 7

Որոշ ժամանակ անց Նաթալին որոշեց աշխատել։ Նա Ժիլին հայտնեց, որ ուղեղային գործակալությունում շատ լավ աշխատանք էր ճարել, լավ էին վարձատրվում, և վերջ ի վերջո, ամսվա վերջում, ծախսերը, որ հաճախ մեծ դժվարությունների առջև էին կանգնեցնում իրենց, ծույլը ծայրին չէին հասցնի։ Սկզբում մի փոքր վիրավորված՝ Ժիլը ծիծաղեց, որ առանց իր օգնության կարողացել էր գործը գլուխ բերել, մի փոքր ղվարթացավ՝ պատկերացնելով Նաթալիին նստած գրասեղանի առջև։

— Հասցրե՞լ ես բոլոր Բանգարանները այցելել։ Ի՞նչ է կատարվում քեզ հետ։

— Ամբողջ օրը ոչ մի պրոգրամ չունեմ,— ասաց նա,— մարդ մի տեսակ ապուշանում է։

— Իսկ ի՞նչ էիր անում Լիմոժում։

— Լիմոժում ես իմ գործերն ունեի,— հանգիստ պատասխանեց նա։

Ժիլը լիաթոք ծիծաղեց։ Խենթ էր այս կինը։

— Զգում եմ, հիմար կացություն է,— ասաց Նաթալին,— բայց դու գիտես, թե որքան օգուտ էի տալիս մարդկանց...

— Համենայն դեպս...— պատասխանեց Ժիլը,— դու որպես գործունյա կին... ամեն երեկո իմ անկողնու մեջ կիր անցկացնում ժամանակդ։

— Ամառ էր,— ասաց նա,— իսկ խեղճ մարդիկ ավելի շատ ձմռանն են նեղության մեջ գտնվում։

Ժիլը զարմացած նայում էր նրան։

— Եթե ճիշտ եմ հասկանում, քրոջս մոտ եթե ձմռանը գնացած լինեի, քեզ չէ՞ի ճանաչելու։

Նաթալին տատանվեց, կարմրեց։

— Այդպես է,— ասաց նա,— բայց հարցը դա չէ։ Գործակալությունում աշխատելը հաճելի է, դիրեկտորը հիանալի մարդ է, Պիեռի ընկերն է։ Եվ հետո հետաքրքիր է մարդկանց ճամփորդության ուղարկելը։ Ես նրանց կուղարկեմ Պերու, Հնդկաստան, Նյու-Յորք։

— Եթե այս ամենն անում ես նյութական պայմաններից ելնելով, հիմարություն է, կարող ենք ավելի խնայողությամբ ծախսել։

Ակնթարթ էր, որ ավելի շատ ինքն էր դրամի գլուխն ուտում, բայց չգիտեր ինչպես էր ստացվում։ Ընկերների հետ, բարերում, տաքսիների մեջ դրամը հալվում էր մոմի պես։ Իսկ եթե Նաթալին դուրս էր գալիս, հագնվում էր, պարտական էր ոչ թե Ժիլին, այլ այն հարյուր հազար ֆրանկին, որ ամսական ստանում էր Լիմուզենից, ի հաշիվ ընտանեկան հին օրերից եկող ռենտայի։ Դեռ ավելին, Ժիլը նոր տարվա առթիվ նրա համար շատ գեղեցիկ ու մի հին զարդեղեն էր գնել և մինչև հիմա պարտքը չէր, մարել։ Ինչու չէ, վատ գաղափար չէր, բայց առանց ստույգ պատճառի Ժիլը կատաղում էր։

— Նյութական հարցը չէ,— ասաց Նաթալին,— ուղղակի ինձ համար հաճելի է։ Իսկ եթե առարկում ես, չեմ գնա։

— Վարվիր ինչպես ցանկանում ես,— ասաց Ժիլը,— հա՜, քիչ առաջ ճամփորդության մասին էիր խոսում, ե՞րբ է գալու ծաղկավաճառը։

Թանձ այն է, որ այդ Վալտեր կոչեցյալը դեռ հասկանում էր, Նաթալիին ողողում էր վարդերով (այդ պատճառով էր Ժիլը նրան ծաղկավաճառ անվանում), ինչպես նաև՝ սիրատոչոր նամակներով։ Նա երևի ճամփորդում էր, հիմար և ծանրակշիռ բացիկներ էր ուղարկում ամեն կողմից, թեկուզ երեսուն տարի սպասելու որոշում կայացրած մարդու հանգստությամբ, մի բան, որ նայած օրվա տրամադրությանը, զվարճացնում էր Ժիլին կամ կատաղության դուռը հասցնում նրան։ Նաթալիին հուզում էր այս հանգամանքը և իր սովորության համաձայն չէր թաքցնում, դա անշուշտ



վստահություն էր ներշնչում Ժիլին, բայց նաև խոչընդոտում էր, որ միասին ծիծաղեն նրա վրա։ Նաթալին հայտնել էր, որ ամեն մի զգացմունք, ինչպիսին էլ այն լիներ, չպետք է ծիծաղելի դառնար։ Այս թեմայի շուրջ նա նույնիսկ բավական երկար զրուցել էր Գարնիեի հետ, որին մի օր Ժիլը ծանոթացրել էր, իսկ սա մինչև հիմա սպասում էր իր երիտասարդին, որ բանտից ազատվի։ Ի դեպ, Գարնիեի աշխատանքի հարցը ավելի ու ավելի էր թաթափվում Ժիլի ուսերից, բայց, հաճախ վերադառնալով տուն, տեսնում էր Նաթալիին և Գարնիեին կրակի մոտ զրույցով տարված։ Ամեն դեպքում Նաթալին զարմանալի ճաշակի տեր կին էր։ Անկարող Նիկոլայի և հոմոսեքսուալ Գարնիեի կողքին նա կրկնապատկում էր իր կենսասիրությունն ու զվարթությունը, այնինչ Ժանի ընկերակցությունը, որն իրոք խելացի մարդ էր, ակնհայտորեն ճնշում էր նրան։ «Դու չե՞ս հասկանում,— ասում էր նա, երբ խոսում էր նրանց մասին,— այդ մարդկանց մոտ բացարձակ անմեղություն կա, և ես դա եմ սիրում»։ Իսկ Ժիլը թափ էր տալիս ուսերը, համարելով նրանց ավելի շատ ձանձրալի անձնավորություններ, բայց նախընտրելով Նաթալիի համար նրանց ընկերակցությունը, քան՝ ամերիկացի ծաղկավաճառները։

Նաթալին սկսեց աշխատել և հաճախ երեկոյան գնում էր Ժիլի մոտ՝ խմբագրություն, որ միասին վերադառնան տուն։ Աշխարհը գնալով ավելի ու ավելի էր մոլեգնում, խմբագրության պատասխանատու մարդկանց միջև վիճաբանությունները ավելի սուր բնույթ էին կրում, և Նաթալին ստիպված էր լինում ներքևի բարում մեկ կամ երկու ժամ սպասել Ժիլին։ Իհարկե, Նաթալին երբեք չէր հանդիմանում նրան, նույնիսկ չէր տրտնջում, բայց երբ Ժիլը մտածում էր, որ նա ներքևում է և շատ է ձանձրանում, մտահոգվում էր։ Նրանք վերջ ի վերջո որոշեցին ուղղակի ամեն օր «տանը հանդիպել» և այդպես էլ մի օր Ժիլը չվերադարձավ տուն։

Նա սարսափելի ծանր օր էր անցկացրել։ Թոմաս կոչեցյալը, այն նույն զզվելի Թոմասը, չափն անց էր կացրել։ Ֆերմոնը կանչել էր Ժիլին դիտողություն անելու։ Իբր թե նրա հոդվածները մի փոքր «դասական» ոճով են գրված։ Զերծ սենսացիոն մտքերից, որոնք դուր են գալիս «ընթեր-

ցողին», Ժիլը չէր ճանաչում այդ հուշակավոր ընթերցողին, որի համար իր ականջներն էին սղոցում, այսպես ասած այն անծանոթ գինվորին, որ հսկում է հիմարության սահմանները, բայց եթե ձեռքն անցներ, ինչպես հարկն է դասը կտար։

— «Ընթերցողը»,— ասում էր Ֆերմոնը,— ինչ խոսք, օբյեկտիվորեն պետք է տեղեկություններ ստանա, բայց ընթերցողը պետք է նաև ուզեցվի, նույնիսկ կիրք հանդես բերի թեմայի շուրջը։

— Դուք չե՞ք կարծում, որ իրադրությունները առանց այն էլ բավական պրոգրես են,— ծաղրանքով նշում էր Ժիլը,— ամենուրեք պատերազմներ, ամենուրեք...

— Ընթերցողին գրգռում է միայն այն, ինչը իրեն է անմիջապես վերաբերում։

— Բայց դա այդպես է,— բորբոքված ասում էր Ժիլը,— ինչ է, ուզում եք նրանց ինչ-որ գրասենյակի հասցե տամ, որ ցուցակագրվեն Վիեննամ գնալու համա՞ր։ Թվերը իրավական պիրճախոս չե՞ն թվում ձեզ։

Մի խոսքով, Ժիլը գժի նման կատաղած դուրս էր եկել նրա մոտից, սոսկալի լինելով նորից գրել հոդվածը, իսկ ժամն արդեն երեկոյան վեցն էր։ Նա ճիշտ ժամանակին հանդիպել էր Գարնիեին, հանձնարարել էր նրան Նաթալիին զգուշացնել և եթե, հնարավոր է, միասին գնալ ճաշելու, դա կարծես մեծ ուրախություն էր պատճառել վերջինիս, իսկ ինքը մնացել էր գրասենյակում մենակ, գրամեքենայի առջև նստած, ավելի շուտ մտածելով ուշացումով ասվելիք ռեպլիկների մասին, որ պատրաստում էր մոքում, քան՝ հոդվածի խմբագրությունում մարդ չկար, և նա գնում-գալիս էր սենյակում՝ զզվելով իր իսկ շարադրանքից։ Գնաց ժանի զրասենյակը, վերցրեց սքոթի շիշը և մեծ բաժակով կուլ տվեց, իզո՞ւր։ Արդեն հոգնել էր խմբագրությունից, ոչ մի արդյունքի չէր հասնում. մինչև կյանքի վերջը ծվարած կմնա այստեղ, դիտողություններ ստանալով ինչ-որ Ֆերմոնից, որ գնալով ավելի ու ավելի է երես առնում, Կծերանա, Նաթալին կվերափոխվի դավառացի կնոջ, զուցե ամուսնանան, զուցե երեխաներ ունենան, ավտոմեքենա կդնեն և մի փոքրիկ, տնտեսական պայմաններին հարմար, ագարակ հեռուստացույցով։ Եվ լավ կլիներ, եթե այս ամենն իրա-



կանացնեին։ Սարսափելի էր։ Ինքը՝ Ժիլը, որ ընդունակ էր հասնելու ամեն տեսակի ծայրահեղության, ամեն մի ճամփորդություն տենչալի էր նրա համար, ինքը՝ երիտասարդ Ժիլը, քիչ էր մնում կորսչան մատներ կյանքը՝ մի կողմից շեֆի, մյուս կողմից սիրուհու միջև, որոնք երկուսով էլ դատապարտում են իրեն։ Է՞, ինչ արած, այլևս չէր ուզում դատապարտվել, ո՞չ ներման արժանանալ, ոչ էլ պարփակվել որևէ սիստեմի մեջ, լինի մասնագիտական թե՝ զգացմունքային։ Նա ուզում էր մենակ ու ազատ լինել, ինչպես առաջ։ Ինչպես նախկինում, երիտասարդ շան նման։ Նա հիմա ուղղակի շշից էր խմում, իր կատաղությունն էր համտեսում։ Ա՜, նրանց թվում է, թե ինքը հիմա դասամիջոցից զրկված, պատժված բարի դպրոցականի նման նստել է ու տեսրակի սխալներն է ուղղում, ա՜, կարծում են թե հիմա տուն է վերադառնալու իր հավատարիմ ու օրինական սիրուհու մոտ, դե՜ լավ, հիմա կտեսնեն։ Վերցրեց անձրևանոցն ու դուրս եկավ բոլոր լույսերը վառ թողնելով։ Հուշակավոր ընթերցողը թող վճարեր իր գնահատականի համար։

Արթնացավ կեսօրին անծանոթ անկողնու մեջ, ավելի ճիշտ շատ ծանոթ պոռնկատան անկողնու մեջ։ Թխահեր գիրուկ մի աղջիկ խոմփացնում էր իր կողքին։ Ազոտ կերպով վերհիշեց Մոնմարտրի կաբարեները, տուրուդմփոցը, ոստիկանի գլուխը, փառք աստծո, այդ հիմարությունները կատարել էր Սենայի աջ ափին։ Նույնիսկ գլուխը չէր ցավում, միայն ծարավից կոկորդն էր չորացել։ Վեր կացավ, էմալապատ լվացարանից, որ շքեղորեն զարդարում էր սենյակը, մի լիտրից ավելի ջուր խմեց։ Հետո գնաց լուսամուտի մոտ, այն բացվում էր անծանոթ փողոցի վրա։ Անձայն հառաչեց։ Ինչե՞ր էր արել արդյոք։ Ցնցեց աղջկան, վերջինս գոմռաց, կիսով չափ բաց արեց աչքերը՝ նայելով նրան նույնքան զարմացած, որքան՝ Ժիլը իրեն։ Իրոք տգեղ աղջիկ էր։

— Հե՞յ, դու՜...— ասաց նա,— ի՞նչ էիր ուզում։

— Որտե՞ղ ենք։

— Պողոտաների մոտ։ Դու ինձ հինգ հազարանոց ես պարտք, նունուշիկ։

— Ի՞նչ եմ արել։

— Չգիտեմ։ Դու գիրկս ընկար, ժամը հինգ անց կեսն էր։ Քեզ պառկեցրի և գիշերը բարի։ Առաջ ինչ եղավ, չգիտեմ։

Ժիլն արագ էր հագնվում։ Դրամի արժեթուղթը դրեց աղջկա անկողնու վրա և գնաց դեպի դուռը։

— Ցտեսություն, ծերուկ,— ասաց աղջիկը։

— Ցտեսություն։

Արևը փայլում էր երկնքում, Ժիլն անցնում էր Իտալական պողոտայով։ Նաթալի՜, Նաթալի՜, որտե՞ղ էր Նաթալին այս ժամին։ Գուցե դեռ գործակալությունում էր, ո՜չ, երևի սովորության համաձայն այստեղ մոտերքում ճաշում է։ Տաքսի նստեց դատարկ գլխով։ Պետք է տեսներ նրան և վերջ։ Բայց գործակալությունը փակ էր, ոչ էլ կից ռեստորանում էր։ Արդեն գժվում էր։ Տաքսին բաց չէր թողել և պատահաբար տվեց տան հասցեն։ Անաղմուկ բացեց դուռը, անշարժացավ միջանցքում։ Նաթալին հանգիստ նստած էր բազկաթոռի մեջ։ Ժիլն թվաց, թե շատ հին ու շատ հիմար տեսարան է կրկնվում. անառակ ամուսնու վերադարձը զեխության մեջ անցկացրած գիշերից հետո։

— Ես հարբել էի,— ասաց նա։

Նաթալին չպատասխանեց։ Ժիլը նկատեց նրա աչքերի տակ գծագրված կապույտ երիզները։ Քանի՞ տարեկան կլիներ նա։ Հագել էր կարճ ու նեղ սև հագուստը, կապել էր զարդեղենները, երևի ամբողջ գիշեր անշարժ դիրքով նստած է մնացել այս բազկաթոռի մեջ։

— Գնացի գործակալություն,— շարունակեց Ժիլը,— այնտեղ չէիր... ես... ես շատ եմ ղղջում արածիս համար, Նաթալի։ Անհանգստացա՞ր։

Էշությունները էր դուրս տալիս, բայց իսկապես միայն այդ էր մնում անելու։ Գոնե թեթևացած էր զգում իրեն։ Հիմա, երբ հաշվի էր նստում իր հետ, հիշեց, թե որքան էր մտահոգվել տաքսիի մեջ, վախենալով այլևս չդտնել նրան։ Բայց նա այստեղ էր, ժպտում էր համարյա։

— Անհանգստանա՞լ,— ասաց նա,— ինչու՞։

Ժիլը մոտեցավ նրան, այդ ժամանակ միայն Նաթալին վեր կացավ, նայեց աչքերի մեջ հետաքրքիր հայացքով, համարյա խարդավանական։ Հետո ամբողջ ուժով երկու անգամ ապտակեց։ Որից հետո գնաց դեպի խոհանոց։



— Սուրճ եմ պատրաստելու,— հանդարտ ձայնով ասաց նա։

Ժիլը չէր շարժվում։ Նա բառիս բուն իմաստով ոչինչ չէր զգում, բայց այտերը ցավում էին, շատ ուժեղ էր հարվածել։ Ի վերջո գնաց խոհանոցի կողմը, հենվեց դռանը։ Նաթալին մեծ հետաքրքրությամբ հետևում էր սուրճին։

— Գարնիեն մինչև ժամը երեքը մնաց,— նույն հանգստությամբ շարունակեց Նաթալին,— զանգահարեց խմբագրություն, հետո՝ Ակումը։ Այնտեղ չէիր։ Դրանից հետո զանգ տվեց ծանին, նա էլ ասաց, որ նման բաներ անելու սովոր ես։ Բավական տարօրինակ է, բայց մեզ հանգստացրեց նրա ասածը։

Սուր ծաղր էր հնչում նրա ձայնի մեջ։

— Եվ քանի որ չգիտեր, թե կից լսափողից լսում եմ իրեն, Գարնիեն նույնիսկ ասաց խորհուրդ տալ ինձ նման պատկերների վարժվելու։ Դրա կարիքը կունենամ անպայման։

— Բավակա՞ն է,— ասաց Ժիլը։

— Ես քեզ երկու բոպեում բացատրում եմ տասներկու ժամից բաղկացած գիշերվա դեպքը, չափազանցություն չէ։

— Բոլորն էլ կարող են մի կամ երկու անգամ հարբել։

— Բոլորն էլ կարող են զանգ տալ ու ասել. «Հարբում եմ, հանգիստ քնիր»։ Բայց պատկերացնում եմ, թե ինչպես կփչացներ ամբողջ հաճույքդ։

«Ամեն դեպքում իրավացի է,— մտածեց Ժիլը,— իմ հանցանքի գաղափարը ինձ նետեց այս գիշերվա մեջ»։

— Ահա և սուրճը,— ասաց Նաթալին,— այլևս ոչ մի բանի կարիք չունե՞ս, ամեն ինչ ունեցա՞ր։ Հիմարություններով լի գիշեր, սիրուհուդ կողմից պատրաստված տեսարան, երկու ապտակ, մի բաժակ սուրճ։ Իոբոտի կերպարանքդ ամբողջակա՞ն է։ Դե լավ, գնում եմ գործակալություն։

Արագ հագավ վերարկուն և դուրս եկավ։ Ժիլը մի պահ անշարժացավ, խմեց սուրճը, բաց արեց լրագիրը։ Բայց չէր կարդում, ո՜չ խանդ, ոչ էլ զայրույթ էր առաջացրել Նաթալիի մոտ։ Անհանգստություն նախ և առաջ, և արհամարհանք

հանք։ Հնոտիոսը գնաց, և Ժիլը նեռավեց լսափողը վերցնելու։ Երևի կոպտության համար Նաթալին զղջում է։

— Դե ինչ, ծերուկ,— լսվեց Ժանի ձայնը,— կրկնվո՞ւմ են հիմարությունները։

— Այո՛,— ասաց Ժիլը։

— Մենա՞կ ես։

— Այո՛։

Ժանի ձայնն ուրախ էր, մեղմակից։ Բայց ինչ-որ բան ստիպում էր Ժիլին չենթարկվել այդ ձայնին և նրա պահանջներին։

— Վերադարձդ ինչո՞վ վերջացավ։ Վա՞տ։

— Երկու ապտակ,— ասաց Ժիլը, երբ Ժանն սկսեց ծիծաղել, նա հասկացավ, որ համենայն դեպս ենթարկվել էր։

## 8

Հիմա արդեն Ժիլը գիտեր, որ Նաթալիի և իր միջև ճեղքվածք է առաջացել։ Բուն պատճառն անհայտ էր... Երևի կուզենար, որ Նաթալին խանդի տեսարան սարքեր, երևի, առանց զգալու, կարիք ուներ, որ նա ցածրանար կամ միջակություն դառնար և դրանով հավասարվեր իրեն։ Արդյո՞ք այդ գիշերվա հարբածությունը, որ զրգռված մարդու համար ընդհանրապես հասարակ արարք է, բացահայտել էր նրանց դեմքերը՝ Նաթալիինը բարձր դասելով իրենից, թե՞ նրանց վեցամյա համատեղ կյանքի անխուսափելի պայմանն էր դա։ Իսկապե՞ս Նաթալին իրենից ավելի լավն էր։ Հնարավո՞ր է, որ մեկը մյուսից «ավելի լավը» լինի այն դեպքում, երբ սիրային կապ գոյություն ունի, երբ բարոյականության վերաբերյալ բոլոր հարցերը փոխարինված են զգացմունքներով։ Համենայն դեպս, Նաթալին առաջվանից ավելի քիչ էր ծիծաղում, նիհարում էր, և հաճախ զուտ ֆիզիկական հարաբերությունների ժամանակ նրանց մոտ իշխում էր խելահեղությունը, բուռն կանխամտածվածությունը, կարծես ամեն մեկն ուզում էր հագեցնել և միաժամանակ իրեն ենթարկել մյուսին, կարծես մյուսի հաճույքը այն հրաշալի նվիրատվությունը չլիներ, որ մինչև հիմա ընդունված էր նրանց մոտ, այլ՝ դրա ապացույցը։ Սակայն ի՞նչ կարող էին անել այդ բացա-



կանությունները, հեծեծյունները, ցնցումները, ի՞նչ կարող էին անել իրար այնքան լավ ձուլված այդ մարմինները, Նաթալիի որոշ տեսակետների առկայության և Ժիլի որոշ տեսակետների բացակայության պայմաններում։ Նրանք ոչինչ չէին կարող անել, անհրաժեշտաբար և երբեք չբավարարվելով, հաճախ հաճույքի մեջ միանում էին իրար, սակայն իդուր։ Ժիլը երբեք այդպիսի ուժգնությամբ ֆիզիկապես չէր սիրահարվել որևէ մեկին և երբեք այդպիսի փոքրիկ ուրախություն չէր ապրել դրա համար։

Մի օր Նաթալին պետք է Լիմոժ գնար։ Մորաքույր Մարիլը՝ նա, որ ամեն ամիս հարյուր հազար ֆրանկ էր ուղարկում, մահամերձ էր և ուզում էր Նաթալիին տեսնել։ Վերջինս պետք է իշեներ եղբոր մոտ, մեկ շաբաթ մնար այնտեղ, և իսկույն վերադառնար։ Ժիլը Նաթալիին ճանապարհեց կայարան, այն նույն Առստերլիցի կայարանը, որ ութ ամիս առաջ տեսել էր Ժիլին դժբախտ վիճակում մեկնելիս, տեսել էր թե ինչպես էր անբիտակից վերադարձել և կրկին գնացել սիրահարված։ Հիմա չէր կարող որոշել, թե այդ ճամփորդող ժիլերից որին է նախընտրում։ Բայց ոչ, կարող էր ասել. սիրահարված մարդն էր, որ մայիս ամսին իր սիրուն վստահ և չիմանալով, թե ինչ է սպասվում իրեն, գնացքի լուսամուտից տեսել էր Լուարայի, արվարձանների, ամպերի երթը, գիշերն իր բազմապիսի անակնկալներով, կառամատույցում ճաշկերույթից փախած իր զիրկը նետվող Նաթալիին։ Նա սիրում էր իրենց սիրավեպը, եթե նույնիսկ դուր չէր գալիս երբեմն իրենց համատեղ կյանքը։ Նա մինչև անգամ սկսում էր սիրել այն նիհար ու տխուր տղային, որի պատճառով այնքան տանջվել էր, սիրում էր իրենով տարված այս կրքոտ, խելացար, բուռն և խիստ պարկեշտ կնոջը։ Ա՜խ, Լիմուզենի դաշտերը, արևի տակ վառվող խոտը, չինչ դեսի հատակը, իր ծոծրակին հանգչող Նաթալիի ձեռքը, իրենց առաջին, մոայլ անկողինը, պանդոկապանուհու հայացքը, ձեղնահարկի շոգ սենյակը և Ֆլորանի «Պորտո-Ֆիլիպը»... Բայց ինչո՞ւ էին թափառում այսպես կառամատույցի վրա երկու մոլորված կինդանիների նման, չիմանալով ինչ ասել իրար, ուղղելով իրենց ժամացույցները։ Հիմար ամսագրեր գնելով։ Ի՞նչ էր պատահել։ Ժիլը տեսնում էր Նաթալիի կիսադեմը, վերհիշում էր Փարիզում անցկացրած

Երբեք ամիսները և չգիտեր ինչ մտածեր։ Նա չէր ուզում, որ Նաթալին մեկներ, բայց եթե որևէ արտակարգ պատճառով, սահմանք ինչ-որ տեղ՝ Օռլեանի մոտ, գնացքի գծերը խաթարված լինեին, Նաթալին ստիպված լիներ տուն վերադառնալ, շատ կկատաղեր։ Այդ օրը պետք է ճաշեր Ժանի և մյուս ընկերների հետ։ Ընդհանրապես ոչ մի բան և ոչ մեկը չէր կարող նրան այնքան ոգևորել, որքան այս կինը, և ուզում էր, որ շուտ գնա, գնացքը ժամանակից շուտ շարժվի։ Խենթ էր։ Նրա մեջ բուն էր դրել դժբախտ մի խելագար, որին ամենից շատ մտահոգում էր անօգուտ ազատության գաղափարը։

Նա երկար համբուրեց Նաթալիին, սպասեց մինչև անհետացավ գնացքի մի քանի ցրում։ Ժիլի առջև փռվել էր լուսնի պատակերի նման ճաքճքած հսկայական քաղաքը։ Այո՛, Նաթալին իրավունք ուներ, երբ ասում էր, որ Ժիլն ամբողջովին հարմարվել է ժամանակներին։

— Միա՛կ բանը, որ սիրում ես,— ասում էր նա,— հավակնում ես արհամարհել այս դարի բնական հիմարությունը, նրա խաբկանքները, կոպտությունը։ Բայց այդ նույն դարի մեջ զգում ես քեզ այնպես, ինչպես ձուկը չրում։ Միայն այդտեղ ես կարողանում լավ լողալ, հոսանքին հակառակ ուղղությամբ, անշուշտ և ճարպկորեն։ Անչատում ես հեռատացույցը, ռադիոընդունիչը, որովհետև քեզ այդպես է դուր գալիս։ Հենց սա էլ քեզ տարբերում է ուրիշներից։

— Իսկ դո՞ւ,— ասում էր Ժիլը,—... ո՞ր դարը կնախընտրեիր։

— Ե՞ս, այն դարը, որտեղ կարելի է հիանալ,— պատասխանում էր նա։

Հիանա՞լ... Կինը իրավունք չուներ այդպես արտահայտվելու։ Կինը ամբողջ հոգով պետք է հիանա իր հետ ապրող տղամարդով, որպեսզի նման մանկական մտքերը չխճողվեն նրա գլխում։

Ժիլը որոշ ժամանակ անց միացավ ընկերներին և արժանացավ հաղթական, բայց զուսպ ընդունելության, այնպիսի ընդունելության, որ համենայն դեպս կազմակերպում են ազատագրված մարդու պատվին։ «Ահա Ժիլը», բացականչեց նրանցից մեկը, և բոլորը միասին սկսեցին ծիծաղել, երբ խոնարհվեց նրանց առջև ձեռքը կրծքին պահած։ Անկասկած,



երբեք նույն ձայնով չէին բացականչի. «Ահա Ժիլը և Նաթալին»։ Բայց նա չէր նեղանում նրանցից։ Վայելքների վարժված մարդիկ առաջին հերթին սովորությամբ են ապրում, իսկ Ժիլը արդեն տասնհինգ տարի մենակության դերում էր։ Միայնակ և հաճախ ինչ-որ կնոջ ընկերակցությամբ, բայց այնպիսի կին, որից հնարավոր էր հեռանալ թողնելով սեղանի մոտ կամ հանձնելով ընկերոջը, այնպիսի կին, ինչպիսին, օրինակ էլոիզն էր, որ ճանաչում էր բոլորին, և ինքն ուրախ-զվարթ կարող էր բաժանվել նրանից, վստահ լինելով, որ առաջին պատահական կատվիկը կամ ընկերուհին նրա սեղանին տեղ կունենար։ Բայց հիմա նրա կյանքում տեղ էր գրավել Նաթալին, որ այս բոպեին անցնում էր Օռլեանով։

Խաղաղ երեկո անցկացրեց, քիչ խմեց և կեսգիշերին մոտ մենակ վերադարձավ տուն։ Պիեռի հեռախոսի համարն ուներ, վերադառնալուց հետո զանգահարեց։ Նաթալին անմիջապես պատասխանեց, իսկ Ժիլը նրբորեն բացատրեց. իրենց տանն էր, Մոցարտի երաժշտությունն էր լսում, իսկ անկողինը ասաց նրա շատ մեծ էր։ Մի քիչ հնարում էր և հիացած էր իրենով, որ լավ էր պահել իրեն։

— Ճանապարհը շատ երկար էր,— ասաց Նաթալին,— չեմ սիրում այդ երթուղին։ Լա՞վ ես։

Ձայնը հեռուներից էր հասնում, գիծը վատ էր աշխատում, Ժիլը բառեր էր փնտրում։ Եթե որևէ էշություն արած լիներ, ավելի շատ բան կունենար ասելու։ Սուտը հնարամիտ է դարձնում մարդուն, երևակայող։

— Քնելու եմ հիմա,— ծուլորեն ավելացրեց նա,— վաղը շատ գործ ունեմ։ Քո մասին եմ մտածում, դիտե՞ս։

— Ես էլ։ Բարի քուն, սիրելիս։

Նաթալին լսափողը դրեց տեղը։ Կարծես տասը տարվա ամուսիններ լինեին։ Ժիլը հորանջելով հանեց փողկապը, նայեց հայելու մեջ։ Հիմա ողջամտորեն կպառկի անկողնու վրա, ողջամտորեն դեղեցիկ երաժշտություն կլսի (այս ուշ ժամին հեշտ է իրագործել նման որոշումներ, նա մի փոքր շտապել էր Նաթալիի հետ Մոցարտի մասին խոսելով), և երեխայի պես կքնի, հաջորդ օրը իրեն շատ առույգ կզգա, եռանդով կկպնի աշխատանքի, գործնական ողջամտորեն, սպասելով իր սիրեցյալի վերադարձին։ Բայց հայելու միջից արտացոլումը նա-

յում էր իրեն և տեսնում էր դիմացը կանգնած ժպտացող օտարականին, նա տեսնում էր իրեն իսկապես ժպտալիս։ Վերցրեց բաճկոնը և դուրը շրխկացնելով դուրս եկավ տնից։

— Այդպես էլ մտածում էինք...

Նստած էր Ակումբում, ժանը ծիծաղում էր, այնքան չերմ մթնոլորտ էր ընկերների շրջապատում, իսկական և կեղծ ընկերների, անշուշտ, բայց ուրախ տղաներ էին, ամեն ինչի պատրաստ, ընկերներ, որոնցից համենայն դեպս հեռացել էր մի կնոջ պատճառով։ Ճիշտ չէր արածը. նման մարդիկ կայուն հավատարակշռություն չունեն, նրանք երկար ժամանակով չպետք է բացակայեն երեկոյան դասերից, թե չէ կարող են ապակողմնորոշվել։ Նա շշնջաց Ժանի ականջին.

— Իսկապես ուզում էի վերադառնալ, հետո հանկարծ տանն զգացի, որ չեմ կարող քնել։ Չեմ սիրում մենակ քնել։

— Ինչ դժվար հարց է որ,— ասաց Ժանի ընկերուհին։

Որքան զուհիկ ձևով նա արտահայտվեց այդ օրը։ Ժիլը միշտ այն կարծիքին էր, որ նա տխմար կին է, բայց զուհիկ՝ երբեք։ Ժանը աչքերն անգամ չէր թարթել, և Ժիլը մտածեց, որ իր ընկերը պատկերացում էր կազմել իր մասին։ Իբր թե Նաթալին էր ներարկել իրեն լավ կամ վատ արարքները դատել, իսկ այդ մասին մտածելը հոգնեցուցիչ է։

— Իսկապես, կարելի է փոքրիկ Քաթրինի մասին մտածել,— ասաց նա։

Անուշիկ, շիկահեր աղջիկ էր և միշտ փորձել էր Ժիլի ականջին հասցնել, որ դուր է գալիս իրեն, այդ բոպեին անցնում էր իրենց կողքով։

— Խորհուրդ չեմ տա,— ասաց Ժանը,— կալաղակի պես շատախոս է, Նաթալին կիմանա։

Նա կարծես վճռական մարդու տոնով հանցանք գործած գոլրոցականի հետ էր խոսում։ Բացի այդ, Ժիլը չէր կողմնորոշվում, այդ նախազգուշությունը Նաթալիին չվշտացնելու համա՞ր էր ասված, թե՞ ուզում էր նրանից իր կախվածությունը շեշտած լինել։

— Բավականին հասուն մարդ եմ,— առանց մտածելու ասաց նա,— և բոլոր դեպքերում ինչ-որ Քաթրին չի կարող Նաթալիի և իմ միջև եղած կապը խզել։



— Այնքան էլ հավատացած չեմ,— հանդիստ ասաց Ժանը,— բո Նաթալին կայուն խառնվածքի տեր կին է։

Դեմքին բարեհամբույր ժպիտ էր խաղում։ Ժիլը խոշտանգող հայացք նետեց նրա վրա, բայց ինչպես բոլոր քնող հայացքները, սա նույնպես ոչինչ չհայտնաբերեց նրա մոտ։ Միայն պատահական հայացքներն են ընդունակ ճշմարտությունը որսալու։ Իսկապես, ինչ-որ բան տանջում էր նրան։ Երբ Նաթալին այստեղ էր, կարծես կապանքների մեջ լիներ, երբ մոտը չէր, վատթար վիճակում էր. երևի այս վիճակն էլ կոչվում է «կյանքը փչացնել»։ Իր աչքերի հետ խայտաձևվող բոլոր հայացքներում, ամեն մի խոսակցության ժամանակ թվում էր նրան, թե իր մասին զրուցում են որպես «բիրեղ մարդ», որ սիրահարված է մի կնոջ և այս պիշեր մենակ է անցկացնելու, կամ «ինչ-որ մի կին խեղճ մարդու քթից բռնած ման է տալիս, իսկ ինքն հիմա ազատ կյանք է վարում»։ (Այդ երկու դերերն էլ իրեն չէին վերաբերում)։ Եթե սեղանի մոտ անշարժ նստած մնար, շատ տխուր տեսք էր ընդունելու։ Իսկ եթե նեռվեր Քաթրինի վրա՝ խիստ վիրավորական էր լինելու Նաթալիի համար, իր համար նույնպես։ Հառաչեց, խմիչքի հաշիվը փակեց, դուրս վազեցել էր մի ժամ։

## 9

Միայն մի ժամ չէր վազեցել։ Հաջորդ օրը արթնանալուց անմիջապես հետո Նաթալիին հեռաձայնելով զգաց, որ այդպես է։

— Երեկ իրիկուն, երբ զանգ տվիր, անմիջապես հետո հիշեցի, որ կապույտ կոստյումդ բիմիական մաքրման եմ հանձնել և պատրաստ է,— ասաց Նաթալին,— զանգ տվի, ոչ ոք չպատասխանեց։

Իհարկե, ոչ ոք չէր պատասխանի, նրա հետ խոսելուց անմիջապես հետո շարաճճի երեխայի պես դուրս էր եկել անից։ Դուրս էր եկել, այնինչ ոչ մի բան չէր արել, բայց կհավատա՞ր։ Ճշմարտությունն ու սուտը իրար խառնված հանդես էին գալիս իր դեմ։ Եվ իսկապես, այդ պահին նա իրոք որոշել էր իրենց տանը մնալ։

— Հավատացած էի, որ կգնաս ընկերներիդ մոտ,— լսվեց

Նաթալիի ձայնը,— բայց ո՞ւմ էին պետք այդ օլիններդ։ Բե՞ռ եմ դարձել քեզ համար։ Ի՞նչ կարիք կար խոսելու տան մասին, շատ մեծ անկողնու, երաժշտության մասին։ Ինչի՞ համար, ծի՛լ։

— Ես «ուզո՞ւմ էի» մնալ տանը,— ասաց նա,— երբ քեզ հետ խոսում էի։ Հետո միանգամից որոշեցի դուրս գալ։

— Մեկ բոպե ա՞նց։

Կեղծ էր հնչում այս ամենը, ճշմարտությունն անասելիորեն կեղծ էր հնչում, ինչ կարող էր անել։ Այնուամենայնիվ շարունակեց խոսել.

— Ակումբում ժանի հետ մի-մի բաժակ խմեցինք և մեկ ժամից վերադարձա։

«Բավական չէ, որ քո պատճառով ոչ մի բան չարեցի այդ հրաշալի Քաթրինի հետ, բավական չէ, որ սուրբի պես պահեցի ինձ, այնուամենայնիվ դարձյալ ցավ պատճառեցի քեզ, իսկ դու կարծում ես ստում եմ։ Ինչ արածս։ Կատաղած էր Ժիլը, հասկանում էր Նաթալիին։ Հավատում էր ինքն իրեն և համոզված էր իր ստի մեջ։

— Հարցը այն չէ, թե ինչ ես անում, կամ ինչ չես անում,— ասաց Նաթալին,— հարցը այն է, թե ի՞նչ ես ասում, թե ի՞նչ ես պարտադրում քեզ ասելու։

Ժիլը հառաչեց, ծխախոտ վառեց, մատները խրեց մազերի մեջ։

— Հետո կբացատրեմ,— ասաց նա,— ինչպե՞ս է մորաքույրդ։

— Վա՜տ։ Մեկ-երկու օրից կմահանա։ Մի քիչ հետո Պիեռի հետ գնալու եմ այնտեղ։

Իսկապես, գոյություն ուներ նաև Պիեռ։ Նա երևի նախորդ օրը տեսել է քրոջը հեռախոսը ձեռքին քնքուշ ձայնով պատասխաններ տալիս, հետո լսել նրա բացականչությունը. «Վա՜յ, քիմիական մաքրումը», և նորից զանգ տալուց և անպատասխան մնալուց հետո դեմքը հանգիստ շրջել է իր կողմը։ Շատ հաճախ կարելի է մարդկանց ճշտացնել ոչ թե ուղղակիորեն, այլ նրանց մտերիմների միջոցով։ Այդպիսի ժամանակ տանջվողի հպարտությունը թույլ չի տալիս տանջել դիմացինին, սկսում է ստել, հորինել որևէ բան, ցրվել, արտաքուստ ձևացնել, թե մոռացել է իրեն այնքան մոտ գտնվող



հեռախոսը։ Եթե Նաթալին մենակ լիներ, դուցե կես ժամը մեկ զանգ տար և երկրորդ զանգից հետո տանը կգտներ իրեն։ Ե՛, մի խոսքով, կյանքը հիմարություն է։

— Նաթալի,— ասաց նա,— ես քեզ սիրում եմ։

— Ես էլ,— պատասխանեց նա, բայց ձայնի մեջ ուրախություն չէր զգացվում, ավելի շուտ, համակերպված հավատք կար։

Նաթալին լսափողը կախեց։ Մի շաբաթից հետո Ժիլը կբացատրեր նրան ամեն ինչ, կգրկեր, կզգար Նաթալիի տաք, աշխույժ, ամբողջովին իրեն տրվող մարմինը այս ծանր, փակ դեմքի փոխարեն, հեռախոսի օգնությամբ ստեղծված այս կապի փոխարեն, տխուր նախադասությունների փոխարեն։ Ինչ վերաբերում է մյուսներին (նա որոշապես չդիտեր էլ, թե ովքեր են այդ «մյուսները», ավելի շուտ պատկերացնում էր նրանց որպես փարիզյան սպառնացող և բզզացող մի պարս), նրանք էլ կտեսնեին։ Կամ ավելի ճիշտ չէին տեսնի։ Այլևս չէին տեսնելու իրեն նախ մի ամբողջ շաբաթ, հետո Նաթալիի վերադարձից հետո իրենց երկուսին՝ բոլորովին չէին տեսնելու։ Նրանք կմնային տանը կամ կգնային թատրոն, որովհետև նա սիրում էր ներկայացումներ դիտել, կամ համերգ լսելու, որովհետև սիրում է երաժշտություն։ Ինչ խոսք, ինքը նախընտրում է լավ ձայնապնակ ունենալ, փռվել հատակին, գորգի վրա, բայց անելու էր այն ամենը, ինչ կարելի էր անել նրա համար։ Այս մտքից ուժ ստացած վեր կացավ երգելով, ժամանակից շուտ գնաց խմբագրություն, լավ աշխատեց։ Սարսափեց, երբ գիշերվա ժամը երեքին իրեն տեսավ նորից Ակումբում՝ նստած անգլիացի մի լրագրողի հետ, ամերիկյան ռասսայական խտրականության հարցի շուրջ վիճաբանելիս։

Տասը օր էր անցել, Նաթալին ժամը տասնմեկին հասավ իրենց սիրելի հարավ-արևմտյան կայարանը։ Գավառից եկող կանանց մի ուրախ ամբոխ անցնում էր նրա առջևից կամ դալիս. ետևից, Նաթալին համարյա չէր տարբերվում նրանցից. հագուստը սովորականից մի փոքր երկար, մետաքսե գլխաչորը մազերի շուրջը կապած, փոքրիկ ճամպրուկը ձեռքին։ Բացի գլխի հպարտ կեցվածքից (մոտենալուց հետո կարելի էր միայն նկատել), բացի գեղեցկությունից, նա շատ նման էր այդ կանանց։ Ժիլն այնպիսիների հետ էր գործ ունեցել,

որոնց ծառաները շնիկներին ծաղկեփնջերի պես պահած գնում էին նրանց ետևից, իսկ ինքը դրա մեջ ոչ մի արտակարգ բան չէր տեսնում։ Բայց, այնուամենայնիվ, այս գորշ ու սխրուր կայարանում (անձրևում էր) կնախընտրեր իր սիրուհուն տեսնել որպես պայծառագույն մի բիծ, որպես անսովոր մի իր, որպես հրե բոց։ Նաթալիին սեղմեց կրծքին։ Աչքերի տակ կապույտ երիզներ էին գոյացել, սգո զգեստ էր կրում, դե՛, իհարկե, ինչ հիմարն էր։

— Ա՜, գո՞ւ ես,— ասաց Նաթալիին և գիրկն ընկած անշարժացավ։ Բոլորը նրանց էին նայում։ Ժիլը մի փոքր անհարմար էր զգում, նրանք տասներկու տարեկան չէին, որ կայարանում իրենց նման ազատություն թույլ տային համենայն դեպս։ Ժիլը փորձեց կատակել.

— Իսկ ո՞վ կալող էր լինել, քո կարծիքով։

— Դո՜ւ,— ասաց նա,— միայն դո՜ւ։

Նաթալիին բարձրացրել էր գլուխը, և Ժիլն ուշադիր նայում էր նրան։ Կարծես դեմքն ուռած էր, լավ չէր շպարված, Ժիլը մտածում էր, որ նրան այդպես զննելը նույնքան նորմալ երևույթ է, որքան նրա վերադարձը իր մոտ։ Ինքը գնացել էր կայարան սիրուհուն, դե համարյա կնոջը դիմավորելու, և հին սիրահարի պես նայում էր նրան։ Թևանցուկ արեց Նաթալիին։

— Տապակած հավ եմ գնել, տանը կճաշենք։ Թաղումից անմիջապես հետո՞ մեկնեցիր։

— Այո՛, իհարկե։ Դիտե՞ս, լիմոժն այնքան էլ հաճելի չէր։

— Պարկեշտ մարդիկ փողոցում քարկոծո՞ւմ էին քեզ։

— Դե ո՛չ,— ասաց Նաթալիին,— նրանք գիտեն, որ մարդու մարմինը փափուկ է։ Նրանք հիմա թերթեր են կարդում։

Նաթալիին մտացիր հայացքով նայեց սենյակի անկարգությանը, ուր Ժիլը կայարան գնալուց առաջ, երկու ժամվա ընթացքում հասցրել էր ամեն ինչ իրար խառնել, մտավ լողասենյակ, հարդարվեց, այդ ընթացքում Ժիլը հայհոյելով դժվարությամբ հավն էր կտրտում։ Սուրճից հետո մտան հյուրասենյակ, և Ժիլն զգուշությամբ միացրեց Հայդնի վերջերս գնած նոր ձայնագրությունը։

— Դե, ի՞նչ,— ասաց Նաթալիին,— ի՞նչ կա չկա Փարիզում։

Խոսում էր ծուլորեն, աչքերը փակ, կարծես նախապես



լսելով պատասխանը, որ Փարիզում իրոք ոչ մի բան չէր կարող տեղի ունենալ։

— Կարևոր նորություն չկա,— ասաց Ժիլը,— կարդացե՞լ ես օրվա թերթերը։

— Իսկ դո՞ւ։

Ձայնը նույնն էր։ Ժիլը ժպտաց։

— Ես էլ չեմ կարդացել։ Շատ եմ աշխատել։ Մի քիչ խմիչքի չափն անց եմ կացրել, երևի քո բացակայության պատճառով, և այս ձայնապնակն եմ դնել։

Ոչ մի բառ չավելացրեց այն մասին, որ, ի վերջո, շատ հարբած վիճակում դեղեցկուհի Քաթրինին ուղեկցել էր մինչև տուն և կատարյալ ձախողության էր մատնվել։ Ամեն դեպքում, առաջին անգամ լինելով, այդ աղջիկը բերանը չէր բացել։ Վերջինս ավելի շատ էր շահագրգռված թաքցնելու Ժիլի չնախատեսված անկարողությունը, իրեն քաղ ծանոթ էին այդ աղջկա բոլոր մանր քմահաճույքները։ Ժիլը մեկնեց ձեռքը, Նաթալիին բռնեց։

— Իսկ գո՞ւ։ Տեսա՞ր Ֆրանսուային։

— Այո՛,— ասաց նա,— իհարկե։ Եկավ Պիեռի մոտ ինձ տեսնելու։

— Ինչո՞ւ։

— Ուզում էր վերադառնամ։ Կարծում եմ, նեղվում է։

— Գավառը փոխվել է,— ասաց Ժիլը։

Ինքն էլ չգիտեր ինչու է վրդովված։ Բոլոր տղամարդիկ ուզում էին այս կնոջը խլել իրենից և մի վայրկյան անգամ չէին ուզում պատկերացնել, որ այս կինը իրեն է սիրում, որ կարող է իրեն սիրել, որ ինքը նրա կյանքում բացահայտ հաղվագեպություն է։

— Իսկ դու ի՞նչ ասացիր նրան։

— Ասացի, ո՛չ։ Ասացի, որ սիրում եմ քեզ։ Որ ցավում եմ, Պիեռն էլ էր ուզում մնամ։

Մի տեսակ ջղայնություն էր բարձրանում Ժիլի ներսում։ Իհարկե, նա երեխայի պես էր պահել իրեն, ազատ երիտասարդ էր զգացել այս տասն օրվա ընթացքում։ Բայց այս ամենից ի՞նչ էր բխել։ Երկու ժամ անցկացրել էր մի փոքրիկ անառակի հետ, իսկ մնացած գիշերներն անընդհատ խոսել էր խմիչքից և ինքնաբավությունից սպառված հոգիների հետ։

Այդ նույն ժամանակամիջոցին Նաթալին հանդիպել էր ծանոթ, հուզախառով, հպարտությունը միանգամից կորցրած մարդկանց հետ, նա ապրել էր, Աննա Կարենինա էր խաղացել, մյուսն հակառակ դերում հանդես գալով։ Ղզճի խայթ էր զգացել, մինչև անգամ ափսոսանք, մի խոսքով զգացմունքներով էր ապրել։

— Նույնիսկ չգիտեմ, թե ինչու եմ այս ամենի մասին պատմում քեզ,— ասաց Նաթալին,— այնքան հոգնած եմ։ Ուրեմն գո՞հ ես աշխատանքիցդ։

Նաթալին պատրաստվում է գնահատական նշանակել իրեն, ինչ է։ Ժիլը չէր հասկանում, թե այդ ինչ խանդ, ինչ կատաղություն էր ծառս լինում իր մեջ։ Բայց վերջապես վերադարձել էր։ Ամեն ինչից հրաժարվել էր իր պատճառով։ Նա այստեղ էր։ Ինչի՞ց էր վախենում։

— Թաղման ժամանակ բրոշդ ու Ֆլորանին տեսա։ Գանգատվում է քույրդ, ոչ մի լուր չունի քեզնից։ Կարող էիր մի նամակ գրել նրանց։

— Վաղը կգրեմ,— ասաց Ժիլը։

Աշխատում էր հանգիստ ձայնով խոսել, հանգիստ պահել դողացող ձեռքերը։ Նույնիսկ ժպտում էր։

— Լավ կանեիր քնեիր,— ասաց նա,— հոգնած ես։ Հիմա ես էլ կգամ։

Հենց որ մենակ մնաց, Ժիլը շիշը քաշեց գլուխն ու մի ումպ խմեց, ապիրան այրեց կոկորդը։ Քիչ անց նա սիրախոսելու էր այդ կատարյալ կնոջ հետ, այդ կատարյալ սիրուհու հետ, այդ կատարյալ ամեն ինչի հետ։ Վերջ ի վերջո կյանքը իմաստավորված էր։ Մի քիչ հետո նա նույնիսկ կարող է Նաթալիին ասել. «քո կարիքը շատ էի զգում, դիտես» և խաբած չէր լինի։ Բայց դողում էր։

## 10

Իրականում Նաթալին խորտակել էր անցյալի, մանկության, բարեկամների հետ կապված վերջին կամուրջները։ Եղբայրը խորհուրդներով, աղաչանքներով հանել էր նրան հավատարիմությունից, իսկ ամուսինը իր վերջին խոսքն էր ասել. «Եթե հիմա կմնաս, կամ կհեռանաս ընդմիշտ։ Այս



ամենը համառոտ, հակիրճ նախադասություններով հայտնել էր Ժիլին մթության մեջ, և վերջինս ուրախ էր, որ խավարը թաքցնում է արցունքները։ Լիմուզինում բացարձակապես ոչ մեկը չէր վստահում Ժիլին, մինչև իսկ հարազատ քույրը։ Նա հանկարծակի բռնկված համարձակությամբ մի կողմ էր տարել Նաթալիին և հարցրել էր երջանիկ է, թե՝ ոչ, կարծես անհնարին ինչ-որ բանի մասին խոսած լիներ հեռու։ «Այլևս ոչինչ չունեմ այնտեղ անելու»,— ասում էր Նաթալին, և Ժիլը հաճախ հարց էր տալիս իրեն, թե հողին ամուր կպած այդ մարդիկ իրավացի չէի՞ն։ Այնինչ օրերն անցնում էին, ապրիլ ամիսը ծաղկեցնում էր ծառերը, իսկ նրանք ապրում էին ինչպես կարող էին։ Մի առավոտ Ժիլը հաղթական տեսքով մտավ խմբագրություն. նախորդ օրը Հունաստանի վերաբերյալ շատ հաջող հոդված էր գրել, կարդացել էր Նաթալիի մոտ, վերջինս շատ էր ոգևորվել։ Ժիլը դարձել էր ինքնավստահ։ Իսկապես, Ֆերմոնն էլ էր հաստատել, որ լավ է գրված, ինչպես նաև՝ Ժանը, նույնիսկ Գարնիեն, որն իր հոչակավոր հակակրությունից հետո խուսափում էր Ժիլից, շնորհավորել էր նրան։ Խոտացած, խիստ և ճշգրիտ գույներով նկարագրված հոդված էր, այնպիսին, ինչպիսին շաբաթը մեկ անգամ պետք էր իրենց, հայտարարել էր Ֆերմոնը։ Ժիլը կատարյալ երջանիկ էր, խմբագրությունում առավոտյան գործերն ավարտելուց հետո հրավիրեց Ժանին՝ բարեհոգի ու իր հին ընկեր Խանին, միասին ճաշելու Ճաշի ժամանակ խոսեցին թատրոնականությունից, հետո՝ ծուլությամբ համակված, որոշեցին գրեթե կինոնկար դիտել։ Իզուր անցան Շանզելիզեում գտնվող կինոթատրոնի շենքերի առջևով. մեկը տեսել էր այս կինոնկարը, մյուսը՝ այն մեկը։

— Չեմ առաջարկի քեզ մեր տուն գնալ,— ասաց Ժանը,— այսօր Մարթայի ընդունելության օրն է։ Քեզ համար այդպիսի իրադրություն անել չեմ կարող։

— Գնանք ինձ մոտ,— ասաց Ժիլը,— Նաթալին վեցն անց կեսին կվերադառնա։ Եվ հետո լավ կլինի, նորից կիսանենք այդ հունական հարցերի շուրջը։

Ժիլն զգում էր, որ ուղեղը պարզ է գործում, վերազարկված է, նա ուրախ էր, որ երկու ժամ անընդհատ կարող էր Ժանի մոտ բացահայտել մտքերը, որովհետև Ժանը, ինչպես

հայտնի էր իրեն, գիտեր լսել և մեկնաբանել։ Ժիլը բացեց դուռը, առաջարկեց Ժանին նստել, մի-մի բաժակ կալվադոս լցրեց։

— Վաղուց այստեղ չէի եղել,— ասաց Ժանը նստելով։

Ոչ մի հանդիմանական շեշտ չկար նրա ձայնի մեջ, բայց Ժիլը մտածեց, որ իրավունք ուներ։ Առաջներում միշտ հյուրեր է ընդունել, բազկաթոռները դատարկ չեն եղել։ Առաջ... Նաթալիից առաջ։ Թեթևակի ծամածռեց դեմքը։

— Գիտես...

— Իհարկե գիտեմ, ծերուկ,— ասաց Ժանը,— սերը՝ սեր է։ Եվ դրանից ավելի լավ բան չէր կարող կատարվել քեզ հետ։ Հատկապես այնպիսի մեկի հետ, ինչպիսին Նաթալին է։

Նա խոսում էր ամենայն անկեղծությամբ։

— Այո և ոչ,— ասաց Ժիլը և թեքվեց դեպի առաջ։ Զգում էր, որ դարձյալ պրուստյան վերլուծող, ճկուն ուղեղն է գործում։ Մարդ երբեք դավաճան չի համարում իրեն, երբ զգում է, որ խեղճացի է։— Տեսնում ես, երբ ծանոթացա նրա հետ, ես... հիշո՞ւմ ես... կարծես մորթազերծված լինեի։ Ասված գիտեմ ինչու էր այդպես, բայց այդպիսի վիճակում էի։ Նա ինձ փետուրներով պատեց, տաքացրեց, կյանքի վերակոչեց։ Իսկապես այդպես էր։ Բայց հիմա...

— Հիմա ի՞նչ։

— Հիմա բարձը կտրում է շունչս, խեղդում է ինձ։ Այն ամենը ինչ սիրում էի նրա մեջ և սատար էր ինձ, նրա բացառիկ լինելը, ուղղամտությունը, ողջ առաքինությունը... Հիմա այս ամենը շրջվեց նրա դեմ։

— Որովհետև դու ինքդ ես թույլ և անկայուն,— քնքշորեն վրա բերեց Ժանը։

— Եթե ուզում ես, այդպես է։ Գուցե խղճուկ սրիկա եմ։ Բայց պահեր կան, երբ... երբ... ամեն ինչ կտայի, որ նա ինձ չզատեր։ Եվ առաջվա պես մենակ մնայի։

Եթե ճշգրտություն ուզեր մտցնել խոսքի մեջ, պիտի ավելացներ, որ անկարող էր կյանքը պատկերացնել առանց նրա։ Բայց այդ պոռթկումը, այն ինքնաբավ զգացողությունը, որ առաջացել էր հոդվածի հաջողությունից, այդ հարցի շուրջը ծավալված հետաքրքրությունից, հատկապես Ժանի մոտ, նա պահեցին նրան որոշումից։



— Գուցե բացատրիր նրան,— ասաց Ժանը։

Բայց խոսքն ընդհատեց խոսքը։ Ժիլը շրջվեց։ Նաթալին հանդիսատեսներ էր ենթասենյակի և հյուրասենյակի դռների միջև։ Այո, նրա աչքերը սովորականից ավելի էին վառվում։ Այս դուռը փա՞կ էր, երբ մտան տուն։

— Բարի երեկո,— ասաց Ժանը։

Վեր կացավ։ Նա նույնպես զունատվել էր մի փոքր։

— Զրուցո՞ւմ էիք,— ասաց Նաթալին,— գործակալությունը կեսօրից հետո փակվեց, տոհմից օգտվեցի և մի քիչ քնեցի։

— Ես... Դու քնա՞ծ էիր,— հուսահատ տոնով ասաց Ժիլը։

— Հենց նոր արթնացա։ Գնումներ եմ կատարելու, ձեզ մենակ եմ թողնում։

— Բայց մնա,— արագ վրա բերեց Ժիլը,— մնա՛։ Ժանի հետ հենց այն հոդվածի մասին էինք խոսում, որ երեկ կարդացի քեզ մոտ։

— Լավն էր չէ՞,— ասաց Ժանին,— ո՛չ, իսկապես պետք է գուրս գամ։

Ժպտաց և անհետացավ դռների մեջ։ Նրանք դանդաղ-նստեցին իրենց տեղերը։

— Գրողը տանի,— հայհոյեց Ժիլը,— գրողը տանի... ինչ ես կարծում...

— Չեմ կարծում,— ասաց Ժանը,— ինձ թվում է դուրը չեկ էր։ Առանձնապես ոչ մի լուրջ բան չկա։ Այդ բոպեին տացիր, որ ձանձրացել ես։ Ամեն ինչ էլ գիտե այդ բանը։

Լուրջ բան չկա՞։ Նույնիսկ սարսափելիորեն լուրջ էր հարցը։

— Բայց դու չես պատկերացնում,— ճչաց Ժիլը,— բավական է, որ խոսել եմ մեր հարաբերությունների մասին, հենց այնպես, այն էլ քեզ հետ...

— Այ՜... ինձ հետ։ Ես ի՞նչ եմ արել։

— Ոչինչ,— ասաց Ժիլը,— ոչինչ, քեզ վիրավորելու ժամանակը չի եղել։

— Հավատա ինձ, վերջացնենք այս կալվադոսը և սպասենք,— հանգստացնելու նպատակով ասաց Ժանը,— այս գիշեր մի լավ տեսարան կունենաս, վատթարագույնը դա է լինելու, իսկ դու վարժված ես դրան։

— Ո՜չ,— ասաց Ժիլը մտազբաղ տեսքով,— ո՜չ, վարժված չեմ։

Ժամանակն անցնում էր և չէր անցնում, հազիվ էր լսվում, թե ինչի մասին է խոսում ժանը, ականջ էր դնում ատամիճաններից բարձրացող ոռնաձայներին։ Նրա դուրս գալուց հետո մեկ, մեկ ու կես ժամ էր անցել։ Նա ամենևին չէր սիրում գնումներ կատարել։ Անհավանական էր։ Հենց այնպես Ժիլը զանգահարեց Գարնիեին, բայց սա չէր տեսել Նաթալիին։ Ժամը հինգին ամեն ինչ կարծես պարզ դարձավ. նա գնացք էր նստելու և վերադառնալու էր տուն։ Թողեց ժանին մենակ, շտապեց կայարան։ ստուգեց բոլոր վագոնները, չգտավ։ Ո՜չ, դրանից առաջ ուրիշ գնացք չկար, ո՜չ, այդ օրը ինքնաթիռ չէր թռչելու էլիտոն։ ժամը վեցին գնացքը մեկնեց առանց Ժիլի, առանց Նաթալիի։ Նաթալին այստեղ չէր եկել։ Ժիլը վերադարձավ եկած ճանապարհով, ավտոմեքենաների խցանման մեջ ընկնելու ժամանակ կատաղությունից համարյա ոռնալով... Գուցե տա՞նն էր, գուցե ոչինչ չէ՞ր լսել։ ժամը յոթին մոտ բացեց տան դուռը։ Տունը դատարկ էր, միայն ժանի երկտողը կար.

«Շատ մի հուզվիր։ Եթե ուզում ես, պրի ինձ մոտ, տանը ճաշենք». դիժ էր, ինչ էր այս մարդը... Մի բան էր մնում միայն անելու Ժիլին. ոպասել՝ ամենատհաճ բանն աշխարհում։ Կարո՞ղ է պատահել, որ մանկության տգեղ ընկերուհու մոտ գնացած լինի։ Նետվեց հեռախոսի վրա։ Այնտեղ չէր։ Այլևս չէր կարող, երբ վերադառնար, երկու ապտակ էր իջեցնելու երեսին։ Այն առավոտ՝ հարբելու հաջորդ օրը, իրավացի էր վարվել Նաթալին։ Բայց սա նման չէր Նաթալիին, այսպես կանխամտածված մարդ գժվացնե՞լ։ Նա հարգում է մարդկանց զգացմունքները։ Ժիլը նստեց բազկաթոռի մեջ, նույնիսկ չփորձեց լրագիր կարդալ։ Գլխում դատարկություն էր արձագանքում։ Կեսգիշերին հեռախոսի զանգը հնչեց։

Բժիշկը փոքրակազմ, կարմրահեր, մկա ... ձեռքերով մազակալած մարդ էր։ Զարմանալի է, կարմրահեր մազդիկ միշտ մազակալած են լինում։ Նայում էր Ժիլին անդամ ... յացքով, ուր ոչ դատողություն կար, ոչ կարեկցանք, հաճախ էր այդպիսի հայացքների հանդիպել հիվանդանոցներում։ Նաթալիին գտել էին ժամը տասնմեկն անց կեսին։ Ինչ-որ



հյուրանոցում ուղիղ ժամը չորսին սենյակ էր վարձել, ասել էր՝ հոգնած է, խնդրել էր հաջորդ օրը կեսօրին արթնացնել, մեծ քանակությամբ կարգեպել էր ընդունել։ Հարևաններից մեկը ժամը տասնմեկին վերադառնալով իր սենյակը, խոխոջ էր լսել։ Երկտող էր թողել Ժիլին, և առաջին օդանավից հեռախոսանշել էին նրան։ Հույս չկար. վերջին բոպեներին մարմինը դիմադրել էր մահվան, բայց սիրտը չէր տոկա։

— Կարո՞ղ եմ տեսնել նրան,— ասաց Ժիլը։

Հազիվ էր կանգնում ոտքերի վրա։ Այս ամենը հիմար մղձավանջ էր կարծես։ Բժիշկը ցնցեց ուսերը.

— Եթե ուզում եք...

Նաթալին շրջապատված էր խողովակներով, պառկած էր կիսամերկ, դեմքը այլափոխված էր անհասկանալի երևույթից։ Ժիլը նայում էր նրա վզի կապույտ զարկերակին, նրան ծանոթ էին այդ զարկերակի խոլական խփոցները սիրո ժամանակ, աղոտ կերպով էր տեսնում այս ամենը։ Նա իրավունք չուներ այդպես վարվելու, ընդմիշտ խլելով իրենից այս գեղեցիկ, այնքան հարազատ դարձած այս կենդանի մարմինը։ Նա իրավունք չուներ իրենից փախչելու փորձ կատարել։ Նաթալիի խարտյաշ մազափնջերը կպել էին քրտնաթոր ճակատին, ձեռքերը շարժվում էին սավանի վրա։ Մոտը հիվանդապահուհին էր նստած, հարցական հայացք նետեց բժշկի կողմը։

— Սրտի զարկերը թուլանում են, բժիշկ։

— Հեռացեք այստեղից, բարեկամ, շուտով կգամ ձեզ մոտ,— ասաց բժիշկը,— ձեր կարիքը չենք զգում այստեղ։

Ժիլը դուրս եկավ, հենվեց պատին։ Միջանցքի ծայրին մի լուսամուտ կար, և դեռ գիշեր էր, խավար գիշեր՝ այս անհանգիստ քաղաքի վրա։ Ձեռքը տարավ գրպանը, թղթի մի կտոր դուրս եկավ, մեքենայաբար դուրս հանեց։ Նաթալիի նամակն էր։ Բաց արեց և մի պահ չհասկացավ, թե ինչ է կարդում։

«Դու անդավոր չես այս հարցում, սիրելիս։ Ես միշտ մի փոքր հուզավառ եմ եղել և միայն ու միայն քեզ եմ սիրել»։ Ստորագրել էր մի քիչ ծռմռված «ն» տառով։ Նամակը նորից գրեց գրպանը, որտե՞ղ էր թողել ծխախոտը։ Իսկ Նաթալի՞ն, կողքի սենյակում, որտե՞ղ էր թողել Նաթալիին։ Բժիշկը դուրս եկավ սենյակից։ Իսկապես զզվելիորեն կարմրահեր էր։

— Վերջացա՞վ, բարեկամ,— ասաց նա։— Շատ ուշ էր։ Ցավում եմ։ Կուզեի՞ք տեսնել նրան։

Բայց Ժիլն արդեն փախչում էր, վազում միշանցքի խորքը, զարնվելով պատերին, Ժիլը չէր ուզում, որ այդ կարմրահերը տեսներ, թե ինչպես է լաց լինում։ Նա ցատկում էր այդ անանուն հիվանդանոցի ատաղձաններով, հաղիվ էր լսում, թե ինչ է գոռում իր ետևից բժիշկը։ Վերջին ատաղձանի վրա կանգ առավ տրոփող սրտով.

— Իսկ փնտրտաթղթե՞րը,— կանչում էր ձայնը վերևից, շատ հեռվից,— փնտրտաթղթե՞րը... Դո՞ւք էիք նրա միակ հարազատը։

Մի պահ վարանեց նախքան պատասխանելը, որ իր կարծիքով միակ ճշմարտությունն էր.

— Այո՛։

# ՍԻՐՈՒՄ ԵՔ ԲՐԱՍ

## Գլուխ I

Փոլը հայելու մեջ դիտում էր դեմքը և մեկ առ մեկ ուսումնասիրում երեսունինը տարվա ընթացքում կուտակված ավերածությունները, սակայն ոչ այնպես խելահեղորեն, ոչ էլ զառնացած, ինչպես լինում է սովորաբար նման դեպքերում, ընդհակառակը՝ շատ հանգիստ, համարյա առանց ուշադրություն գարձնելու։ Կարծես այդ տաքուկ մաշկը, որ իր երկու մատները երբեմն ձգում էին կնճիռներից մեկն ու մեկը ընդգծելու կամ ինչ-որ սովեր հեռացնելու համար, պատկաներ ուրիշի. ողջ էությամբ իր գեղեցկությունով տարված և դժվարությամբ երիտասարդ կանանց դասից կանանց երիտասարդության դասն անցնող մի ուրիշ Փոլի, մի կնոջ, որին հաղիվ էր ճանաչում։ Նստել էր հայելու դիմաց ժամանակ սպանելու համար, և այդ մտքից ժպիտ երևաց. հայտնաբերել էր, որ ժամանակն է անկատելիորեն ու հանդարտ սպանում իրեն՝ հարձակվելով այն կերպարանքի վրա, որ թվում էր, սիրված է եղել։

Ուժեն գալու էր ժամը իններին, հիմա դեռ յոթն էր, բավական ժամանակ կար։ Անկողնու վրա պառկելու, աչքերը փակելու, ոչ մի բանի մասին չմտածելու։ Հանգստանալու։ Ցավելու։ Սակայն օրվա մեջ ինչի՞ մասին էր այդպես կրքով մտածել, ուժասպառ եղել, որ երեկոյան հանգստանալ էր ուզում։ Իսկ այն անհանգիստ անտարբերությունը, որ մի անյակից մյուսն էր տանում իրեն, մի պատուհանից մյուսը, ծանոթ զգացում էր։ Անձրևոտ օրերի, մանկության տարիների

Մտավ լողասենյակ, կռացավ ջրի տաքությունն ստուգելու, և այդ շարժումն անմիջապես նրան հիշեցրեց մեկ ուրիշ շարժում... Տասնհինգ տարի առաջ էր։ Մարկի հետ էր, երկրորդ տարին էին միասին անցկացնում արձակուրդը, և արդեն զգում էր, որ հնարավոր չէ այսպես շարունակել։ Մարկի առաջարկությունի մեջ էին, առագաստը ծփում էր քամու դիմաց ինչպես անորոշության մատնված սիրտ, քսանհինգ տարեկան էր։ Եվ միանգամից համակվել էր երջանկության զգացումով, ընդունելով իր կյանքի ողջ իմաստը, ընդունելով աշխարհի իմաստը. լույսի շողարձակումով հասկացել էր, որ լավ է ամեն ինչ։ Եվ գեմքը թաքցնելու համար հենվել էր նավեզրին, ջանալով մատները թաթախել փախչող ալիքների մեջ։ Փոքրիկ առագաստանավը թեքվել էր. Մարկը իրեն միայն հայտնի մի անտարբեր հայացք էր նետել վրան և աղջկա մոտ նրչանկությանը անմիջապես փոխարինել էր ծաղրը։ Անուշտ, հետո հրչանիկ զգացել էր իրեն ուրիշների հետ, կամ երջանկացրել նրանց, բայց երբե՛ք ամբողջությամբ, այսպես անփոխարինելի։ Եվ այդ հիշողությունը վերջնականապես նմանվում էր չհարգված խոստման։

* * *

Ռոժեն գալու էր, Փոլը բացատրելու էր նրան, փորձելու էր բացատրել։ Իսկ նա ասելու էր. «Այո՛, իհարկե՛» այնպիսի բավարարված տեսքով, ինչպիսին ամեն անգամ արտահայտում էր կյանքի խարդախությունները հայտնաբերելիս, խիստական ոգևորվածությամբ՝ գոյության անհեթեթությունները մեկնաբանելիս և իրենց համառությամբ այդ գոյությունը խորացնելով։ Միայն թե այս ամենը Ռոժեի մոտ համակշռված էր անսպառ եռանդով, զժվարահաճ ախորժակով և ներքուստ՝ գոյատևելու մեծ բավականությամբ, որ քնելու ժամանակ էր միայն դադարում գործելուց։ Նա քնում էր միանգամից, ձեռքը սրտին դրած, իր կյանքի համար այնքան ուշադիր, որքան արթուն վիճակում։ Ոչ, նա չէր կարող Ռոժեին բացատրել, որ հոգնել է, որ այլևս անտանելի է դարձել իրենց միջև օրենքի պես հաստատված այս ազատությունը, որից միայն Ռոժեն է օգտվում, իսկ իրեն դատապարտում է



մենակության։ Փոլը չէր կարող նրան ասել, որ երբեմն իրեն այն սիփականատեր, ագահ էգերից մեկն է պատկերացնում, որանց ատում է Ռոժեն։ Հանկարծ իր ամայի բնակարանը զգվելի և անկարևոր թվաց։

Մամը ինքն Ռոժեն հնչեցրեց դռան զանգը, և երբ բուդարից դուռն ու շեմին տեսավ նրա ժպիտը, մի փոքր պարզն հատակը, համակերպված ուղեղով մեկ անգամ ևս հասկացավ, որ սա է իր ճակատագիրը և սիրում է նրան։ Ռոժեն գրկեց Փոլին։

— Որքա՜ն գեղեցիկ է հագուստդ... Շատ էի կարոտել։ Ինչպե՞ս ես։

— Այո՛, մտիր։

«Մենա՞կ ես...» ի՞նչ կաներ, եթե պատասխանած լիներ. «Մ՛չ, վատ ժամանակ եկար»։ Սակայն վեց տարվա ընթացքում երբեք այդպիսի պատասխան չէր տվել։ Ռոժեն երբեք չէր ցանում հարցնել, երբեմն ձևական ափսոսանքով ներողություն խնդրել խանգարելու համար, որի պատճառով Փոլը անկասելիորեն ավելի էր նախատում նրան։ Նա նույնիսկ պատկերացում չուներ, որ Փոլը մենակ է զգում իրեն և դժբախտ՝ իր պատճառով։ Փոլը ժպտաց։ Ռոժեն մի շիշ բարձեց, լցրեց երկու բաժակի մեջ, նստեց։

— Արի ինձ մոտ, Փոլ։ Որտե՞ղ կցանկանայիր ճաշել։

Նստեց կողքին։ Ռոժեն հոգնած տեսք ուներ, ինքը՝ նույնպես։ Ռոժեն բռնեց ձեռքը, սեղմեց։

— Բարդ գործերի մեջ եմ խրվել,— ասաց նա,— հիմա աշխատանք է, մարդիկ անասելի շափով հիմար և հեղհեղուկ են։ Ա՜խ, գիտես, գյուղում ապրելը...

Փոլն սկսեց ծիծաղել.

— Դու չես կարող առանց Բերսի կառամատույցի, առանց քո պահեստների, առանց քո բեռնատար մեքենաների։ Եվ առանց փարիզյան երկար գիշերների...

Վերջին նախադասության վրա Ռոժեն ժպտաց, ձգվեց և մեջքով փռվեց բազմոցին։ Փոլը շրջվեց։ Նայեց իր ձեռքի վրա մնացած նրա լայն բացված ձեռքին։ Ռոժեի մարմնի յուրաքանչյուր մասնիկ լավ ծանոթ էր իրեն. ճակատի վրայից սկսող կոշտ մազերը, կապույտ ու մի քիչ դուրս պրծած աչ-

քերի հստակ արտահայտությունը, բերանի ծալքը։ Անգիր գիտեր։

— Ինչ վերաբերում է,— ասաց Ռոժեն,— ինչ վերաբերում է իմ խելագար գիշերներին, անցած օրը ոստիկանները լակոտի նման բռնեցին ինձ։ Կովեցի ինչ-որ տիպի հետ։ Քառասուն տարիս լրացած... ոստիկանատանը... պատկերացնո՞ւմ ես...

— Ինչո՞ւ կռվեցիր։

— Չեմ հիշում։ Բայց նա շատ վատ վիճակի մեջ ընկավ։

Եվ իր ցուցաբերած ֆիզիկական ուժի հիշողությունը կարծես միանգամից աշխուժացրեց նրան, պառկած տեղից թռավ։

— Ես գիտեմ ուր գնանք,— ասաց նա,— Պիեմոնթիաս։ Այնտեղից էլ կգնանք պարելու։ Եթե ընդունես, որ պարում եմ։

— Քայլում ես,— ասաց Փոլը,— չես պարում։

— Ուրիշներն այդ կարծիքին չեն։

— Եթե խոսքդ վերաբերում է այն դժբախտ կանանց, որոնց վրա կարողանում ես իշխանությունդ բանեցնել, ուրիշ բան։

Սկսեցին ծիծաղել։ Ռոժեի մանր սիրային արկածները կատակի համար հրաշալի նյութ էին ծառայում։ Փոլը մի պահ հենվեց պատին նախքան բաղրիջից բռնելը։ Ուժ չուներ։

Ռոժեի ավտոմոբիլիստի մեջ թուլացած ձեռքով միացրեց ռադիոընդունիչը։ Ղեկավարման վահանակի դժգույն լույսի տակ նա մի ակնթարթ նկատեց իր սեփական երկար ու խնամված ձեռքը։ Երակները փովել էին վրան, սկսում էին մագլցել մինչև այն կետը, ուր մատները թռիչքի են պատրաստվում, և խռնվում էին անկանոն գծագրումով։ «Իմ կյանքի պատկերով»,— մտածեց Փոլը, բայց իսկույն էլ պարզեց, որ դա կեղծ պատկեր էր։ Նա արհեստ ուներ և սիրում էր, անցյալ ուներ, որի համար չէր ափսոսում, լավ ընկերներ։ Եվ հարատև կապ։ Շրջվեց Ռոժեի կողմը.

— Քանի՞ անգամ եմ այս շարժումը կատարել. միացրել ավտոմոբիլիստի ռադիոընդունիչը քեզ հետ ճաշի գնալիս։

— Չգիտեմ։

Ռոժեն շեղակի նայեց նրան։ Չնայած իր հանդեպ նրա ունեցած սիրո տեսականությանն ու հավատարիմությանը, նա զարմանալի կերպով զգայուն էր Փոլի տրամադրությունների



կայունությամբ և միշտ զգոն։ Ինչպես սկզբնական շրջանում... Փոլը ապակեպակից «Հիշո՞ւմ ես» միտքը, որոշելով այդ երեկո ուրախ լինել և զսպել իր սենտիմենտալիզմը։

— Կարծում ես մաշվա՞ծ է։

— Ա՜խ։ Սրբեմն թվում է, թե ես եմ մաշված,— ասաց Փոլը։

Ռոժեն մեկնեց ձեռքը, Փոլը պահեց այն ափերի մեջ։ Արագ էր վարում, ծանոթ փողոցները շտապում էին ավտոմոբիլի տակ։ Փարիզը փայլում էր աշնանային անձրևից։ Ռոժեն ծիծաղեց։

— Չեմ հասկանում ինչու եմ այսքան արագ վարում։ Վախենում եմ, երիտասարդ երևալու համար է։

Փոլը չպատասխանեց։ Որքան ճանաչում էր նրան, միշտ էլ ցանկացել էր երիտասարդ երևալ, միշտ նույն «երիտասարդն» էր։ Վերջերս էր սկսել նրան խոստովանել, և այդ խոստովանությունն իսկ վախեցնում էր Փոլին։ Նա սարսափում էր վստահելի անձի դեր ստանձնելուց, բայց ապրում էր այդ դերով, որովհետև հասկանում էր, որովհետև խանդաղատանքով էր լցված։ Ռոժեն իր ողջ կյանքն էր։ Նա մոռանում էր Փոլին, իսկ Փոլն ամոթխած արժանապատվությամբ օգնում էր նրան մոռանալ։

Հանգիստ ճաշեցին, խոսելով այն ընդհանուր հոգսերի մասին, որ հատուկ են տրանսպորտային հիմնարկություններին, ինչպիսին, օրինակ, Ռոժեի աշխատանքն է, հետո Փոլը երկու-երեք զվարճալի անեկդոտներ պատմեց իր ձևավորած խանութների մասին։ Ֆաթի հաճախորդուհիներից մեկը, բավականին հարուստ մի ամերիկուհի, ցանկանում էր, որ Փոլն զարդվի իր բնակարանի ձևավորումով։

— Վան դեն Բե՞շ,— հարցրեց Ռոժեն,— ինչ-որ բան հուշում է։ Ա՜խ, այո...

Փոլը բարձրացրեց հոնքերը։ Ռոժեն կայտառ տեսք ուներ, որպիսին ունենում էր իր մեջ կոնկրետ հիշողություններ արթնանալիս։

— Ժամանակին ճանաչում էի նրան։ Պատերազմից առաջ, եթե չեմ սխալվում։ Նա միշտ «Ֆլորանսի» մոտ էր լինում։

— Այդ շրջանում ամուսնացել-բաժանվել է և նման այլ բաներ։

— Այո՞, այո՞,— ասաց Ռոժեն մտազբաղ,— նրա անունը, ը՞ր՞ը՞...

Զղայնացնում էր Փոլին։ Սիրտն ուզեց միանգամից պատռաքաղը նրա ափի մեջ խրել։

— Անունը չի հետաքրքրում ինձ,— ասաց նա,— կարծում եմ քիչ փող չունի և բառիս բուն իմաստով անճաշակ է։ Ճիշտ ու ճիշտ այն, ինչ հարկավոր է ինձ ապրելու համար։

— Քանի՞ տարեկան է հիմա։

— Վաթսունի մոտ կլինի,— սառնորեն պատասխանեց Փոլը և տեսնելով Ռոժեի դեմքի արտահայտությունը, սկսեց քրքջալ։ Վերջինս սեղանի անկյունից ծռվելով Փոլի կողմը հայացքը մեխեց վրան.

— Իսկապես սարսափելի կին ես։ Ամեն ինչ անում ես ինձ ընկճելու համար։ Համենայն դեպս ես քեզ սիրում եմ, բայց պետք չէր։

Ռոժեին դուր էր գալիս զոհի դերում հանդես գալ։ Փոլը հառաչեց։

— Ինչ էլ անցած-դարձած լինի, վաղը գնալու եմ։ Քլեբեր պողոտա։ Նյութական դժվար կացության մեջ եմ։ Դու նույնպես,— աշխուժորեն ավելացրեց նա, երբ Ռոժեն ձեռքը բարձրացրեց։

— Ուրիշ բանի մասին խոսենք,— ասաց վերջինս,— գնանք մի քիչ պարենք։

Կաբարեում նստեցին մի փոքրիկ սեղանի մոտ, պարահրապարակից հեռու և անխոս սկսեցին դիտել անցնող դեմքերը։ Ձեռքը նրա ափի մեջ դրած, Փոլը կատարելապես ապահով էր զգում, կատարելապես վարժված նրան։ Ոչ մի դեպքում չէր կարող ստիպել իրեն հանդիպել ուրիշի հետ և այդ անդրդվելիության մեջ տխուր երջանկություն էր քամում։ Պարեցին։ Ռոժեն ամուր գրկել էր նրան և ինքնագոհ տեսքով, առանց ոիթմի շարժվում էր պարահրապարակում։ Փոլը շատ երջանիկ էր։

Ուշ էր ժամանակը, երբ ավտոմեքենայով վերադարձան տուն։ Ռոժեն իջավ, փողոցի դռան առջև գրկեց նրան։

— Քեզ մենակ եմ թողնում, որ քնես, հանգստանաս։ Մինչ վաղը, սիրելիս։



Նույը համբույր տալով հեռացավ։ Փոլը ձեռքով հրաժեշտ տվեց։ Օրեցօր ավելի հաճախակի էր թողնում, որ քնի։ Բնակարանը դատարկ էր, և Փոլը, աչքերն արցունքով լի, անկողնու վրա նստելուց առաջ երկյուղածորեն հավաքեց գործերը։ Այս գիշեր դարձյալ մենակ էր, և գալիքը նրա աչքին պատկերացավ որպես միայնակ գիշերների երկար հաջորդականություն՝ հարթ անկողնու մեջ, նման տխրաղալուկ հանգստությամբ երկարատև հիվանդության։ Անկողնում պառկած բնազդաբար ձեռքը մեկնեց առաջ, կարծես տաք կոնք էր շոշափելու, շնչում էր հանդարտ, կարծես աշխատում էր չխանգարել ինչ-որ մեկի քունը։ Ինչ-որ մարդու կամ երեխայի։ Ով էլ որ նա լիներ, այն մարդուարարածի քունը, որ իր կարիքն զգար, զգար իր ջերմության կարիքը քնելու և արթնանալու համար։ Բայց իրականում ոչ ոք իր կարիքը չէր զգում։ Ռոժեն գնացել, այն էլ՝ երբեմն... Բայց ոչ իսկական սիրով։ Ոչ այս ձևով, ոչ այնպես կրքով, այլ ֆիզիոլոգիական պահանջով, որ երբեմն առաջանում էր։ Դառնացած սրտով, հանդիսատ որոճում էր նա իր մենակությունը։

* * *

Ռոժեն ավտոմեքենան թողեց տան մոտ և երկար ժամանակ քայլեց։ Շնչում էր խորը, կամաց-կամաց երկարաձգում քայլերը։ Լավ էր զգում իրեն։ Միշտ էլ լավ էր զգացել, երբ հանդիպել էր Փոլին։ Միայն նրան էր սիրում։ Բայց այս երեկո, երբ մոտից հեռացավ, զգաց նրա հոգու տխրությունը և չիմացավ ինչ ասել։ Փոլն աննկատելիորեն իրենից ինչ-որ բան էր խնդրում, ինքը լավ էր հասկանում, մի բան, որ չէր կարող տալ, որ ոչ մեկին երբեիցե չէր կարողացել տալ։ Ինչ իսկապես, պետք է մնար նրա մոտ և սիրո գիշեր անցկացներ, դա թերևս որևէ կնոջ վստահեցնելու լավագույն միջոցն է։ Բայց ինքը ցանկանում էր քայլել, զբոսնել փողոցներում, թափառել։ Ցանկանում էր սալաքարերին իր ոտնաձայնը լսել, հսկել հարազատ քաղաքին, գուցե գիշերային անակնկալներ հայտնաբերել։ Քայլեց մինչև կառամատույցի ծայրը, լույսերի ուղղությամբ։

## Գլուխ 2

Փոլն արթնացավ շատ ուշ, հոգնած ու թմրած և արագ դուրս եկավ տնից։ Նախքան գրասենյակ մտնելը պետք էր հանդիպեր այդ ամերիկուհուն։ Ժամը տասին հասավ Քլերեն պողոտա, մտավ համարյա դատարկ մի հյուրասրահ, և քանի որ տանտիրուհին դեռ քնած էր, հայելու առջև թարմացրեց դեմքի շպարը։ Հայելու միջից էլ տեսավ Սիմոնի մուտքը։ Բավական լայն խալաթի մեջ փաթաթված, մազերը ցիրուցան, նկատելիորեն գեղեցիկ։ «Իմ ճաշակին չէ»,— առանց շրջվելու մտածեց Փոլը և ժպտաց։ Շատ բարակ էր, շատ թուխ, պայծառ աչքերով, չափից ավելի նուրբ։ Նա անմիջապես չնկատեց Փոլին և քթի տակ մի երգ մմռալով ուղղվեց դեպի պատուհանը։ Փոլը հաղաց, և նա շրջվեց հանցանքի մեջ բռնվածի պես։ Փոլն անմիջապես մտածեց, որ երևի սա Վան դեն Բեշի վերջին երեսակայությունը պետք է լինի։

— Ներեցե՛ք,— ասաց նա,— ես ձեզ չնկատեցի։ Ես Սիմոն Վան դեն Բեշն եմ։

— Ձեր մայրը խնդրել է ինձ այս առավոտ զբաղվել բնակարանի հարդարումով։ Վախենում եմ բոլորին արթնացրի։

— Վաղ թե ուշ հարկավոր է արթնանալ,— սխուր պատասխանեց նա։ Եվ Փոլը հոգնած արտահայտությունը դեմքին՝ մտածեց, որ սա պատկանում է բողոքել սիրող երիտասարդների թվին։

— Նստեցե՛ք,— ասաց Սիմոնը և լրջորեն տեղ գրավեց նրա դիմաց, չորս կողմից ձգելով խալաթի ծայրերը։

Ավելի շուտ, երկյուղած տեսք ուներ։ Փոլն սկսեց համակրել նրան։ Ամեն դեպքում պարզ երևում էր, որ սա չի գիտակցում իր արտաքին տեսքի առավելությունները. անակնկալ էր։

— Կարծես շարունակում է անձրևել, չէ՞։

Նա պատկերացնում էր Ռոժեի դեմքի արտահայտությունը՝ տեսնելով իրեն առավոտյան ժամը տասին, գործարար կնոջ տեսքով նստած, վախ ներշնչելով խալաթի մեջ փաթաթված շատ գեղեցիկ դեմքով փոքրիկ երիտասարդին։

— Այո, այո, անձրևում է,— աշխուժորեն պատասխանեց նա։



Սիմոնը բարձրացրեց աչքերը։

— Ի՞նչ կուզեիք, որ ասեի ձեզ,— հարցրեց նա,— ես ձեզ չեմ հանձնում։ Եթե նախօրոք ծանոթ լինեի, կասեի, որ շատ գրգռիչ եմ կրկին տեսնելով ձեզ։

Փոլը շփոթված նայեց նրան։

— Ինչո՞ւ։

— Հենց այնպես։

Նրջեց գլուխը։ Փոլը ավելի ու ավելի տարօրինակ էր գտնում նրան։

— Այս բնակարանն իրոք կարիք ունի կահավորանքի,— ասաց նա,— որտե՞ղ եք նստում, երբ երեք հոգուց ավելի մարդ է հավաքվում։

— Չգիտեմ,— պատասխանեց Սիմոնը,— հազվադեպ եմ այստեղ լինում։ Ամբողջ օրն աշխատում եմ, իսկ վերադառնալուց հետո այնքան հոգնած եմ լինում, որ քնում եմ։

Փոլը չէր կարողանում վերջնական եզրակացության հանգել այս տղայի հարցում։ Սա չէր օգտվում իր արտաքին գեղեցկությունից, ամբողջ օրն աշխատում էր։ Քիչ էր մնում հարցներ. «Ի՞նչ եք անում», բայց զսպեց իրեն։ Նման հետաքրքրություն հանդես բերելը հատուկ չէր իր բնավորությանը։

— Սկսնակ դատապաշտպան եմ,— շարունակեց Սիմոնը,— աշխատանքը՝ շատ, քուն՝ կեսգիշերին, արթնանալ՝ առավոտյան վաղ...

— Ժամը տասն է,— նկատեց Փոլը։

— Այս առավոտ իմ գլխավոր հաճախորդին գիլիոտինի ենթարկեցին,— ձգված ձայնով ասաց նա։

Փոլը թռավ տեղից։ Սիմոնը չէր բարձրացնում աչքերը։

— Աստվա՜ծ իմ...— ասաց Փոլը,— և նա մեռա՞վ։

Երկուսը միասին սկսեցին քրքջալ։ Սիմոնը վեր կացավ, բուխարիկի վրայից ծխախոտ վերցրեց։

— Ոչ, ճիշտն ասած, շատ չեմ աշխատում, ո՛չ այնքան։ Հակառակ դրան դուք ժամը տասին արդեն ոտքի վրա եք և պատրաստ այս սարսափելի հյուրասենյակը կահավորելու, դուք այդքանով իշխանություն եք բանեցնում ինձ վրա։

Նա ու առաջ էր գնում սենյակում, զայրացած էր։

— Հանգստացե՛ք,— ասաց Փոլը։

Բարձր տրամադրության մեջ էր, զվարթ։ Նույնիսկ վա-
խեցավ, երբ հայտնվեց Սիմոնի մայրը։

— Գնամ հագնվեմ,— ասաց Սիմոնը,— միայն մեկ վայրկյան։ Սպասեցե՛ք ինձ։

* * *

Մոտ մեկ տաս տնաց տիկին Վան դեն Բեշի մոտ, որը նկատելիորեն ծանր տրամադրության մեջ էր և առավոտ շուտ էլ մի փոքր վայրենացած. միասին բարդ հարցեր լուծեցին, և Փոլն ուրախ-ուրախ իջավ աստիճաններով, նյութական հարցերի շուրջը պլաններ մշակելով և ամբողջովին մոռացած Սիմոնին։ Շարունակում էր անձրևել։ Ձեռքը բարձրացրեց տաքսի կանգնեցնելու համար, մի փոքրիկ ավտոմեքենա կանգնեց կողքին, Սիմոնը բացեց դռնակը։

— Կարո՞ղ եմ տեղ հասցնել ձեզ։ Գնում էի գրասենյակ։

Պարզ է, նա մեկ ժամից ավելի սպասել էր, բայց այդ ծածկամտությունը քնքշացրեց Փոլին։ Մեծ դժվարությամբ, ծալվելով նստեց ավտոմեքենայի մեջ և ժպտաց.

— Գնում եմ Մաթինյոն պողոտա։

— Մորս հետ համաձայնության եկա՞ք։

— Հնարավորին չափ լավ։ Դուք շուտով ձեր հոգնությունը կթաղնեք փափուկ բազմոցների վրա։ Ձեզ շատ չե՞մ ուշացնի։ Ժամը տասնմեկն անց է։ Երևի բավական ժամանակ անցել է բոլորին գիլիոտինի ենթարկելու համար։

— Ե՛ս եմ անօրինում իմ ժամանակը,— մոայլ տեսքով ասաց նա։

— Ձեզ չեմ ծաղրում,— շարունակեց Փոլը բարի տոնով,— տրամադրությունս բարձր է, որովհետև նյութական ծանր կացության մեջ էի և ձեր մոր շնորհիվ այդ ամենն անցնելու է։

— Նախօրոք թող վճարի,— ասաց Սիմոնը,— սարսափելի ժլատ կին է։

— Ծնողների մասին չի կարելի այդպես խոսել,— ասաց Փոլը։

— Ես տասներկու տարեկան չեմ։

— Իսկ քանի՞։



— Քսանհինգ։ Դո՞ւք։

— Երեսունինը։

Նա անքաղաքավարի կերպով այնպես սուլեց, որ քիչ էր մնում Փոլը զայրանար, բայց հետո ծիծաղեց։

— Ինչո՞ւ եք ծիծաղում։

— Այդ հրաշալի սուլո՞ցը...

— Ավելի հրաշալի, քան մտածում եք,— ասաց նա և նայեց Փոլին այնպիսի քնքուշ հայացքով, որ վերջինս անհարմար զգաց։

Ավտոմեքենայի ապակեմաքրիչներն անդորությամբ շափ լին տալիս ապակու վրա, և Փոլը մտածեց, թե ինչպես էր նա կարողանում վարել մեքենան։ Նստելու ժամանակ պատռել էր գուլպան. զարմանալի կերպով ուրախ էր զգում իրեն այս անհարմարավետ մեքենայի մեջ, այնքա՛ն զարնելու չափ իրենով հիացած այս երիտասարդ անծանոթի կողքին, իսկ անձրևը, որ ներս էր թափվում թափքից, կեղտոտելով բաց գույնի վերարկուն... Սկսեց քթի տակ մի երգ մմռալ. պարտքերը մարելուց, մորը հատկացված ամենամսյա դրամն ուղարկելուց, խանութում հաշիվները փակելուց հետո ձեռքում դեռ կմնար... տրամադրություն չուներ հաշվելու։ Սիմոնն էլ էր արագ վարում։ Հիշեց Ռոժեին և իր ծանր գիշերները, մոայլվեց դարձյալ։

— Չէի՞ք ցանկանա մի օր ինձ հետ ճաշել։

Սիմոնն արագ էր խոսում, առանց նայելու իրեն։ Մի ակնթարթ Փոլը խուճապի մատնվեց։ Չէր ճանաչում նրան, պետք է ջանք թափեր խոսակցություն վարելու համար, նրան վերաբերող հարցեր տար, նոր մարդ հայտնաբերեր։ Իր մեջ պայքար սկսվեց։

— Մոտակա օրերին չեմ կարող, ծանրաբեռնված եմ աշխատանքով։

— Ինչ արած,— ասաց Սիմոնը։

Չպնդեց։ Փոլը մի հայացք նետեց վրան, դանդաղեցրել էր ընթացքը և կարծես նույնիսկ տխուր էր վարում մեքենան։ Փոլը ծիտախոտ վերցրեց, իսկ նա մեկնեց հրահանը։ Պատանու դաստակներ ուներ, շատ բարակ, որոնք ծիծաղելիորեն դուրս էին գալիս հաստ կտորից կարված քաճկոնի միջից։ «Այսպիսի արտաքին ունենալու դեպքում չի կարելի թակարդ

լարող որսորդի պես հագնվել»,— մտածեց Փոլը և մի որոշ ցանկություն ունեցավ զբաղվել նրանով։ Նա հենց այն տղաների թվին էր պատկանում, որ իր տարիքի կանանց մեջ մայրական զգացմունքներ են արթնացնում։

— Այստեղ,— ասաց նա։

Սիմոնն առանց որևէ բան արտասանելու դուրս եկավ, բացեց դռնակը։ Ընկճված էր ու թախծոտ։

— Նորից ու նորից շնորհակալություն,— ասաց Փոլը։

— Խնդրեմ։

Փոլը երեք քայլ գնաց դեպի դուռը և շրջվեց։ Սիմոնն անշարժացած նայում էր իրեն։

## Գլուխ 3

Սիմոնը քառորդ ժամ կորցրեց, մինչև իր գրասենյակից հինգ հարյուր մետր հեռու մի տեղ գտավ և կանգնեցրեց ավտոմոբիլը։ Աշխատում էր մոր ընկերներից մեկի մոտ, հրաշակավոր և զվարճալի մի դատապաշտպան, որը ինչ-ինչ պատճառներով անտրտունջ տանում էր իր հիմար արարքները, իսկ Սիմոնը վախենում էր ճշմարտությունը լուսաբանելուց։ Երբեմն նրա մոտ ցանկություն էր առաջանում համբերությունից հանել նրան, բայց ծուլությունը խանգարում էր։ Դուրս գալով մայթ (այդպես որոշեց մտքում), անմիջապես սկսեց կաղալ, մեղմ արտահայտությունը դեմքին, համակերպված տեսքով։ Կանայք շրջվում էին ճանապարհին, և Սիմոնը գուշակում էր նրանց մտքերը իր ետևում, «այդքան երիտասարդ և հաշմանդամ, ափսո՜ս»։ Մինչև հիմա նա իր արտաքինից ոչ մի օգուտ չէր քաղել, բացի իրեն թեթևացած զգալուց. «երբեք ուժ չէի ունենա տգեղ լինելու։ Եվ այդ մտքով տարված իրեն ճգնավոր էր պատկերացնում, երբեմն խզբզող նկարիչ, երբեմն՝ լանդերի բարձունքներում՝ հովիվ։

Կաղալով մտավ գրասենյակ, և պառավ Ալիսը նրա վրա նետեց կիսով չափ մեղմ, կիսով չափ կասկածելի մի հայացք։ Նրան ծանոթ էին Սիմոնի խաղերը, և ափսոսանքով լի գիշզականությամբ էր վարվում դրանց հետ։ Եթե նման արտաքինով և երևակայությամբ նա լուրջ մարդ լիներ, մեծ փաստաբան կդառնար։ Նա մի դանակի ողջույն ուղարկեց Ալիսին և նստեց տեղը։



— Ինչո՞ւ եք կաղում։

— Բարի նպատակով չեմ կաղում։ Ո՞վ ում սպանեց այս գիշեր։ Ե՞րբ պիտի ինձ հաջողվի զբաղվել մի հրաշալի, շատ զվվելի ոճիրով։

— Այս առավոտ երեք անգամ ձեզ հարցրեց։ Արդեն ժամը տասնմեկն անց կես է։

Ջեղչված ենթական գլխավոր պետն էր։ Սիմոնը նայեց դուռն ուղղությամբ։

— Ուշ արթնացա։ Բայց շատ հաճելի անձնավորության հանդիպեցի։

— Կի՞նն։

— Այո։ Գիտե՞ք, շատ գեղեցիկ, շատ քնքուշ, մի փոքր հյուծված դեմք... շարժուձև, որ իսկական շարժուձև է... Ինչ-որ անորոշ բանի պատճառով տանջահար...

— Ավելի լավ կլիներ Գիյոյի գործն ուսումնասիրեիք։

— Շատ լավ։

— Ամուսնացա՞ծ է։

Սիմոնը հանկարծ թոթափվեց իր երազներից։

— Չգիտեմ... Բայց նույնիսկ եթե ամուսնացած էլ լինի, վատ ընտրություն է կատարել։ Նյութական կարիքի մեջ էր, հարցը կարգավորեց, որից հետո շատ ուրախացավ։ Շատ եմ սիրում դրամով ուրախացող կանանց։

Քարտուղարուհին ցնցեց ուսերը։

— Ուրեմն բոլորին էլ պետք է սիրեք։

— Համարյա այդպես,— ասաց Սիմոնը,— բացի ամենաերիտասարդներից։

Նա խորասուզվեց գործի մեջ։ Դուռը բացվեց և մեթր Ֆլորին գլուխը ներս խցկեց։

— Պարոն Վան դեն Բիշ... մեկ վայրկյան։

Սիմոնը հայացք փոխանակեց քարտուղարուհու հետ։ Վեր կացավ և գնաց անգլիական գրասենյակը, որ հոգով-սրտով ատում էր իր կատարելության համար։

— Գիտե՞ք ժամը քանիսն է։

Մեթր Ֆլորին նետվեց ճշգրիտ աշխատանքային ոգևորվածության մեջ և ավարտեց ճառը սեփական համբերության

և տիկին Վան դեն Թեշի հասցեին ուղղված գովասանական խոսքերով։ Սիմոնը պատուհանից դուրս էր նայում, կարծես վերապրում էր շատ հին մի թատերախաղ, որ միշտ գտնվել է այս նույն անգլիական գրասենյակում, միշտ լսել է միևնույն բառերը, թվում էր, ինչ-որ բան սեղմվում է շուրջը, խեղդում իրեն և տանում դեպի մահ. «Ի՞նչ եմ արել,— հանկարծ մտածեց նա,— ի՞նչ եմ արել քսանհինգ տարվա ընթացքում, բացի մի ուսուցչի ձեռքից մյուսին անցնելուց, անընդհատ հանդիմանություններ լսելուց. և դրա համար շոգոբորթվելուց»։ Առաջին անգամ էր այսպիսի հաստատակամությամբ հարց տալիս՝ իրեն և մեքենայաբար բարձրացրեց ձայնը.

— Ի՞նչ եմ արել։

— Ինչպե՞ս թե, Սակայն ոչինչ էլ չեք արել, սիրելի բարեկամ, սա է ամբողջ ողբերգությունը, դուք ոչինչ չեք անում։

— Նույնիսկ կարծում եմ, որ ոչ մեկին չեմ սիրել երբևիցե,— շարունակեց Սիմոնը։

— Ես չեմ պահանջում սիրահարվել ինձ կամ պառավ Ալիսին,— պայթեց մեթր Ֆլորին։— Ես պահանջում եմ աշխատել։ Իմ համբերությունն էլ սահման ունի։

— Ամեն ինչ իր սահմանն ունի,— մտածկոտ շարունակեց Սիմոնը։

Երազների մեջ էր ընկել, անհեթեթությունների գիրկը։ Կարծես տասը օր չէր քնել, քաղցած էր մնացել, ծարավից ուժասպառ եղել։

— Դուք ձե՞ռք եք առնում ինձ։

— Ո՛չ,— ասաց Սիմոնը։— Ներեցեք, ուշադիր կլինեմ։

Նա-նա գնալով դուրս եկավ, նստեց սեղանի առջև, գլուխը ձեռքերի մեջ առած, տիկին Ալիսի զարմացած հայացքի տակ։ «Ի՞նչ է կատարվում ինձ հետ, բայց և այնպես ի՞նչ է կատարվում ինձ հետ»։ Փորձում էր վերհիշել. մանկություն Անգլիայում, համալսարան, ինչ-որ կիրք, այո՛, տասնհինգ տարեկան հասակում, իր մոր ընկերուհիներից մեկի նկատմամբ, որը մեկ շաբաթ հետո զգուշությամբ ղդացնել էր տվել իրեն իր հիմարությունը, հեշտ ու հանգիստ կյանք, ուրախ ընկերներ, աղջիկներ, արևոտ ուղիներ... ամեն ինչ պատվում



էր ուղեղում և չէր կարողանում որևէ կետի վրա կենտրոնանալ։ Դուցե ոչինչ էլ չէր պատահել։ Քսանհինգ տարեկան էր։

— Մի՛ վշտացեք,— ասաց տիկին Ալիսը,— նա շուտ կմոռանա, դուք այդ գիտեք։

Չպատասխանեց։ Առանց մտածելու մատիտով խզբզում էր ծծանի վրա։

— Մտածեք ձեր անուշիկ ընկերուհու մասին,— շարունակեց անհանգստացած տիկին Ալիսը,— կամ ավելի ճիշտ, Փիլոյի գործի մասին,— իրեն ուղղեց քարտուղարուհին։

— Ես անուշիկ ընկերուհի չունեմ,— ասաց Սիմոնը։

— Իսկ այս առավոտվա՞նը, անունն ի՞նչ է։

— Չգիտեմ։

Իսկապես, նույնիսկ անունը չգիտեր։ Փարիզում ապրում էր մեկը, որի մասին ոչինչ չգիտեր։ Դա արդեն հրաշալի էր։ Ամբողջովին անհոգալի։ Ինչ-որ մեկը, որի մասին օրեր շարունակ, սիրտն ուզածի չափ կարողանար երազել։

* * *

Ռոժեն պառկել էր հյուրասրահի բազմոցին, ծխում էր հանգիստ, հոգնությունից ուժասպառ։ Ամբողջ օրն անց էր կացրել կառամատույցի վրա մեքենաների բեռնաթափումը հսկելով, թրջվել էր, և նույնիսկ ստիպված էր եղել ճաշի ժամին անցնել Լիլի ճանապարհը, հասնելու համար այն վթարի վայրը, որը հարյուր հազար ֆրանկից ավելի վնաս էր հասցրել իրեն։ Փոլը սեղանն էր հավաքում։

— Իսկ այդ Թերեզա՞ն,— հարցրեց Ռոժեն։

— Ի՞նչ Թերեզա։

— Տիկին Վան դեն Թեշը։ Այս պառավոտ հիշեցի անունը, աստված գիտե որտեղից։

— Կարգավորված է։ Ամեն ինչով զբաղվելու եմ։ Այդ մասին չխոսեցի քեզ հետ, քանի որ հոգսերով ծանրաբեռնված էիր...

— Քեզ թվում է, թե ես կարող եմ վշտանալ, որովհետև դու այլևս հոգս չունե՞ս։

— Ո՛չ։ Պարզապես մտածում էի...

— Կարծում ես այդքան հնասե՞ր եմ, Փոլ։

Ռոժեն նստել էր բազմոցին, կապույտ աչքերով նայում էր նրան, զայրացած էր։ Փոլը պետք է հանգստացներ Ռոժեին, համոզեր, որ ամենալավ տղամարդն է. իհարկե, որոշ իմաստով ճիշտ է, որ երջանկացնում էր իրեն։ Նստեց կողքին։

— Դու հասասեր չես։ Դու քո գործերով ես զբաղված, և բնական է, որ դրանց մասին էլ խոսես...

— Ո՛չ։ Ուզում եմ ասել, քո տեսանկյունից։ Շա՞տ հասասեր ես համարում ինձ։

Ռոժեն նկատեց, որ ամբողջ օրն այդ մասին էր մտածել, հավանաբար այն պահից, երբ նախորդ օրը թողեց նրան դռան առջև խոնավ աչքերով։ Փոլը տատամսեց, Ռոժեն երբեք այդպիսի հարցում չէր արել և գուցե ժամանակն էր հետը խոսելու։ Բայց բարձր տրամադրության մեջ էր, ինքնավստահ, իսկ նա այնքան հոգնած տեսք ուներ... Ընկրկեց։

— Ո՛չ, Ռոժե։ Ճիշտ է, լինում են պահեր, որ մենակ եմ զգում, ոչ այնքան երիտասարդ, և անկարող քեզ հետևելու։ Բայց երջանիկ եմ։

— Երջանի՞կ ես։

— Այո՛։

Նորից պառկեց։ Փոլն ասել էր. «Երջանիկ եմ» և նեղություն պատճառող փոքրիկ հարցը, որն ամբողջ օրը հալածել էր իրեն, պետք է անհետանար։ Նրան միայն այդ էր հարկավոր։

— Դե, գիտես, բոլոր այս մանր պատմությունները, որ կատարվում են, դրանք... մի խոսքով, գիտես դրանց արժեքը։

— Այո, այո,— ասաց նա։

Փոլը նայում էր նրան, աչքերը փակ էին. նրա մեջ տեսնում էր մանկան։ Մեկնված բազմոցին, այդքան հսկա, այդքան ծանրամարմին և այդպիսի հարցում. «Երջանի՞կ ես»։ Մեկնեց ձեռքը, Փոլը բռնեց և նստեց կողքին։ Ռոժեն աչքերը փակ էր պահում։

— Փո՛լ,— ասաց նա,— Փո՛լ... առանց քեզ, գիտե՞ս, Փո՛լ...

— Այո։

Փոլը կռացավ և համբուրեց այտը։ Արդեն քնել էր։ Առանց զգալու Ռոժեն քաշեց ձեռքը Փոլի ձեռքերի միջից, բարձրացրեց և դրեց սրտին։ Փոլը բաց արեց գիրքը։



Մեկ ժամ անց Ռոժեն արթնացավ, կենսախինդ, նայեց ժամացույցին, և որոշեց, որ ժամանակն է այդ բոլոր անիծյալ մեքենաները մոռացության մեջ նետելու, գնալ պարելու և խմելու։ Փոլը քնել էր ուղում, բայց ոչ մի պատճառաբանություն չէր կարող Ռոժեի ցանկությանը դեմ գնալ։

Նոր միջավայր տարավ նրան, Սեն-Ժերմեն պողոտայի կանաչապատ, ստվերախիտ գետնահարկ կաբարեներից մեկը, ուր ձայնարկիչը տարածում էր հարավ-ամերիկյան երաժշտությունը։

— Չեմ կարող ամեն երեկո դուրս գալ,— ասաց Փոլը նստելով,— շուտով հարյուր տարեկան եմ դառնալու։ Նույնիսկ այս առավոտ, երբ վեր կացա...

Միայն այդ բոպեին հիշեց Սիմոնին։ Ամբողջովին մոռացել էր նրան։ Շրջվեց Ռոժեի կողմը։

— Պատկերացրու այս առավոտ...

Բայց չշարունակեց։ Սիմոնը կանգնել էր իր դիմաց։

— Բարև՛,— ասաց նա։

— Պարոն Ֆերթեթ, պարոն Վան դեն Բեշ,— ասաց Փոլը։

— Ես փնտրում էի ձեզ,— ասաց Սիմոնը,— և գտա, լավ նշան է։

Ու առանց սպասելու ընկավ աթոռին։ Ռոժեն դժգոհությամբ վեր կացավ։

— Ամենուրեք փնտրում էի ձեզ,— շարունակեց Սիմոնը,— արդեն ինձ ու ինձ հարցնում էի, երազո՞ւմ եմ տեսել ձեզ։

Աչքերը փայլում էին, ձեռքը դրել էր զարմացած Փոլի թևին։

— Դուք, հավանաբար, ուրիշ սեղան եք զբաղեցրել,— ասաց Ռոժեն։

— Ամուսնացա՞ծ եք,— հարցրեց Սիմոնը Փոլին,— չէի ուզենա հավատալ։

— Զզայնացնում է ինձ,— բարձրաձայն ասաց Ռոժեն,— ես հիմա կհեռացնեմ դրան։

Սիմոնը նայեց Ռոժեին, հետո գլուխը ձեռքերի մեջ առած երկու արմունկով հենվեց սեղանին։

— Իրավացի եք, պարոն, նեղեցե՛ք, խնդրեմ, կարծում

եմ մի քիչ խմած եմ։ Բայց այս առավոտ հայտնաբերեցի, որ կյանքում ոչինչ չեմ արել։ Ոչինչ։

— Այդ դեպքում հաճելի մի բան արեք և հեռացեք այստեղից։

— Թո՛ղ նրան,— կամացուկ ասաց Փոլը։— Նա դժբախտ է։ Ամեն մարդ էլ կարող է օրերից մի օր հարբել։ Դա քո... ը՛ը՛ը՛, Թերեզայի որդին է։

— Որդի՞ն,— հեառաքրքրված հարցրեց Ռոժեն,— ...Դա արդեն չափից վեր է։

Թեքվեց առաջ, Սիմոնը գլուխը դրել էր թևերին։

— Արթնացե՛ք,— ասաց Ռոժեն,— գնանք միասին մի-մի բաժակ խմենք։ Կբացատրեք ձեր դժբախտության պատճառը։ Գնամ բաժակները բերեմ, թե չէ երկար են սպասեցնում այստեղ։

Փոլն սկսում էր զվարճանալ։ Ռոժեի և այս տարօրինակ երիտասարդի միջև կայանալիք խոսակցության մասին մտածելով՝ նախապես ուրախանում էր։ Սիմոնը գլուխը բարձրացրել, նայում էր Ռոժեին, որը մեծ դժվարությամբ շարժվում էր սեղանների արանքով։

— Ա՛յ թե տղամարդ է,— ասաց նա,— չէ՞։ Իսկական տղամա՛րդ։ Զզվում եմ այսպիսի ուժեղ, առնական, անբիծ գաղափարներով տարված տիպերից, ես...

— Մարդ չպետք է այդքան հասարակ լինի,— շորությամբ պատասխանեց Փոլը։

— Սիրո՞ւմ եք նրան։

— Ձեր ինչ գործն է։

Մազափունջն ընկել էր Սիմոնի աչքերին, մոմերի լույսը փոսեր էր փորում նրա դեմքին, հոլակապ տեսք ուներ։ Հարևան սեղանից երկու կին բերանները բաց նայում էին նրան։

— Ներեցեք, խնդրեմ,— ասաց Սիմոնը։— Բայց տես է՞, զարմանալի բան. առավոտից սկսած ամբողջ օրս անց եմ կացրել ներողություն խնդրելով։ Գիտեք, ինձ թվում է, թե ես տխմար եմ։

Ռոժեն վերադառնում էր երեք բաժակ ձեռքին և քրթմնջալով ասում, որ ամեն մարդ էլ կարող է օրերից մի օր նման վիճակի մեջ ընկնել։ Սիմոնը մեկ ումպով դատարկեց բաժակը և զգուշավոր լռություն պահպանեց։ Նստել էր նրանց



կողքին և չէր շարժվում։ Դիտեց նրանց պարը, առանց խառնվելու լսեց նրանց խոսակցությունը, և վերջիվերջո մոռացվեց։ Միայն երբ Փոլը մեկ-մեկ շրջվում էր, տեսնում նրան խելոք երեխայի պես իր կողքին նստած, չէր կարողանում զսպել ծիծաղը։

Երբ վեր կացան մեկնելու, նա նույնպես քաղաքավարությամբ բարձրացավ տեղից և տապալվեց գետնին։ Որոշեցին տուն տանել նրան։ Ռոժեի ավտոմոբիլի մեջ քնել էր և նրա գլուխը տարուբերվում էր Փոլի ուսին։ Մեռաքանման մազեր ուներ, շնչում էր հանդարտ։ Փոլն ի վերջո ձեռքը դրեց նակատին, որպեսզի չզարնվի ապակուն, և գլուխը ծանրացավ ձեռքին, ամբողջովին հանձնված իրեն։ Քլթեթ պողոտայի վրա Ռոժեն իջավ, շրջանցեց ավտոմոբիլը և բացեց դռնակը։

— Զգույշ,— շշնջաց Փոլը։

Ռոժեն զարմանքով նկատեց նրա արտահայտությունը, բայց ոչինչ չասաց և Սիմոնին դուրս բերեց մեքենայից։

Այդ իրիկուն նա Փոլի հետ բարձրացավ տուն և քնի մեջ երկար ժամանակ սեղմած պահեց կրծքին՝ խանդարելով նրա քունը։

## Գլուխ 4

Հաջորդ օրը կեսօրին, երբ ցուցափեղկում ծնկի եկած աշխատում էր համոզել ձեարարին, որ գիպսե կիսանդրու գլխին գլխարկ դնելը ամենևին էլ օրիգինալ չէ, հայտնվեց Սիմոնը։ Հինգ բոպեից ավել նա տրոփող սրտով կրպակի եռևում թաքնված նայում էր Փոլին։ Չգիտեր ինչու էր սիրտը խփում. նրա՞ն էր տեսել, թե՞ թաքնվելն էր պատճառը։ Սիմոնին միշտ զուր էր գալիս թաքնվելը, երբեմն պատահում էր, որ հաղարու մի պրկումով օգտվեր միայն ձախ ձեռքից, կարծես աջը չդաձղված լիներ ատրճանակից կամ ծածկված լիներ էկզեմայով, մի բան, որ սարսափ էր ազդում խանութների հաճախորդներին։ Նա այդպես էր վարվում ելնելով հոգեբանական վերլուծությունից, գոնե այդպես էր ենթադրում նրա մայրը։

Նայելով ցուցանակի եռևում ծնկի եկած Փոլին, գերադասում էր ո՛չ ճանաչված լինել նրան, ոչ էլ տեսնել այդպես

ծնկաչոք։ Եվ անհրաժեշտություն չէր զգացվի բախվելու հավանական մերժման հետ, որն արդեն երկրորդ անգամ պիտի տանջեր։ Ինչո՞ւ կարող էր դուրս տված լինել նախորդ օրը։ Իրեն փոքրիկ հիմարի պես էր պահել, կեղտոտ ձևով հարբել էր, խոսել էր իր հոգեկան վիճակի մասին. անպատշաճության գլուխգործոց... Նորից պահ մտավ կրպակի ետևը, վում, քիչ էր մնում հեռանար, հետո մի վերջին հայացք նետեց նրա վրա։ Հանկարծ ցանկություն առաջացավ կտրել-անցնել փողոցը, խլել նրանից գլխարկը, երկար ասեղներով այդ դաժան գլխարկը, միաժամանակ խլել նրան այս աշխատանքից, այդ կյանքից, որը պահպանելու համար անհրաժեշտ էր վեր կենալ արևի առաջին շողերի հետ, գալ և ծնրադրել ցուցափեղկի ետևում, անցորդների հայացքի տակ։ Հետիոտները կանգ էին առնում, հետաքրքրությամբ նայում էին, և անկասկած շատ-շատերն էին տենչում ունենալ նրան այս նույն դիրքով. ծնկաչոք, թևերը մեկնած դիպսե արձանին։ Մեծ ցանկություն զգաց տիրելու նրան և անցավ փողոցը։

Արդեն պատկերացնում էր Փոլին իր հայացքի տակ ընկղմված, ուժասպառ իր կողմը շրջվելիս, ինչպես կշրջվեն ցանկալի, բայց անհուսալի ինչ-որ բանի կողմը, սակայն Փոլը բավարարվեց մի չոր ժպիտով։

— Որևէ մեկի համար ցանկանում եք գլխարկ դնել։

Սիմոնը կմկմաց, իսկ ձևարարը կոտրատվելով հրում էր նրան։

— Սիրելի պարոն, դուք սպասում եք Փոլին, լավ է, բայց նստեք այստեղ և թույլ տվեք ավարտել գործը։

— Նա ինձ չի սպասում,— ասաց Փոլը տեղաշարժելով փոքրիկ մոմակալը։

— Եթե ես լինեի ձեր փոխարեն, ձախ կողմը կդնեի,— ասաց Սիմոնը,— մի քիչ ավելի ետ։ Ավելի տպավորիչ կլինի։

Փոլը բարկացած նայեց նրան։ Սիմոնը ժպտաց։ Արդեն փոխել էր դիրը։ Նման էր վայելուչ միջավայրից սիրուհուն տանելու եկած երիտասարդի, ճաշակով հագնված երիտասարդի։ Իսկ ոչ այնքան ցայտուն ձևով արտահայտված հոմոսեքսուալ ձևարարի հիացմունքը Փոլի և Սիմոնի համար գարձել էր կամ դառնալու էր ծիծաղելի թեմա։



— Իրավունք ունի,— ասաց ձևարարը,— ավելի տպավորիչ է։

— Ինչո՞վ,— սառնորեն վրա բերեց Փոլը։

Նրանք նայեցին Փոլին։

— Ոչնչով։ Բացարձակապես ոչնչով։

Եվ Սիմոնն սկսեց մեն-մենակ ծիծաղել, այնպիսի մի կվարթ ծիծաղով, որ Փոլը շրջեց գլուխը նրան չմիանալու համար։ Վիրավորված ձևարարը մի կողմ քաշվեց։ Եվ երբ Փոլը ավելի լավ դիտելու համար մի փոքր հեռացավ ցուցափեղկից, կպավ իրեն մոտեցած Սիմոնի ուսին, վերջինս հարթակի վրա բռնեց նրա արմունկը։

— Տեսե՛ք,— ասաց նա երազկոտ ձայնով,— ի՞նչ արև է։

Ջրով ցողված ապակու ետևից արևը լցվում էր նրանց մեջ իր հանկարծահաս, խղճի խայթով լեցուն աշնանաթեր ջերմ շողերով։ Այդ ջերմությունը ողողեց Փոլին։

— Այո,— ասաց նա,— արև է։

Մի պահ մնացին անշարժ, Փոլը՝ դեռ հարթակին, մեջքով շրջված և հենված Սիմոնին։ Հետո ետ քաշվեց։

— Դուք պետք է քնեիք։

— Քաղցած եմ,— ասաց Սիմոնը։

— Որ այդպես է, գնացեք նախաճաշելու։

— Չէի՞ք ցանկանա ինձ հետ գալ։

Վարանեց։ Ոտքին հեռախոսով հայտնել էր, որ երևի չկարողանար գալ։ Փոլը որոշել էր դիմացի բարից բուտերբրոդ վերցնել և որոշ զնումներ անել։ Բայց արևի հանկարծակի հրավերը զզվելի դարձրեց սրճարանների սալահատակները և հանրախանութների միջանցքները։ Նա ցանկություն զգաց խոտ տեսնելու, թեկուզ աշնանային դեղնած խոտ։

— Ուզում եմ խոտ տեսնել,— ասաց նա։

— Գնանք,— ասաց Սիմոնը։— Հին ավտոմեքենայով եմ։ Գյուղը մոտ է...

Ուզեց դիմադրել։ Գյո՜ւղ, այս փոքրիկ, անծանոթ, գուցե նույնիսկ ձանձրալի երիտասարդի հետ... երկու ժամ դեմ առ դեմ նստած...

— Կամ Բուլոնյան անտառ,— վստահորեն ավելացրեց Սիմոնը,— եթե ձանձրանաք, կարող եք հեռախոսով տաքսի պատվիրել։

— Ամեն ինչի մասին մտածում եք։

— Պետք է խոստովանեմ, որ արթնանալուց հետո շատ ամաչեցի։ Եկել էի ներողություն խնդրելու։

— Ամեն մարդու հետ էլ նման բան պատահում է,— բարությամբ ասաց Փոլը։

Նա հագնում էր վերարկուն. սովորաբար շատ ճաշակով էր հագնվում։

Սիմոնը բացեց դռնակը, և նա նստեց չհիշելով նույնիսկ թե երբ էր ասել «այո», ընդունելով այս անհեթեթ նախաճաշը հրավերը։ Ավտոմոբիլնա բարձրանալու ժամանակ գուլպաները դիպավ նստարանին և մի փոքր բարկացած սկսեց տրտնջալ։

— Ենթադրում եմ, որ ձեր փոքրիկ ընկերուհիները տարբաս են հագնում։

— Այլևս չունեմ,— ասաց նա։

— Փոքրիկ ընկերուհիներ։

— Այո։

— Այդ ինչպե՞ս։

— Գգիտեմ։

Փոլն ուզում էր ձեռք առնել նրան։ Նման երկչոտություն և համարձակություն, նույնիսկ ծիծաղելի դառնալու չափ լրջություն և հումորի համաձուլումը, զվարճացնում էր նրան։ Նա ասել էր. «Գգիտեմ» համարյա կիսաձայն և խորհրդավոր տեսքով։ Փոլը շարժեց գլուխը։

— Աշխատեք հիշել... Երբվանի՞ց սկսեց ձեզ մոտ սիրտ նկատմամբ այսպիսի ուժացում առաջանալ։

— Ավելի շուտ ես էի, գիտեք։ Բարի, շատ ռոմանտիկ մի աղջկա հետ էի։ Նա նման էր քառասուն տարեկան հասակում երիտասարդության հանդեպ ունեցած մարդկանց պատկերացմանը։

Այդ հարվածը Փոլը ներքուստ ընդունեց իր վրա։

— Ինչպե՞ս են պատկերացնում երիտասարդությունը քառասուն տարեկան հասակում։

— Դե՜... խռովահույզ տեսք ուներ, ամբողջ արագությամբ, առանձները սեղմած վարում էր չորս ձիաուժը, «Գոլուազ» էր ծխում հենց որ արթնանում էր... իսկ ինձ էլ ասում էր, որ սերը երկու մարմինների շփում է միայն։

Փոլն սկսեց ծիծաղել։



— Հետո՞։

— Երբ հեռացա, համենայն դեպս լաց եղավ։ Ես չեմ հպարտանում դրա համար,— աշխուժորեն ավելացրեց նա,— զղվում եմ այդ բանից։

Բուլոնյան անտառը թրջված խոտի բույր էր արձակում, այն անտառի բույրը, որ սկսում է հանդարտ բորբոքել, աշնանային ճանապարհների բույրը։ Կանգ առավ փոքրիկ ռեստորանի առջև, արագ պատվեց մեքենայի շուրջը, որպեսզի դռնակը բացի։ Փոլը մկանները ձգած մեծ ջանք թափեց շնորհալի դիրքով դուրս գալու համար։ Ամեն կերպ աշխատում էր մարդկանց աչքին չերևալ։

Սիմոնն անմիջապես կոկտեյլ պատվիրեց, իսկ Փոլը խրատորեն նայեց նրան։

— Այդպիսի դիշեր անցկացնելուց հետո ջուր պետք է խմեիք։

— Շատ լավ եմ զգում ինձ։ Հետո քաջություն պակասում է։ Հարկավոր է ինձ կարդի հրավիրել, որպեսզի շատ չանձրանաք, ուժ եմ հավաքում։

Ռեստորանը համարյա դատարկ էր, իսկ մատուցողը փնթփնթան մարդ էր։ Պատվիրելուց հետո Սիմոնը լռում էր, անընդհատ լռում։ Փոլն այդ միջոցին չէր էլ մտածում ձանձրանալու մասին։ Զգում էր, որ դա կամովին լռություն է, որ Սիմոնը այս նախաճաշի հետ կապված պլանավորված խոսակցություն ուներ վարելու։ Նրա ուզեղը կատվի նման պետք է որ թաքուն մտքերով հարուստ լիներ։

— Շատ ավելի տպավորիչ է,— հանկարծ կոտրատվեց նա ընդօրինակելով ձևարարին, իսկ Փոլը զարմացած սկսեց բարձրաձայն ծիծաղել։

— Մի՞շտ է հաջողվում այդպես լավ ընդօրինակել։

— Ոչինչ։ Դժբախտաբար ընդհանուր շատ կապեր չունենք։ Եթե ընդօրինակեմ մորս, կասեք, որ անարժան զավակ եմ։ Այնինչ. «Չե՞ք կարծում, որ սատինի տպավորությունը այստեղ, աջ կողմում ավելի ճոխ կդարձնի։

— Անարժան, բայց ճշմարտացի։

— Ինչ վերաբերում է ձեր երեկվա բարեկամին, լավ չտեսա նրան։ Եվ հետո երևի նա անընդօրինակելի է։

Մի բոպեի չափ լռություն տիրեց։ Փոլը ժպտաց։

— Նա այդպիսին է։

— Իսկ ես ընդամենը չափից դուրս երես առած տասնյակ երիտասարդների գունատ պատճենն եմ, որոնք իրենց ծնողների շնորհիվ խցկվել են ազատ մասնագիտությունների մեջ և միայն զբաղված լինելու համար են զբաղվում։ Դրա փոխարեն դուք կորցնում եք, ուզում եմ ասել. նախաճաշելու համար...

Նրա ձայնի հարձակողական տոնը սթափեցրեց Փոլին։

— Ռոժեն զբաղված էր,— ասաց նա,— այլապես ես այստեղ չէի լինի։

— Ես շատ լավ գիտեմ այդ,— պատասխանեց Սիմոնը այնպիսի տխուր ձայնով, որ Փոլի ծրագրերը միանգամից փլվեցին։

Նախաճաշի մնացած մասը խոսեցին իրենց օրինական աշխատանքի մասին։ Սիմոնը կապկեց ծանր հանցագործության մի ամբողջ դատավարություն։ Եղավ մի պահ, որ նա վեր կացավ, մատը տնկեց Փոլի կողմը, որ անընդհատ ծիծաղում էր.

— Իսկ ձեզ, դատապարտում եմ ձեր մարդկային պարտքը չկատարելու համար։ Այս մահացածի անունից դատապարտում եմ ձեզ սերն արհամարհելու համար, երջանիկ լինելու պարտականությունը անտեսելու համար, անհիմն փախուստների, վտարումների ենթարկվելու համար և համակերպված ապրելու համար։ Դուք պետք է մահվան դատապարտվեք, կդատապարտվեք մենակեցության։

Ընդհատեց խոսքը, մեկ ումպով դատարկեց գինու բաժակը։ Փոլը չէր շփոթվել։

— Անողոք պատիժ,— ասաց նա ժպտալով։

— Ամենավատը,— պատասխանեց Սիմոնը,— դրանից ավելի վատ չեմ պատկերացնում և անիրագործելի է։ Այլևս ոչ մի բան չի վախեցնում ինձ։ Ինչպես մնացած բոլոր մարդկանց։ Բայց ոչ ոք չի խոստովանում։ Երբեմն ես ցանկանում եմ բարձրաձայն ոռնալ այդ մասին. վախենում եմ, վախենում եմ, սիրեցե՛ք ինձ։

— Ես նույնպես,— կարծես իրենից անկախ ասաց Փոլը։

Նույն րոպեին նրա աչքերի դեմ կանգնեց իր մահճակալի առջև բարձրացող պատը։ Փակ վարագույրներով, հնոտ բնա-



տակերներով, ձախ կողմում տեղավորված փոքրիկ պահանով ննջասենյակը։ Այն ամենը, որոնց նայում էր ամեն օր, ոստոստ-իրիկուն, այն ամենը, որոնց նայելու էր հավանաբար տասը տարի հետո։ Առավել ևս մենակ, քան այսօր։

Ռոժե՞, ի՞նչ էր անում Ռոժեն։ Նա իրավունք չուներ, ոչ ոք իրավունք չուներ դատապարտելու իրեն այսպես ծերանալու, ոչ ոք, մինչև անգամ ինքը...

— Ես ձեր աչքին երևի ավելի ծիծաղելի ու ողբացյալ եմ երևում, քան երեկ երեկոյան,— ասաց Սիմոնը կամաց,— կամ մտածում եք, որ երիտասարդ տղայի կատակերգություն եմ խաղում ձեր սիրտը քնքշացնելու համար։

Կանգնած էր Փոլի դիմաց՝ վառվռուն աչքերում թեթևակի լաղվածք, դեմքը այնպես հարթ, այնպես պայծառ, որ քիչ էր մնում Փոլը ձեռքով շոյեր։

— Ոչ, ոչ...— ասաց նա,— նույնիսկ մտածում էի... մտածում էի, որ այդպես դատելու համար շատ երիտասարդ եք։ Եվ անկասկած, շատ սիրված։

— Երկուսը միասին պետք է լինեն,— ասաց Սիմոնը։— Նկիր, մի քիչ քայլենք դրսում։ Շատ գեղեցիկ եղանակ է։

Դուրս եկան, Սիմոնը թևանցուկ արեց նրան և քայլեցին առանց խոսելու։ Աշունը լցվում էր Փոլի հոգում անհամեմատ քնքշությամբ։ Թաց, կարմրավուն, կոխոտված, մեկը մյուսին կպած տերևները կամաց-կամաց ձուլվում էին հողին։ Փոլն ինչ-որ խանդաղատանք զգաց այդ անմռունչ սրվագծի հանդեպ, որ բռնել էր իր թևը։ Մի քանի րոպեով այդ անծանոթը դարձել էր ուղեկից, այնպիսի մեկը, որի հետ քայլում էր տարեմուտին ամայի ծառուղիով։ Նա միշտ երբորեն էր վարվում թե՛ իր ճանապարհի, թե՛ կյանքի ուղեկիցների հետ, լցված մի տեսակ երախտագիտությամբ, կարծես իրենից բարձր կանգնած լիներն, իրարից այնքան տարբեր և միաժամանակ այնքան նման իրար։ Նա վերհիշեց Մարկի՝ իր ամուսնու դեմքը, որին լքել էր իր խաղաղ կյանքի հետ միասին, մեկ ուրիշ դեմք, որ շատ էր սիրել իրեն։ Եվ վերջապես Ռոժեի դեմքը, միակ դեմքը, որին իր հիշողությունը վերարտադրում էր կենդանի, փոփոխական արտահայտություններով։ Երեք ուղեկից մի կնոջ կյանքում. երեք լավ ուղեկից։ Շատ չէ՞ր։

— Տխո՞ւր եք,— հարցրեց Սիմոնը։

Շրջվեց նրա կողմը, ժպտաց առանց պատասխանելու։ Շարունակեցին իրենց ճանապարհը։

— Ես կուզեի,— խեղդված ձայնով ասաց Սիմոնը,— ես կուզեի, որ... Ես ձեզ չեմ ճանաչում, բայց կուզեի, որ երբեք նիկ լինեք։ Ես, ը՛ը՛ը՛, ես հիանում եմ ձեզանով։

Փոլն այլևս չէր լսում նրան։ Ուշ էր։ Ռոժեն երևի զանգահարել էր, որ միասին սուրճ խմեն։ Կարող էր չհասնել այդ զանգին։ Ռոժեն ասել էր իրեն, որ շաբաթ օրը գյուղում էին անցկացնելու։ Ինքը կարո՞ղ էր ավելի շուտ վերջացնել այդ խառնանքը։ Եվ դեռ ցանկություն կունենա՞ր։ Թե՞ այն խոստումներից էր, որ դիշերին սերը խլում էր նրանից, երբ, Փոլ դիտեր այդ, Ռոժեն առանց իրեն չէր պատկերացնում կյանքը, և իրենց սերը թվում էր այնպիսի ծանր անհրաժեշտ հավատնականություն, որի համար այլևս չէր պայքարում։ Բայց հենց որ դռնից դուրս էր գալիս, հենց որ մայթին շնչում էր իր անկախության սուր հոտը, Փոլը դարձյալ կորցնում էր նրան։ Ամբողջ ճանապարհին շատ քիչ խոսեց, նախաճաշի համար շնորհակալություն հայտնեց Սիմոնին և ասաց, որ չափազանց ուրախ կլինի, եթե օրերից մի օր զանգահարի։ Սիմոնն առանց շարժվելու նայեց նրա հետևից մինչև հեռանալը։ Շատ հոգնած էր զգում իրեն և շատ ձախորդ։

## Գլուխ 5

Իրոք որ հաճելի անակնկալ էր։ Ռոժեն շրջվեց մահճակալի գլխավերևում դրված սեղանի կողմը և փնտրեց ծխախոտը։ Իր կողքին պառկած երիտասարդ կնոջ շրթունքին ժպիտ խաղաց։

— Տղամարդիկ հետո միշտ ծխում են։

Այնքան էլ օրիգինալ դատողություն չէր։ Ռոժեն մեկնեց ծխախոտատուփը, կինը դլխի շարժումով հրաժարվեց։

— Մեղի՛, կարո՞ղ եմ մի հարցով դիմել ձեզ։ Ի՞նչ պատահեց այս երեկո ձեզ հետ։ Երկու ամսից ավելի է, որ ճանաչում ենք իրար, և դուք երբեք չեք հեռացել այդ պարոն Շերելից...



— Պարոն Շերելը գործիս համար է պետք ինձ։ Ցանկացա մի փոքր զվարճանալ։ Հասկացա՞ր։

Այդ ընթացքում Ռոժեն նկատեց, որ նա պատկանում է այն կանանց դասին, որոնք մեջքի վրա պառկելուն պես ինքնաբերաբար անցնում են «դուշ»-ի։ Սկսեց ծիծաղել։

— Ինչո՞ւ անպայման՝ ես։ Չէ՞ որ այնքան լավ երիտասարդներ կային կոկտեյլի այդ հավաքույթին։

— Գիտե՞ս, երիտասարդները խոսում են, խոսում։ Իսկ դու գոնե, երևում է, որ սիրում ես այդ բանը։ Եվ երդվում եմ, հազվադեպ կարելի է հանդիպել այսպիսիներին։ Կանայք զգում են այդ։ Ինձ մի համոզիր, որ վարժված չես հաղթանակների...

— Ոչ այսքան արագ,— ասաց Ռոժեն ծիծաղելով։

Շատ դեղեցիկ կին էր։ Նրա փոքրիկ ուղեղում անկասկած կյանքի, տղամարդկանց, կանանց վերաբերյալ շատ մտքեր կային։ Եթե Ռոժեն մի փոքր պնդեր, նա կբացատրեր, թե ինչ բան է կյանքը։ Շատ հաճելի կլիներ։ Ինչպես ամեն անդամ, նա իրեն տեսնում էր հեռու, քնքշացած, սարսափելով այն դաղափարից, թե իրարից այնքան տարբեր այդ դեղեցիկ մարմինները, որոնց այնպես սիրում էր բացահայտել, շրջում են փողոցներում, շրջում են կյանքում, ջրված իրենց անվրդովահ ու խցանված փոքրիկ գլուխներից։ Նոյեց նրա մազերը։

— Երևում է քնքուշ մարդ ես,— ասաց Մեղին,— քիզ նման կոպիտ հսկաները միշտ քնքուշ են։

— Դե, իհարկե,— ցրված պատասխանեց Ռոժեն։

— Չեմ ուզում թողնել քեզ,— շարունակեց նա,— եթե իմանայիր որքան ձանձրալի մարդ է այդ Շերելը...

— Երբեք չէի կարող իմանալ։

— Իսկ եթե երկու օրով մեկնե՞նք, Ռոժե։ Շաբաթ և կիրակի։ Չե՞ս ուզում։ Կմնայինք անշարժ պառկած, մի մեծ սենյակում, գյուղում։

Ռոժեն նայեց նրան։ Մեղին բարձրացել էր արմունկի վրա։ Ռոժեն տեսնում էր նրա վզին տրոփող զարկերակը, իսկ նա իրեն նայում էր այնպես, ինչպես այդ նշանավոր կոկտեյլի երեկույթի ժամանակ։ Ռոժեն ժպտաց։

— Ասա, այո՞։ Անմիջապես, լսում ես...

— Անմիջապես,— կրկնեց Ռոժեն քաշելով նրան իր վրա։ Մեզին կռթալով կծեց նրա ուսը, և Ռոժեն հենց այնպես մտածեց, որ նույնի՞սկ սերը կարող է հիմար ձևով հանդես գալ։

* * *

— Ափսո՞ս,— ասաց Փոլը,— ինչ արած, լա՛վ աշխատիր, արագ մի՛ վարիր մեքենան։ Համբուրում եմ։

Լատիրոջը դրեց տեղը։ Վերջ երկօրյա հանգստին։ Շաբաթ օրը Ռոժեն գնալու էր Լիլ, այդպիսի բացատրություն տվեց իրեն, տեղական գործակալի հետ աշխատանքային հարցերը կարգավորելու համար։ Երևի ճիշտ էր։ Նա ամեն անգամ ենթագրում էր, որ ճիշտ է։ Անմիջապես հիշեց պանդոկը, ուր սովորաբար գնում էին միասին, ամեն կողմից վառվող կրակները, այն սենյակը, որտեղ նաֆթալինի թեթև հոտ էր տարածված, պատկերացրեց, թե ինչպիսին կարող էին լինել այդ երկու օրերը, Ռոժեի հետ կատարելիք զբոսանքները, զրույցները, երեկոն, մեկը մյուսի կողքին զարթնելու պահերը, ամբողջ ժամանակը իրեն էր պատկանելու, մի ամբողջ օր, ծովափի պես ջերմ ու ողորկ։ Շրջվեց հեռախոսի կողմը։ Կարող էր ճաշել որևէ ընկերուհու հետ, երեկոյան «բրիջ» խաղալու գնար որևէ... Ոչ մի բանի ցանկություն չուներ։ Եվ վախենում էր երկու օր մենակ մնալուց։ Առում էր միայնակ կնոջ կիրակիները. մինչև ուշ գիշեր անկողնու մեջ կարդացվող գրքեր, բազմախուռն կինոդահլիճ, գուցեև մի բաժակ կոկտեյլ կամ ընթրիք որևէ մեկի հետ և, վերջապես, տուն վերադառնալուց հետո՝ այսպիսի անսարք անկողին, այնպիսի տպավորություն, որ առավոտից ոչ մի վայրկյան չեմ ապրել։ Ռոժեն ասել էր, որ հաջորդ օրը զանգ է տալու իրեն։ Նրա ձայնը քնքուշ էր։ Դուրս գալուց առաջ Փոլը սպասելու էր նրա հեռախոսազանգին։ Ամեն դեպքում ինքը գործեր ուներ կարգադրելու, կանանց կյանքում այնքան բնորոշ հազար ու մի մանր-մունր գործերից, որ մայրը միշտ պատվիրում էր կատարել, իսկ իրեն քողարկված ձևով զզվանք էր պատճառում։ Կարծես ժամանակը փոխկամորթ կենդանի լինեիր, որին հարկավոր էր ձևավորել։ Եվ համարյա միշտ իրեն հանձնում էր այդ ցանկության պակասի համար։ Գուցե իսկապես, լինում են պահեր, երբ այլևս չպետք է գրոհեն իր կյանքի վրա, այլ պաշտպանվեն դրանից, ինչպես բացբերան պառավ բարեկամուհուց։ Արդեն այստե՞ղ էր հասել։ Եվ նրան թվաց թե իր ետևում լսում է երկարաձիգ մի հառաչ, «արդե՞ն»-ի մի երկարաձիգ խմբերգ։

Այդ նույն շաբաթ օրը ժամը երկուսին որոշեց զանգ տալ տիկին Վան դեն Բեշին։ Թեև հրաշքով Դովիլում չլիներ, կեսօրից հետո երևի աշխատեր նրա հետ։ Միակ բանը, որ հրապուրեց նրան։ «Այն մարդկանց պես,— մտածեց նա,— որ կիրակի օրերը գնում են գրասենյակ ընտանիքից խուսափելու համար։ Տիկին Վան դեն Բեշը լիղապարկի թեթև ցավեր ուներ, նկատելիորեն ձանձրանում էր և ոգևորությամբ ընդունեց նրա առաջարկը։ Ամենազանազան նմուշներով զինված, Փոլը գնաց Քլեբեր պողոտա։ Ծաղկավոր խալաթը հագին տիկին Վան դեն Բեշը, մի բաժակ «էվիան» հանքային ջուրը ձեռքին, թեթևակի կռացած, դիմավորեց նրան։ Փոլը մի ակնթարթ մտածեց, որ Սիմոնի հայրը շատ գեղեցիկ տղամարդ պետք է եղած լիներ այսպիսի հասարակ դեմքի հակակշռելու համար։

— Ինչպե՞ս է ձեր որդին։ Գիտե՞ք որ անցյալ գիշեր հանդիպեցինք նրան։

Ցավելացրեց, որ նախորդ օրը ճաշել էր նրա հետ և զարմացավ նման գաղտնապահության համար։ Իր դիմաց անմիջապես տեսավ տանջահար մի դեմք։

— Ի՞նչ իմանայի։ Ինձ հետ չի խոսում, ոչինչ չի պատմում, անշուշտ, բացի նյութական հոգսերից։ Դրան ալեկոծված, խմում է։ Հայրն էլ էր խմում։

— Հարբեցողի տեսք չունի,— ժպտաց Փոլը։

Նրան պատկերացավ Սիմոնի ողորկ դեմքը, նրա զուտ անգլիական դիմագծերը։

— Գեղեցիկ է, չէ՞։

Տիկին Վան դեն Բեշը աշխուժացավ, բաց արեց ալբոմները, որտեղ Սիմոնի մանկությունն էր. Սիմոնը երիվարի վրա անպլուհիների հետ փաթաթված, Սիմոնը ապշած դպրոցականի տեսքով և այլն։ Երևի հաղարավոր նկարներ

ուներ, և Փոլը ներքուստ հիացավ, որ նա ոչ զզվելի էր դարձել, ոչ էլ հմոսեքսուալիստ։

— Բայց միշտ էլ լինում են պահեր, որ երեխաները հեռանում են մեզնից,— տխուր հառաչեց մայրը։

Եվ նույն րոպեին նա դարձավ այն թեթևսոլիկ կինը, որ, ինչպես երևում է, եղել է նախկինում։

— Պետք է ասել, որ նա առիթը բաց չի թողնում...

— Իսկապես,— քաղաքավարությամբ ասաց Փոլը,— կցանկանայի՞ք տեսնել այս կտորների նմուշները, տիկին, սրանց մեջ կա մեկը...

— Ինձ Թերեզա ասեք, խնդրում եմ։

Նա մտերիմ էր դառնում, թեյ էր պատվիրում, հարցեր էր տալիս։ Փոլը մտածում էր, որ Ռոժեն քսան տարի առաջ պատկել էր նրա հետ և իզուր էր այդ ծանր դեմքի վրա փընտրում հրապույրի հետքեր։ Միևնույն ժամանակ նա փորձում էր անհույս կերպով խոսակցությունը տանել պաշտոնական հողի վրա, բայց տեսնում էր, որ Թերեզան անընդհատ գլորվում է կանացի խոստովանությունների գիրկը։ Միշտ այդպիսին էր եղել։ Նրա դեմքին հավասարակշռված հպարտության պես ինչ-որ բան կար, որը հրահրում էր լուսանքների հեգնանքը։

— Հավանաբար ինձնից ավելի երիտասարդ եք,— վերսկսեց տիկին Վան դեն Բեշը, և Փոլը չկարողացավ թաքցնել ժպիտը այդ «հավանաբար»-ի հանդեպ,— բայց գիտեք թե ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ շրջապատը...

Փոլն այլևս չէր լսում նրան։ Այս կինը հիշեցնում էր մեկ ուրիշին։ Նկատեց, որ նա պարզապես նման էր այն ընդօրինակությանը, որ երեկ ցուցադրել էր Սիմոնը և մտածեց, որ վերջինս ինչ-որ ներքին զգացության հատկություն ունի, ինչ-որ դժգոհություն, որ թաքցնում է իր երկչոտությունը։ Ի՞նչ էր ասել իրեն. «Ձեզ դատապարտում եմ սերն արհամարհելու համար, որ ապրել եք նյութական ծանր կացության մեջ, ենթարկվելով ուրիշին, ես ձեզ դատապարտում եմ մենակեցության»։ Մտածո՞ւմ էր արդյոք իր մասին։ Իր կյանքից ինչ-որ բան զուշակե՞լ էր արդյոք։ Միտումնավոր կերպո՞վ էր արել։ Այդ մտքից, Փոլն զգում էր, որ համակվում է բարկությամբ։

Այլևս չէր լսում շուրջը ծավալվող երկարաշունչ շատախոսությունը, և Սիմոնի մուտքը ցնցեց նրան։ Վերջինս տեսնելով Փոլին, կտրուկ կանգ առավ, մի փոքրիկ ծամածռություն արեց թաքցնելու համար զգացած հաճույքը, որ-բավականին հուզեց Փոլին։

— Լավ ժամանակի հասա, կօգնեմ ձեզ։

— Ափսո՞ս, ես հիմա գնում եմ։

Յանկանում էր անմիջապես դուրս գալ, փախչել, խուսափել մոր ու որդու զույգ հայացքներից, ի վերջո, որևէ գիրք ձեռքին ծվարել իր տանը։ Այդ ժամին նա պետք է Ռոժեի հետ ճանապարհին լիներ, միացներ, անշատեր ռադիոընդունիչը, ծիծաղեր նրա հետ կամ սարսափեր, երբ վարորդի կույր կատաղությունը համակեր նրան, որ երբեմն մահվան դուռն էր հասցնում նրանց։ Հանդարտ վեր կացավ։

— Ես ձեզ կուղեկցեմ,— ասաց Սիմոնը։

Դռան առջև Փոլը շրջվեց և իր գալուց հետո առաջին անգամ նայեց նրան։ Վատ տեսք ուներ, և Փոլը չկարողացավ այդ մասին չակնարկել։

— Ժամանակն է այդպիսին,— ասաց Սիմոնը,— կարո՞ղ եմ մինչև ներքև ուղեկցել ձեզ։

Փոլը ցնցեց ուսերը, և նրանք իջան աստիճաններով։ Սիմոնը գալիս էր նրա հետևից, առանց խոսելու։ Վերջին հարկում կանգ առավ, և Փոլն այլևս նրա ոտնաձայնը չլսելով, մեքենայաբար շրջվեց։ Հենվել էր բաղրիքին։

— Բարձրանո՞ւմ եք։

Լույսը հանգավ և երկար աստիճանները լուսավորեցին միայն լուսանցքից ներս թափանցող թեթև լույսով։ Փոլն աչքերով փնտրեց ինքնամար լույսի կոճակը։

— Ձեր հետևում է,— ասաց Սիմոնը։

Իջավ վերջին աստիճաններից և ուղղվեց նրա կողմը։ «Հիմա վրաս կնետվի»,— նեղված մտածեց Փոլը։ Սիմոնը ձախ կողմից, գլխի վրայով երկարացրեց թևը, վառեց լույսը, հետո մյուս կողմից տարավ աջ թևը։ Փոլն այլևս չէր կարող շարժվել։

— Թողե՛ք անցնեմ,— շատ հանդիստ ասաց նա։

Սիմոնը չպատասխանեց, այլ հակվեց և զգուշությամբ գլուխը դրեց նրա ուսին։ Փոլը լսեց իր սրտի ուժեղ զարկերը և հուզմունք ապրեց։

— Թողե՛ք ինձ, Սիմոն... Դուք ինձ անհանգստացնում եք։

Բայց Սիմոնը չէր շարժվում։ Պարզապես երկու անգամ ցածրաձայն շշնջաց նրա անունը. «Փո՛լ, Փո՛լ» և նրա ծոծրակի ետևից Փոլը տեսնում էր այնքան տխուր, դժոհերձարանի և լռության պես այնքան ծանր սանդուղքների վանդակը։

— Իմ փոքրիկ Սիմոն,— ասաց նույնպես ցածրաձայն,— թույլ տվեք անցնեմ։

Սիմոնը ետ քաշվեց, և Փոլը հեռանալուց առաջ ժպտաց նրան։

## Գլուխ 6

Կիրակի առավոտյան արթնանալով՝ Փոլը դռան տակ նկատեց մի գրություն, որ նախկինում բանաստեղծական անվանում ուներ. սիրատամս, և իսկապես բանաստեղծական թվաց, քանի որ արևը հայտնվելով նոյեմբերյան ցինջ երկնքում, լցնում էր սենյակը ստվերներով և ջերմ լույսով։ «Ժամը վեցին հրաշալի երաժշտություն է լինելու։ Պլեյել դահլիճում,— գրում էր Սիմոնը,— սիրո՞ւմ եք Բրամս։ Ներեցեք երեկվա համար»։ Փոլը ժպտաց։ Ժպտաց երկրորդ նախադասության համար. «Սիրո՞ւմ եք Բրամս»։ Դա այն հարցերից մեկն էր, որ տղաները տալիս էին իրեն տասնյոթ տարեկան հասակում։ Եվ անկասկած, ավելի ուշ, նորից նույն հարցը տվել էին առանց պատասխանը լսելու։ Այս միջավայրում և կյանքի այս պայմաններում ո՞վ էր ում լսում, և հետո ինքը՝ Փոլը, սիրո՞ւմ էր Բրամս։

Բաց արեց իր ձայնարկիչը, փնտրեց ձայնապնակների մեջ և Վագների ուվերտյուրներից մեկի ետևում, որ շատ լավ ծանոթ էր իրեն, գտավ Բրամսի կոնցերտներից մեկը, որ երբեք չէր լսել։ Ռոժեն Վագներ էր սիրում։ Նա ասում էր. «Գեղեցիկ է, աղմկոտ է, իսկական երաժշտություն է»։ Միացրեց կոնցերտը, առաջին մասը ռոմանտիկ թվաց, հետո մոռացավ մինչև վերջ լսել։ Նկատեց, երբ ավարտվեց երաժշտությունը և ինքն իր վրա բարկացավ։ Վերջերս վեց օր էր տևում մինչև մի դիրք վերջացներ, չէր գտնում էջը, մոռանում էր երաժշտությունը լսել։ Նրա ուշադրությունը կենտրոնանում էր միայն կատրեզենների նմուշների վրա և այն մարդու, որ երբեք այսպես չէր լինում։ Կորցնում էր ինքն իրեն, կորցնում էր սեփական հետքը, այլևս երբեք չէր վերագտնելու իրեն։ «Սիրո՞ւմ եք Բրամս»։ Մի բոպե անցավ բաց պատուհանի առջևով, արևը լցվեց աչքերի մեջ և շլացած կանգ առավ։ Իսկ այդ փոքրիկ նախադասությունը՝ «Սիրո՞ւմ եք Բրամս», կարծես միանգամից անծայրածիր մոռացում արթնացրեց, այն ամենը, ինչ մոռացել էր, այն բոլոր հարցերը, որ խուսափել էր բացեիբաց իրեն տալուց։ «Սիրո՞ւմ եք Բրամս»։ Սիրո՞ւմ էր արդյոք իրենից և իր անձնական գործից բացի ուրիշ որևէ բան։ Անշուշտ, նա ասում էր, որ Ստենդալ է սիրում, գիտեր, որ սիրում է։ Դա ճիշտ բառն էր. «գիտեր»։ Երևի նույնիսկ գիտեր, որ սիրում է նաև Ռոժեին։ Վատ չէ։ Վատ նշաններ չեն։ Նա ցանկություն զգաց խոսելու մեկն ու մեկի հետ, ինչպես քսան տարեկան հասակում էր ցանկանում։

Զանգ տվեց Սիմոնին։ Դեռ չգիտեր ինչ է ասելու նրան։ Հավանաբար ասելու էր. «Զգիտեմ, սիրո՞ւմ եմ Բրամս թե ոչ, կարծում եմ՝ ո՛չ։ Զգիտեր, կգնա՞ այդ համերգին թե ոչ։ Դա կախված կլիներ Սիմոնի ասելիքից, նրա ձայնից, տարակուսում էր, և այդ տարակուսանքը հրաշալի էր թվում իրեն։ Բայց Սիմոնը գնացել էր գյուղ ճաշելու, ժամը հինգին վերադառնալու էր հագուստները փոխելու։ Լսափողը դրեց տեղը։ Երբեմն պատահել էր, որ որոշել էր համերգի գնալ։ Մտածում էր. «Ոչ թե Սիմոնի համար եմ գնում, այլ երաժշտություն լսելու. գուցե ամեն կիրակի գնամ, եթե մթնոլորտը երեկոյան անհրապույր չլինի, միայնակ կնոջ համար լավ զբաղմունք է»։ Եվ միաժամանակ մղկտում էր, որ օրը կիրակի է, չէր կարող անմիջապես նետվել որևէ հայտնի մի խանութ ու գնել Մոցարտի ձայնապնակները, որ այնքան սիրում էր և մի քանի հատ Բրամս։ Նա միայն վախենում էր, որ համերգի ժամանակ Սիմոնը ձեռքը կրունի, վախենում էր նույնքան, որքան որ սպասում էր, և իր երևակայական սպասումների ստույգությունը անընդհատ լցվում էր նրա մեջ անհաղթահարելի անհանգստությամբ։ Նա Ռոժեին սիրում էր նաև այս բանի համար։ Վերջինս միշտ սպասման եզրին էր, ձեռք բերված բոլոր երաշխիքներում՝ մի փոքր շինծու ձևով։

Ժամը վեցին Պլեյել դահլիճում Փոլն իրեն դատավ շարժվող ամբոխի մեջ, քիչ մնաց կորցներ Սիմոնին, որ իրեն մեկնեց

տոմսը առանց մի բառ ասելու, և արագ բարձրացան աստիճաններով, ծառայողների իրարանցման միջով։ Դահլիճն ընդարձակ էր ու մթնեցրած, նվագախումբը, դիտումնավոր կերպով, անմիաբանված նախապես արձակում էր տարբեր հնչյուններ, որպեսզի այնուհետև հասարակությանը ավելի լավ գնահատել տալ երաժշտական ներդաշնակության հրաշքը։ Փոլը շրջվեց հարևանի կողմը.

— Ես չգիտեի, սիրո՞ւմ եմ արդյոք Բրամս թե ոչ։

— Ես էլ չգիտեի, կգայի՞ք արդյոք, թե ոչ,— ասաց Սիմոնը,— հավատացնում եմ, որ ինձ համար նշանակություն չունի, սիրո՞ւմ եք Բրամս թե ոչ։

— Ինչպե՞ս էր գյուղում։

Սիմոնը զարմացած նայեց նրան։

— Զանգահարեցի ձեր տուն,— ասաց Փոլը,— ասելու համար, որ... որ համաձայն եմ։

— Այնքան էի վախենում, որ հակառակն ասելու համար զանգ կտայիք, կամ ամենևին, դրա համար. էլ գնացի,— ասաց Սիմոնը։

— Գեղեցի՞կ էր գյուղը։ Ո՞ր կողմերը գնացիք։

Փոլը հաճելի թախիծով էր լցվում, պատկերացնելով Հուդանի բարձունքը երեկոյան լույսի մեջ. նա շատ կցանկանար, որ Սիմոնը խոսեր այդ մասին։ Այս րոպեին նա պետք է կանգնած լիներ Սեփթոյում Ռոժեի հետ, նրանք հիմա պետք է քայլեին նույն ճանապարհով, շառագունած ծառերի միջով։

— Այստեղ-այնտեղ եղա,— ասաց Սիմոնը,— անունները չկարդացի։ Ի մեջի այլոց, սկսում են։

Ծափահարում էին, նվագախմբի ղեկավարը ողջունում էր, բարձրացրել էր փայտիկը, և երկու հազար մարդ միանգամից ընդդիմվեց բազկաթոռների մեջ։ Դա մի կոնցերտ էր, որ Սիմոնին ծանոթ էր, մի փոքր պաթետիկ ոճով, երբեմն նույնիսկ շատ պաթետիկ։ Նա զգում էր իր արմունկին կպած Փոլի արմունկը, և երբ նվագախումբը նետում էր հնչյունները, ինքն էլ էր նետվում նրանց հետ։ Միայն, երբ երաժշտությունը նվաղում էր, այդ ժամանակ զգում էր հարևանների հաղը, նկատում իրենից երկու շարք առաջ նստած ինչ-որ տղամարդու զանգի կառուցվածքը և հատկապես գիտակցում էր իր զայրույթի պատճառը։ Գյուղում, Հուդանի մոտ, պանդոկնե-



րից մեկում հանդիպել էր Ռոժեին, Ռոժեին՝ մի աղջկա հետ։ Նա վեր էր կացել, բարևել էր Սիմոնին, առանց ծանոթացնելու նրա հետ։

— Ճի՞շտ է թվում ինձ, որ անընդհատ իրար ենք հանդիպում։

Սիմոնն ապշել էր ու ոչինչ չէր պատասխանել։ Ռոժեի հայացքը սպառնալից էր, հրամայում էր լռել այս հանդիպման մասին։ Դա, փառք աստծո, անկեղծ, համարձակ մարդու մեղսակից հայացք չէր։ Զայրացած հայացք էր։ Ոչինչ չէր պատասխանել։ Չէր վախենում Ռոժեից. վախենում էր Փոլին վշտացնել։ Այդ կնոջը ոչ մի վատություն չպետք է հասնի իրենից. նա երդվում էր ինքն իրեն. առաջին անգամ լինելով նա ցանկանում էր տեղավորվել ինչ-որ մեկի և դժբախտության միջև։ Նա, որին սիրուհիները այնքան շուտ էին ձանձրացնում, սարսափեցնում էին իրեն մինչև անգամ իրենց խոստովանություններով, գաղտնիքներով, իրենց թելադրանքով, ցանկանալով ամեն գնով Սիմոնին արու-պաշտպանյալի դեր հանձնարարել, անձամբ իրեն՝ Սիմոնին, որ վարժված էր փախուստ տալու, այժմ ցանկանում էր վերադառնալ ու սպասել։ Բայց ինչի՞ն սպասել։ Մինչև որ այդ կինը հասկանար, թե սիրում է մի կամազուրկ անամոթի՞. բայց երևի դա ամենաերկար բանն էր աշխարհում... Փոլը տխրելու էր, ուղեղի մեջ անընդհատ վերլուծելու էր Ռոժեի վերաբերմունքը, դուցե հայտնաբերեր նրա թերությունները, թույլ կողմերը։ Նվագախմբից անջատվեց ջութակի ձայնը, անհույս թրթռաց սրտաճմլիկ նոտայով և ներդաշնակ ալեկոծության մեջ խեղդվելով անմիջապես հանգավ, կուլ գնալով այլ նոտաների։ Քիչ մնաց Սիմոնը շրջվեր, գրկեր Փոլին, համբուրեր։ Այո, համբուրեր... պատկերացրեց, որ հակվում է նրա վրա, շուրթերը հանդիպում են նրա շուրթերին, Փոլը ձեռքերով փարվում է իր վզին... Փակեց աչքերը։ Փոլը տեսնելով նրա արտահայտությունը մտածեց, որ լավ երաժշտասեր է։ Բայց իսկույն դողդողացող մի ձեռք սկսեց փնտրել իր ձեռքը, և Փոլն անհանդուրժողական ետ քաշեց։

Համերգից հետո Սիմոնը նրան տարավ կոկտեյլ խմելու, որ Փոլի համար նշանակում էր քամած նարնջի հյութ, իսկ Սիմոնի համար՝ երկու բաժակ դառնահամ շամպայն։ Փոլն

սկսեց մտածել, թե արդյոք տիկին Վան դեն Բեշի կասկածները իրականությանը չէ՞ն համապատասխանում։ Սիմոնը փայլատակող աչքերով, հուզմունք արտահայտող ձեռքերով խոսում էր երաժշտության մասին, իսկ Փոլն անտարբեր լսում էր նրան։ Գուցե Ռոժեն կարողացե՞լ է դասավորել գործերը և ժամանակին եկել էր ճաշելո՞ւ։ Մի այլ հանգամանք էլ կար. մարդիկ նայում էին իրենց։ Սիմոնը գուցե շա՞տ գեղեցիկ էր կամ պարզապես շա՞տ երիտասարդ իր համեմատությամբ, անհամատեղելի ընկերակցությո՞ւն էր։

— Դուք ինձ չե՞ք լսում։

— Լսում եմ,— ասաց Փոլը,— բայց հարկավոր է գնալ։ Տանը հեռախոսի զանգի եմ սպասում և հետո այստեղ շատ են նայում։

— Պետք է վարժված լինեիք,— ասաց Սիմոնը հիացմունքով։

Երաժշտությունն ու խմիչքը օգնության էին հասել, նա վերջնականապես սիրահարված էր զգում իրեն։

Փոլն սկսեց ծիծաղել. երբեմն Սիմոնը շատ քնքուշ էր դառնում։

— Հաշիվը պահանջե՛ք, Սիմոն։

Սիմոնն այնպիսի չկամությամբ արեց այդ բանը, որ Փոլն ուշադիր նայեց նրան կեսօրից հետո անկասկած առաջին անգամը լինելով։ Երևի քիչ-քիչ սիրահարվո՞ւմ էր այդ տղան, երևի նրա խաղը հենց իր դե՞մ էր հանդես գալիս։ Փոլը կարծում էր, որ նա ծարավի էր միայն հաղթանակների, գուցե ավելի հասարակ էր, ավելի զգայուն, ոչ այնքան փառասեր։ Տարօրինակ էր, որ նա այսպիսի արտաքինով իր կողքին էր կանգնած։ Փոլը գտնում էր, որ նա շատ գեղեցիկ է։ Շատ գեղեցիկ՝ իրական թվալու համար։

Եթե այդպիսի բան կար, Փոլը սխալ էր վարվում հանդիպելով նրա հետ, պետք է հրաժարվեր։ Սիմոնը կանչել էր մատուցողին, առանց խոսելու պատեցնում էր բաժակը ձեռքերի մեջ։ Միանգամից լռության էր մատնվել։ Փոլը ձեռքը դրեց նրա ձեռքի վրա։

— Ինձ մի մեղադրեք, Սիմոն, ես շտապում եմ։ Ռոժեն սպասելու է ինձ։

Սիմոնն առաջին օրը հարցրել էր նրան «Ռեժինի մոտ»



որճարանում. «Սիրո՞ւմ եք Ռոժեին»։ Ի՞նչ էր պատասխանել։ Փոլը չէր հիշում։ Ամեն դեպքում նա պե՛տք է իմանար։

— Ա՜, այո՛...— ասաց Սիմոնը,— Ռոժեն։ Տղամարդը։ Փայլողը։

Փոլն ընդհատեց նրա խոսքը։

— Սիրում եմ նրան,— ասաց և զգաց, որ կարմրում է։ Իրեն թվում էր, թե բեմական ձայնով էր արտասանել այդ բառերը։

— Իսկ նա՞։

— Նա նույնպես։

— Ամեն ինչ պարզ է։ Աշխարհի հրաշալիքների մասին խոսելիս ամեն ինչ լավ է։

— Սկեպտիկների դերում հանդես մի եկեք։ Դա ձեր տարիքին չի սազում։ Դուք պետք է հավատքի շրջանն ապրեք, դուք...

Սիմոնը բռնել էր նրա ուսերից և ցնցում էր։

— Մի՛ ծաղրեք ինձ, վերջ տվեք ինձ հետ այդ տոնով խոսելուն...

«Միշտ մոռանում եմ, որ տղամարդ է,— մտածեց Փոլը և փորձեց ազատվել,— այս բոպեին իսկական տղամարդու է նման, ստորացած տղամարդու։ Ոչ թե տասնհինգ, այլ քսանհինգ տարեկան, այդպես է»։

— Ես ոչ թե ձեզ եմ ծաղրում, այլ ձեր բռնած դիրքը,— քնքշորեն ասաց Փոլը,— դուք խաղում եք...

Սիմոնը բաց էր թողել նրան, կարծես հոգնել էր։

— Ճիշտ է, խաղում եմ,— ասաց նա,— ձեզ մոտ խաղացի և՛ երիտասարդ փայլուն փաստաբանի, և՛ կարկամած սիրահարի, և՛ երես առած երեխայի, և՛ ասված գիտե էլ ինչ դերեր։ Բայց ձեզ ճանաչելուս պահից բոլոր դերերս ձեզ համար են։ Չե՞ք կարծում, որ դա սեր է։

— Շատ լավ սահմանում է,— ժպտալով ասաց Փոլը։

Մի քանի բոպե կաշկանդված լռեցին։

— Շատ կուզենայի կրքոտ սիրահարների դերը խաղալ,— ասաց Սիմոնը։

— Ես ձեզ ասացի, որ սիրում եմ Ռոժեին։

— Իսկ ես սիրում եմ մորս, պառավ դայակիս, ավտոմեքենաս...

— Ոչ մի կապ չեմ տեսնում,— ընդհատեց Փոլը։

Ուզում էր գնալ։ Այս փոքրիկ, շատ երիտասարդ գիշակեր ի՞նչ էր հասկանում իր կյանքի պատմությունից, իրենց պատմությունից, այս հինգ տարվա կյանքից, որտեղ հաճույքն ու կասկածանքը, սիրո ջերմությունն ու վիշտը խառնված էին իրար։ Ոչ ոք չէր կարող իրեն Ռոժեից բաժանել։ Այնպիսի երախտագիտությամբ լցվեց նրա հանդեպ այս վստահության համար, այնպիսի քնքշությամբ, որ հենվեց սեղանին։

— Սիրում եք Ռոժեին, բայց մենակ եք,— ասաց Սիմոնը,— մենակ եք կիրակի օրերը, ճաշում եք մենակ և հավանաբար դուք... դուք քնում եք հաճախ մենակ։ Ես կքնեի ձեր կողքին, կգրկեի ձեզ ամբողջ գիշերը և կհամբուրեի, երբ քնած լինեիք։ Ես կարող եմ դեռ սիրել։ Նա այլևս չի կարող։ Դուք գիտեք այդ...

— Իրավունք չունեք...— ասաց Փոլը վեր կենալով։

— Իրավունք ունեմ խոսելու։ Իրավունք ունեմ սիրահարվելու և, եթե կարողանամ, խլելու ձեզ նրանից։

Փոլն արդեն դուրս էր եկել։ Սիմոնը վեր կացավ և նորից նստեց տեղը՝ գլուխը ձեռքերի մեջ առած։ «Նա պետք է ինձ,— մտածում էր նա։ Նա պետք է ինձ... կամ տանջվելու եմ»։

## Գլուխ 7

Երկօրյա հանգիստը շատ հաճելի անցավ։ Այդ Մեղին կոտրատվելով խոստովանել էր, որ իրեն պարզապես Մարսել են անվանում, մի անուն, որ անհամատեղելի էր սկսնակ դերասանուհու կոչմանը ակնհայտ պատճառներով, այդ նույն Մեղին իր խոսքի տերն էր մնացել։ Պատկերից հետո այլևս չէր շարժվել տեղից, բացառությամբ՝ Ռոժեի համար սովորություն դարձած անխախտ ժամերին ուղեկցելուց, օրինակ՝ կոկտեյլի, նախաճաշի, ճաշի, թեյի ժամերին, և նույնքան առիթ Մեղիի համար, որ փոխեր հագուստները։ Նրանք երկու օր անցկացրին սենյակում, միայն մեկ անգամ դուրս եկան և բնականաբար Ռոժեն ընկավ այդ շատ նրբիկ երիտասարդի՝ սիրելի Թերեզայի որդու ճանկը։ Անշուշտ նա քիչ երաշխիքներ ուներ Փոլին հանդիպելու, բայց Ռոժեի մոտ նրբերին անհանգստություն կար։ Լիլի պատճառաբանությունը մի փոքր կոպիտ էր ստացվել, բայց նրան չէր անհանգստացնում այն հանգամանքը, որ կարող էր իր անհավատարմությամբ կամ խաբեբայությամբ վշտացնել Փոլին։ Այլ այն պարագան, որ իր անհավատարմությունը չէր պարփակվելու՝ ոչ ժամանակի, ոչ տարածության մեջ։ «Կիրակի օրը Հուզանում ճաշելու ժամանակ տեսա անցյալ օրվա ձեր բարեկամին»։ Պատկերացնում էր Փոլին. ինչպես էր ընդունելու այս նախադասությունը առանց մի բառ արտասանելու, դուցե մի պահ միայն շրջելով հայացքը։ Փոլը տանջվելիս... Հիմա դա արդեն հին պատկեր էր և շատ հաճախ զանց տրված, որի համար ամաչում էր. և ամաչում էր նաև այն հաճույքի համար, որ քիչ հետո վայելելու էր Մեղի-Մարսելին տուն հասցնելուց հետո։ Բայց Փոլը չէր իմանա այդ մասին։ Նա այս երկու օրը երեի հանգստացել էր առանց իրեն, որովհետև շատ հաճախ էր ստիպում Փոլին դուրս գալ։ Երեի ընկերների հետ բրիջ խաղալու է գնացել, զբաղվել է իր բնակարանով, կարգացել է այն նոր գիրքը... Հանկարծ ինքն իրեն հարց տվեց, թե ինչո՞ւ էր այդպես համառորեն մտածում Փոլի կիրակնօրյա ժամացուցակի մասին։

— Լավ ես վարում,— իր կողքին լսեց մի ձայն, ցնցվեց, նայեց Մեղիին։

— Կարծո՞ւմ ես։

— Ի միջի այլոց, ամեն ինչ լավ է ստացվում քեզ մոտ,— շարունակեց նա ձգվելով նստարանի վրա։

Եվ Ռոժեն ուզում էր նրան ասել, որ մոռանա, մոռանա մի բոպե իր փոքրիկ մարմինը և ցանկասիրությունները։ Մեղին գողտրիկ ծիծաղեց կամ փորձեց այդպես անել և բռնելով Ռոժեի ձեռքը՝ դրեց իր սրունքին։ Մատների տակ այն պիրկ էր ու տաք, և Ռոժեն ժպտաց։ Այդ աղջիկը հիմար էր, շատախոս և կատակասեր։ Ջանալով կոմիկական դարձնել սերը, զարմանալիորեն վերածում էր անտաշության, իսկ Ռոժեի մոտ ճիգով խանդաղատանք, ընկերականություն, չնչին հեռաբրքրություն առաջացնելու ցանկությունը նրան դարձնում էր ավելի գրգռիչ։ «Անհաղորդ, կեղտոտ, չնչին, պահանջկոտ, գոհհիկ իր, որի հետ կարողանում եմ լավ սեր անել»։ Ռոժեն սկսեց բարձրաձայն ծիծաղել։ Մեղին չհարցրեց

ինչու էր ծիծաղում, ձեռքը մեկնեց ռադիոընդունիչին։ Ռոժեն հայացքով հետևեց նրա շարժմանը... Ի՞նչ էր ասել Փոլը անցյալ երեկո։ Ռադիոյի և իրենց երեկոների մասի՞ն... Այլևս չէր հիշում։ Սիմֆոնիկ երաժշտություն էին հաղորդում, Մեզին անջատեց, բայց հետո որոշեց նորից միացնել։ «Երաժշտությունը Բրամսի» հայտարարում էր թրթռացող ձայնով հաղորդավարը, և ճոճվում էին ծափահարությունները։

— Երբ ութ տարեկան էի, ուզում էի նվագախմբի ղեկավար դառնալ,— ասաց Ռոժեն,— իսկ դո՞ւ։

— Ես ուզում էի կինոյում նկարահանվել,— ասաց նա,— և կհասնեմ դրան։

Ռոժեն մտածեց, որ հնարավոր է և վերջապես նրան թողեց իրենց՝ դռան առջև։ Մեզին կանչեց նրա բաճկոնից։

— Վաղը իմ զգվելի պարոնի հետ եմ ճաշելու։ Բայց նորից եմ ուզում տեսնել իմ փոքրիկ Ռոժեին և շատ շուտով, շատ շուտով։ Հենց որ ազատ բոպե ունենամ, զանգ կտամ։

Ռոժեն ժպտաց բավական գոհ իր երիտասարդ, գաղտնի սիրահարի դերից, հատկապես իր տարեկից մի ուրիշ մարդու նկատմամբ։

— Իսկ դո՞ւ,— շարունակեց Մեզին,— կկարողանա՞ս։ Ինձ ասել են, որ ազատ մարդ չես...

— Ես ազատ մարդ եմ,— ասաց Ռոժեն մի փոքր ծամածռելով դեմքը։ Եվ վերջ ի վերջո նա չէր խոսելու Փոլի մասին այս կնոջ հետ։ Մեզին ցատկեց մայթին, դռան շեմին թափահարեց ձեռքը, և Ռոժեն հեռացավ։ Վերջին նախադասությունը մի փոքր նուզում էր նրան. «Ես ազատ մարդ եմ»։ Նշանակում է. «ազատ՝ ոչ մի պատասխանատվություն չունենալու» առումով։ Արագացրեց. ուզում էր հնարավորին չափ շուտ տուն հասնել, տեսնել Փոլին, միայն նա կարող էր իրեն վստահություն ներշնչել և նա կաներ այդ։

* * *

Փոլն ըստ երևույթին հենց նոր էր վերադարձել, քանի որ դեռ վերարկուն չէր հանել. գունատ էր, և երբ Ռոժեն եկավ, նեղվեց նրան ընդառաջ և անշարժացավ նրա ուսին։ Ռոժեն փարվեց նրան, այտը դրեց մաղերին և ասաց, որ խոսի։



Ինչ լավ էր արել, որ շուտ էր վերադարձել, Փոլն իր կարիքն էր զգում, կարող էր վատ բան պատահել նրա հետ, մտածելով իր նախադգացման մասին, զգում էր, որ սերն ավելանում է Փոլի հանդեպ։ Ռոժեն նեցուկ էր նրան։ Անշուշտ, Փոլն ուժեղ էր և անկախ, խելացի, բայց հավանաբար նա ավելի կին էր, քան որևէ այլ կին, որ երբևիցե հանդիպել էր, քաջ գիտակցում էր այդ։ Բացի այդ ինքը անհրաժեշտ էր նրան։ Փոլը կամաց հեռացավ նրա գրկից։

— Ճամփորդությունդ լա՞վ անցավ։ Ինչպե՞ս էր Լիլում։

Ռոժեն մի հայացք նետեց վրան։ Ո՛չ, հավանաբար ոչ մի կասկած չուներ։ Կանանց հատուկ չէ այսպիսի թակարդներ լարել։ Բարձրացրեց հոնքերը։

— Այնպես։ Իսկ դո՞ւ։ Ի՞նչ է պատահել։

— Ոչինչ,— ասաց Փոլն ու շրջվեց։

Այլևս չկնդեց, հետո Փոլն ինքը կասի։

— Ի՞նչ արեցիր այստեղ։

— Երեկ աշխատեցի։ Իսկ այսօր դնացի համերգ լսելու, Պլեյել դահլիճ։

— Սիրո՞ւմ ես Բրամս,— ասաց Ռոժեն ժպտալով։

Փոլը մեջքով էր կանգնել նրան և այնպիսի արագությամբ շրջվեց, որ Ռոժեն մի քայլ ետ ընկրկեց։

— Ինչո՞ւ ես այդպիսի հարց տալիս։

— Վերադառնալու ժամանակ ռադիոընդունիչով լսեցի համերգի մի մասը։

— Այո, իհարկե,— ասաց Փոլը,— ձայնագրվում էր, ճիշտ է... Բայց զարմացրիր ինձ, քեզ մոտ՝ սեր, այդպիսի երաժշտության հանդեպ...

— Քեզ մոտ նույնպես։ Ի՞նչը գրգռեց։ Պատկերացնում էի, որ Դարետների մոտ բրիջ խաղալու գնացած կլինես, կամ...

Փոլը վառել էր փոքրիկ հյուրասենյակի լամպերը։ Հոգնած շարժումով հանեց վերարկուն։

— Փոքրիկ Վան դեն Բեշը հրավիրեց համերգի, ոչինչ չունեի անելու և չէի էլ մտածում, սիրում եմ Բրամս թե ոչ... Հավատո՞ւմ ես... Չէի մտածում, սիրում եմ Բրամս թե ոչ...

Սկզբում սկսեց կամաց ծիծաղել, հետո ավելի ու ավելի ուժգին։ Ռոժեի գլխում կարծես պատահողմ կար։ Սիմոն Վան

դեն Բե՞շ։ Եվ նա չէ՞ր խոսել իրենց հանդիպման մասին... Հուղանում։ Եվ հետո, ինչո՞ւ էր ծիծաղում Փոլը։

— Փո՛լ,— ասաց նա,— հանդստացի՛ր։ Նախ, ի՞նչ էիր անում այդ լակոտի հետ։

— Բրամս էի լսում,— ասաց նա ծիծաղելով։

— Բավական է, վերջ տուր այդ Բրամսին...

— Խոսքը նրան էր վերաբերում...

Ռոժեն բռնեց նրա ուսերից։ Փոլի աչքերը ծիծաղից արցունքով էին լցվել։

— Փո՛լ,— ասաց նա,— ի՛մ Փոլ... Ի՞նչ պատմեց քեզ այդ տիպը։ Եվ հետո, ի՞նչ է ուզում քեզնից։

Կատաղած էր, ջղում էր, որ ինքը նոին պլան է մղված, խարված է։

— Իհարկե,— ասաց նա,— քսանհինգ տարեկան է։

— Ինձ համար դա թերություն է,— քնքշորեն պատասխանեց Փոլը, և Ռոժեն նորից գրկեց նրան։

— Փո՛լ, այնքան եմ վստահում քեզ, այնքան։ Այն միտքը, որ այդպիսի պստլիկ մի տղա կարող է քեզ դուր գալ, անտանելի է։

Ռոժեն նրան սեղմել էր կրծքին։ Միանգամից Փոլին պատկերացրել էր ձեռքն ուրիշին մեկնած, մեկ ուրիշին համբուրելիս, իր սերը, իր ուշադրությունը տալով մեկ ուրիշին. տանջվում էր։

«Անխիղճ են տղամարդիկ,— առանց դառնանալու մտածում էր Փոլը,— «Այնքան եմ վստահում քեզ, այնքան վստահ, որ կարող եմ քեզ խաբել, մենակ թողնել քեզ, և հնարավոր չէ, որ հակառակը տեղի·ունենա»։ Ինչպիսի վեհ զգացմունքներ»։

— Նա բարի է և իրենից ոչինչ չի ներկայացնում,— ասաց Փոլը,— ահա բոլորը։ Որտե՞ղ կուզեիր ճաշենք։

## Գլուխ 8

«Ներում եմ հայցում,— դրում էր Սիմոնը։— Իսկապես, իրավունք չունեի հայտնելու ձեզ այս ամենը։ Նախանձում էի և կարծում եմ մարդ իրավացի կերպով կարող է նախանձել միայն ունեցածի համար։ Ամեն դեպքում, կասկածից վեր է, որ ձանձրացնում էի ձեզ։ Կազատվեք ինձնից. իմ սիրելի մեկերի հետ գնում եմ գյուղ դատական գործ ուսումնասիրելու։ Կմնանք գյուղական մի հին տան մեջ, որ նրա բարեկամներից մեկին է պատկանում։ Պատկերացնում եմ աղավնիների բույրով օծված անկողինները, կրակ կունենանք յուրաքանչյուր սենյակում, առավոտյան պատուհանիս տակ թռչունները կկրկնեն։ Բայց համոզված եմ, որ այս անգամ արդեն չեմ կարող խաղալ երիտասարդ հովվերգուի դեր։ Գուք կքնեք ինձ հետ, կպատկերացնեմ ձեզ իմ կողքին կրակի բոցերից լուսավառված։ Կաշխատեմ թեկուզ տան անգամ անդրադառնալ այս թեմային։ Չհավատաք, եթե նույնիսկ չցանկանաք երբեվիցե տեսնել ինձ, չհավատաք, որ ձեզ չեմ սիրում։ Ձեր Սիմոն»։

Նամակը խաղում էր Փոլի մատների տակ։ Այն սահեց սավանի վրա, հետո գորգին։ Փոլը գլուխը դրեց բարձին, փակեց աչքերը։ Անկասկած, սիրում էր իրեն... Առավոտյան Փոլը հոգնած էր զգում, գիշերը վատ էր քնել։ Մի՞թե պատճառն այն փոքրիկ նախադասությունն էր, որ նախորդ օրը Ռոժեն բաց էր թողել բերանից, երբ Փոլը հարցուփորձ էր արել նրան վերադարձի ճանապարհի մասին, մի փոքրիկ նախադասություն էր, որ անմիջապես չէր ընկալել, իսկ Ռոժեն կարկամել էր, նկատելիորեն իջեցրել ձայնը և ավարտել շշուկով.

«Իհարկե, շատ զզվելի է, երբ կիրակի օրն ես վերադառնում... Եվ ինչ խոսք, մայրուղով, եթե նույնիսկ խնդրված էլ լինի, պետք է արագ անցնես...»։

Անկասկած, եթե ձայնը ելևէջներ չունենար, Փոլը ոչինչ չէր նկատելու։ Անգիտակից բնազդով՝ այն սարսափելի պաշտպանական բնազդով, որ երկու տարուց ի վեր անընդհատ աճել էր, նա պատկերացնելու էր մինչև լիլ հասնող ամրոջովին նոր հրաշալի մի մայրուղի։ Բայց Ռոժեն ընդհատել էր խոսքը, Փոլը չէր նայել նրան և այնպես էր ստացվել, որ առասնհինգ վայրկյան անց վերջինս վերականգնել էր հանգիստ մարդկանց երկխոսությունը։ Նույն ընթացքով ավարտին էր հասել ընթրիքը, բայց Փոլին թվում էր, որ իր հոգնությունը, ուժասությունը, առավել ևս խանդը կամ հեռաբրքրասիրությունը, երբեք չէին լքելու իրեն։ Իր գիմաց

բացվում էր այնքան ծանոթ, այնքան սիրելի դեմքը, այն դեմքը, որ փորձում էր իմանալ, արդյոք ինքը որևէ բան հասկացե՞լ է, այն դեմքը, որ անտանելի դահճի նման իր դեմքի վրա տանջանքի հետքեր էր փնտրում։ Այդ ժամանակ Փոլն սկսեց մտորել. «Բավական չէ՞ որքան տանջեց ինձ, նրա համար ինչ-որ չափով գոնե կարո՞ղ է նշանակություն ունենալ այդ հանդամանքը»։ Եվ նրան թվում էր, թե այլևս երբեք չէր կարողանալու բարձրանալ աթոռից, անցնել ոնստորանոն այնպիսի հանդարտությամբ և շնորհազեղ քայլվածքով, որ ակնկալում էր իրենից Ռոժին, կամ ցտեսություն ասել նրան դռան շեմին։ Նա կուզենար այլ բան անել. կուզենար հայհոյել, բաժակը շպրտել գլխին, դուրս մղել իրենից այն ամենը, ինչ համարվում էր իր արժանիքը, սրով հարգանքի է արժանանում, այն ամենը, ինչ տարբերում էր նրան այն տասներկու քարշ եկող մանր-մունր աղջիկներից, որոնց հետ հանդիպում էր նա։ Փոլը կուզենար նրանցից մեկը լինել։ Ռոժին խոստովանել էր, որ ինչ ևն նրանք ներկայացնում իր համար։ Ինքը այդպիսին էր և չէր ուզում թաքցնել։ Այո, նա պատվի զգացում ուներ և անկեղծ էր։ Սակայն Փոլն ինքն իրեն հարց էր տալիս. արդյո՞ք պատվի զգացումը, միակ հնարավոր պատվի զգացումը այս առեղծվածային կյանքում, չէր կարող պարտադրել, որ բավարար չափով, երջանկացնելու չափ սիրեր մեկին։ Նույնիսկ անհրաժեշտության դեպքում հրաժարվելով ներկայացող նախասիրություններից։

Սիմոնի նամակն ընկած էր գորգին, և Փոլը վեր կենալու ժամանակ ոտքը դրեց վրան։ Վերցրեց դեռևից, նորից կարդաց։ Հետո բաց արեց դրադարակը, ինքնահոս ու թուղթ վերցրեց և դրեց պատուհանը։

* * *

Դատական նիստից հետո Սիմոնը դահլիճում մնացել էր մենակ, չցանկանալով մեծ մերթին շնորհավորող ամբոխին խառնվել։ Տունը ախուր էր ու պաղ, նախորդ գիշերը սառնամանիք էր արել, իսկ պատուհանից դուրս բացվում էր սառցե մի տեսարան երկու մերկացած ծառերով և մի դեղնած պուրակով, որտեղ հոնդարտ փտում էին աշնանից անփույթ պարտիզպանի թողած երկու հարդի բազկաթոռներ։ Նա անգլերեն մի գիրք էր կարդում, տարօրինակ պատմություն էր ինչ-որ կնոջ մասին, որ վերափոխվել էր աղվեսի և երբեմն ծիծաղում էր բարձրաձայն, շարժում էր ոտքերը, խաչաձևում, նորից բացում և արտաքին անհանգիստ շարժումները կամաց-կամաց սահում էին իր էության և գրքի արանքից, մինչև որ վեր կացավ, գիրքը ցած դրեց ու դուրս եկավ։

Գնաց-գնաց մինչև հասավ պարտեզի խորքում գտնվող փոքրիկ լճակը, նա շնչում էր ցրտության բույրը, որը խառնվել էր շատ հեռվից հասնող թափված տերևների վառված բույրին, ծուխը հաղիվ էր նշմարվում ցանկապատի եզերից։ Նա ամեն ինչից ավելի սիրում էր այս բույրը, մի պահ կանգ առավ, փակեց աչքերը ավելի լավ զգալու համար։ Մերթ ընդ մերթ մի փոքրիկ թռչուն արձակում էր իր անշնորհք կարճ հիշը, և այս կատարելագործված ամբողջությունը, կարոտների այս միությունը ինչ-որ չափով թեթևացնում էին իր կարոտը։ Նա թեքվեց պղտոր ջրի վրա, սուզեց ձեռքը, նայեց բարալիկ մատներին, որ բեկվում էին ջրի մեջ, համարյա ափին ուղղահայաց։ Չէր շարժվում, ջրի մեջ դանդաղ փակում էր բռունցքը, կարծես ցանկանալով խարհրդավոր ձրկնիկին վերել։ Արդեն յոթ օր չէր տեսել Փոլին, յոթ ու կես օր։ Երեկ ստացել էր նամակը, թափ տվել ուսերը, թաքցրել, որպեսզի Ռոժեի ձեռքը չանցնի և չծաղրի իրեն։ Որովհետև նա բարի էր, Սիմոնը շատ լավ գիտեր այդ։ Բարի էր և քնքուշ և դժբախտ, ինքը նրա կարիքն էր զգում։ Բայց ինչպե՞ս հասկացներ։ Արդեն փորձել էր. մի երեկո այս շարադուշակ տան մեջ նրա մասին այնքան երկար էր մտածել, այնպես սատիրոնն, որ նա իր հեռավոր Փարիզում զգար, և նույնիսկ պիժամայով իջել էր ներքև, գրադարանը քրքրելու, հեռագրության մասին որևէ գիրք գտնելու հույսով։ Անշուշտ, այս ամենն իզուր։ Երեխայական մաքեր էին, զիտեր, նա միշտ փորձում էր ամեն ինչի համար արդյունքի հասնել մանկական լուծումների միջոցով, կամ երջանիկ պատահականությունների վրա հույս դնելով։ Բայց Փոլն այն անձնավորությունն էր, որ մարդ պետք է արժանի լիներ նրան, նա չէր թաքցնում իրենից այդ միտքը։ Չէր կարող հրապույրի ուժով

տիրանալ նրան։ Ընդհակառակը, զգում էր, որ իր արտաքինը վանում էր իրեն նրանից։ «Վարսավիրի աշակերտի տեսք ունեմ». բարձրաձայն հեծեծաց Սիմոնը, և թռչունն ընդհատեց իր երկարաձիգ ճիչը։

Դանդաղ քայլերով գնաց դեպի տուն, պառկեց գորգին մի կոճղ նետեց կրակին։ Մեթր Ֆլորին վերադառնալու էր իր հաղթանակի մեջ, համեստ տեսքով, բայց սովորականից ավելի ինքնավստահ։ Նա ոգեկոչելու էր հոչակավոր զաստավարություններ՝ մի քանի շլացած գյուղացիների ներկայությամբ, որոնք աղանդերի ժամանակ փոքր-ինչ հոգնած շրջելու էին բուրգոնյան գինուց շաղված հայացքները երիտասարդ ասիստենտի կողմը, որը բաղաքավարի է, լռակյաց. այսինքն իրեն։ «Ձեր բախտը բերում է սրա հետ, փոքրիկ Սիմոնս»— շշնջալու էր մեթր Ֆլորին և հավանաբար ցույց էր տալու ամենապատավին։ Նրանք արդեն ճամփորդելու էին միասին, բայց մեծ փաստաբանի ուղեղում տեղ գրաված երևակայական մտքերը հեռու չէին տարել ո՛չ մեկին, ո՛չ մյուսին։

Նրա կանխատեսումները հաստատվեցին։ Սակայն այդ տարբերությամբ, որ սա եղավ իր կյանքի ամենաուրախ ճաշկերույթներից մեկը. նա անընդհատ խոսում էր, ինքնիրենից մեծանուն փաստաբանին և հրապուրեց ներկա գտնվող բոլոր կանանց։ Տեղ հասնելով, մեթր Ֆլորին նրան մի նամակ էր հանձնել, որ Քլեբեր պողոտայից հաստրել էին մինչև Ռուանի արդարադատության պալատը։ Նամակը Փոլից էր։ Նա ձեռքը տանում էր գրպանը, մատների տակ զգում այն և ժպտում երջանկությունից։ Եվ խոսելու ընթացքում փորձում էր ճշտությամբ վերհիշել բոլոր տերմինները, որոնք դանդաղորեն վերակազմելով նամակը.

«Իմ փոքրիկ Սիմոն (նա միշտ այդպես էր դիմում իրեն), շատ տխուր նամակ էիք գրել։ Ես այնքան էլ արժանի չեմ դրան։ Սկզբում ձեզ կարոտեցի։ Չգիտեմ ինչ վիճակում եմ այժմ,— ու նորից էր գրել իր անունը «Սիմոն» և հետո նորից ավելացրել էր այս երկու հրաշալի բառերը— «շո՛ւտ վերադարձեք»։

Նա անմիջապես վերադառնալու էր, հենց որ ճաշկերույթն ավարտին հասներ։ Մեծ արագությամբ սլանալու էր մինչև



Փարիզ, անցնելու էր նրա տան առջևից. գուցե տեսներ իրեն։

Ժամը երկուսին նրա տան մոտ էր, անկարող որևէ շարժում կատարելու։ Կես ժամ անց մի ավտոմոբիլ կանգնեց մոտը։ Փոլն իջավ մենամենակ։ Սիմոնը չշարժվեց, նայեց, թե ինչպես է անցնում փողոցը, թափահարում ձեռքը մեքենայի կողմը, ավտոմոբիլն անմիջապես շարժվեց։ Սիմոնը չէր կարողանում շարժվել։ Փոլն էր։ Սիրում էր նրան և լսում էր ինչպես է ներսում ձայն տալիս սերը և կանչում Փոլին, միանում նրան, խոսում հետը, առանց շարժվելու։ վախեցած. վշտագին ու դողդոջուն ուղեղով լսում էր այդ սիրուն։

## Գլուխ 9

Բուլոնյան անտառի սառցակալած լիճը տխուր արևի տակ տարածվում էր նրանց առջև. միայն մի թիավարող մարդիկ՝ ամեն օր հանդիպող այն տարօրինակ մարդկանցից մեկը, որ աշխատում են ոչ օրի չմտահոգել իրենց տեսքով, այնքան որ անանուն է նրանց արտաքինը, մեծ ջանք էր թափում ամառ հիշեցնելու։ Նրա թիակը երբեմն մի խուրձ ցայտկըլտուն արծաթե ջուր էր բարձրացնում, որ համարյա անհարիր էր ժամանակի հետ, քանի որ ձմեռը ոստած ծառերի միջից տխրություն էր հայտարարում։ Փոլը ճակատը կնճռոտած նայում էր, թե ինչպես է նա մաքառում նավակի մեջ։ Պտտվելու էր կզղու շուրջը և հոգնած, բայց ինքնագոհ վերադառնալու էր։ Այս ամենօրյա ու համառ պտույտի մեջ Փոլը իսորհրդանշող ինչ-որ բան էր նկատում։ Սիմոնը նրա մոտ նստած լռում էր։ Սպասում էր։ Փոլը շրջվեց նրա կողմն ու ժպտաց։ Սիմոնը նայեց նրան առանց փոխադարձելու ժպիտը։ Ոչ մի ընդհանրություն չէր տեսնում այս ու այն Փոլերի միջև. այն Փոլը, որի համար նախորդ երեկոյան շատ երկար դյուղական ճանապարհ էր կարել-անցել, այն Փոլը, որ նվիրվելու էր իրեն, որին հոտակ պատկերացրել էր մերկ ու հաղթված այն ճանապարհի պես, որով անցնում էր, և այն մյուս հանդիստ Փոլը, որ միայն մի փոքրիկ ուրախության նշույլ էր ցույց տվել տեսնելով իրեն և այժմ իր կողքին նստած ննջում էր երկաթե աթոռի վրա՝ սարսափելիորեն մաշված տեսարանի մեջ։ Նա հուսախաբ էր եղել և աղավաղելով

իր հուսախաբությունը, կարծում էր, թե այլևս չի սիրում նրան։ Գյուղում անցկացրած ութ ձանձրալի օրերը տխուր տան մեջ, հիմարության հրաշալի օրինակ էին հանդիսացել, որի մեջ քարշ էր տվել իրեն երևակայությունը։ Միաժամանակ նա չէր կարողանում իրենից դուրս մղել ցավագին ցանկությունը, միակ մտքից առաջացած գլխապտույտը, որ շրջի այդ հոգնած գլուխը աթոռի թիկնակին, ճզմելով ծոծրակը, և բերանը մոտեցնի այն լեցուն, այնքան հանգիստ շուրթերին, որտեղից երկու ժամ շարունակ թափվում էին հանգստացնող ու բարեգութ բառեր, որոնց կարիքը բոլորովին չէր զգում։ Փոլը գրել էր իրեն. «Շո՛ւտ վերադարձեք»։ Եվ այդ բառերի վրա հույս դնելուց ավելի նա զղջում էր իր ապրած ուրախության համար՝ դրանց տերը դառնալու ակնկալումով, իր հիմար հրճվանքի, իր վստահության համար։ Կնախընտրեր որևէ հաճելի դեպքի պատճառով դժբախտանալ, քան վատ առիթով երջանկանալ։ Նա այդ մասին հայտնեց Փոլին, և վերջինս նրան ուշադիր նայելու համար հայացքը հեռացրեց թիավարողից։

— Իմ փոքրիկ Սիմոն, բոլորն էլ այդպես են։ Մտածեք, այդ ակնկալումը որքան բնական կարող էր լինել։

Փոլը ծիծաղեց։ Սիմոնն առավոտ շուտ խենթի պես վազել հասել էր Մաթինյոն պողոտա, իսկ նա անմիջապես հասկացրել էր իրեն, որ այդ նամակը ոչ մի նշանակություն չունի։

— Համենայն դեպս,— շարունակեց Սիմոնը,— դուք այն կինը չեք, որ պատահական մարդու գրեիք. «Շուտ վերադարձեք»։

— Մենակ էի,— պատասխանեց Փոլը,— և տարօրինակ վիճակում։ Ինչ խոսք չպետք է գրած լինեի «Շուտ վերադարձեք», ճիշտ է։

Այնինչ հակառակն էր մտածում։ Սիմոնն այստեղ էր, և ինքը երջանիկ էր, որ այդպես է։ Այնքան մենակ, նա այնքան մենակ էր մնացել։ Ռոժեն նոր սիրավեպ ուներ (արդեն ականջին հասցրել էին) մի փոքրիկ երիտասարդ կնոջ հետ, որի ուշքը գնում էր կինոդերասանուհի դառնալու համար, Ռոժեն իհարկե ամաչում էր, որովհետև երբեք չէին խոսել այդ մասին, իսկ բաղմազան ալիբիները չէին արդարացնում



իր կանխամտածությունները։ Այս շաբաթ միայն երկու անգամ էր ճաշել նրա հետ։ Միայն երկու անգամ։ Փաստորեն առանց այս տղայի, որ նստած էր իր կողքին և դժբախտ իր պատճառով, ինքն էլ անսահման դժբախտ էր զգալու իրեն։

— Եկե՛ք,— ասաց Սիմոնը,— վերադառնանք։ Դուք ձանձրանում եք։

Առանց ընդդիմանալու Փոլը վեր կացավ։ Ուզում էր ծայրահեղության հասցնել նրան և կշտամբում էր իրեն նման դաժանության համար։ Այս դաժանությունը իր տխրության հակառակ երևույթ էր, վրեժխնդրության անհեթեթ կարիքը, որին արժանի չէր այս տղան։ Նրանք նստեցին Սիմոնի փոքրիկ ավտոմոբիլիան, և վերջինիս դեմքին դառը ժպիտ գծագրվեց հիշելով իր պատկերացրած առաջին զբոսանքը. ձեռքը Փոլի ձեռքի մեջ, դեկը ձախ ձեռքով բռնած, ճարպիկ հնարքներով վարելով ավտոմոբիլիան, իսկ նրա գեղեցիկ դեմքը հակված իր վրա։ Պատահաբար ձեռքը մեկնեց Փոլին, նա վերցրեց այն իր ափերի մեջ։ Մտածում էր. «Ուրեմն երբեք, երբեք չե՞մ կարող հիմարություններ անել»։ Սիմոնը կանգնեցրեց մեքենան, Փոլը ոչինչ չասաց, և Սիմոնը նայեց իր սեփական ձեռքին, անշարժ նրա կիսաբաց ափերի մեջ, որ պատրաստ էին բաց թողնելու այն և դա էր կարծես նրանց միակ նպատակը ու, միանգամից, մեռնելու աստիճան հոգնած, ետ գցեց գլուխը՝ համակերպված այն մտքի հետ, որ ընդմիշտ լքելու է նրան։ Այդ պահին նա կարծես երեսուն տարով մեծացել էր, համակերպվում էր կյանքին, և առաջին անգամ լինելով Փոլին թվաց թե ճանաչում է նրան։

Առաջին անգամ լինելով թվաց, թե նման է իրեն, նման է իրենց (Ռոժեին և իրեն), ոչ ամենևին խոցելի, քանի որ Փոլը համոզված էր, որ նա այդպիսին է և չէր պատկերացնում մի մարդու, որ այդպիսին չլիներ։ Այլ ավելի շուտ՝ ազատված, թոթափված այն ամենից, որ անտանելի էին դարձել իր աչքին իր երիտասարդության, գեղեցկության, անփորձության պատճառով։ Փոլը աղոտ ձևով նրան գերու էր նմանեցնում. գերի իր դյուրության, իր կյանքի դյուրության։ Եվ ահա, այլևս առանց մաքառելու, այդ կիսամեռ մարդու կիսագեմը ոչ թե իր կողմն էր շրջվում, այլ՝ ծառերի։ Միաժամանակ Փոլը հիշեց խանդավառ ու շփոթահար Սիմոնին, որին տեսել էր

խալաթը հագին և հանկարծ մեծ ցանկություն ունեցավ հեռացնել նրան իր մոտից, վերջնականապես վռնդել և այսպիսով նրան հանձնել ժամանակավոր վշտին և գալիք հազարավոր երեկայական մանկամարդ աղջիկներին։ Ժամանակն ավելի լավ կբուժեր նրան, քան ինքը և նույնիսկ ավելի շուտ։ Սիմոնը ձեռքը թողել էր նրա ափերի մեջ, մատների տակ Փոլն զգում էր նրա զարկերակը և հանկարծ՝ տրցունքն աչքերին, որ չդիտեր ինչու է թափում. այս շատ քնքուշ երիտասարդի՞ մեջ իր սեփական փոքր-ինչ տխուր կյանքի համար, դեղի շուրթերը ձգեց այդ ձեռքն ու համբուրեց։

Սիմոնը ոչինչ չասաց, շարժվեց։ Առաջին անգամ լինելով նրանց միջև ինչ-որ բան էր տեղի ունեցել. նա գիտեր այդ և հիմա նախորդ օրվանից ավելի երջանիկ էր։ Փոլը վերջապես տեսել էր իրեն, և, ինքը որքան հիմար պիտի լիներ ու սխալված՝ կարծելով, թե իրենց միջև տեղի ունենալիք առաջին հանդիպումը սիրո գիշեր էր լինելու։ Շատ համբերություն էր հարկավոր, շատ քնքշություն և, անկասկած, շատ ժամանակ։ Եվ զգում էր, որ ինքը համբերատար է, քնքուշ, ողջ կյանքն իր առջևում է։ Նա նույնիսկ մտածում էր, որ եթե սիրո գիշեր լիներ, միայն մեկ ժամանակավրեպի համար էր լինելու և ոչ թե սովորական վերջնակետով էր հանդես գալու, ինչպիսին ընդհանրապես պատկերացնում էր. նրանց միջև գուցե գիշերներ ու ցերեկներ լինեին, բայց առանց վերջի։ Եվ միաժամանակ ուժգին տենչում էր այդ երեկոն։

## Գլուխ 10

Տիկին Վան դեն Բեշը պառավում էր։ Մինչ այդ անհուսալի ամուսնությունը ծերում Վան դեն Բեշի հետ, և իր ֆիզիկական պատճառով, որ կարելի էր մոտավորապես առնվազն «թուլություն» անվանել, ավելի շատ տղամարդ քան կին բարեկամներ էր ունեցել, այժմ ծերության կողքին նկատում էր նաև մենակություն, որ հուսահատության դուռն էր հասցնում նրան ու կառչել տալիս առաջին իսկ պատահած տղամարդուց կամ կնոջից։ Հանձին Փոլի, մինչև իսկ գործնական հարաբերություններում, նա դատավ իդեալական ընտ-



կերակցի։ Քլերը պողոտայի բնակարանը խառնիխուռն էր։ Փոլը համարյա ամեն օր պետք է գնար այնտեղ, իսկ տիկին Վան դեն Բեշը հազար ու մի պատճառաբանությամբ պահում էր նրան իր մոտ։ Ավելին, արտաքուստ մտամտոլոր թվացող այս Փոլը, կարծես շատ մտերիմ էր Սիմոնի հետ, և տիկին Վան դեն Բեշը իղոր էր նրանց մոտ ավելի ստույգ դաշտնիքի ամենափոքր նշան փնտրում։ Չկարողանալով իրեն զսպել, նա աչքով էր անում Փոլին, իսկը էր զգում, որ կարծես սահում անցնում էր վերջինիս կողքով, իսկ Սիմոնին կատաղություն գուռը հասցնում։ Նման տրիթով Փոլը մի երեկո տեսավ Սիմոնին գունատված, ինքն իրենից դուրս եկած. նա միանգամից հարձակվել էր մոր վրա և սպառնացել ամենավատ հարաբերությունների մեջ գտնվել հենց նրա՝ մոր հետ, եթե գործը «փչացներ»։

— Ի՞նչը փչացնել։ Ուզում ես ինձ լքի՞ր։ Նրա հետ պատկո՞ւմ ես թե չէ։

— Արդեն քեզ ասացի, ո՛չ։

— Ուրի՞մն։ Եթե նա չի մտածում այդ մասին, ես էլ դրիր գցում։ Քեզ համար շատ լավ է այդպես։ Տասներկու տարեկան աղջիկ չէ։ Համբերիր ես տանում, ցուցահանդեսներ, ստացված գիտե, թե էլ որտեղ... Կարծում ես այս ամենը զո՞ւր է գալիս նրան։ Հիմա՛ր, դու չես հասկանում....

Բայց Սիմոնն արդեն դուրս էր եկել տնից։ Վերադարձել էր երեք շաբաթ առաջ և ապրում էր Փոլով, Փոլի համար՝ այն մի քանի ժամով, որ օրվա մեջ երբեմն տրամադրում էր իրեն, միայն վերջին պահին թողնելով, որ իր ափի մեջ մի քիչ ավելի երկար պահի ձեռքը, ինչպես ռոմանտիկ հերոսները, որոնց ժամանակին այնքան ծաղրել էր։ Եվ այնպիսի սարսափ ապրեց այն օրը, երբ հյուրասրահի գործն ավարտելուց հետո մայրը որոշեց ճաշկերույթ կազմակերպել ու հրավիրել նաև Փոլին։ Ավելացրեց նաև, որ մտադիր էր Ռոժեին՝ Փոլի պաշտոնական ընկերոջը ևս հրավիրել, բայց նրանցից կլինեին նաև տասը այլ հրավիրյալներ։

Ռոժեն չհրաժարվեց։ Նա ուզում էր ավելի մոտիկից տեսնել այդ փոքրիկ պճնամոլին, որ ամենուրեք հետևում էր Փոլին, իսկ վերջինս նրա մասին խոսում էր այնպիսի վստահելի զորովանքով, որն ամեն ինչի երաշխիք էր տալիս։ Ավե-

չին, նա Փոլի հանդեպ խղճի խայթ ուներ, քանի որ մեկ ամսից ավելի աչքաթող էր արել նրան։ Բայց հմայված էր Մեզիով, նրա հիմարությամբ, նրա մարմնով, նրա սարքած սարսափելի տեսարաններով, հիվանդագին խանդով և վերջապես այն անսպասելի կրքով, որ աճում էր ի՛ր համար և որ ամեն անգամ այնպիսի կատարյալ անառակությամբ էր Ռոժեի երեսին շպրտում, որ վերջինս շլանում էր։ Իրեն պահեցնում էր թուրքական բազնիքում, տարտամորեն մտածում էր, թե իր ազատ կյանքի վերջին կիրքն է վայելում և անուշադրության էր մատնում, անտեսում էր Փոլին, ու ամեն անգամ ասում միօրինակ ձայնով. «Շատ լավ, սիրելիս, մինչև վաղը», նախքան վերադառնալը այն սարսափելի առանձնասենյակը, ուր Մեզին արցունքն աչքերին երդվում էր զոհաբերել իր կարիերան, եթե նա ցանկանար։ Ռոժեն զարմացած հարց էր տալիս իրեն, թե որքան ժամանակ պիտի հանդուրժեր այսպիսի ապուշ կապի գոյությունը, հետո գերկում էր նրան, Մեզին սկսում էր անորոշ ձայներ արձակել, խոկ Ռոժեն սպասում էր նրա մրմնջացող կիսահիմար, կիսակոպիտ նախադասությունների մեջ պաղշոտ գրգիռը, որի նմանը հաղվադեպ էր ըմբոշխնել։ Այդ Սիմոնը իր ողջ հանճարությամբ ընկերակցելով Փոլին, շատ հարմար էր։ Հենց որ Մեզիի հետ վերջացներ, ամեն ինչ առաջվա պես կվերադասավորեր և նույնիսկ կամուսնանար Փոլի հետ։ Նա ոչ մի հարցում վստահ չէր, նույնիսկ՝ իր վրա, միակ բանը, որ երբևիցե վստահություն էր ներշնչել նրան, Փոլի անեղծ սերն էր և մի քանի տարուց ի վեր՝ իր կապվածությունը նրա հետ։

Եկավ մի փոքր ուշացումով և առաջին պահից ինքն իրեն որոշեց. ինքն այն անձնավորությունն է, որ ձանձրույթից մեռնելու է այստեղ։ Փոլը հաճախ էր նախատում նրան մարդամոտ չլինելու համար, և իսկապես, աշխատանքից դուրս, եթե հույժ կարևոր հարցեր չլինեին, նա ոչ մեկի հետ չէր հանդիպում, բացի Փոլից և մի ընկերոջից, խոսելու համար։ Ապրում էր մենակ։ Նրա համար անտանելի էին Փարիզում հաճախ կազմակերպվող որոշ կարգի աշխարհիկ հավաքույթները, այդպիսի տեղերում նա խկուլն ուզում էր կոպիտ երևալ կամ հեռանալ։ Այստեղ էին մի քանի ընարյալ պատվական հյուրեր, որ հայտնի էին՝ իրենց շրջանակում կամ թերթերից, անշուշտ չափից ավելի սիրալիր, որոնց հետ կարելի էր ճաշի ժամանակ կինոյից կամ թատրոնից խոսել, կամ, որ ամենասոսկալին էր, սիրուց, տղամարդու և կնոջ հարաբերությունից, մի նյութ, որ ամենաշատն էր վախեցնում նրան, որովհետև ինքն այն կարծիքին էր, թե դրանից ոչինչ չի հասկանում կամ անկարող է ձևակերպել այդ բնապավառի իր իմացությունները։ Հսկա, մի փոքր ուղիղ մարմնով ներս մտավ, ամբարտավանորեն ողջունեց բոլորին, ինչպես միշտ, այն տպավորությունը թողնելով, թե իր մուտքով շարաբաստիկ միջանցիկ քամի է առաջացրել։ Այնինչ, կիսով չափ ճշմարիտ տպավորություն էր դա, քանի որ շրջապատում միշտ մտածում էին խուսափել իրենից, հենց առաջին պահից, խոսակցության ժամանակ, իր անմերձենալիությանն պատճառով, թեկուզ և ամենատենչալի կանանց մոտ։ Փոլը հագել էր նրա սիրած ամենալայն բացվածքով սև գույնի հագուստը, և դրա համար Ռոժեն թեքվելով նրա կողմը երախտագիտությամբ ժպտաց. միակ մարդը, որին ճանաչում էր այդ շրջապատում։ Եվ Փոլը մի պահ փակեց աչքերը, անհուսորեն տենչալով, որ գրկի իրեն։ Նստեց Փոլի կողքին և միայն այդ բոպեին տեսավ անշարժացած Սիմոնին, մտածեց, որ իր ներկայությունը տանջում է նրան ու բնազդաբար թեր քաշեց Փոլի թիկունքից։ Փոլը շրջվեց և ընդհանուր խոսակցության մեջ երեքի կողմից տիրեց լռություն, երկուսի կողմից՝ կրքոտ արտահայտված, և ընդհատվեց միայն Սիմոնի կատարած շարժումով, որ ծռվեց Փոլին կրակ առաջարկելու համար։ Ռոժեն դիտում էր նրանց, դիտում էր Սիմոնի երկար ուրվագիծը, լուրջ, շատ նուրբ կիսադեմը՝ հակված Փոլի լուրջ կիսադեմին, և մի տեսակ անհարգալից ծիծաղ համակեց նրան։ Նրանք լավ էին պահում իրենց, զգայուն էին, դաստիարակված, նա կրակ էր առաջարկում, Փոլը մերժում էր իր մարմինը, չէր հանձնում նրան, այս ամենը, նրանգավորված, մոտավորապես հետևյալ բառերով կարող էր արտահայտվել. «Շնորհակալություն, ո՛չ, շնորհակալություն»։ Ինքը ուրիշ էր. մի փոքրիկ պոռնիկ սպասում էր իրեն ամենասովորական հաճույքներով, դրանից հետո փարիզյան դիշերները, հազար ու մի հանդիպում, այնուհետև՝ առավոտ վաղ ուժասպառ աշխատանքը, համարյա ձեռքի աշ-

խատանք՝ իր նմանների հետ, որոնք մեռնում են հոգնու-
թյունից, որոնց ինքն է արհեստ սովորեցրել։ Այդ ժամանակ
Փոլը իր հանգիստ ձայնով ասաց. «Շնորհակալություն», իսկ
Ռոժեն չկարողացավ զսպել իրեն, բռնեց ձեռքը, սեղմեց՝ իր
ներկայությունը հիշեցնելու համար։ Սիրում էր։ Այս փոքրիկ
ազան կարող էր նրան համերդների քարշ տալ կամ թանգա-
բաններ տանել և ձեռք չտալ։ Վեր կացավ, հարթակի վրայից
մի բաժակ սգոթ վերցրեց, մեկ ումպով դատարկեց և ավելի
լավ զգաց իրեն։

Ճաշկերույթն անցավ ինչպես կանխատեսել էր։ Մի քանի
մոնչյուն արձակեց, փորձեց խոսել և դարձնեց միայն վեր-
ջում, երբ տիկին Վան դեն Բեշը հարցնում էր նրան, իրազեկ
դարձնելու մեծագույն ցանկությամբ, թե գիտե՞ր արդյոք ում
հետ է պատկում Ֆ-ը։ Պատասխանեց, որ այդ հարցը իրեն
այնքանով էր հետաքրքրում, որքանով եթե իմանար, թե ինչ
է ուտում այդ մարդը, իր համար դա ոչ մի նշանակություն
չուներ, և ավելի լավ կանեին հետաքրքրվեին մարդկանց
սեղանով, քան անկողնով, մի բան, որ ավելի քիչ անհան-
գստություն կպատճառեր նրանց։ Փոլն սկսեց ծիծաղել,
որովհետև նա գետնին էր հավասարեցրել ճաշկերույթի ժա-
մանակ իշխող ամբողջ խոսակցությունը, և Սիմոնը չկարո-
ղացավ շընդհատել նրան։ Ռոժեն շատ էր խմել, վեր կե-
նալու ժամանակ սկսեց ծուռումուռ քայլել և ընկատեց, թե
ինչպես տիկին Վան դեն Բեշը կոտրատվելով կողքի աթոռն
էր թիկթիկացնում։

— Մայրս ձեզ հետ է,— ասաց Սիմոնը։

Նրանք կանգնել էին դեմ-դիմաց։ Ռոժեն նայում էր Սի-
մոնին և շաղախված հայացքով աշխատում էր նրա մոտ
փափուկ կզակ տեսնել կամ թուլիկ բերան, բայց չգտնելով,
արամադրությունն ընկավ։

— Իսկ Փոլը ձեզ մո՞տ է գալու։

— Ես եմ գնում,— ասաց Սիմոնը և շրջեց թիկունքը։

Ռոժեն բռնեց նրա արմունկից։ Սարսափելի կերպով կա-
տաղած էր։ Տղան զարմացած նրան էր նայում։

— Սպասե՛ք... ուզում եմ մի բան հարցնել։

Նրանք գնում էին իրար. և՛ մեկը, և՛ մյուսը համոզված
էին, որ ասելու ոչինչ չունեին։ Բայց Ռոժեն զարմանում էր



իր արարքից, իսկ Սիմոնն այնքան հպարտ էր դրա համար,
որ ժպտաց։ Ռոժեն հասկացավ, բաց թողեց նրան։

— Ուզում էի ձեզնից մի սիգար խնդրել։

— Իսկույն։

Ռոժեն հայացքով հետևեց նրան։ Հետո գնաց Փոլի մոտ,
որն ինչ-որ խմբի միացած խոսում էր, ու բռնեց թևը։ Փոլը
հետևեց նրան և անմիջապես հարցրեց.

— Ի՞նչ ասացիր Սիմոնին։

— Սիգար խնդրեցի նրանից։ Ինչի՞ց էիր վախենում։

— Չգիտեմ,— ասաց նա թիրեցած,— դայրացած էիր
երևում։

— Ինչո՞ւ պիտի դայրանամ։ Տասներկու տարեկան տղա
է։ Կարծում ես խանդո՞ւմ եմ։

— Ո՛չ,— ասաց նա և կախեց աչքերը։

— Եթե խանդեի, ավելի շուտ ձախ կողմի հարևանիդ
կխանդեի։ Գոնե նա տղամարդ է։

Փոլը մի պահ հարց տվեց իրեն, թե ինչ էր ակնարկում,
հասկացավ և շրթաբցրեց ժպիտը։ Նույնիսկ չէր էլ նկատել
կողքի նստողին։ Ամբողջ ճաշկերույթը նրա համար լուսա-
վառված էր Սիմոնով, որի փարոսանման աչքերը կանոնավոր
կերպով երկու բոպեն մեկ շոյում էին իր դեմքը, մի պահ
փնտրելով հայացքը։ Երբեմն Փոլը նվիրում էր այն, և Սի-
մոնը ժպտում էր այնպես քնքշորեն, այնպես տագնապալից,
որ չէր կարող չփոխադարձել այն։ Նա անասելիորեն ավելի
գեղեցիկ էր, ավելի կենսախնդ, քան ձախակողմյան հարե-
վանը, ու մտածեց, որ Ռոժեն ոչինչ չէր հասկանում։ Մինչ
այդ, Սիմոնը մոտեցել էր և Ռոժենին էր մեկնում սիգարի
տուփը։

— Շնորհակալություն,— ասաց Ռոժեն (նա զգուշորեն
ընտրում էր մեկը),— դուք դեռևս չգիտեք, թե ինչ բան է լավ
սիգարը։ Սրանք իմ տարիքին վերաբերող վայելքներ են։

— Ձեզ եմ թողնում,— ասաց Սիմոնը,— ես զզվում եմ
ղրանցից։

— Փո՛չ, ինչպես միշտ ծուխը չի՞ խանգարում քեզ։
Ի միջի այլոց, մենք արդեն դուրս ենք գալու,— ասաց
նա շրջվելով Սիմոնի կողմը,— առավոտ շուտ եմ դարթնելու։

Սիմոնը շնորհվեց նրա «մենք»-ից։ «Նշանակում է նրան

կթողնի ներքևում, դռան առջև, որպեսզի գնա միանա այդ փոքրիկ թեթևսոլիկին, իսկ ես կմնամ այստեղ, կզրկվեմ նրանից»։ Նայեց Փոլին, թվաց թե նույն միտքն է կարդում նրա դեմքին ու շշնջաց.

— Եթե Փոլը հոգնած չէ... ավելի ուշ կարող էի ուղեկցել նրան։

Միասին շրջվեցին Փոլի կողմը։ Վերջինս ժպտաց Սիմոնին և նախընտրեց վերադառնալ, ուշ էր։

Ավտոմեքենայի մեջ ոչ մի բառ շարտասանեցին։ Փոլն սպասում էր։ Ռոժեն խլել էր նրան մի երեկոյից, որ հաճելի էր իրեն. Ռոժեն պետք է բացատրություն տար կամ ներողություն խնդրեր։ Դռան առջև կանգ առավ, չանջատեց ավտոմեքենայի շարժիչը... և Փոլն իսկույն հասկացավ, որ ոչինչ չուներ ասելու, որ նա վերև չէր բարձրանալու, որ այս ամենը իր կողմից զգույշ սեփականատիրոջ հակազդեցություն էր. Փոլն իջավ ավտոմեքենայից, «գիշեր բարի» շշնջաց և անցավ փողոցը։ Ռոժեն անմիջապես շարժվեց. նա մեղադրում էր իրեն։

Բայց դռան առջև կանգնած էր Սիմոնի ավտոմեքենան, ինքն էլ նստած էր մեջը։ Զայն տվեց, և Փոլը զարմացած գնաց նրա մոտ։

— Ինչպե՞ս հայտնվեցիք այստեղ։ Երևի խենթի պես եք վարել։ Իսկ ձեր մոր երեկո՞ն։

— Նստեցեք մի բոպե,— աղաչեց Սիմոնը։

Գիշերվա մեջ նրանք շշուկով էին խոսում, կարծես ինչ-որ մեկը կարող էր լսել նրանց։ Փոլը ճարպիկորեն սահեց ավտոմեքենայի մեջ և նկատեց, որ վարժվել է։ Վարժվել է նաև իր կողմը թեքված վստահելի դեմքին, իսկ փողոցային լամպը այն բաժանում էր երկու կեսի։

— Շատ չձանձրացա՞ք,— հարցրեց Սիմոնը։

— Դե ոչ... ես...

«Սիմոնը մոտիկ է նստած, շատ մոտ»,— մտածեց Փոլը։ Բավական ուշ էր խոսելու համար, և նա չպետք է հեռանար իրեն։ Ռոժեն կարող էր տեսնել, այս ամենը խենթություն էր... համբուրեց Սիմոնին։

Զմեռային քամին բարձրանում էր փողոցներում, անցավ բաց ավտոմեքենայի վրայով, նրանց միջև ցիրուցան արեց



մազերը։ Սիմոնը նրա դեմքը ծածկում էր համբույրներով. Փոլը, ապշած, շնչում էր այս երիտասարդի բույրը, նրա շնչառությունը և գիշերային թարմությունը։ Նա անխոս հեռացավ։

Արշալույսը բացվելու հետ, կիսաքուն վիճակում, նա կարծես երազի մեջ նորից տեսավ Սիմոնի մազերի ոսկեզանգվածը, գիշերվա ուժեղ քամու տակ խառնված իր մազերին, որը միշտ նրանց դեմքերի միջև մնաբաստ միջնորմի պես էր, և թվաց, թե նորից է զգում նրա տաք բերանի շունչը, որ հոսում էր իր էության մեջ։ Ժպտաց ու նորից քնեց։

## Գլուխ 11

Տասը օր էր անցել, Սիմոնը չէր տեսել նրան։ Այդ խելահորույս ու ջերմ երեկոյի հաջորդ օրը, որ համբուրվել էին, Սիմոնը մի երկտող ստացավ, որով Փոլը պարտադրում էր այլևս առիթ չփնտրել իրեն հանդիպելու. «Ես ձեզ շատ վիշտ կպատճառեմ և մեծ զորությամբ եմ լցված ձեր հանդեպ»։ Սիմոնը չէր հասկացել, որ նա ավելի շատ իր համար է վախենում, քան՝ Սիմոնի, հավատացել էր նրա խոսքին և նույնիսկ չէր վիրավորվել, պարզապես մի միջոց էր փնտրել, մի իմաստ, որ առանց նրա կարողանար բացահայտել կյանքը։ Նա չէր մտածում, որ նման ոճի զգուշավորությունը «Ես ձեզ շատ վիշտ կպատճառեմ, անզգուշություն է» և այլն հաճախ որևէ սիրավեպի փակագիծն է, որ դրվում է կամ հենց սկզբից, կամ անմիջապես հետո, բայց ոչ մի դեպքում չի հուսահատեցնում։ Փոլը նույնպես չգիտակ։ Նա վախեցել էր, նա անդիտակցաբար սպասում էր, որ Սիմոնը կգա, կգտնի իրեն և կպարտադրի իրեն՝ սիրվելու։ Էլ չէր կարող հանդուրժել ձմռան օրերի միօրինակությունը, նույն փողոցների հավիտենական տողանը, որ տանում էր նրան մենամենակ տնից աշխատանքի, այս գավաճան հեռախոսը, որ ամեն անգամ ուիսոսում էր վիրցնելու համար, այնքան որ Ռոժեի ձայնը ցրված էր, ամսթահար, ի վերջո, երկարատև, բայց չգտնված ամուսնու կարոտ. ամեն ինչ նրան տանում էր դեպի դինաթափված զղայազրկություն և ամեն գնով պարտադրում, որ «ինչ-որ բան տեղի ունենա»։

Սիմոնն աշխատում էր։ Նա ճշտապահ էր, ջանասեր և լուսկյաց։ Ժամանակ առ ժամանակ բարձրացնում էր գլուխը, քաշակայող հայացքով նայում էր տիկին Ալիսին և շրթունքների վրայով սահեցնում վարանող մատը... Փոլը, վերջին երեկոն, անակնկալ և համարյա հրամայական շարժումը, որով շուրթերը դրել էր իր շուրթերին, նրա ետ շրջված գլուխն այնուհետև, և երկու ձեռքերը՝ քնքշորեն Սիմոնի դեմքին, քամին... Տիկին Ալիսը այդ հայացքից նեղված կոկորդն էր մաքրում, և Սիմոնը ժպտում էր թեթև։ Փոլը մի փոքր զգժկամություն էր ցուցաբերել, սա էր բոլորը։ Դրանից հետո Սիմոնը չէր փորձել հետևել նրան, գուցե սխալվե՞լ էր։ Տասը-քսան անգամ ամենայն մանրամասնությամբ վերլուծում էր անցած շաբաթների ամենամանր դրվագները, ավտոմոբիլներով կատարած վերջին զբոսանքը, այն ձանձրալի ցուցահանդեսը, որտեղից փախել էին, մոր դժոխային ճաշկերույթը... և յուրաքանչյուր վերհիշած մանրամասնություն, յուրաքանչյուր պատկերացում, յուրաքանչյուր ենթադրություն նրան ավելի ու ավելի էին տանջում։ Մինչդեռ, օրերն անցնում էին, նա կամ ժամանակ էր շահում, կամ կորցնում էր կյանքից, այլևս չգիտեր ինչ վիճակում էր։

Մի երեկո նա ընկերոջ հետ իջավ ինչ-որ խավար աստիճաններով և հայտնվեց անծանոթ փոքրիկ մի կաբարեում։ Շատ էին խմել, նորից խմիչը պատվիրեցին և էլի տխրեցին։ Հետո մի սևամորթ կին եկավ երգեց, նա շատ խոշոր վարդագույն բերան ուներ, բաց էր անում հազար ու մի կարոտի դռներ, այրում էր հուսահատ սիրո սենտիմենտալ կրակներ, որի մեջ սահեցին երկուսով։

— Երկու տարի կատմ կյանքիցս որևէ մեկին սիրելու համար,— ասաց Սիմոնի ընկերը։

— Դե ինչ, ես սիրում եմ,— ասաց Սիմոնը,— իսկ նա երբեք չի իմանա, որ սիրել եմ իրեն։ Երբեք։

Հրաժարվեց ամեն տեսակի մեկնաբանությունից, բայց միաժամանակ նրան թվում էր, թե ամեն ինչ կորած չէ. դա անհնար էր. ուրեմն, այս բարձրացող ալիքը ոչ մի բանի պետք չէր։ Հրավիրեցին երգչուհուն իրենց հետ խմելու, փիգալից էր, բայց այնպես երգեց, կարծես Նոր Օռլեանից էր գալիս, ապշահար Սիմոնին նվիրելով կիսադեմերով ու մեկնրված ձեռքերով լեցուն մի անուշ ու երկնադույն կյանք։ Սինչև ուշ երեկո մեն-մենակ լսեց նրա երգը և երբ արշալույսը բացվեց, սթափ վերադարձավ տուն։



* * *

Հաջորդ օրը երեկոյան ժամը վեցին Սիմոնն սպասում էր Փոլին խանութի առջև։ Անձրև էր. ձեռքերը խրում էր գրպանների մեջ և ինքն իրեն բարկանում, զգալով դրանց դողը։ Ջարմանալիորեն պարապ էր զգում իրեն ոչ մի ռեակցիա չէր նկատում իր մեջ. «Աստվա՞ծ իմ,— մտածեց,— նրա հետ գեմ-գիմաց գտնվելով գուցե միայն տանջանքի եմ դատապարտում ինձ։ Եվ զվվանքի ծամածռություն ունեցավ դեմքին։

Ժամը վեցն անց կեսին Փոլը դուրս եկավ։ Հագել էր մուգ գույնի կոնտյում, աչքերի դույնի կապտամորուգույն մի վզնոց, հոսված տեսք ուներ։ Մի բայլ արեց դեպի Փոլը, վերջին ժպտաց, և Սիմոնին թվաց, թե միանգամից լցվեց, հանդրստացավ. և փակեց աչքերը։ Սիրում էր նրան։ Ինչ էլ պատահեր իր հետ, եթե նա որևէ տհաճություն պատճառեր իրեն, դարձյալ ոչինչ չէր կորցնելու։ Փոլը տեսավ այդ կուրացած դեմքը, առաջ մեկնված ձեռքերը և կանգ առավ։ Ճիշտ է, այս տասը օրվա ընթացքում Փոլը շատ էր զգացել նրա կարիքը։ Նա մտածում էր, որ Սիմոնի շարունակական ներկայությունը, հիացմունքը, համառությունը մի տեսակ զգայական սովորություն էին առաջացրել, որից խուսափելու ոչ մի հիմք չուներ։ Բայց այն դեմքը, որ Սիմոնը մեկնում էր իրեն, ոչ մի առնչություն չուներ ոչ սովորության, ոչ էլ երեսունիններորդ կնոջ բարոյական հարմարվածության հետ։ Դա այլ բան էր։ Դորշ մայթը, անցորդները, շրջապատում գտնվող ավտոմոբիլները հանկարծ նրա աչքին թանձրացած, ժամանակի հետ կապ չունեցող սճավորված դեկորացիա թվացին։ Երկու մետր հեռավորությունից նայում էին իրար, և Ֆոխքան Փոլը կհասցներ նորից ընկղմվել փողոցի աղմկոտ ու տխուր իրականության մեջ, չնայած նա չէր կորցնում աշխարհությունն ու գգոնությունը իր սեփական խղճի առջև, Սիմոնը մի քայլ արեց և գիրկն առավ նրան։

Գրկել էր Փոլին ու չէր սեղմում կրծքին, չէր շնչում, մեկ հանգստություն էր պաշարել նրան։ Այսը հենել էր նրա մազերին և անթարթ նայում էր դիմացի դրախտանոթի ցուցանակին՝ «Ժամանակի գանձեր»-ին, և տարտամորեն հարց էր տալիս իրեն, թե ինչպիսի գանձեր կարող էին լինել դրախտանոթում և ինչպիսի գաստարկաբանություններ։ Միաժամանակ զարմանում էր, որ այսքան կարևոր պահ այսպիսի անհեթեթ հարց է տալիս իրեն։ Նրան թվում էր, թե վերջապես մի կարևոր խնդիր է լուծել։

— Սիմո՛ն,— ասաց Փոլը,— երբվանի՞ց եք այստեղ։ Երևի ամբողջովին թրջվել եք։

Փոլը շնչում էր նրա բրդյա բլուզի, նրա վզի բույրը և չէր ցանկանում շարժվել։ Անսպասելի թիթեռություն էր զգում նրա վերադարձից, կարծես ազատագրված լիներ ինչ-որ բանից։

— Գիտեք,— ասաց Սիմոնը,— բացարձակապես չէի կարող ապրել առանց ձեզ։ Շարժվում էի դատարկության մեջ։ Նույնիսկ չէի ձանձրանում, նույնիսկ ինքս ինձնից էի զզրկված։ Իսկ դո՞ւք։

— Ես,— ասաց Փոլը,— օ՜, գիտեք, Փարիզում հիմա այնքան էլ ուրախ չէ։ (Նա փորձում էր խոսակցությանը բնական ընթացք տալ)։ Նոր հավաքածուով հետաքրքրվեցի, պաշտոնական գործեր վարեցի, հանդիպեցի երկու ամերիկացու հետ։ Խոսք կա, որ Նյու-Յորք գնամ։

Միաժամանակ մտածում էր, որ այս տղայի գրկում, խելքները թռցրած սիրահարների պես անձրևի տակ կանգնել և խոսել այսպիսի տոնով, ոչ մի իմաստ չունի, բայց չէր կարողանում շարժվել։ Սիմոնի շուրթերը հուշիկ իջնում էին նրա բունքերին, մազերին, և կնոջը դրդում նախադասությունները։ Փոլը լռեց, ճակատն ավելի մոտեցրեց նրա ուսին։

— Ցանկանում եք Նյու-Յո՞րք գնալ,— թիկունքից լսվեց Սիմոնի ձայնը։

Երբ Սիմոնը խոսում էր, Փոլը գլխին մոտիկ զգում էր նրա կզակի շարժումը և գայրոցական աղջկա պես ծիծաղել էր ուզում։



— ԱՄՆ-ում գտնվելը, ինչ խոսք, հետաքրքիր փորձություն է։ Համաձայն չե՞ք։ Երբեք այնտեղ չեմ եղել։

— Ես նույնպես,— ասաց Սիմոնը։— Մայրս սարսափում է դրանից, բայց ճամփորդությունը միշտ էլ ահաբեկել է նրան։

Սիմոնը կարող էր ժամերով խոսել մոր, ճամփորդական հաճույքների, Ամերիկայի ու Ռուսաստանի մասին։ Ուզում էր հազար ու մի հայտնի տեղանուններ թվարկել, շատ ու շատ նյութեր ընտրել և առանց ջանք թափելու հանգիստ խոսել։ Այլևս նրա մտքով չէր անցնում զարմացնել կամ հրապուրել Փոլին։ Լավ էր զգում իրեն, վստահ ինքն իր վրա և միաժամանակ անհասատատ։ Հարկավոր էր Փոլին տուն տանել և սիրուն ուղածի չափ համբուրել, բայց չէր հարձակվում բաց թողնել գրկից։

— Գեսք է մտածեմ,— ասաց Փոլը։

Եվ նույնիսկ չգիտեր՝ Սիմոնի թե իր ճամփորդության մասին էր խոսքը։ Ինքն էլ իր հերթին էր վախենում գլուխը բարձրացնել և դիմացը պատանեկան մի դեմք տեսնել, վախենում էր ինքն իրեն տիրապետել, տիրապետել խելամիտ ու հաստատակամ Փոլին։ Վախենում էր ինքն իրեն դատապարտել։

— Սիմոն,— ասաց նա ցածրաձայն։

Սիմոնը թեքվեց, նրբորեն համբուրեց շուրթերը։ Նրանց աչքերը բաց էին և ամեն մեկը իր դիմաց տեսնում էր փայլակնացայտ հսկայական մի բիծ, որ լի էր ճառագայթումով և սավերներով, սարսափած մի բիր, որ չափից դուրս խոշորացած էր ու թաց։

Երկու օր [illegible] նրանք միասին ճաշեցին։ Փոլին հարկավոր էր միայն մի [illegible] նախադասություն ասել, որպեսզի Սիմոնը հասկանար, թե [illegible] էին եղել նրա համար այդ տասը օրերը։ Ռոժեի անտարբերությունը, Սիմոնի հասցեին ուղղված նրա թունոտ ծաղրը, մենակությունը։ Փոլն, սենկասկած, հույսեր էր փայփայել այդ դադարն օգտագործել Ռոժեին վերադառնալու համար, գոնե նորից տեսնել, վերականգնել իրենց հարաբերությունները։ Բայց բախվել էր կատաղած երեխայի։ Եվ իր կողմից ինչպիսի՞ համեստ, հուշիկ ջանքեր։ Նրա նախ-

ընտրած ճաշերը, նրա սիրած հագուստը, դեռ ավելին՝ խ
սակցություն նրա նախասիրած թեմայի շուրջ, բոլոր ա
միջոցները, որոնք կանանց նվիրված ամսագրերում իրեն
ծիծաղելի հանձնարարականներով հասարակից էլ հասարա
են, բայց խելամիտ կնոջ կողմից օգտագործվելու դեպքու
ավելի սրտառուչ են, քան որևէ այլ բան, սրանք նույնպե
չէին օգնել։ Եվ Փոլը ստորացած չէր զգում այդ միջոցին դի
մելու համար, նույնիսկ չէր ամաչում՝ «Ռոժե, դու ես ի
զժբախտության պատճառը, Ռոժե, այսպես չի կարելի շա
րունակել» շարտասանված նախադասությունները, որ այ
րում էին շուրթերը, փոխարինել հնարամիտ հեռախուզու
թյամբ կամ ոչխարի թարմ բուդով։ Նա այդպես էր վարվում
ո՛չ նախահայրերից ժառանգած տնտեսվարու իր բնազդով
ոչ էլ իր դառը համակերպվածության պատճառով։ Ո՛չ, ավելի
շուտ, նա լցված էր մի տեսակ դաժանությամբ «իրենց» հան
դեպ, այն բանի հանդեպ, որ նրանք միասին են եղել։ Կար
ծես իրենցից մեկը, կամ նա, կամ ինքը, պետք է միանգամից
վեր կենար և ասեր. «այլևս բավական է»։ Եվ Փոլը ինչպես
իր, այնպես էլ Ռոժեի կողմից, անձկությամբ սպասում էր
տեսնել այդ բնազդային շարժումը։ Բայց իզուր։ Ինչ-որ բան,
ըստ երևույթին, մեռել էր։

Ուրեմն, տասը օր հաշվարկների և կեղծ հույսերի մեջ
ապրելուց հետո Փոլը կարող էր պարտվել միայն Սիմոնից։
Այն Սիմոնից, որ ասելու էր. «ես երջանիկ եմ, ես ձեզ սի
րում եմ», և տափակ չէր՝ հնչելու, այն Սիմոնից, որ կմկմա
լու էր հեռախոսափողի միջից, այն Սիմոնից, որ կատարե
լության պես մի բան էր բերում իրեն, թեկուզ կատարելու
թյան կեսը։ Փոլը շատ լավ էր հասկանում, որ նման գեպքե
րում հանդես են գալիս երկուսով, բայց վաղուց հոգնել էր
միշտ առաջինը և միայնակը լինելուց։ «Սիրել, դեռ ոչինչ չի
նշանակում,— ասում էր նրան Սիմոնը, երբ խոսում էր իր
մասին,— հարկավոր է նաև սիրվել»։ Եվ զարմանալիորեն
Փոլին թվում էր, թե հենց իրեն է վերաբերում դա։ Միայն թե
այս պատմության շեմին, ուր կանգնած էր ինքը, գրգիռի,
պոռթկումի փոխարեն, որ օրինակ երևան էին եկել Ռոժեի
ժամանակ, զարմանում էր իր մեջ զգալով անսահման ու
քնքուշ խոնջանք, որ մինչև իսկ ազդում էր քայլերի վրա։



Շատերը խորհուրդ էին տալիս օդափոխվել, իսկ նա թախծե
լով խորհում էր, որ պարզապես հարկավոր է սիրեկանին
փոխել. մեծ գլխացավանք չէր լինի, կհամապատասխաներ
Փարիզի կյանքին, հաճախակի կրկնված երևույթ կլիներ...
Եվ նա շրջում էր երևսը հայելու մեջ երևացող սեփական ար
տացոլումից, կամ փակում հայելին դեմքի քսուքով։ Եվ մի
այն երեկոյան, երբ Սիմոնը դռան զանգը հնչեցրեց, և Փոլը
տեսավ նրա մուգ գույնի փողկապը, անհանգիստ աչքերը,
որոնք արտահայտում էին նրա ողջ էության խտացած բերկ
րանքն ու սրտի անհանգստությունը, այն մարդու նման, որին
կյանքը շատ է երես տվել և շարունակում է դարձյալ, ցան
կացավ կիսել նրա երջանկությունը։ Այն երջանկությունը, որ
ինքն էր տալիս նրան. «Ահա իմ մարմինը, իմ ջերմությունը,
իմ քնքշությունը, դրանք բոլորովին հարկավոր չեն ինձ, բայց
քո ձեռքերում երևի ինձ համար էլ հաճելի դառնան»։ Այդ
գիշեր Սիմոնը մնաց նրա ուսին։

Փոլը պատկերացնում էր, թե մարդիկ կամ ընկերները
ինչ տոնով էին ասելու. «Գիտե՞ք, Փոլը»։ Եվ այդ բարբա
ջանքների վախից ավելի, նույնիսկ իր և Սիմոնի միջև եղած
տարիքային տարբերության վախից էլ ավելի, որ վստահ էր
պիտի ընդգծվեր, ամոթն էր նրան պաշարում։ Ամաչում էր
մտածելով, թե ինչպիսի զվարթությամբ էին մարդիկ խոսելու
այդ մասին, ինչպիսի վերաբերմունք էին ցույց տալու իրեն,
թե ինչպիսի՜ հակում կյանքի և երիտասարդների հանդեպ,
և այնժամ նա միայն ծերացած ու հոգնած էր զգում, մի փո
քրը նեցուկ էր փնտրում։ Եվ զզվում էր այն մտքից, որ դեմ
առ դեմ կանգնելով մարդիկ կարող են միաժամանակ և՛ դա
ժան, և՛ շողոքորթ լինել, մի բան, որ հազար անգամ զգացել
էր ուրիշների առիթով։ Իր մասին ասել էին. «Այդ խեղճ Փո
լը», քանի որ Ռոժեն դավաճանում էր իրեն, կամ. «Այդ հի
մար անկախասերը», երբ լքել էր երիտասարդ, գեղեցիկ և
ձանձրալի ամուսնուն, կամ պախարակել էին իրեն, կամ
խղճացել։ Բայց երբե՛ք, այս անգամվա պես, որ անխուսա
փելի էր, արհամարհանքն ու նախանձը միասին հանդես չէին
գալու իր դեմ։

## Գլուխ 12

Հակառակ Փոլի կարծիքի, առաջին գիշերը Սիմոնը չքնեց։ Բավարարվեց միայն գրկելով Փոլին, ձեռքը մեջքի գողտրիկ ծալքին պահած, անշարժ, լսելով նրա համաչափ շնչառությունը և դրան զումարելով իրենը։ «Մարդ պետք է խիստ սիրահարված լինի կամ խիստ հագեցած, որ ձևացնի, թե քնած է». տարակուսանքով մտածում էր Սիմոնը և ինքը, որ միայն երկրորդ դեպքին էր սովոր, սուրբ կրակը պահպանող կույսերի պես հպարտ և պատասխանատու էր զգում Փոլի նինջի համար։ Այս ձևով անցկացրին իրենց առաջին գիշերը, կողք-կողքի պառկած, ուշադիր ու քնքշանքով լի, յուրաքանչյուրն իր հերթին հսկելով մյուսի սուտ քունը, չհամարձակվելով շարժվել։

Սիմոնը երջանիկ էր։ Չնայած Փոլը տասնհինգ տարով մեծ էր իրենից, սակայն նա այնպիսի մեծ պատասխանատվություն էր զգում նրա նկատմամբ, ինչպիսին կարող էր զգալ տասնվեց տարեկան դեռատի կույսի կողքին։ Ամբողջովին տարված Փոլի բարեհաճությամբ, առաջին անգամն էր նման գրկախառնությունից նվիրատվության տպավորություն ստանում և թվում էր, թե անհրաժեշտ է աչալրջորեն հսկել, կարծես նախապես պաշտպանելով այն ցավից, որ կարող էր մի օր պատճառել նրան։ Հսկում էր, պահպանում նրան իր իսկ ստորություններից, անցյալի խեղկատակություններից, իր առաջացրած սարսափներից, անախորժություններից և իր թուլությունից։ Երջանկացնելու էր նրան, ինքն էլ երջանիկ կլիներ և զարմացած մտածում էր, որ երբեք նման երդումով չէր կապվել նույնիսկ իր ամենամեծ հաղթանակների ժամանակ։ Եվ այսպես, առավոտյան մի քանի անգամ ձևացրին, թե արթնանում են, մեկը մյուսի նոսկից սուտ հորանջեցին, ծուլորեն ձգվեցին, բայց ոչ մի անգամ միասին։ Երբ Սիմոնը շրջվում էր կամ բարձրանում արմունկի վրա, Փոլը բնազդորեն սահում էր վերմակի տակ, վախենալով նրա հայացքից՝ կապի այդ առաջին հայացքից, արարք, որ ավելի հասարակ, ավելի որոշակի չէր կարող լինել։ Եվ երբ համբերությունից դուրս եկած Փոլն էր շարժվում, Սիմոնը փակ աչքերով, բայց ուշադիր պահում էր շունչը, վախենալով



կորցնել գիշերային երջանկությունը։ Վերջ ի վերջո Փոլը անակնկալի բերեց նրան. վարագույրների արանքից թափանցող օրվա թույլ լույսի տակ տեսավ նրա կիսաբաց աչքերը։ Նրա կողմը շրջված անշարժացավ ինքն էլ։ Պառկած էր պատկերացնում իրեն և տգեղ, ուշադիր նայում էր նրան, մինչև որ վերջնականապես Սիմոնը բաց աներ աչքերը, նայեր իրեն, գոնե այսպիսով վերջ տրվեր այդ կասկածելի արթնացմանը։ Սիմոնը շարունակելով աչքերը կիսաբաց պահել, ժպտաց, շշնջաց նրա անունը և սահեց մոտը։ «Սիմոն»,— ասաց Փոլը, ձայնեց և փորձեց այդ գիշերը մեկ անգամ նորից վերափոխել կամակորության։ Սիմոնը գլուխը դրեց նրա սրտին, քնքշորեն համբուրեց թևի ծալքը, ուսը, այտը, սեղմելով կրծքին։

— Երազումս քեզ տեսա,— ասաց նա,— միայն քեզ եմ տեսնելու երազումս։

Փոլը թևերը ծալեց նրա վրա։

Սիմոնն ուզեց աշխատանքի ուղեկցել նրան, հավաստիացնելով, որ անկյունից կհետևանա, եթե այդպես կամենա։ Փոլը մի փոքր թախծոտ պատասխանեց, որ ոչ մեկի առջև հաշվետու չէր ինքը, և տիրեց կարճատև լռություն։ Սիմոնն ընդհատեց այն։

— Ժամը վեցից առաջ դուրս չե՞ս գալիս։ Ինձ հետ կճաշե՞ս։

— Ժամանակ չունեմ,— ասաց նա,— այնտեղ բուտերբրոդ կուտեմ։

— Ի՞նչ եմ անելու մինչև ժամը վեցը,— հեծեծաց նա։

Փոլը նայեց նրան։ Անհանգստանում էր. կարո՞ղ էր նրան ասել, որ անհրաժեշտություն չի տեսնում ժամը վեցին հանդիպել։ Մյուս կողմից այն միտքն էր փայփայում, որ նա կարող էր դրան մոտ սպասել իրեն անհանգիստ վիճակում, ամեն երեկո՝ փոքրիկ ավտոմոբիլով, ու երջանկությամբ էր պարուրվում... մեկը, որ ամեն երեկո սպասում է քեզ, մեկը, որ անկյուն ձայնով չի ղանդահարում ժամը ութին կամ երբ ցանկանա... Ժպտաց։

— Քեզ ո՞վ ասաց, որ այս երեկո հրավիրված չեմ ճաշի։

Սիմոնը, որ դժվարությամբ էր թեզանիքի կոճակները

ամրացնում, կանգ առավ։ Մեկ րոպե անց եռանդից զուրկ ձայնով ասաց.

— Իսկապես ոչինչ։

Մտածում էր Ռոժեի մասին, իհարկե։ Միայն Ռոժեի մասին էր մտածում, տեսնում էր նրան իր ունեցվածքը եռ խլելիս, վախենում էր։ Բայց գիտեր, որ Ռոժեն չի մտածում այդ մասին։-Այս ամենը զզվելի էր։ Գոնե Փոլը մեծահոգի լիներ։

— Այս երեկո ոչ մի ճաշի էլ հրավիրված չեմ։ Արի այստեղ, օգնեմ։

Փոլը նստել էր մահճակալին, իսկ Սիմոնը ծնկի չոքեց նրա առջև, մեկնեց թևերը, կարծես թեզանիքները ձեռնակապեր լինեին։ Պատանու բռունցքներ ուներ, ողորկ ու նիհար։ Կոճակներն ամրացնելու ժամանակ Փոլը միանգամից ցանկություն զգաց կրկնել՝ տեսարանը։ «Շատ բեմական է ստացվում»,— մտածեց նա, բայց և այնպես այտը հպեց Սիմոնի մազերին մի փոքր երջանիկ ծիծաղով։

— Իսկ ի՞նչ եմ անելու մինչև ժամը վեցը,— համառորեն պնդեց Սիմոնը։

— Չգիտեմ... Կաշխատես։

— Չեմ կարող,— պատասխանեց նա,— շատ երջանիկ եմ։

— Աշխատելուն չի խանգարի։

— Ինձ, այո։ Ի միջի այլոց, գիտեմ, թե ինչ եմ անելու։ Կգրոսնեմ և կմտածեմ քո մասին, հետո մենակ կնախաճաշեմ մտածելով քո մասին և հետո կսպասեմ ժամը վեցին։ Գործունյա երիտասարդից ես ոչինչ չունեմ, գիտես։

— Ի՞նչ կասի քո փաստաբանը։

— Չգիտեմ։ Ինչո՞ւ ես ուզում, որ գնամ ժամանակս փչացնեմ ասպագաս կերտելու համար, երբ ինձ հետաքրքրում է միայն իմ ներկան։ Եվ լիուլի բավարարում,— ավելացրեց նա լայն շարժումով ողջունելով Փոլին։

Փոլը թափ տվեց ուսերը։ Բայց Սիմոնը ճշգրտորեն վարվեց այնպես, ինչպես ասել էր, և այսպես օրեր շարունակ։ Սլանում էր Փարիզով մեկ, ժպտում բոլորին, օրը տասն անգամ գալիս անցնում էր Փոլի խանութի առջևով, պատահական տեղում կանգնած գիրք էր կարդում, երբեմն ցած



դնում, գլուխը ետ գցելու համար, աչքերը փակ։ Նման էր երջանիկ լուսնոտի, և դա չէր կարող չհուզել Փոլին ու ավելի սիրելի չդարձնել նրա աչքին։ Փոլին թվում էր, թե ինքը միայն տալիս է և զարմանում էր, որ դա համարյա անհրաժեշտություն է դարձել նրա համար։

* * *

Արդեն տասն օր է ինչ անբարենպաստ եղանակին ճամփորդում էր Ռոժեն, մի պաշտոնական ճաշկերույթից ընկնելով այլ պաշտոնական ճաշկերույթի, իսկ հյուսիսային գեպարտամենտը նրա համար խորհրդանշվում էր անվերջանալի, հարթ ճանապարհով և ռեստորանների անանուն դեկորացիաներով։ Ժամանակ առ ժամանակ Փարիզ էր զանգահարում, խնդրելով միաժամանակ երկու համար, և, Փոլին տրանջալուց առաջ կամ հետո լսում էր Մեզի-Մարսելի տրտունջները։ Ռոժեն հուսահատված էր զգում իրեն, անկարող։ Իր կյանքը նման էր այդ դավարին։ Փոլի ձայնը փոխվում էր, միաժամանակ դառնում էր ավելի վշտագին ու ավելի հեռավոր, ուզում էր նրան տեսնել։ Ռոժեն երբեք չէր կարողացել տասնհինգ օրից ավելի հեռու գտնվել նրանից և չզգալ նրա կարիքը։ Ինչ խոսք, նա համոզված էր, որ Փարիզում Փոլը միշտ էլ պատրաստ է իրեն ընդունելու, միշտ իր տրամադրության տակ է, ինքն էր տնօրինում իրենց հանդիպումները։ Բայց Լիլում նա իրեն զգում էր այնպես, ինչպես առաջին օրերին, երբ կառչած նրա կյանքից, վախենում էր նվաճել նրան, ինչպես որ հիմա վախենում էր կորցնել։ Վերջին օրը հայտնեց նրան իր վերադարձի մասին։ Տիրեց մի րոպեի լռություն, որից անմիջապես հետո Փոլը վճռական տոնով ավելացրեց. «Պետք է տեսնեմ քեզ։ Ռոժեն հարցեր չտվեց, բայց հաջորդ օրվա համար ժամադրություն նշանակեց։

Կեսգիշերին վերադարձավ Փարիզ և առավոտվա ժամը երկուսին Փոլի դռան առջև էր։ Առաջին անգամ լինելով վարանում էր բարձրանալ։ Վստահ չէր, որ կտեսնի նորից այդ երջանիկ դեմքը, չնայած այսպիսի անակնկալների դեպքում սովորաբար հանդիստ էր պահում իրեն, այժմ վախենում էր։

Տասը բոպե սպասեց, ինքն իրենից անհարմար էր զգում, անտեղի պատճառաբանություններ մեջբերելով. «Քնած է, շատ է աշխատում» և այլն, հետո գնաց։ Իր տան դռան առջև դարձյալ վարանեց, հետո միանգամից շրջվեց և գնաց Մեղրի մոտ։ Քնած էր, ուռած դեմքը մեկնեց նրան. «շատ ուշ էր դուրս եկել իր մշտական պրոդյուսերների հետ... շատ երջանիկ էր... ի միջի այլոց, Ռոժեի գալուց անմիջապես առաջ երազում տեսել էր նրան, և այլն»։ Ռոժեն արագ հանվեց, անմիջապես քնեց, ուշադրություն չդարձնելով նրա պչրանքներին։ Առաջին անգամ չէր տեսնում նրան։ Արշալույսին մեքենայաբար գործ տեսավ, մի փոքր զվարճացավ նրա պատմություններով և որոշեց, որ ամեն ինչ հաջող է ընթանում։ Առավոտվա մնացած մասը անցկացրեց նրա հետ և Փոլի ժամադրությունից առաջ բոլորովին հեռացավ նրա մոտից։

## Գլուխ 13

— Պետք է զանգահարեմ,— ասաց Փոլը,— նախաճաշից հետո շատ ուշ կլինի։

Ռոժեն ոտքի կանգնեց, որովհետև Փոլը հեռանում էր սենյակից, իսկ վերջինս նրան նվիրեց այն փոքրիկ ներողամիտ ժպիտը, որ չէր թաքցնում, երբ ստիպում էր Ռոժեին հասարակության կամ սրտի պահանջներից ելնելով, նեղություն կրել իր պատճառով։ Փոլը խոնավ աստիճաններով իջնելու ժամանակ, որ հասնում էր մինչև հեռախոսը, ջղերը թունդ եկած մտածում էր։ Սիմոնի հետ ուրիշ է։ Նա այնքան ուշադիր է, գոհ, միշտ պատրաստ իրենով զբաղվելու, դռները բաց է անում իր առջև, վառում է իր ծխախոտները, վազում է իր ամենաշնչին ցանկություններին ընդառաջ, որոնց մասին նույնիսկ իրենից շուտ է դուշակում և այս ամենը ավելի շուտ նման է ուշադրության շղթայի քան պարտականության։

Այդ առավոտ Սիմոնը բարձր գլուխ, սև մազափնջերը ջիրուցան եղած, կիսաքուն պառկել էր, երբ Փոլը դուրս եկավ և մի գրություն թողեց նրա համար. «Կզանգահարեմ կեսօրին»։ Բայց կեսօրին հանդիպել էր Ռոժեի հետ և հիմա զարմանում էր, թե ինչպես է նրա մոտից հեռանում մի ծույլ երիտասարդ սիրեկանի զանգահարելու համար։ Կնկատե՞ր արդյոք այդ բանը։ Ռոժեի ճակատին ծանր օրերի ծալքեր ու մտազբաղության նշաններ կային, կարծես ավելի էր մեծացել։

Սիմոնն անմիջապես վերցրեց լսափողը։ Սկսեց ծիծաղել հենց որ Փոլն ասաց «Ալո՞»և վերջինս նույնպես ծիծաղեց։

— Արթնացե՞լ ես։

— Տասնմեկից։ Ժամը մեկն է։ Զանգահարեցի հեռախոսակայան, իմանալու հեռախոսն աշխատում է թե ոչ։

— Ինչո՞ւ։

— Կեսօրին զանգահարելու էիր, չէ՞։ Որտե՞ղ ես։

— Լյուջիի մոտ։ Նոր եմ ճաշում։

— Ա՜, լա՛վ,— ասաց Սիմոնը։

Տիրեց լռություն։ Վերջապես Փոլը չորությամբ ավելացրեց.

— Ռոժեի հետ եմ ճաշում։

— Ա՜, լա՛վ...

— Ուրիշ բան չգիտես ասել, ինչ է. «Ա՜, լա՛վ»։ Ամենաուշը ժամը երկուսն անց կեսին կլինեմ խանութում։ Ի՞նչ ես անում։

— Մի քանի հաղուստ եմ վերցնելու մորս մոտից,— արագ վրա տվեց Սիմոնը,— կկախեմ այստեղ, քեզ մոտ, կախիչներից և հետո կգնամ Դեսնոսի մոտ քո սիրած ակվարելը գնելու։

Փոլն ուզեց ծիծաղել։ Միայն Սիմոնին էր հատուկ այս ձևով երկու նախադասություն շղթայակցել իրար։

— Ինչո՞ւ։ Մտածում ես զգեստապահարանդ տեղավորել ինձ մո՞տ։

Փոլը միաժամանակ լուրջ պատճառաբանություններ էր փնտրում նրան ետ պահելու իր որոշումից։ Բայց ի՞նչ պատճառաբանություն։ Սիմոնը համարյա մենակ չէր թողնում իրեն, և մինչև այժմ Փոլը չէր հանդիմանել նրան...

— Այո,— ասաց Սիմոնը,— շատ մարդ է պտտվում շուրջդ։ Ուզում եմ պահակաշուն դառնալ, այն էլ մաքուր կոստյումներով։

— Հետո կանգրադառնանք այդ հարցին,— ասաց Փոլը։

Նրան թվում էր, թե մեկ ժամից ավելի խոսում էր հեռախոսով։ Ռոժեն մենակ էր վերևում։ Հարցեր էր ուղղելու իրեն,

իսկ ինքը դեմ առ դեմ չէր կարողանալու պաշտպանվել զավոր զգացմունքների դեմ։

— Ես քեզ սիրում եմ,— ասաց Սիմոնը լսափողը ցնդելուց առաջ։

Դրսում Փոլը մեքենայաբար սանրվեց հանդիսդարանի հայելու առջև։ Իր դիմաց կանգնած էր մի կերպարանք, որը մեկն ասում էր. «Ես քեզ սիրում եմ»։

Ռոժեն կոկտեյլ էր խմում, Փոլը զարմացավ. նա գիտեր, որ մինչև երեկո ոչ մի բաժակ ոգելից խմիչք չէր օգտագործում։

— Բա՞ն է պատահել։

— Ինչո՞ւ։ Ա՜, խմի՞չքը։ Ո՛չ, այսօր մի քիչ հոգնել եմ։

— Երկար ժամանակ է քեզ չեմ տեսել,— ասաց Փոլը, քանի որ Ռոժեն համակերպված մարդու դերում էր, Փոլը զգաց, որ արցունքները բարձրանում են աչքերին։ Մի օր խակապես այս վիճակին էին մատնվելու. «Երկու ամիս կլինի՞, որ իրար չենք տեսել, թե՞ երեք»։ Եվ հանդիստ կնկատեին հաշվել։ Ռոժեն՝ իր տարօրինակ շարժումներով, հոգնած դեմքով ու մանկական տեսքով ի հեճուկս իր ուժեղության և հակառակ կիսակոպտության... Փոլը շրջեց գլուխը։ Ռոժեն հագել էր իր հին գորշ ժակետը, որ տեսել էր իրենց մտերմության առաջին շրջանում, դեռ նոր էր, իր սենյակի աթոռին կախված։ Նա շատ էր հպարտանում դրանով։ Հազվադեպ էր մտահոգվում վայելուչ երևալու համար և մի քիչ ծանր բնավորության տեր էր իսկապես այդպիսին լինելու համար։

— Տասնհինգ օր,— հանդիստ ասաց Փոլը։— Լա՞վ ես։

— Այո։ Դե, այնպես։

Շշարունակեց։ Անկասկած սպասում էր, որ նա ասի. «Իսկ գործե՞րդ», բայց չասաց։ Նախ Փոլը պետք է խոսեր Սիմոնի մասին, հետո Ռոժեն կարող էր խոստովանել, որպեսզի հետագայում ծիծաղելի երևալու զգացմունքը չապրի։

— Հաճելի ժամանակ անցկացրի՞ր,— ասաց Ռոժեն։

Փոլը կանգ առավ։ Քունքերը խփում էին, զգում էր, որ սիրտը մարում է։ Լսեց իր իսկ ձայնը.

— Այո՛, հանդիպեցի Սիմոնին։ Հաճախ։

— Ա՜,— ասաց Ռոժեն,— այդ հրաշալի տղա՞ն։ Միշտ քեզ համար խենթացող։



Առանց աչքերը բարձրացնելու մի քանի անգամ հանդարտ թափ տվեց գլուխը։

— Իսկ քեզ համար միշտ հաճելի՞ է,— ասաց Ռոժեն։

Փոլը բարձրացրեց գլուխը, բայց Ռոժեն էլ իր հերթին չէր նայում նրան, մեծ ուշադրությամբ իր թուրինջն էր դիտում, Փոլը մտածեց, որ ամեն ինչ հասկացել է։

— Այո,— ասաց նա։

— Հաճելի՞ է։ Թե՞ հաճույքից վեր է։

Հիմա նրանք նայում էին իրար։ Ռոժեն դդալը դրեց ափսեի վրա։ Փոլը ուշադիր և ինքնամոռաց քնքշությամբ նրա բերանի շուրջը գծված երկու խորունկ ակոսներին էր նայում, անշարժ դեմքին ու մի փոքր երիզված կապույտ աչքերին։

— Ավելի վեր,— ասաց նա։

Ռոժեի ձեռքը վերադարձավ դդալին, վերցրեց։ Փոլը մտածեց, որ նա երբեք չէր կարողացել հարկ եղածին պես թուրինջ ուտել։ Կարծես ժամանակը ոչ թե անցնում, այլ սուլում էր ականջներում։

— Ենթադրում եմ, որ ասելու ոչինչ չունեմ,— ասաց Ռոժեն։

Հենց այստեղ Փոլը հասկացավ, որ նա գժբախտ է։ Երջանիկ լիներ, կվերադառնար։ Բայց հիմա կարծես քարկոծված լիներ, իսկ ինքը վերջին քարն էր շպրտում նրա վրա։ Փոլը շշնջաց.

— Դու ամեն ինչ ասել էիր։

— Դու ես վաղակատար անցյալով գնում հարցը։

— Քեզ խնայելու համար, Ռոժե։ Թե՞ ասեի, որ դեռևս ամեն ինչ քեզնից է կախված, ի՞նչ կպատասխանեիր։

Ոչինչ չպատասխանեց։ Նայում էր սփռոցին։

Փոլը շարունակեց.

— Դու ինձ կասեիր, որ շատ ես կառչած քո ազատությանը, որ շատ ես վախենում այն կորցնելուց, որպեսզի... մի խոսքով, անհրաժեշտ ջանք թափես ինձ վերստանալու համար։

— Ասում եմ, ոչինչ չդիտեմ,— միանգամից վրա տվեց Ռոժեն,— անկասկած ատում եմ այն գաղափարը, որ... Գոնե կարողություն ունի՞։

— Խոսքը այդ տեսակ կարողության մասին չէ,— պատասխանեց նա,— սիրում է ինձ։

Փոլը տեսավ, թե ինչպես անենկատ ձեռով նա ձգվեց և մի պահ ատելությամբ լցվեց նրա հանդեպ։ Վստահություն էր ձեռք բերում, այս ամենը սենտիմենտալ նոպա էր եղել, ինքը մնում էր, հենց ինքը՝ սիրեկանը, իսկականը. արուն։

— Համենայն դեպս,— ավելացրեց Փոլը,— չեմ կարող ասել, թե որոշ առումով անտարբեր եմ նրա նկատմամբ։

«Առաջին անգամն է,— դարմացած մտածեց վերջինս,— որ ցավ եմ պատճառում նրան դիտակցաբար»։

— Խոստովանելու եմ,— ասաց Ռոժեն,— որ ճաշի հրավիրելու ժամանակ մտքովս չէր անցնում, որ լսելու եմ ինչոր մի փոքրիկ երիտասարդի հետ կապված թեթևսոլիկ պատմություն։

— Մտածում էիր հրամցնել քո պատմությունները ինչոր մի փոքրիկ երիտասարդ կնոջ հետ կապված,— անմիջապես վրա բերեց Փոլը։

— Դա ավելի բնական է,— ասաց նա սեղմելով ատամները։

Փոլը գողում էր։ Վերցրեց պայուսակը, վեր կացավ։

— Ենթադրում եմ, տարիքս նկատի ունես։

— Փոլ...

Իր հերթին ոտքի կանգնելով, Ռոժեն հասավ նրան դռան մոտ, ուր անհետանում էր Փոլը արցունքից կուրացած աչքերով։ Ավտոմեքենայի մոտ կանգնեց կողքին։ Իզուր էր փորձում Փոլը քաշել արագացման լծակը։ Ռոժեն ձեռքը պատուհանից ներս մացրեց և միացրեց բանալին, որ Փոլը մոռացել էր։ Ռոժեի ձեռքը... Փոլը նրա կողմը շրջեց այլայլված դեմքը։

— Փոլ... դու շատ լավ դիտես... ոտոր վարվեցի։ Ներողություն եմ խնդրում։ Դու դիտես, չէի մտածում, որ այսպես կստացվի։

— Գիտեմ,— ասաց Փոլը։— Ես նույնպես վատ վարվեցի։ Ավելի լավ կլինի որոշ ժամանակ չհանդիպենք։

Ռոժեն անշարժ կանգնել էր, ինքն իրեն կորցրած։ Փոլը մի ժպիտ նվիրեց նրան։

— Ցտեսություն, սիրելիս։

Ռոժեն ծռվեց դռնակի վրա։



— Հույսս քեզ վրա եմ դնում, Փոլ։

Փոլն արագ հեռացավ, որպեսզի Ռոժեն չտեսնի աչքերն այրող արցունքները։ Մեքենայաբար մի-միացրեց ապակիմաքրիչները, և այդ շարժումը հուսահատ ծիծաղ կորզեց նրանից։ Ժամը մեկն անց կեսն էր։ Դեռ բավական ժամանակ ուներ։ կարող էր տուն մտնել, հանգստանալ, շպարվել։ Հույս ուներ, բայց և միաժամանակ կասկածում էր, որ Սիմոնը տանը չի լինի։ Դարբասի մոտ բախվեց նրան։

— Փոլ... ի՞նչ է պատահել ձեզ հետ։

Խուճապի մեջ նորից էր անցել հոգնակիությանը։

«Տեսնելով, որ լաց եմ եղել, խղճալու է» մտածեց նա, և արցունքները շատացան։ Ոչինչ չպատասխանեց։ Վերելակի մեջ Սիմոնը փաթաթվեց նրան, խմեց արցունքները, աղաչեց, որ էլ շարտասվի, ամեն ինչ անտեսելով։ Երդվեց «սպանել այդ տիպին», որի պատճառով Փոլը ժպտաց։

— Երևի սարսափելի տեսք ունեմ,— ասաց նա և այնպիսի տպավորություն ստացավ իր ասածից, կարծես հաղար անգամ կարդացված կամ բազմաթիվ անգամ կինոէկրաններից լսված նախադասություն լիներ։

Հետո նստեց բազմոցին Սիմոնի մոտ և բռնեց ձեռքը։

— Ինձ ոչինչ մի հարցրու,— ասաց նա։

— Այսօր, ոչ։ Բայց մի օր ամեն ինչ կհարցնեմ։ Շատ շատով։ Ես չեմ կարող հաշտվել այն մտքի հետ, որ քեզ լացացնեն։ Հատկապես չեմ կարող հաշտվել այն մտքի հետ, որ նա գալիս է,— զայրացած բացականչեց նա,— իսկ ես, ես չե՞մ կարող երբեմն լացացնել քեզ...

Փոլը նայեց նրան. աղամարդիկ, առանց այլևայլության, վայրի գազաններ են։

— Միայն այդքա՞ն կարող ես անել։

— Կնախընտրեմ ինքս տանջվել,— ասաց Սիմոնը և դեմքը թաքցրեց Փոլի պարանոցին։

Երբ Փոլը երեկոյան վերադարձավ տուն, Սիմոնը խմել էր սքոթի երեք քառորդը և նույնիսկ դուրս չէր եկել։ Նա մեծադույն անկեղծությամբ հայտարարեց, որ անձնական հոգսեր է ունեցել, ելույթ ունեցավ լինելիության դժվարության վերաբերյալ և անկողնու վրա էլ քնեց, երբ Փոլը նրա կոշիկները էր հանում։ Կիսով չափ սիրով, կիսով չափ սարսափած։

* * *

Ռոժեն կանգնել էր պատուհանի մոտ, դիտում էր արևածագը։ Իլ-զը—Ֆրանսի այն ագարակ-հյուրանոցներից մեկն էր, որտեղ գյուղը զարմանալիորեն միաբանվում է քաղաքից եկած սպառվածների դաղափարի հետ։ Հանգիստ բլրակներով, պարարտ դաշտերով և ճանապարհների երկայնքով ձգվող հանրային ցուցանակներով։ Բայց այստեղ, այս անսովոր ժամին, երբ բացվում է օրը, մանկության հեռավոր և իսկական գյուղն էր գալիս պաշարելու Ռոժեին՝ ծանր ու սարսռեցնող անձրևի բույրով։ Նա շրջվեց ու ասաց. «Երկօրյա հանգստի համար հրաշալի եղանակ», բայց միաժամանակ մտածում էր. «Հրաշալի է։ Սիրում եմ այս մշուշը։ Եթե կարողանայի մենակ լինել»։ Տաքուկ անկողնու մեջ Մեգին շրջվեց։

— Փակի՞ր պատուհանը,— պահանջեց նա,— ցուրտ է։

Վերմակը քաշում էր ուսերին։ Ջնայած մարմնի հաճելի ուժասպառությանը, նա արդեն համակվել էր գալիք օրվա սարսափելի մտքերով. այս անծանոթ վայրում, լռակյաց և ցրված Ռոժեի հետ, այս անծայրածիր դաշտերը... Ուզում էր հեծեծալ։

— Քեզ խնդրեցի պատուհանը փակել,— շորությամբ կրկնեց Մեգին։

Ռոժեն վառել էր «Գոլուազ»-ը, օրվա առաջին ծխախոտը և ճաշակում էր համարյա անդուր, բայց միաժամանակ հաճելի դառնությունը, արդեն դուրս էր եկել առավոտյան անուրջից, մի տեսակ անհամբերությամբ ղգալով իր թիկունքից բարձրացող Մեգիի թշնամական տրամադրությունը։ «Թո՛ղ նեղանա, թո՛ղ միանգամից վեր կենա, թո՛ղ ավտոբուս նստի, թո՛ղ վերադառնա Փարիզ։ Ես ամբողջ օրը կդրոսնեմ դաշտերում, մի մոլորված շուն կդանեմ, որ ուղեկցի ինձ», որովհետև սարսափում էր մենակ մնալուց։

Մինչդեռ երկրորդ կտրուկ հրամանից հետո Մեգին տատանվում էր։ Կարող է պատահել մոռանար բաց պատուհանն ու քներ, կամ վերսկսեր նույն տեսարանը։ Նրա դեռևս քնից ելուզված ուղեղում այսպիսի նախադասություններ էին արժվում. «Ես կին եմ և մրսում եմ, նա տղամարդ է և



պետք է փակի լուսամուտը», միաժամանակ առավոտ շուտ արթնացած բնազդից առաջնորդված մտածում էր, որ հարկավոր չէ հրահրել Ռոժեին։

Նա ընտրեց հնարավոր միջինը։

— Դու կարող էիր փակել լուսամուտը և խնդրել առավոտյան նախաճաշը, սիրելիս։

Ռոժեն հուսահատ շրջվեց և առանց մտածելու ասաց.

— «Սիրելի՞ս» այդ ի՞նչ է նշանակում. «սիրելի՞ս»։

Մեգին սկսեց ծիծաղել։ Ռոժեն շարունակեց.

— Քեզ չեմ խնդրել ծիծաղել։ Իսկ դու գիտե՞ս ինչ է նշանակում «սիրելիս»։ Ինչ է, դու ինձ սիրո՞ւմ ես։ Բացի հնչյունական կողմից դու հասկանո՞ւմ ես «սիրել» բառի նշանակությունը։

«Կարծում եմ այսքանը բավական է,— մտածում էր Ռոժեն, իր սեփական բառերից իսկ զարմացած,— Երբ սկսում եմ կնոջ բառապաշարով զրաղվել, նշանակում է մոտ է վախճանը»։

— Քեզ ի՞նչ պատահեց,— ասաց Մեգին։

Նա անկողնու միջից դուրս էր հանել համարյա ահաբեկված մի գլուխ, որ Ռոժեի աչքին զավեշտական թվաց, և սոսինքներ, որ այլևս չէր տենչում։ Անպարկեշտ։ Անպարկեշտի մեկն է։

— Շատ կարևոր հանգամանք է զգացմունքը,— ասաց Ռոժեն,— քեզ համար ես անցողիկ ժամանց եմ։ Հարմար անցողիկ ժամանց։ Եվ հետո ինձ մի ասա «սիրելիս» հատկապես առավոտյան, գիշերն էլի մի կերպ կարելի է։

— Բայց Ռոժե,— բողոքեց Մեգին իրոք տագնապած,— ես քեզ սիրում եմ։

— Ա՜, ո՛չ, դուրս մի տուր,— մի տեսակ կաշկանդված բացականչեց նա, քանի որ, ավելի շուտ, նա տղամարդ էր, և մի տեսակ մխիթարված, քանի որ այդ նախադասությունը նրանց իրավիճակը հասարակացնում էր, իսկ Ռոժեի համար դառնում էր անտեղի սիրուց հոգնած մարդու սովորական վիճակ։

Տաքատի վրայից հագավ բրդյա բլուզը և ափսոսալով, որ բաճկոնը չի վերցրել, դուրս եկավ սենյակից։ Բայց դրա համար հարկավոր էր անկողնու շուրջը պտտվել, իսկ այդ քայլը

կարող էր խոշընդոտել դուրս գալու անհրաժեշտ արագությանը։ Ներս քաշեց սառը օդը և մի տեսակ գլխապտույտ ունեցավ։ Հարկավոր էր Փարիզ վերադառնալ, առանց Փոլին հանդիպելու։ Ավտոմոբիլներ կուրար զով ճանապարհներով, կիրակնօրյա մեռած Փարիզում, Օթեյի մոտ սուրճ կխմեր։ Վերադարձավ վարձը վճարելու և գողի պես հեռացավ։ Մեքենան կբերեր բաճկոնը, Ռոժեն իր բարեուզարուհու հետ ծաղիկներ կուզարկեր, և կվերցներ նրա մոտից։ «Որովհետև ապրել չգիտեմ». ուրախությունից զուրկ մտածում էր նա։

Հոնքերը կիտած մի քիչ սուրաց, հետո ձեռքը մեկնեց դեպի ռադիոընդունիչն ու հիշեց։ «Սիրել,— մտածեց նա,— սիրել, Փոլին ու ինձ էր տրված»։ Նա այլևս ոչ մի բանի ցանկություն չուներ։ Կորցրել էր նրան։

## Գլուխ 14

Մեկ շաբաթ անց բնակարանում սարածված ծխախոտի հոտը Փոլին խեղդել սկսեց։ Բացեց հյուրասենյակի պատուհանը, ձայն տվեց. «Սիմո՜ն» և պատասխան չստացավ։ Մի պահ վախեցավ ու զարմացավ։ Անցավ հյուրասենյակով, մտավ ննջասենյակ։ Սիմոնը անկողնու վրա փռված, վերնաշապկի օձիքը բաց քնել էր։ Երկրորդ անգամ ձայն տվեց, սա չշարժվեց։ Վերադարձավ հյուրասենյակ, բաց արեց պատի պահարանը, տեսավ սքոթի շիշը և դեմքին զզվանքի արտահայտություն տալով դրեց տեղը։ Հայացքով փնտրեց բաժակը, չգտավ և՝ զնաց խոհանոց։ Լվացված բաժակը կաթկթում էր ցանցի մեջ, մի բոպե անշարժացավ տեղում, հետո դանդաղ հանեց վերարկուն, լողասենյակում թարմացրեց դեմքի շպարը և խնամքով սանրվեց։ Արագ տեղը դրեց մազերի խոզանակը՝ բարկանալով իր պճնասիրության և թուլակամության վրա։ Այս ամենն անում էր Սիմոնին հրապուրելու համար։

Վերադառնալով ննջասենյակ, Փոլը ցնցեց նրան և վառեց սնարի լամպը։ Սիմոնը ձգվեց, շշնջաց նրա անունը և շրջվեց պատի կողմը։

— Սիմո՜ն,— չորությամբ արտասանեց Փոլը։

Երբ նա շրջվեց, Փոլը նկատեց իր զզվոցը, որի մեջ, հանկարծ քնելուց առաջ մխրճել էր երեսը։ Փոլը շատ էր ծիծաղում նրա ֆետիշիզմի վրա։ Բայց հիմա այլևս ցանկություն չուներ։ Սառը բարկություն էր պաշարել նրան։ Շրջեց Սիմոնի դեմքը լույսի կողմը։ Նա բաց արեց աչքերը, ժպտաց և խուլ անհետացրեց ժպիտը։

— Ի՞նչ է պատահել։

— Ուզում եմ խոսել քեզ հետ։

— Ես գիտեի,— ասաց նա և նստեց մահճակալին։

Փոլը վեր կացավ, որովհետև կանխեց մեքենայական այն շարժումը, որով ուզում էր ետ տանել նրա աչքերին թափված սև մազափունջը։ Հենվեց պատուհանին։

— Սիմոն, հնարավոր չէ այսպես շարունակել։ Վերջին անգամն եմ ասում։ Պետք է աշխատես։ Դու արդեն զաղտնի խմում ես։

— Ես բաժակը լվացել եմ։ Դու զզվում ես անկարգությունից։

— Զզվում եմ անկարգությունից, խարկանքից և ծուլությունից,— կոպտեց նա,— սկսում եմ զզվել նաև քեզանից։

Սիմոնը վեր էր կացել։ Թիկունքում Փոլն զգում էր նրա ներկայությունը այլայլված դեմքով ու համառորեն չէր շարժվում։

— Շատ լավ զգում էի,— ասաց Սիմոնը,— որ այլևս չես հանդուրժում ինձ։ Շատ սիրելու և ամենին չսիրելու միջև արագ քայլով է անցում կատարվում, այնպես չէ՞։

— Խոսքը զգացմունքներին չի վերաբերում, Սիմոն։ Խոսքը վերաբերում է քո խմելուն, որ ոչինչ չես անում, հիմարանում ես։ Ես քեզ ասացի, որ պետք է աշխատես։ Հարյուր անգամ եմ ասել։ Սա վերջին անգամն է։

— Հետո՞։

— Հետո այլևս չեմ հանդիպի քեզ հետ։

— Դու կարող ես հենց այսպես թողնել ինձ...— մտազբաղ ասաց Սիմոնը։

— Այո՛...

Շրջվեց նրա կողմը, բաց արեց բերանը.

— Լսիր Սիմոն...

Սիմոնը նստել էր մահճակալին, տարօրինակ արտահայտությամբ ձեռքերն էր ուսումնասիրում։ Հետո բարձրացրեց

և դանդաղ դրեց դեմքին։ Փոլն ընդհատեց ասելիքը։ Սիմոնը լաց չէր լինում, չէր շարժվում, և Փոլին թվաց, թե այսպիսի հուսահատություն երբեք ոչ մեկի մոտ չէր տեսել։ Շշնջաց նրա անունը, որպես թե ցանկանար ազատել իրեն անծանոթ ինչ-որ վտանգից, հետո գնաց մոտը։ Մահճակալի եզրին Սիմոնը դեմքը միշտ պահած՝ հանդարտ օրորվում էր։ Փոլին մի պահ թվաց, թե նա հարբած է և այդ անընդհատ շարժումը ընդհատելու միտումով մեկենց ձեռքը։ Հետո փորձեց քաշել ձեռքերը, դիմադրում էր, և ի վերջո ծնկի իջավ նրա առջև ու բռնեց դաստակները։

— Սիմոն, նայիր ինձ... Սիմոն, վերջացրու այս կատակերգությունը։

Բացեց ձեռքերը և նայեց նրան։ Դեմքը կատարելապես անշարժ էր, ողորկ, ինչպես որոշ արձանների մոտ, նույն կուրացած հայացքով։ Ինազդաբար ձեռքը դրեց նրա աչքերին։

— Ի՞նչ է պատահել, Սիմոն... Ասա ի՞նչ է պատահել...

Սիմոնն ավելի կռացավ, հառաչելով դրսից հնչեց նրա ուսին, չափազանց հոգնած մարդու պես։

— Պատահել է այն, որ ինձ չես սիրում,— հանգիստ պատասխանեց նա,— և ինչ էլ անեմ անօգուտ է։ Սկզբից ևեթ գիտեի, որ վանդելու ես ինձ։ Եվ մեջքս կորացած սպասում էի, երբեմն նաև հուսալով... Ամենավատը դա է, երբեմն հուսալով, հատկապես գիշերները,— ավելի ցածրացրեց ձայնը, և Փոլն զգաց, որ կարմրում է,— ժամանակը հասավ, արդեն ութ օր է։ Շատ լավ էի զգում, իսկ աշխարհի բոլոր վիսկիները չեն կարող ինձ վստահություն ներշնչել։ Կամաց-կամաց զգում էի, որ սկսում եմ ինձ ատել։ Եվ ահա... Փոլ... Փոլ...

Փոլը գրկել էր նրան և տչքերն արցունքով լի սեղմում էր կրծքին։ Լսում էր իր սեփական ձայնը, որ վստահություն ներշնչող բառեր էր մրմնջում.

— Սիմոն, դու խենթ ես... Երեխա ես... Սիրելիս, իմ խեղճ սեր...

Համբուրում էր ճակատը, այտերը, և մի պահ դաժանաբար մտածեց իր մասին, որ ինքը վերջիվերջո մայրական շրջան է ապրում։ Միաժամանակ իր ներսում ինչ-որ բան



ծանոթ էր լինում, բավականություն էր տալիս Սիմոնի մեջ ընդհանուր, հին ցավ օրորելով։

— Հոգնած ես,— ասաց նա,— խաղացիր ուժասպառ մարդու կատակերգությունը և դարձար քո սեփական զոհը։ Հույսս քեզ վրա եմ դնում, Սիմոն, ամբողջ հույսս քեզ վրա է։ Վերջերս ցրված էի աշխատանքիս պատճառով, ահա սա է բոլորը։

— Սա՞ է բոլորը։ Ձե՞ս ուզում, որ հեռանամ։

— Ոչ այսօր,— ասաց ժպտալով,— բայց ուզում եմ, որ աշխատես։

— Կանեմ ինչ ցանկանաս,— ասաց Սիմոնը,— պատկիր կողքիս, Փոլ, այնքան վախեցա։ Դու պետք ես ինձ։ Համբուրիր։ Այլևս մի շարժվիր։ Տանել չեմ կարող բարդ կտրվածքով հագուստները... Փոլ...

Հետո Փոլը չշարժվեց։ Սիմոնը հանդարտ շնչում էր նրա կողքին, սպառված, ձեռքը նրա ծոծրակին դրած։ Փոլը բռնկվեց պատկանելու այնպիսի ցավագին, այնպիսի սրտաճմլիկ զգացմունքով, որ կարծեց թե սիրում է նրան։

Հաջորդ օրը Սիմոնը գնաց աշխատանքի, վերականգնեց հարաբերությունները տիրոջ հետ, մի քանի դատական գործ ուսումնասիրեց, վեց անգամ զանգահարեց Փոլին, հանգրստացած մարդից փոխարինաբար դրամ վերցրեց և ժամը ութն անց կեսին աշխատանքից հոգնած վերադարձավ Փոլի մոտ։ Լրիվ վերջում, ինչ-որ բարում երկու ժամ 421 էր խաղացել հաղթական վերադարձը կատարյալ դարձնելու համար։ Ինքն իրեն մտածում էր, որ վերջիվերջո շատ ձանձրալի արհեստ ունի և շատ էր ցավում, որ ժամանակը պարապ է անցկացնում։

## Գլուխ 15

Սովորաբար Ռոժեն և Փոլը փետրվար ամսին մեկ շաբաթով միասին գնում էին սարերը իրենց ժամանակն անցկացնելու։ Ընդհանուր համաձայնության էին եկել, որ ինչպիսին էլ լինեին նրանց զգացմունքները (իսկ հիմա խոսքը վերաբերում էր միայն Ռոժեին), ամեն ինչ պետք է այնպես դասավորվեր, որ ձմռան այդ մի քանի օրերը իրար հետ հան-

գրստանային։ Մի առավոտ Ռոժեն հեռաձայնեց գրասենյակ Փոլին, հայտնելով, որ տասը օր հետո մեկնելու է և հարցնում էր կարիք կա՞ր նրա համար ևս տոմս գնելու։ Տիրեց լռություն։ Փոլը մի պահ վախեցած մտածեց, թե ինչ է նշանակում այս հրավերը. բնազդային ցանկությո՞ւն, խղճի խա՞յթ, թե իրեն Սիմոնից բաժանելու ցանկություն։ Նա երկար կանգ առավ առաջինի վրա։ Բայց ինքը շատ լավ գիտեր, որ ինչ էլ ասելու լիներ Ռոժեն, երբեք չէր կարող վստահ լինել, թե այդ մի քանի օրվա ընթացքում շատ չէր տանջվելու։ Միաժամանակ այդ սարերի հետ կապված հուշերը. կենսունակությամբ լի Ռոժեն, գնդակի պես գլորվելը արահետներից և սարսափահար քարշ տալը իրեն հետից... այս ամենը ճմլում էին սիրտը։

— Դե՞։

— Կարծում եմ հնարավոր չէ, Ռոժե։ Մենք ձևացնելու ենք թե... մի խոսքով, իբր թե ուրիշ բանի մասին չենք մտածում։

— Գնում եմ միայն նրա համար, որ ոչ մի բանի մասին չմտածեմ։ Եվ հավատացնում եմ, որ ընդունակ եմ դրան։

— Կգայի հետդ, եթե դու... (ուզում էր ասել «եթե դու ընդունակ ես իմ մասին, մեր մասին մտածելուց բայց լռեց) ... եթե դու իրոք կարիք ես զգում, որ ես գամ։ Բայց մենակ ավելի լավ կզդաս քեզ, կամ... մեկ ուրիշի հետ։

— Լավ, եթե ճիշտ եմ հասկանում, չե՞ս ուզում Փարիզից հիմա հեռանալ։

«Սիմոնին է ակնարկում,— մտածեց Փոլը,— ինչո՞ւ ոչ մեկը չի կարողանում հավանականությունը իրականությունից տարբերել»։ Միաժամանակ ինքն իրեն մտածեց, որ մեկ ամսից ավելի էր արդեն, որ Սիմոնի հավանականությունը դարձել է իր առօրյա կլանքի մասնիկը։ Եվ գուցե նրան էր պարտական այս մերժման համար, որ իր հոգում ինչ-որ բան հակադրել էր Ռոժեի ձայնին։

— Եթե ուզում ես...— ասաց Փոլը։

— Դու այնքան էլ լավ չես զգում քեզ, Փո՛լ, այս րոպեին։ Հոգնած ես երևում։ Եթե ինձ հետ չես գալիս, ուրիշ տեղ գնա, դրա կարիքը դու զգում ես։

Նրա ձայնը քնքուշ էր ու տխուր, Փոլի աչքերը արցունքով լցվեցին։ Այո, զգում էր նրա կարիքը, կարիք էր զգում, որ ամբողջությամբ սատար կանգնի իրեն, փոխանակ տասն օրվա այս հանգիստը առաջարկելու։ Նա պետք է իմանար, որ ամեն ինչ իր սահմանն ունի, նույնիսկ տղամարդկային եսասիրությունը։

— Անպայման կմեկնեմ,— ասաց Փոլը,— մի գագաթից մյուսը բացիկներ կուղարկենք իրար։

Ռոժեն կախեց լսափողը։ Եվ, վերջ ի վերջո, գուցե նա պարզապես օգնություն էր խնդրել իրենից, իսկ Փոլը մերժել էր։ Լավ սեր էր։ Բայց միաժամանակ Փոլը ներքին ձայնով զգում էր, որ իրավացի է, որ իրավունք ունի պահանջկոտ լինելու և համակերպվելու, համարյա՝ հարկադրվելու։ Եվ ի վերջո, անձնուրաց կիրքով սիրված կին էր։ Մինչև այժմ նա Սիմոնի հետ միայն թաղամասի փոքրիկ ռեստորաններում էր եղել։ Բայց այդ երեկո վերադառնալով տուն, դուռն շեմին տեսավ նրան մուգ գույնի կոստյումը հագին, մազերը լավ հարդարած, հանդիսավոր տեսքով։ Մեկ անգամ ևս նկատեց նրա գեղեցկությունը, աչքերի ձգվածությունը, բերանի կատարյալ գծագրումը, առանց հետին մտքի ներքուստ ծիծաղեց այս փոքրիկ տղայի վրա, որ ամբողջ օրն անց էր կացնում իր հայրենասերների մեջ թաղված, սպասելով իրեն, ասպետի և սրտերի դահճի իր արտաքինով։

— Ինչպիսի նրբաճաշակություն,— ասաց Փոլը,— ի՞նչ է կատարվում։

— Դուրս ենք գալու,— ասաց Սիմոնը,— կգնանք հարուստ մի տեղ ճաշելու և պարելու։ Եթե ձվածեղ էլ ուտենք այստեղ, դարձյալ ուրախ կլինեի, բայց ուզում եմ լավ տեղ տանել քեզ։

Օգնում էր Փոլին վերարկուն հանելու։ Վերջինս նկատեց, որ Սիմոնը օծանելիք էլ էր օգտագործել։ Ննջասենյակի անկողնու վրա իր երեկոյան, ամենալայն բացվածքով հագուստն էր փռված, որ ընդամենը երկու անգամ էր հագել։

— Նախընտրում եմ դա,— ասաց Սիմոնը,— կոկտեյլ ուզո՞ւմ ես։

Փոլի սիրած կոկտեյլն էր պատրաստել։ Հավատարմությունը կորցրած նոտեց մահճակալին, իջնում էր լեռներից աշխարհիկ երեկոյի մեջ ընկնելու համար։

ժպտաց։

— Գո՞հ ես։ Հոգնած չե՞ս։ Թե ուզում ես, անմիջապես կհանեմ այս կոստյումը և կմնանք տանը։

Սիմոնը ծունկը դրեց մահճակալին ձեռացնելով, թե հանում է բաճկոնը։ Փոլը հենվեց նրան, ձեռքը սահեցրեց նրա վերնաշապկի տակ, ափի մեջ զգաց մարմնի ջերմությունը։ Նա կենսալի էր, այնքան կենսալի։

— Հրաշալի գաղափար է,— ասաց Փոլը,— այս հագուստն ես ուզում։ Սրա մեջ մի փոքր խենթուկ տեսք եմ ստանում։

— Ես քեզ մերկ եմ սիրում,— ասաց նա,— իսկ սա ունեցածներիցդ ամենաբացն է։ Երկար ժամանակ ընտրում էի։

Փոլը վերցրեց բաժակը, խմեց։ Հնարավոր էր, որ մենակ վերադառնար տուն, գիրքը ձեռքին մի փոքր տխրելով, պառկեր, ինչպես հաճախ պատահում էր օրանից առաջ, բայց Սիմոնն այստեղ էր, ծիծաղում էր, երջանիկ էր, Փոլը ծիծաղում էր նրա հետ, և Սիմոնն ամեն գնով ուզում էր, որ իրեն շարլատան սովորեցնի, ուրախությամբ բան տարով մեծացնելով Փոլին, իսկ սա պարելու ժամանակ սայթաքում էր դորգին, շնչասպառ ընկնում էր Սիմոնի գիրկը, և նա սեղմում էր նրան կրծքին, Փոլն ավելի ու ավելի էր ծիծաղում, ամբողջապես մոռանալով Ռոժեին, ձյունը և իր անձկությունները։ Երիտասարդ էր, գեղեցիկ, սենյակից դուրս էր հրում Սիմոնին, շպարվում ճակատագրական կնոջ դերեր կատարող կինոաստղի պես, հաղնում անհամեստ հագուստը, իսկ Սիմոնն անհամբերության մեջ բոունցքի հարվածներ էր տեղում դռանը։ Երբ Փոլը դուրս եկավ, Սիմոնը շլացած նայեց նրան, համբույրներով ողողեց ուսերը։ Խմեցրեց երկրորդ բաժակը, նրան, որ խմել չգիտեր։ Երջանիկ էր Փոլը։ Անսահման երջանիկ։

Կաբարեում իրենց հարևան սեղանին նստած երկու կանանց ճանաչեց Փոլը, որոնք Լրենից մի փոքր ավելի տարեց էին, երբեմն աշխատում էին Փոլի հետ և զարմացած ժպտացին իրեն։ Երբ Սիմոնը պարի հրավիրեց Փոլին, լսեց այս փոքրիկ նախազգուշությունը. «Քանի՞ տարեկան կլինի հիմա»։

Հենվեց Սիմոնին։ Հրապուրանքից ոչինչ չէր մնացել։ Իր տարիքի կնոջ համար հագուստը ծիծաղելի էր թվում իր աչքերին, Սիմոնը մի փոքր շատ էր երևում, իսկ իր կյանքը շատ անհեթեթ էր։ Խնդրեց Սիմոնին ուղեկցել տուն։ Զատարկեց, և Փոլն զգաց, որ նա նույնպես լսել էր։

Շատ արագ հանվեց։ Սիմոնը խոսում էր նվագախմբի մասին։ Փոլը շատ էր ուզում, որ նա գնա մոտից։ Մութ սենյակում պառկեց, երբ Սիմոնը հանվում էր։ Իզուր էր այդ երկու բաժակ կոկտեյլը և շամպայնը խմել։ Հաջորդ օրը ձգված դիմագծեր կունենար։ Տխրությունից կարծես ապշել էր։ Սիմոնը մոտավ նինջատենյակ, նստեց մահճակալի եզրին, ձեռքը դրեց ճակատին։

— Ոչ այս գիշեր, Սիմոն,— ասաց նա,— հոգնած եմ։

Ոչինչ չպատասխանեց, մնաց անշարժ։ Լողատենյակից թափանցող լույսի տակ Փոլը տեսնում էր նրա ուրվագիծը, կախել էր գլուխը և կարծես մտքերի մեջ էր ընկել։

— Փո՛լ,— ասաց նա վերջապես,— պետք է խոսեմ քեզ հետ։

— Ուշ է։ Ուզում եմ քնել։ Վաղը։

— Ո՛չ,— ասաց նա,— հենց հիմա եմ ուզում խոսել։ Եվ դու պետք է լսես ինձ։

Փոլը զարմացած բաց արեց աչքերը։ Առաջին անգամն էր այդպիսի հրամայական տոնով խոսում իր հետ։

— Ես էլ քեզ նման լսեցի, թե ինչ ասացին այդ պառավ կախարդները մեր թիկունքում։ Ես չեմ կարող տանել, երբ դու ենթարկվում ես դրան։ Դու արժանի չես այդ բանին, վախկոտություն է և ինձ համար վիրավորական։

— Բայց, Սիմոն, դու զղջերդություն ես ապրում վասն ոչնչի...

— Ողբերգություն չեմ ապրում, ընդհակառակը, ուզում եմ, որ դու խուսափես դրանից։ Բնականաբար, ինձնից կթաքցնեիր այդ բանը։ Բայց կարիք չկա թաքցնելու։ Ես փոքր տղա չեմ, Փո՛լ։ Այն տարիքում եմ, որ կարող եմ հասկանալ քեզ և միգուցե օգնել։ Քեզ հետ ես շատ երջանիկ եմ, դու գիտես, բայց իմ փառասիրությունը այդքանով չի սահմանափակվում, ուզում եմ, որ դու էլ ինձ հետ երջանիկ լինես։ Ներկայումս դու Ռոժեից ես միայն այդ բանն ակնկալում։ Բայց պետք է որպես դրական երևույթի մոտենաս մեր

պատմությանը, պետք է ինձ օգնես այն կառուցելու, սակայն ոչ երջանիկ պատահականություն համարելով։ Ահա՛, խոսում էր հանդարտ, բայց շեշտելով։ Փոլը զարմացած և մի տեսակ հուսադրված լսում էր նրան։ Մինչև հիմա կարծում էր, թե նա անպատասխանատու անձնավորություն է, բայց այդպիսին չէր և հավատում էր, որ Փոլը կարող է ամեն ինչ վերսկսել։ Գուցե այս ամենից հետո ինքը կարողանա՞ր...

— Ես թթենաբարո մարդ չեմ, գիտես։ Քսանհինգ տարեկան եմ, քեզնից առաջ երբեք չեմ ապրել և հավանաբար հետո էլ չեմ ապրի։ Դու այն կինն ես և հատկապես այն արարածը, որ հարկավոր է ինձ։ Ես գիտեմ։ Եթե դու ցանկանաս, վաղն ևեթ կամուսնանամ քեզ հետ։

— Երեսունինը տարեկան եմ,— ասաց Փոլը։

— Կյանքը կանացի օրագիր չէ, ոչ էլ հնացած փորձերի շարունակություն։ Դու ինձնից տասնչորս տարով մեծ ես, իսկ ես սիրում եմ քեզ ու կսիրեմ շատ երկար։ Ահա բոլորը։ Եվ ահա դարձյալ մի բան, որ չեմ կարող հանդուրժել. օրինակ, դու իշնում ես պառավ խրտվիլակների աստիճանին և հասարակության կարծիքից ես կառչում։ Միակ դժվարին կացությունը քեզ համար, մեզ համար, Ռոժեն է։ Ուրիշ խնդիրներ չկան։

— Սիմոն,— ասաց նա,— ներողություն եմ խնդրում, որ... մի խոսքով, կարծելով...

— Դու չպատկերացրիր, որ ես մտածում էի, ահա և բոլորը։ Հիմա մի քիչ այն կողմ գնա։

Սահեց Փոլի մոտ, գրկեց, համբուրեց և տիրացավ նրան, Փոլը չբողոքեց, որ հոգնած է, և Սիմոնը նրանից ըմբոշխնեց մինչ այդ իրեն անծանոթ ամենախորագույց հաճույքը։ Հետո շոյեց քրտինքից խոնավացած նրա ճակատը, հակառակ իր սովորության նրան պահեց իր ուսի փոսիկի վրա ու խնամքով ծածկեց Փոլին։

— Քնիր,— ասաց Սիմոնը,— ամեն ինչի մասին կհոգամ։

Մթության մեջ Փոլը քնքշորեն ժպտաց, շուրթերը հպեց նրա ուսին, մի գգվանք, որ Սիմոնն ընդունեց օլիմպիական տիրակալի անդորրությամբ։ Նա երկար ժամանակ արթուն մնաց. հպարտ և միաժամանակ երկչոտված իր իսկ համառությունից։



## Գլուխ 16

Մոտենում էին զատկի օրերը, և Սիմոնն իր ժամանակն անց էր կացնում քարտեզների վրա, որոնք խցկված էին տիրոջ գործերի մեջ կամ փռված էին Փոլի գոգին։ Այսպիսով տուրիստական երկու ծովային ուղերթ էր կազմել Իտալիայում, երեքը՝ Իսպանիայում և այժմ ուղեղը պտտվում էր Հունաստանի շուրջը։ Փոլն անխոս լսում էր նրան. ամենաշատը տասը օր կարող է տրամադրել և շատ հոգնած էր զգում իրեն, նույնիսկ դնացք նստելու համար։ Նա կնախընտրեր գյուղում մի տուն վարձել, միօրինակ օրեր ունենալ, մի խոսքով՝ մանկություն։ Բայց իր մեջ ուժ չէր գտնում Սիմոնին հուսախաբ անելու։ Վերջինս իրեն պատկերացնում էր արդեն խսկական ճամփորդ, վագոնից դուրս թռչելով նրան օգնելու համար, ուղեկցելով տասը օր առաջ վարձված ավտոմոբիլի մոտ, որ իրենց տանելու էր քաղաքի լավագույն հյուրանոցը, որտեղ հեռագրով ծաղիկներ էին պատվիրելու, մոռանալով, թե ինչպես են նամակներ առաքում կամ տոմսեր ձեռք բերում։ Երազում էր, շարունակում էր երազել, և բոլոր երազները հանգում էին Փոլին, խաղաղ ծովի գիրկը թափվող վարարած գետի պես շտապում նրա մոտ։ Երբեք այսքան ազատ չէր զգացել իրեն, որքան այս մի քանի ամսվա ընթացքում. ամեն օր նույն գրասենյակում, ամեն երեկո նույն անձնավորության մոտ, նույն հարկաբաժնում, կառչած նույն ցանկությանը, նույն մտատանջությանը, նույն տվայտանքին։ Որովհետև Փոլը երբեմն շարունակում էր շրջել հայացքը, քնքշորեն ժպտալ իր կրքոտ նախադասությունների գիմաց։ Փոլը շարունակում էր լռել, երբ խոսում էին Ռոժեի մասին։ Սիմոնը հաճախ մտածում էր, որ անհեթեթ, չլատող և առանց ելքի պայքար է մղում, քանի որ ժամանակը, նա լավ էր զգում այդ, ժամանակը, որ անցնում էր, նրան ոչ մի օգուտ չէր բերում։ Նա չէր կարող չնչել Ռոժեի հիշատակը, նա կարող էր Փոլի մոտ ինչ-որ բան մեռցնել, որ պատկանում էր Ռոժեին, ինչ-որ անխորտակելի ցավատանջ արմատ, որ անհողդողդ պահում էր իր մեջ և երբեմն բանն հասնում էր այնտեղ, որ ինքն իրեն հարց էր տալիս, թե արդյոք այդ անհողդողդությունը, այդ սեփականություն դարձած տվայ-

տանը չէ՞ր պատճառը, որ սիրահարվել էր նրան և զուցե նույնիսկ պահպանում էր նրա սերը։ Բայց ամենից հաճախ ինքն իրեն ասում էր. «Փոլն սպասում է ինձ, մեկ ժամից կգրկեմ նրան», և թվում էր, թե Ռոժեն երբեք զոյություն չի ունեցել, որ Փոլը սիրում է իրեն՝ Սիմոնին, և ամեն ինչ պարզ էր ու երջանկությամբ ողողված։ Եվ նման պահերին էր Փոլը նախապատվություն տալիս իրեն, երբ իրենց համաձայնությունը համարվում էր հայտնություն, մի փաստ, որ մնում էր Փոլին միայն համաձայնվել։ Փոլը բավական շատ սեփական խոհեմություն ուներ։ Սակայն, երբ մենակ էր մնում ու մտածում էր, որ Ռոժեն ապրում է առանց իրեն, այդ բանը նրա աչքին պատկերանում էր որպես մեծագույն սխալմունք, սարսափած հարց էր տալիս իրեն, թե այսքան երկար ժամանակ ինչպես են տոկացել։ Եվ «նրանը»-ը, «մենք»-ը միշտ Ռոժեն ու Փոլն էին, իսկ Սիմոնը «ինքն» էր։ Միայն թե Ռոժեն ոչինչ չգիտեր։ Երբ կհոգնի կյանքից, զանգատվելու կգա մոտը, կփորձի ետ ստանալ իրեն։ Եվ զուցե հաջողության հասնի։ Սիմոնը վերջնականապես վիրավորված կզգա, Փոլը դարձյալ մենակ կմնա սպասելով անհետևողական հեռախոսազանգերին և որոշակի մանր վիրավորանքների։ Ու ըմբոստանում էր իր սեփական ճակատագրապաշտության դեմ, այն տգավորությամբ, թե այս ամենը անհոգորելի է։ Իր կյանքն էր սողոսկել անհոգորելի մի մարդ՝ Ռոժեն։

Բայց այս հանգամանքը չէր խանգարում նրան, որ ապրի Սիմոնի հետ, գիշերները հառաչի նրա թևերի մեջ և երբեմն սեզմի կրծքին այնպիսի հուզումներով, որ միայն երեխաներն ու շատ ճարպիկ սիրեկանները կարող են կորզել, այնպիսի տիրական, այնպիսի սարսափած հուզում, որ առաջանում է ունեցվածքի անհուսալիությունից և ինքն անգամ չէր պատկերացնում դրա ուժգնությունը։ Այդպիսի պահերին Փոլն իրեն մոտ էր զգում ծերությանը, սիրո այդ հրաշալի միակ կրքին, որ ծերությունն էր պարփակում իր մեջ, իսկ հետո մեղադրում էր իրեն այդպես մտածելու համար, մեղադրում էր Ռոժեին, որ չէր սոխպում իրեն ձերբազատվել այդ մրցքից։ Ռոժեին, որ այստեղ չէր։ Երբ Ռոժեն տիրանում էր իրեն, դառնում էր իր տերը, ինքը դառնում էր նրա սեփականությունը, տարիքով իրենից շատ քիչ էր մեծ, բարոյական որոշ



կանոնների, կամ էսթետիկայի տեսանկյունից ամեն ինչ պատշաճ էր, մի բան, որ մինչև այժմ չէր մտածել։ Բայց Սիմոնը չէր զգում, որ Փոլի տերն է։ Նա ձեռք էր բերել անգիտակից խեղկատակությամբ, որը կարող էր անկախ իրենից իր կորստյան պատճառը հանդիսանալ, կախվածության մի ողջ կացություն, որ քնեցնում էր իր բարեկամուհուուսին, նրանից պաշտպանություն հայցելով կարծես, արևի առաջին ճառագայթների հետ փոքրիկ նախաճաշը պատրաստելու համար արթնացնում էր նրան և ի վերջո հնարավորություն էր տալիս ամեն ինչի համար խորհուրդ հարցնել նրանից, մի կացություն, որ հուզում էր Փոլին, բայց նեղություն պատճառում նաև, անհարմար վիճակի մեջ գցում, կարծես անբնական երևույթի առջև կանգնած լիներ։ Փոլը հարգում էր նրան, հիմա Սիմոնն աշխատում էր, մի անգամ հետը տարել էր Վերսալ՝ դատավարության մասնակցելու, որտեղ Սիմոնը երիտասարդ փաստաբանի հուլակավոր դերում էր հանդես եկել. ձեռք մեկնել լրագրողներին, հաճոյակատար ժպտացել նրանց և շուտ-շուտ մոտեցել Փոլին, ինչպես իրեն հուզող առանցքի շուրջը, ընդհատելով երբեմնի ատենակալի ցուցադրությունները, որ կիրառում էր անծանոթների ներկայությամբ, որպեսզի անկատելիորեն շրջվի նրա կողմն ու ստուգի իրեն նայում է թե ոչ։ Սիմոնը անտարբերության կատակերգություն չէր խաղում իր հետ։ Փոլը նույնպես ուշադիր նայում էր նրան՝ հայացքի մեջ ամփոփելով հնարավոր ողջ հիացմունքն ու հետաքրքրությունը, մի հայացք, որ փոխվում էր մի տեսակ սիրո և հպարտության, հենց որ Սիմոնը շրջում էր թիկունքը։ Կանայք շատ էին նայում Սիմոնին։ Փոլը լավ էր զգում, կար միակը, որ ապրում էր իր համար։ Վերջապես միայն իր համար, տարիքային տարբերության հարցն այլևս վերանում էր, նա ինքն իրեն հարց չէր տալիս. «Իսկ տասը տարի անց դարձյալ կսիրի՞ ինձ»։ Տասը տարի անց նա մենակ կլինի կամ Ռոժեի հետ։ Ինչ-որ բան նրա հոգում համառորեն կրկնում էր այդ միտքը։ Իսկ Սիմոնի հանդեպ տածած քնքշությունը, նման երկդիմությամբ ժամանակ, որի դեմ չէր կարող պայքարել, կրկնապատկվում էր. «Իմ զոհը, իմ սիրելի զոհը, իմ փոքրիկ Սիմոնը»։ Առաջին անգամ լինելով Փոլը ճաշակում էր սիրե-

լու այդ սարսափելի հաճույքը, որին անդիմադրելիորեն պետք է տանջահար անել։

Այդ «անդիմադրելիորենը» և նրա հետևանքները այն հարցերն էին, որ մի օր տանջվող մարդու իրավունքով առաջադրելու էր Սիմոնը, սարսափեցնում էին նրան։ «Ինչո՞ւ, եթե Ռոժեին նախընտրում ինձնից։ Ինչո՞վ է այդ ցնդած մուրը այդպիսի ուժեղ սիրո տեր դառնում, որն ամեն օր նվիրում եմ ձեզ»։ Եվ Փոլն արդեն խենթանում էր այն պարզ մտքից, որ Ռոժեի մասին բացատրություն էր տալու։ Նա չէր ասի. «ինքը», կասեր «մենք», որովհետև չէր կարող բաժանել իրենց երկու կյանքերը։ Չգիտեր ինչու է այդպես։ Գուցե նրա համար, որ իրենց սիրո համար վեց տարի շարունակ թափված ջանքերը, այդ անվերջանալի, այդ ցավատանջ ջանքերը նրա համար վերջիվերջո երջանկությունից ավելի թանկ էին դարձել։ Գուցե նրա համար, որ գոռոզորեն նա չէր կարող հանդուրժել դրանց անօգտակարությունը, և նրա մեջ բուն դրած այդ նույն գոռոզությունը, այդ հարվածներն ընդունելու գնով, համարյա սնունդ էր դարձել և վերջացել այն բանով, որ ընտրելով ու զոհվելով Ռոժեին՝ իր տիրոջը, տանջանքի էր մատնել իրեն։ Ի վերջո, Ռոժեին միշտ կորցրել էր։ Եվ այս կասկածելի պայքարը դարձել էր նրա գոյության իրավունքը։

Այնինչ նա ստեղծված չէր պայքարի համար, երբեմն մտածում էր հակառակ ուղղությամբ՝ շոյելով Սիմոնի նուրբ, մետաքսանման, ցած թափվող մազերը։ Փոլը կարող էր թափանցել նրա կյանքի մեջ, ինչպես ձեռքը՝ մազերի մեջ, այս ամենի մասին շշնջում էր նրա ականջին։ Նրանք ժամեր շարունակ, քնելուց առաջ մթության մեջ մնում էին այսպես։ Իրար ձեռք էին բռնում, շշնջում էին, երբեմն Փոլը այն ծիծաղելի տպավորությունն էր ստանում, թե զայրոցական տանջորսամյա ընկերոջ կողքին է, այն ցնորալի ենչարաններից մեկում, ուր աստծո, կամ տղաների մասին ցածրաձայն խոսում են աղջիկները։ Նա շշնջում էր, և Սիմոնը հիացած այս խորհրդավորությունից իր հերթին խոսում էր ցածրաձայն։

— Ինչպե՞ս կարող էիր ապրել։

— Կմնայի Մարկի՝ իմ ամուսնու հետ։ Նա ներքուստ բարի մարդ էր, խիստ աշխարհիկ։ Ինչպես նաև շատ փոշ... Ծանկացա փորձել...

Փորձում էր բացատրել Սիմոնին։ Ինչպես էր կյանքը միանգամից կյանքի ձև ընդունել, իր պարզ որոշման պատճառով. այն պահին, երբ ինքը խորասուզվել էր բարդություններով լի այնպիսի դժվարին ու ստորացուցիչ մի աշխարհ՝ կանանց վերաբերող մասնագիտություններին մեջ։ Կանխամտածված հնարքներ, նյութական ծանր կացություն, ժպիտներ, լռություն։ Սիմոնը լսում էր նրան, փորձելով իր հիշողության մեջ ինչ-որ բան քանդել, որ իր սիրուն էր վերաբերում։

— Իսկ հետո՞։

— Հետո, կարծում եմ, որ այդպես էլ կապրեի, տեղի կունենար այն, որ առանց զգալու կդավաճանեի Մարկին, ինչ իմանամ... Միայն թե երեխա կունենայի։ Եվ միայն դրա համար...

Լռում էր։ Սիմոնը պրկում էր նրան, ուզում էր Փոլից երեխա ունենալ, ամեն ինչ ուզում էր։ Փոլը ծիծաղեց, շուրթերով շոյեց աչքերն ու շարունակեց.

— Քսան տարեկան հասակում նույնը չէր։ Շատ լավ եմ հիշում. որոշել էի երջանիկ ապրել։

Այո, շատ լավ էր հիշում։ Քայլում էր փողոցներով, ծովեղերքով, իր ցանկություններն իրագործելու շտապողականությամբ, շարունակ քայլում էր, կանգ չէր առնում, որոնում էր մի գեմք, մի միտք, մի զոհ։ Երջանկության իրավունքը սավառնում էր գլխի վրայով, երբ սերնդի գլխի վրայով սավառնելուց հետո արգելքներ չկային և երբեք էլ չեն լինի։ Հիմա նա այլևս ձեռք բերելու մասին չէր մտածում, մտածում էր եղածը միայն պահպանել։ Պահպանել մի արհեստ և մի տղամարդ, մշտապես, երկար ժամանակով և որոնց համար երեսունինը տարեկան հասակում դեռ վստահ չէր։ Սիմոնը ննջում էր նրա կրծքին, իսկ ինքը շշնջում էր. «Սիրելիս, քնո՞ւմ ես...», և այս երկու բառերը կիսով չափ արթնացնում էին նրան, պատասխանում էր՝ ոչ, խավարի մեջ սեղմվում նրան, սուզվում նրա բույրի մեջ, իրար խառնված ջերմության մեջ, երջանկության գագաթին հասած։

## Գլուխ 17

Նրա երեսուներորդ ծիածանն էր, անդրադարձավ դրան, երբ ձեռքի վերջին մնացորդը հղմեց լեփ-լեցուն մոխրամանի մեջ։ Զզվանքի ցնցում ունեցավ, մեկ անգամ ևս վառեց սնարի լամպը։ Գիշերվա ժամը երեքն էր, չէր կարողանում քնել։ Հանկարծ բաց արեց լուսամուտը, և սառը օդը այնպիսի թափով դիպավ գեմքին, վզին, որ իսկույն փակեց այն, հենվեց ապակուն, կարծես ուզում էր ցուրտը «դիտել»։ Վերջապես հայացքը հեռացրեց ամայի փողոցից, նայեց հայելու մեջ, նույն արագությամբ շրջեց աչքերը։ Ինքն իրեն դուր չէր գալիս։ Զարդասեղանից վերցրեց «Գոլուազի» տուփը, մեքենաբար մի հատ դրեց բերանը և իսկույն գցեց։ Այդ մեքենայական շարժումներն այլևս դուր չէին գալիս, որ ըստ իրեն, կյանքի համն ու հոտն էին կազմում, նրան այլևս դուր չէին գալիս միայնակ մարդու այս շարժումները, այլևս դուր չէր գալիս ծիածանի համը։ Հարկավոր էր ինքն իրեն հեռանել, երևի հիվանդ էր։ Ինչ խոսք, նա տենչում էր Փոլին, բայց այդքանը բավական չէր։ Այս րոպեին երևի նա պառկել է այդ երես առած փոքրիկ տղայի գրկում, ամեն ինչ մոռացել է։ Իսկ իրեն՝ Ռոժեին, մնում էր դուրս գալ, գտնել մի պոռնիկի և խմել։ Ի միջի այլոց, ինչպես Փոլն էր կանխատեսում։ Ռոժեն զգում էր, Փոլը երբեք չէր հարգել իրեն։ Միշտ իրեն համարել է բիրտ, կոպիտ մարդ։ Ցնայած այն բանին, որ իր մեջ եղած լավագույնը միշտ նվիրել է նրան, ամենահաստատուն բանը։ Կանայք այդպիսին են. նրանց թվում է, թե ամեն ինչի կարիքն զգում են, ամեն ինչ նվիրում են, թողնում են ձեզ, որ սահեր անսահման վստահության գիրկը, հետո, մի գեղեցիկ օր, ամենաչնչին բանի պատճառով թողնում հեռանում են։ Որովհետև Փոլի համար ավելի շնչին բան լինել չէր կարող, քան իր կապը Սիմոնի հետ։ Բայց այս րոպեին այդ տղան գրկել էր նրան, հակվում էր նրա ետ ընկած գլխին, այնքան քաղցր մարմնի վրա, այնքան նվազած հաճույքի մեջ, այնքան... Ընդոստ շարժումով հանկարծ շրջվեց սենյակում, ի վերջո վառեց գլանակը, կատաղի ագահությամբ ներս քաշելով ծուխը, հետո բուխարիկի մեջ դատարկեց մոխրամանը։ Կարող էր կրակ վառել, Փոլն ամեն անգամ, երբ այստեղ էր լինում, վառում էր այն, ծնկի էր գալիս բուխարիկի առջև հետևելով բոցերի ծնվելուն, երբեմն իր հարբիկ և այնքան հանդարտ շարժումներից մեկով թեժացնելով կրակը, հետո վեր էր կենում, մի փոքր ետ քաշվում, և սենյակը դառնում էր վարդագույն, ստվերաշատ, շարժուն, Ռոժեն սիրաբանելու ցանկություն էր ունենում, և այդ մասին հայտնում էր նրան։ Բայց դա վաղուց էր։ Որքա՞ն ժամանակ Փոլը ոտք չէր դրել այստեղ։ Հավանաբար երկո՞ւ, կամ երեք տարի՞։ Ռոժեն արդեն վարժվել էր Փոլին նրան տանը հանդիպելու, ավելի հեշտ էր, սպասում էր իրեն։

Մոխրամանը դեռ պահել էր ձեռքում, բաց թողեց. այն դլորվեց գետնին, առանց կոտրվելու։ Շատ կուզենար, որ միշտվեր այդ առարկան, դուրս գար իր վիճակից, պայթյուններ լսվեին, բեկորներ երևային, բայց մոխրամանը չէր կոտրվում. դրանք պայթում են միայն վեպերում և կինոնկարներում, հարկավոր էր՝ այն թանկարժեք փոքրիկ ապակե մոխրամաններից ունենալ, որոնցից շատ կա Փոլի բնակարանում, ոչ թե այս ամուր, էժանագին մոխրամանից։ Երևի ինքը հարյուրից ավելի տարբեր իրեր էր կոտրել Փոլի տանը, միշտ ծիծաղում էր. վերջին անգամ բյուրեղապակե հրաշալի մի գավաթ էր, վիսկին նրա մեջ սևոսկափայլ անսովոր դույն էր ստանում։ Ի միջի այլոց այդ բնակարանում ամեն ինչ իր տեղն ուներ, որի տերն ու տիրակալը ինքն էր եղել։ Ամեն ինչ միալար էր, հուշիկ ու հանգիստ։ Համենայն դեպս, ամեն անգամ, երբ գիշերվա մեջ հեռանում էր, կարծում էր, թե փախչում է։ Իսկ հիմա իր տան մեջ մենակ էր, անօգուտ բարկությամբ համակված, կանգնած անկոտրում մոխրամանի առջև։ Պառկեց, հանգցրեց լույսը, մի պահ, քնելուց առաջ, ձեռքը սրտին դրած ինքն իրեն խոստովանեց, որ դժբախտ է։

## Գլուխ 18

Մի երեկո նրանք իրար հանդիպեցին ռեստորանի դուռն առջև և երեքն էլ Փարիզում հաճախակի դարձած, փոքրիկ դասական, անհիթեթ մի բալետային տեսարան ներկայացրին. Փոլը հեռվից հետու գլխի թեթև շարժումով ողջունեց

այն մարդուն, որի ուսին հենված, հառաչել, քնել էր. շնորհ
հաղորդակ շարժումով նա փոխադարձեց այն, իսկ Սիմոնը մ
վայրկյան նայեց նրան ու չհարվածեց, ինչպես որ կցանկա
նար։ Նրանք զբաղեցրին իրարից բավական հեռու գտնվող
երկու սեղան, և Փոլը առանց աչքերը բարձրացնելու պատվիրեց
ճաշատեսակները։ Ռեստորանի տիրոջ և այն մի քան
մշտական այցելուների համար, որոնք ճանաչում էին Փոլին
շատ սովորական տեսարան էր։ Սիմոնը անփոփոխ ձայնով
խմիչք պատվիրեց, իսկ Ռոժեն մյուս սեղանի մոտ հարցրեց
իր ընկերուհուն, թե ինչ կոկտեյլ կցանկանար։ Վերջապես
Փոլը բարձրացրեց աչքերը, ժպտաց Սիմոնին և նայեց Ռոժեի կողմը։ Սիրում էր նրան։ Այդ ճշմարտության գիտակցությունը անմիջապես ընկալել էր գոնների մեջ նրան իր ընկճված տեսքով տեսնելու ժամանակ։ Դեռ սիրում էր Ռոժեին, արթնանում էր անդպատակ քնից։ Ռոժեն էլ իր հերթին նայեց նրան, հեռու փորձեց ժպտալ, բայց անմիջապես կանխեց։

— Ի՞նչ եք խմում,— ասաց Սիմոնը,— ոպիտակ գինի՞։

— Ինչո՞ւ չէ։

Փոլը նայում էր սեղանի վրա դրած ձեռքերին, խնամքով տեղադրված սպասքին, Սիմոնի թեին հենված իր մերկ ուսին։ Արագությամբ դատարկեց բաժակը։ Սիմոնը խոսում էր սովորական աշխուժությունը կորցրած։ Կարծես ինչ-որ բան էր սպասում նրանից, կամ Ռոժեից։ Բայց ի՞նչ, կարո՞ղ էր պատահել, որ Փոլը վեր կենար և ասեր. «Ներեք ինձ», կարո՞ղ էր պատահել, որ անցներ դահլիճով մեկ և ասեր Ռոժեին. «Այլևս բավական է, վերադառնանք»։ Նման բան տեղի չէր ունենում։ Ի միջի այլոց, այդ ընթացքում ոչ մի բան տեղի չէր ունենում. ոչ խելացի, ոչ զգայացունց։

Ճաշից հետո պարեցին։ Փոլը տեսավ Ռոժեի գրկում թխահեր մի կնոջ. այնքան էլ վատը չէր։ Ռոժեն, որ օրորվում էր նրա դիմաց իր սովորական ձախորդ շարժումներով։ Սիմոնը վեր կացավ, նա լավ էր պարում, աչքերը մի փոքր փակ, ճկուն էր ու սլացիկ, քթի տակ մրմնջում էր նրաժշտությունը, Փոլը լրիվ անձնատուր էր եղել նրան։ Ինչ-որ պահի մերկ թևը քսվեց Ռոժեի ձեռքին, որ կպած էր թխահեր կնոջ մեջքից, Փոլը բացեց աչքերը։ Ռոժեն և Փոլը նայեցին իրար,



յուրաքանչյուրը «մյուսի» ուսի վրայից։ Սիմոնը պարում էր ֆոքստրոտ էր, պարում էին տեղում կանգնած։ Տասը սանտիմետր հեռավորությունից նայում էին իրար, առանց արտահայտության, առանց ժպտալու, առանց իրար ճանաչելու, այդպես թվում էր, բայց հանկարծ Ռոժեի ձեռքը բաց թողեց թխահեր կնոջ թիկունքը, ձգվեց դեպի Փոլի թևը, հպվեց մատների ծայրով և նրա դեմքին այնպիսի պաղատագին արտահայտություն երևաց, որ Փոլն իսկույն փակեց աչքերը։ Սիմոնը շրջվեց, և նրանք տեսողությունից անհետացան։

Այդ դիշեր Փոլը հրաժարվեց Սիմոնի հետ քնել, պատճառաբանելով, որ հոգնած է, սակայն չէր էլ զգում հոգնություն։ Երկար ժամանակ աչքերը բաց մնաց անկողնում։ Նա գիտեր, թե ինչ էր անելի ունենալու, նա գիտեր, որ հնարավոր այլ ելք չկար, որ երբեք չէր եղել և խավարի մեջ սեղմված կոկորդով նա ասրբ էր տալիս դրան։ Կենցաղշերին վեր կացավ, անցավ հյուրասրահով, որտեղ բազմոցին քնել էր Սիմոնը։ Իր սենյակից շեղակի ընկնող լույսի շերտի տակ նա տեսնում էր տղայի ձգված մարմինը, շնչառության նրևեջը։ Նայում էր բարձի մեջ ճզմված նրա գլխին և ծոծրակի երկու ոլորի միջև ընկած փոքրիկ ակոսին, նա նայում էր իր սեփական երիտասարդության նմանը։ Բայց երբ Սիմոնը հենվելով շրջվեց դեպի լույսը, նա փախավ։ Այլևս չէր համարձակվում խոսել նրա հետ։

Հաջորդ առավոտյան Ռոժեի հրատապ երկտողը սպասում էր նրան գրասենյակում. «Պետք է տեսնեմ քեզ, անհնար է այսպես շարունակել։ Ջանգահարիր»։ Փոլը զանգահարեց։ Համաձայնության եկան երեկոյան ժամը վեցին հանդիպել։ Բայց տասը րոպե հետո Ռոժեն այնտեղ էր։ Հսկայածավալ, կանանց խանութում, անհավասարակշռված։ Փոլը ընդառաջ եկավ, նրան տարավ հղեգնյա, ոսկեզօծ աթոռներով խճողված մի սրահ. մղձավանջային տեսարան։ Միայն այդ ժամանակ Փոլը տեսավ նրան։ Իրոք նա էր։ Ռոժեն մի քայլ առաջացավ դեպի Փոլը, երկու ձեռքերը դրեց ուսերին։ Մի փոքր կմկմում էր, նշաններից մեկը. երբ արտակարգ հուզված էր լինում։

— Այնքան դժբախտ էի,— ասաց նա։

— Ես նույնպես,— լսեց Փոլն իր ձայնը և թեթևակի հեգ
վելով Ռոժեին, վերջապես սկսեց լաց լինել, իր սրտում
խնդրելով Սիմոնին ներել իրեն այս վերջին երկու բառերի
համար։

Ռոժեն դլուխը հենել էր մաղերին և հիմար ձայնով
ասում էր.

— Լավ, լաց մի լինի։

— Ես փորձեցի...— ի վերջո ասաց Փոլը ներողությունը
հայցող ձայնով,— ես փորձեցի... իսկապես...

Հետո մտածեց, որ նրան չէր ասելու այդ բանը, այլ՝ Սի
մոնին։ Խճճվում էր։ Միշտ հարկավոր է ուշադիր լինել, երբ
թեք չի կարելի ամեն ինչ ամեն մարդու ասել։ Շարունակ
լաց էր լինում, դիմադծերն անշարժ։ Ռոժեն չէր խոսում։

— Մի բան ասա,— շշնջաց Փոլը։

— Այնքան մենակ էի,— ասաց նա,— մտածեցի։ Նստիր
այստեղ, վերցրու թաշկինակս։ Հիմա կբացատրեմ։

Բացատրեց։ Բացատրեց, որ հարկավոր է հեռանել կա-
նանց, որ ինքը անզգույշ է վարվել և հասկանում է, որ այս
ամենը իր մեղքով է կատարվել։ Չէր բարկանում նրա ան-
խոհեմության համար։ Այլևս չէին խոսելու այդ մասին։ Փոլն
ասում էր. «Այո՛, այո՛, այո՛, Ռոժե» և ցանկանում էր ավելի
շատ լաց լինել ու քրքջալ։ Միաժամանակ շնչում էր նրա
մարմնի, նրա ծխախոտի հարազատ բույրը ու տեսնում իր
փրկությունը։ Եվ կորուստը։

• • •

Տասը օր անց Փոլը վերջին անգամ լինելով մենակ էր
Սիմոնի հետ իր տանը։

— Սա էլ մոռացար,— ասաց Փոլը։

Երկու փողկապ էր մեկնել, չէր նայում նրան, զգում էր,
որ ուժերի գերլարում է գործադրում։ Արդեն երկու ժամ օգ-
նում էր Սիմոնին իրերը դասավորել։ Սիրահարված, բայց
անկարգ երիտասարդի իրերը։ Եվ ամեն կողմից հավաքում
էին Սիմոնի հրահանը, Սիմոնի գրքերը, Սիմոնի կոշիկները։
Նա ոչինչ չէր ասել, շատ լավ էր պահել իրեն և գիտակցում
էր, մի հանգամանք, որ խեղդում էր՝ իրեն։



— Բավական է,— ասաց նա,— մնացածը կարող էր
թողնել ձեր դռնապանուհու մոտ։

Փոլը չպատասխանեց։ Սիմոնը մի հայացք պատերից
շուրջը, փորձելով մոտաբերել «վերջին անգամ», վերջին ան-
գամ», բայց չէր կարողանում։ Դողդողում էր ներվային շար-
ժումներով։

— Ցեմ մոռանա,— ասաց Փոլը և աչքերը բարձրացրեց
նրա վրա։

— Ես նույնպես։ Ուրիշ բան է,— ասաց նա,— ուրիշ
բան։

Եվ շորորաց ճանապարհի կեսին նախքան դեմքը Փոլի
կողմը շրջելը։ Նա Սիմոնին պահել էր թևերի մեջ, մեկ ան-
գամ ևս գրկում էր նրա վիշտը, ինչպես գրկել էր նրա երջան-
կությունը։ Եվ անկարող էր շնախանձել այդ ուժգին վշտին,
գեղեցիկ վշտին, գեղեցիկ ցավին, որի նմանը ինքն այլևս չէր
ունենալու։ Միանդամից հեռացավ Փոլից և իրերը թողնելով
դուրս նետվեց։ Փոլը վազեց հետևից, կախվեց բաղրիքից,
կանչեց.

— Սիմոն, Սիմոն,— և ավելացրեց առանց իմանալու,
թե ինչու է այդ անում,— Սիմոն, հիմա ես պառավ եմ, պա-
ռավ...

Բայց Սիմոնը չէր լսում նրան։ Վազում էր աստիճաններ-
ով, աչքերն արցունքով ողողված, վազում էր երջանիկ
մարդու պես, քսանհինգ տարեկան էր։ Փոլը կամաց փակեց
դուռը, հենվեց։

Ժամը ութին հեռախոսը զնգաց։ Նախքան լսափողը վերց-
նելը գիտեր, թե ինչ է լսելու.

— Ներիր,— ասում էր Ռոժեն,— պաշտոնական ճաշկե-
բույթ ունեմ, կգամ ավելի ուշ, արդյոք...

## ՈՒՂՂԱԳՐԱՄԻՆԵՐԸ

1. Մի քիչ արև պաղ չրի մեջ . . . . . 3
2. ՄիրոՒմ եկ Բրամս . . . . . 157

Ֆրանսուազ Սագան

**ՄԻ ՔԻՉ ԱՐԵՎ ՊԱՂ ՋՐԻ ՄԵՋ**

Франсуаза Саган
НЕМНОГО СОЛНЦА В ХОЛОДНОЙ ВОДЕ
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван—1978

*Խմբագիր՝ Գ. Գ. Հովսեփյան*
*Նկարիչ՝ Վ. Ա. Հարությունյան*
*Գեղ. խմբագիր՝ Մ. Ս. Սարգսյան*
*Տեխ. խմբագիր՝ Գ. Գ. Բալայան*
*Վերատեսող սրբագրիչ՝ Մ. Ա. Մկրտչյան*

ИБ № 2002
*Հանձնված է շարվածքի 19/IX 1978 թ.*
*Ստորագրված է տպագրության 3/XI 1978 թ.*
*Թուղթ № 2, 84×108 1/32, տպագր. 8,0 մամ.=13,44*
*պայմ. մամ., Հրատ. 11,4 մամ.*
*Պատվեր 911. Տպաքանակ 20000. Գինը 1 ռ. 30 կ.*

*«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91.*
Издательство «Советакан грох», Ереван—9, ул. Теряна, 91.
*ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65.*
Типография № 1. Госкомитета по делам издательств, полиграф и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65.